

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՏՄԱՆԴՐԱԿԱՆ ՄԱՍԻՆԱՇԱՐ ԹԻՒ 1


ԼԵԽՈՆ ՃԷՐԱՀԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆԴԱՐՁԱԿ  
ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ  
(ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ)

1931 ԳԱՐԵՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Ա. ՀԱՏՈՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ “ՀՈՐԻԶՈՆ” ԳՐԱՏԱՆ



Տպար. Ե. ԱՐՄԵՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԱՐՍԵՅԱԼ

1933

31 AUG 2007

2011-09

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱՅԱՐ ԹԻՒ 1

ԼԵՒՆ ՃԵՐԱՀԵԱՆ



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆԴԱՐՁԱԿ  
ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴԻ)

1932 ԳԱՐԵՆ ՄԻՒԶԵՒՄ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Ա. ՀԱՍՈՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ “ՀՈՐԻԶՈՆ” ԳՐԱՏԱՆ


ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԱՐՄԵՆ

ՄԱՐՍԵԼ

1932



ԼԵՒՈՆ ՃԷՐԱՀԵԱՆ



# ԻՐԻ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ա.

Հ Ա Յ Բ Ե Ն Ի Ք Հ

ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐՈՒ ԿՐՈՒՆԿՆԵՐՈՒՆ ՆԵՐՔԵՒ

Երբ, Քրիստոսի 1046 թուականին, Բագրատունի թագին վերջին շառաւիղը՝ դժբաղդ և վշտակիր Գագիկ Բ. արքան մեռաւ պանդխտութեան մէջ, շիջեցաւ Հայաստան աշխարհի արեւը:

Հայկական անկախութեան բարձումէն յետոյ, դրացի պետութեանց և հեռաւոր վայրագ և բարբարոս ցեղերու արշաւանքներուն առարկայ դարձաւ դրախտանման մեր Հայրենիքը, և երկա՛բ ժամանակ թատր հանդիսացաւ հակընդդէմ պայքարներու:



23839 - 5

Հ. Ե. Բ. Բ. Բ.

Բնական էր որ իրարու ետևէ հասնող վիթխարի ու մահասփիւռ հարուածներէն անպաշտպան մնացած հայ. ժողովուրդը պիտի կոտորուէր, ալքատանար և գաղթի ճամբան բռնէր, ինչ որ բոլորովին պիտի ամայացն էր Հայաստան աշխարհը:

Սակայն, հակառակ տեղի ունեցող արհասիրքներուն, հայ ժողովուրդի կարեւոր մասը ո՛չ միայն մնաց իր մայր երկրին մէջ, այլ և, ամէն աւերէ վերջ, առանց յուսաւըքուելու մի՛շտ վերաշինեց իր քանդուած գիւղերն ու քաղաքները: Հայ ժողովուրդը զարմանալի տոկունութիւն մը ցոյց տուաւ իր գլխուն պայթած բոլոր աղէտներուն դէմ, և Հայ Յեղը ապրեցաւ դարերու ընթացքին ու պիտի ապրի առ յաւէտ՝ որքան ատեն որ ան կառչած մնայ իր ազգային ոգւոյն:

Արեւելքի մէջ, Հայաստանի սահմանակից շատ մը ազգեր ու աետութիւններ, փառաւոր անցեալէ մը վերջ այսօր ո՛չ ևս են. միայն յիշատակութիւն թողած են անոնք Արեւելեան ազգաց պատմութեան մէջ: Իսկ հայ ժողովուրդը, վեց դարերու գերութեան պիղծ շղթաներու տակ հեծելէ ու հազար անգամ խաչուելէ ու նահատակուելէ վերջ. այսօր կրկին ոտքի է կանգնած և կ'ուզէ շարունակել իր ազատազրման վսեմ պայքարը:

Հայաստանը աւերողներուն մէջ ամենէն արիւնարբուն եղաւ թաթար էօգ էկ ցեղին պետը՝ Լէնկ-Թիմուր, որ ձէնկիդ Խանի տարտղուած պետութիւնը վերակենդանացնելու մէծ գաղափարը յլացաւ և իր բազմաթիւ հորթաներով նախ թիւրքմէն և թաթար ցեղերը իր լուծին տակ առաւ, ապա գրոհ տուաւ դէպի Արեւմուտք, դէպի կովկաս, Պարսկաստան ու Հայաստան:

Առաջին անգամ անցաւ կասպից ծովէն և մտաւ Պարսկաստան, գրաւեց բազմաթիւ քաղաքներ: Սպահան քաղաքը գլխաւորաբար ճարակ եղաւ բարբարոսութիւններ գործուեցան: Մայրաքաղաք Սեբաստիոյ մէջ գործադրուած ահութիւն քստմնեցուցիչ ջարդերն ու գազանութիւնները մինչեւ այդ ատեն պատահածները կը գերա-

և սպաննուեցան 72.000 հոգի: Յետոյ անցաւ Հնդկաստան, կործանեց շատ մը քաղաքներ:

Մելուքներէ գրաւեց Պաղեստինը, Ասորիքը: Ամենէն վերջ մտաւ Հայաստան (1587):

Լէնկ-Թիմուրի արշաւանքին ենթարկուող բոլոր երկիրները վերածուեցան արեան մէծ լիճերու: Անոր խառնիճաղանձ բանակները ամենուրեք մահ եւ աւեր սփոեցին. ամբողջ արեւելք ընդարձակ գերեզմանի մը վերածեցին և մարդոց գլուխներէ բլուղներ կազմեցին: Պատատի բնակչութիւնը զօրաւոր գիմադրութիւն մը ցոյց տուած ըլլալուն պատճառաւ, հիմնայատակ կործանեցին այդ քաղաքը, անոր վլատակներուն ներքեւ թաղուեցան հարիւր հազար ժողովուրդ:

Լէնկ-Թիմուրի բանակները Հայաստան մտան ուղղակի Արարատեան և Սիւնե աց նահանգներէն, և իրենց բարբարոս սովորութեան համաձայն, անցած տեղերնին քար քարի վրայ չի թողուցին: Մտան կարնոյ նահանգը ու աւերակոյտի վերածեցին շէն ու ծաղկեալ քաղաքներ ու գիւղեր: Վան-Վասպուրականի բնակիչները չարաչար պատժուեցան՝ քաջ ընդդիմութիւն ցոյց տուած ըլլալուն համար: Հարիւր հազար հոգի փուեցին գետին: Կոտորածին անբաժանէնակ կողոպուտքը: Լէնկ-Թիմուրի մայրաքաղաքը Սմրդանատ, աւարի և կողոպուտի անբաւ հարստութեամբ կը յդիանայ: Ամբողջ Մեծ Հայքը մոխիրի վերածելէ յետոյ Լէնկ-Թիմուր յարձակեցաւ Փոքր Հայքի վրայ: Երկար պաշարումէ մը վերջ Սեբաստիա բազմահայ քաղաքը անձնատուր կըլլայ, խոստում առնելով Լէնկ-Թիմուրէն որ ո՛չ ոքի վնաս պիտի հասցնէ: Բայց, քաղաքը խաբէութեամբ գրաւուելէ վերջ անլուր բարբարոսութիւններ գործուեցան: Մայրաքաղաք Սեբաստիոյ մէջ գործադրուած ահութիւն քստմնեցուցիչ ջարդերն ու գազանութիւնները մինչեւ այդ ատեն պատահածները կը գերա-

զանցեն: Նախ, բոլոր իշխանները, երեւելիները ահոելի տանջանքներով կ'սպաննուին, յետոյ կիները կապելով կատաղի ձիերու պոչին՝ բաց դաշտերու մէջ սանձարձակ թող կը տրուին. անոնք քաշկատուելով ու կոխոտուելով կտոր կտոր եղան մահացան: Իսկ մանուկներն ու ծերերը դաշտին մէջ հաւաքելով Լէնկ-Թիմուրի ձիաւոր հորթաներուն ոտից կոխան ըրին: Այս դադանային արարքներէն չի կշտացող Լէնկ-Թիմուր հրամայեց ողջ ողջ թաղել գերի ինկած չորս հազար հայ զինուորները: Հրամանը գործադրուեցաւ Սեբաստիոյ դաշտին մէջ աննկարագրելի վայրագութեամբ մը: Նահատակաց այդ հողամասը մինչեւ այսօր կը կոչուի Ս Ե Ի Հ Ո Ղ Ե Բ:

Այդ միջոցներուն Օսմանցիները տիրացած ըլլալով գոնիայի ընդարձակ հողամասերուն ու Ռումելիի, անոնց վեհապետը՝ Սուլթան Պայազիտ Առաջին (1589—1402) Բիւզանդիոնի մայրաքաղաք Կոնստանդնուպոլիսը պաշարած էր: Լէնկ-Թիմուր մտաւ Օսմանեան սահմաններէն ներս: Սուլթան Պայազիտ զայս լսելով լքեց Պօլսոյ պաշարումը և մեծ բանակով մը դիմաւորեց Լէնկ-Թիմուրը: Երկու ամենի բանակները՝ շուրջ միլիոն մը զինուոր ճակատեցան իրարու դէմ էնկիւրիի դաշտին մէջ: Կատաղի գիրկընդիմանումներէ վերջ, Սուլթան Պայազիտ չարչար պարտուելով գերի ինկաւ իր թշնամիին ձեռքը: Լէնկ-Թիմուր զայն փոխադրեց Սմրդանտ, և իրբեւ զարդ երկաթէ վանդակի մը մէջ դնել տուաւ: Այս յաղթանակէն վերջ, Լէնկ-Թիմուր իր զէնքը դարձուց Զինաստանի դէմ, պարտութեան մատնեց զայն, ու երբ յաղթական Սմրդանտ վերադարձաւ՝ հոն մեռաւ, 1406ին:

Մեծն Ալեքսանդրի հիմնած կայսրութեան պէս, Լէնկ-Թիմուրի հաստատած այս ընդարձակ կայսրութիւնն ալ — որ Սեւ Ծովէն մինչեւ Հնդկաց Ովկէանոս և Սիակէրիայէն մինչեւ Միջերկրական — իր մահով քայլայուեցաւ:

Բոլոր գերուած ժողովուրդները անկախութեան դրօշպարզեցին: Հայ ժողովուրդը այս ուղղութեամբ ճիգ մը փորձելու անկարող զանուեցաւ, որովհետեւ Ասիոյ խորելէն երկու թիւրքմէն ցեղեր՝ Ագ Գօյունլու և Գարա Գօյունլու, արեւմուտք արշաւելով տիրած էին Հայաստանի: Ագ Գօյունլուներուն հիմնադիրն էր ԳԱՐԱ, ՕՍՄԱՆ, որ Տրավիզոնի Ալէքսիս կայսրի փեսան էր, կը նըստէր Տիգրանակերտ և բարեկամ էր Հայ ժողովուրդին: Իսկ Գարա Գօյունլուներուն հիմնադիրն էր ԳԱՐԱ, ԵՌԻՍՈՒՒՅՑ, որ կը նստէր Սեբաստիա և Լէնկ-Թիմուրի երեսէն փախըստական մնացած էր Սաորիքի մէջ:

Գարա Եռաւուֆ ո՞չ միայն իր իշխանութիւնը վերահստատեց, այլ և, իր հօրը յաջորդող Լէնկ-Թիմուրի որդույն՝ Բուխ Շահի հետ պատերազմեցաւ, բայց սպաննուեցաւ: Իրեն յաջորդեց եղբայրը՝ Խակէնտէր, որ ծանօթէ Շ Ա Հ Ի Ա Ր Մ է Ն անունով, և որ Բուխ Շահին դէմ քսան տարի շարունակ պատերազմելով տկարացաւ: Երկիրը մատնուեցաւ անեղ սովի ու համաճարակի:

Վերջապէս, Գարա Օսմանի թոռը՝ Ոհջուին ՀԱՄԱՆ պարտեց Գարա Գօյունլուները, և ո՞չ միայն տիրեց ամբողջ Հայաստանի, այլ և մինչեւ Պարսից Ծոց (1463):

Երբ Սուլեյման եկոր և տիրող ցեղեր՝ Հայաստանը, Փոքր Ասիան ու Պարսկաստանը իրարու ձեռքէ յափշտակելու զրադած էին, անդին, Վոսփորի ափերուն վրայ աշխարհի քաղաքական մէծ ագոյն էկպքը տեղի: Կ'ունենար: Օսմանցիք՝ որ հետզհետէ զօրանալով զրաւած էին Փոքր Ասիան ու Թրակիան, սեղմ օղակով մը պաշարած էին Արեւելեան կայսրութեան մայրաքաղաք Կ. Պօլիսը: Օսմանցոց վեհապետ ՖԱԹԻՀ ՍՈՒԼԹԱՆ ՄէջՄէջ Բ. (1431—1481) ամէն ճիգ ու հնարավիտութիւնի գործ դնելով յաջողեցաւ նշանաւոր Բիւզանդիոնը գրաւել, 1435 Մայիս 29ին:

Թիւղանդինի վերջին կայսրը՝ Գոնստանթին Պալէուլոս սպաննուեցաւ այս յուսահատ կոռուին մէջ, որով կործ մնեցաւ Սուելեան Յունաց հին և մեծ կայսրութիւնը որուն գահին վրայ դարերու ընթացքին բազմած էին 14 Արշակունի չայ կայսրեր և 4 կայսրունիներ:

Ֆաթին Սուլթան Մէհմէտ իր անդրանիկ աղօթքը կատարեց Սուլրը Սօփիա յունական հոչակաւոր Մայր Եկեղեցին մէջ, որ յետոյ մզկիթի վերածուեով, պահեց իր հին անունը, և մինչեւ այսօր կը կոչուի ԱՅԱ. ՍԹՖԻԱ ՃԱՄԻԻ ՇԷՐԻՖԻ:

Ֆաթին Սուլթան Մէհմէտ թէեւ Պօլիսը մայրաքաղաք հոչակեց, բայց ինք մինչեւ վերջ մնաց էտիրնէ: Եւ որովհետեւ Պրուսայի Հայոց Առաջնորդ Յովակիմ Եպիսկոպոսին հետ սերտ բարեկամութեամբ մը կապուած ըլլալով անոր խոստացած էր նախապէս՝ որ եթէ յաջողի Պօլիսը գրաւել՝ զինքը Օսմաննեան Տէրութեան մէջ ապրող Հայոց վրայ ՊԱ.ՏՐԻԿ պիտի կարգէ, կոնստանդնուպոլիս հրաւիրեց, և իր խոստումը յարգելով Թուրքիոյ Հայոց Պատրիարք կարգեց զայն 1461ին, Հայոց տալով լայն առանձնաշնորհումներ, ինչպէս որ տուած էր յոյն պարտուած ժողովուրդին: Այս թուականէն կ'սկսի Պօլոյ Հայոց Պատրիարքութիւնը:

Ֆաթին յոյն կայսրութիւնը կործանելէն ետք կը վագէ Ուգուն Հասանի դէմ. որ արդէն բարգաւած ու հայաշատ Եւղոկիա քաղաքը գրաւելով հրդեհի ու սուրի մատնելէ վերջ մինչեւ Կիլիկիոյ սահմանները հասած էր: Ֆաթին Մէհմէտի զօրքերը մեծ յաղթութիւն մը կը տանին Ուգուն Հասանի վրայ Բարձր Հայոց Դերջան քաղաքին մօտ, և կը տիրեն արեւմտեան Հայաստանի (1475): Անկէ յետոյ գրեթէ կէս դար խաղաղութիւն կը տիրէ Հայաստանի մէջ: Պարսից Թահմազ Շահին և Օսմանցոց Սուլթան Սիւլէյմանի միջեւ մղուած երկար ու կո-

ըրստարեր կոփւներէ վերջ հաշտութիւն կը կնքուի 1535ին: Սուլթան Մուրատ Գ. և Շահ Խամայիլ կը պայքարին իրարու դէմ: Շահ Ապպաս ալ կը շարունակէ կոփւր, սակայն կը պարտուի և Թուրքերը կը տիրեն ամբողջ Հայաստանի, Վրաստանի և Ատրպատականի (1583):

Երբ Թուրքերը իրենց լուծին տակ առին ամբողջ Հայաստանը, ծայր տուաւ հալածանքը Հայոց դէմ: Անլուր բռնութիւններէն ազատելու համար բնաշխարհի ժողովուրդի մեծ տոկոսը կ'սկսի գաղթել այլեւայլ երկիրներ: Պարսկաստան իր դռները լայն կը բանայ Հայոց առջեւ: Էջմիածնի Մելքիսեդեկ Ա. Գառնեցի կաթողիկոս եւս կ'անցնի Շահին երկիրը, իր հետ տանելով Ա. Գրիգոր Լուսաւորչի Աջն ու վանքապատկան թանկագին հարրատութիւններ: Շահ Ապպաս նոր կոր մղեց Օսմանցիներուն դէմ, բայց երբ լսեց թէ Սինան փաշա մեծ զօրքով իր վրայ կ'ուգայ, Սրարատեան գաւառի ժողովուրդը խարազանի և սուրի հարուածներու տակ քշեց դէպի Պարսկաստան (1603): Այս փոխադրութեան ընթացքին ժողովուրդը կ'ենթարկուի սոսկալի տառապանքներու և թշուառութիւններու. շատեր Արաքս գետին մէջ խեղդամահ կ'ըլլան. նոյն վիճակին կը մատնուի Զուղայի հարուստ բնակչութիւնը, ամէն ինչ կը լքուի:

Շահ Ապպաս շատ սիրով կը վարուի իր երկիրը թափուղ հայեցուն հետ և լայն ազատութիւն կը պարզեւէ անոնց: Զուղայեցիք կը հիմնեն ՆՈՐ-ԶՈՒՂԱՆ, որ կ'ըլլայ Պարսկաստանի ամենէն ծաղկեալ և հարուստ հայաքաղաքը:

Շահ Ապպաս շատ սիրեց հայերը. ստէպ հայոց եկեղեցւոյ հանդէմներուն ներկայ կը գտնուէր: Ուգելով Հայերու սիրտը բոլորովին Պարսկաստանի կապել, խորհեցաւ քանդել Ա. Էջմիածնը ու նոր-Զուղայի մէջ շինել նոր Էջմիածնի մը, բայց ժողովուրդին խնդրանքով ետ կե-

ցաւ սոյն խորհուրդէն, Հայերը գոհ ձգելու մտքով:  
Թուրքիոյ մէջ տիրող խոռվութիւններէն օգտուելով,  
Շահ Ապաս նորոգեց կոիւը: Սուլթան ՄՈՒԲԱՏ Դ. իր  
700.000նոց բանակով քալեց Պարսից վրայ, 1653 Օգոս-  
տոս 8ին Երեւանը և Սեպտեմբեր 11ին Թաւրիզը գրաւեց:

Մեծ ճիգերով կնքուեցաւ հաշտութիւն մը, և որով,  
Հայաստանը բաժնուեցաւ Թրքաց և Պարսից միջն (1659):

Պարսից Թահմազբ Բ. Շահը դաշինքով Թրքաց թողուց  
ամբողջ Հայաստանը (1752): Նատիր Շահ, երբ Պարս-  
կական գահը գրաւեց Սաֆեաններէն, աւրեց այդ դա-  
շինքը և գրաւեց Ատրպատականը և Երեւանը իր շրջա-  
կաներով: Նոր դաշինքով մը վերջ տրուեցաւ երկու տէ-  
րութեանց անհաշտութեան (1746), և խաղաղութիւնը  
տեւեց մինչեւ 1826:

Այդ շրջանին մէջ, Հայ ժողովուրդը սկսաւ վայելել  
խաղաղութեան բարիքները: Պարսկաստան երկարատեւ  
պատերազմներու և ներքին անհաշտ երկպառակութեանց  
երեսէն՝ զրեթէ քայքայման վիճակին էր հասած: Երկիրը  
բաժնուած էր բազմաթիւ խանութիւններու և մէն մի  
խան անկախ էր իր երկրին մէջ, միայն հարկատու էր  
գահին: Խանները կը կ'եղեքին ժողովուրդը՝ առանց անոր  
բարելաւման համար ունէ ջանք թափելու:

Հայաստանի վիճակը նոյնն էր, թէեւ խաղաղութիւն  
կար, սակայն, տիրող պայմանները թոյլատու չէին լայն  
զարգացումի: Շատեր չկրցան ապրիւուգաղթեցին, ուրիշ  
երկիրներու մէջ իրենց բազդը փորձելու, և արուետի, գի-  
տութեան, առեւտուրի գերազանց ոգին փայլեցնելու:

Հայրենիքին վիճակը ուրեմն հեռու էր միիթարական  
և յուսատու ըլլալէ:

Բ

ՀԱՅՈՅ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ  
ՄԻԱՅԵԱԼ ԵՒ ԱՆԿԱԽ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՄԸ  
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

— . —

ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԻՄՐԱՅԻԼ ՕՐԻ

Երբ Պարսկաստան ներքին հակընդդէմ կոիւներով  
կը քայքայուէր, ասդին, Պարսից տիրապետութեան ներ-  
քեւ գտնուող Սիւնեաց աշխարհին մէջ, անմատչելի լեռ-  
ներու վրայ իշխող հինգ Հայ Մէլիքութիւնները վճռեցին  
թօթափել անարգ լուծը, և ՄԻԱՅԵԱԼ ԱՆԿԱԽ ԹԱԳԱ-  
ԽՈՐՈՒԹԻՒՆ, մը կազմել:

Հայկական այս հինգ Մէլիքութիւններն էին՝

ա. — ԶՐԱԲԵՐԴ

բ. — ԽԱԶԻՆ

գ. — ՎԱՐԱՆՏԱ

դ. — ԿԻՒԼԻՍՏԱՆ

ե. — ՏԻԶԱԿ

Այս հինգ կէս անկախ Մէլիքութեանց ընդհանուր  
բնակչութիւնը կը համնէր 500,000 հոգիի, որուն երկու  
հարիւր հազարը Հայ, և հարիւր հազարը իսլամ էր:

Ունէին իրենց բերդերը, զինուորական վաշտերը և  
իրենք կը վարէին իրենց ժողովուրդին դատերը:

Մէլիքներու ջանքերուն համամիտ գտնուեցաւ էջ-  
միածնայ Յակոբ Դ. Կաթողիկոս Զուղայեցի: Մայրավան-

քին մէջ գումարուեցաւ գաղտնի խորհրդաժողով մը (1678), Զուլայեցիի նախագահութեամբ, որուն մասնակցեցան վեց աշխարհական ու վեց հոգեւորական անձնաւորութիւններ, և ուր կ'որոշուի մասնաւոր դեսպանութեամբ մը գաղտնի դիմումներ կատարել Եւզոպայի քրիստոնեայ պետութիւններուն մօտ, և անոնց զինուորական օժանդակութիւնը խնդրել՝ Ղարապաղի մէջ Հայկական Թագաւորութեան մը կազմութեան ինպաստ:

Այս դիմումը կատարելու համար ժողովին կողմէ պատուիրակ կ'ընտրուին ՅԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍ և Հընդկաստանարնակ յայտնի վաճառական և լեզուագէտ Ղարապաղի ԽՄՐԱՅԷԼ ՕՐԻ: Պատուիրակները երբ Պօլիս հասան, Յակոբ կաթողիկոս հոն հիւանդանալով վախճանեցաւ 1680 Օգոստոս 2ին ութսունամեայ հասակին մէջ: Մմարմինը կ'ամփոփուի Բանկալթը Ազգ. գերեզմանատունը, ուր մինչեւ այսօր ուխտաւոր ժողովուրդը կ'երթայ այդ Հոգեւոր Տիրոջ վրայ ալօթելու:

Խսրայէլ Օրի մինակը անցաւ Եւրապա, և նախ ու զեց Ներկայանալ Ֆրանսայի Լուդովիկոս ՓԶ. հզօր կայսեր, սակայն ամբողջ վեց տարի Բարիկ մնալով հանդերձ, չի կրցաւ արքային հետ տեսակցիլ, որով, յուսաբեկ հեռացաւ Ֆրանսայէն, անցաւ Գերմանիա, ընդունուեցաւ Տիւէլտօրֆի Պֆալցի Յովհաննէս Վիլհէլմ իշխանէն, և մանրամասնօրէն անոր պատմեց հայ ցեղին կրած հալածանքներն ու տառապանքները իսլամ լուծին տակ, և անկէ խնդրեց օգնել Ղարապաղի իշխաններուն ազագագրական ձեռնարկին, և ընդունիլ Հայոց Թագը: Յովհաննէս իշխան խոստացաւ բանակի մը գլուխն անցած գալ Գրբաւել Հայաստանը, բայց, վստահելի և ստոյգ տեղեկութիւններ կ'ուզէր ստանալ Երկրի մասին: Միեւնոյն ատեն առաջարկեց նաեւ որ Հայերը ընդունին կաթոլիկութիւնը: Ուստի, Խսրայէլ Օրին դրկեց Երկիր, անհրաժեշտ

ուսումնասիրութիւններն ընելով ծրագիր մը պատրաստելու համար: Իշխանը այս մտքով գրեց նաեւ ՄԵԼԻՔՆԵՐՈՒՆ և Վրաց Կիորկի իշխանին:

Խսրայէլ Օրի կը հանդիպի Պօլիս, ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Սուպհի պատրիարքի օրով, որմէ կ'ընդունուեի մեծ պատիւով: ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Երզրում մեկնող երկու Թուրք պաշտօնեաներու կը յանձնարարէ զայն, որոնց հետ Օրի Եւզովկիոյ ճամբով կը մտնէ Իրան, ու անկէ Երեւան 1699 Ապրիլ 7 ին, եջմիածնի կաթողիկոսին միտքը շօշափելու համար: Ա. Լուսաւորչի Գաճին վրայ բազմող ԵՇԵՍԻՅԱՅԻ ՆԱՀԱՊԵՏ ԿԱԹՈՂԻԿՈՍ ո՛չ միայն Հոռվմայ Պապին հնազանդիլ սրտմտօրէն մերժեց, ա՛յլ և, ազատագրական գործին դէմ խօսեցաւ՝ անյաջողելի Նկատելով զայն:

Իսր. Օրի, որ հայրենասիրութեամբ տոգորուած էր, չի վճառեցաւ, մտաւ Ղարապաղ և Սիւնիքի Ծղուկ գաւառին Ա.Նգեղակ ոթ գիւղը, ՄԵԼԻՔ ՍԱՖՐԱՄՍԻ տունը հիւր իջաւ: Օրի բոլոր իննդիրը պարզեց ՄԵԼԻՔԻն, որով, Գանձասարի Ա. Յակոբ վանքին մէջ ժողով գումարելով տասը ՄԵԼԻՔՆԵՐ խորհրդակցութեամբ որոշեցին ընդունիլ չայ Եկեղեցոյ միութիւնը Հոռվմայ հետ, ամէն գնով ազատութիւն ձեռք բերելու համար: Կաթողիկոսը միութեան դէմ ըլլալուն, Գանձասարի Ա. Յակոբ Վանքին վանահայր Մինաս վարդապետ Տիգրաննեանցին դիմեցին, որ համամիտ գտնուելով ընտրուեցաւ պատուիրակ, Օրիի հետ Եւրոպա մեկնելու համար:

Վերոյիշեալ ժողովին մէջ կը կազմուի գործունէութեան ծրագիր մը, ըստ որում, Պֆալցի իշխանը պիտի կազմէր Յ-6000 թեթեւազէն հեծեալ զօրքերէ բանակ մը Եւրոպական դաշնակից ուժերով, և Աւստրիայէն, Ռուսիայէն ու Կասպից ծովէն անցնելով պիտի գրաւէր Պագուն և Շամախին: Հայերն ալ նոյն միջոցին ապստամբելով պիտի միանային անոր և այսպիսով պիտի ստեղ-

ծուեր չայկական ինքնօրէն Տէրութիւն մը, և Յովհաննէս Վիլհէլմ Պֆալցի կայսրանտիրը պիտի հոչակուէր չայոց անդրանիկ թագաւոր:

Օրիի սոյն ծրագրին յաջողութիւնը յուսալի էր, նկատի ունենալով Պարսկաստանի ներքին քայլայուն և դիմադրելու անկարող վիճակը:

Իսրայէլ Օրի, իր ստացած յանձնարարագիրներով Մինաս վարդապետի հետ մեկնեցաւ Եւրոպա: Նախ գնաց Վիլհէլմ իշխանին, որու յանձնեց Մէլիքներու նամակը. յետոյ անոր խորհրդով Աւստրիոյ Լէօբոլտ Ա. կայսեր երթալով իսրայէլիր ընդունելութեան մը արժանացաւ: Օրի մանրամասնօրէն անոր պարզեց հայոց բաղձանքները՝ պարսից լուծը թօժափելու և ինքնօրէն չայստան մը ստեղծելու մասին: Կայսրը խոստացաւ օդնել. քաջալերական նամակներ ալ զրեց Պարապաղի ազատառենց Մէլիքներուն. բայց միենոյն ատեն յայտնեց Օրիին թէ՛ հայոց այս ծրագրին իրագործումը արագօրէն յաջողցնելու համար անհրաժեշտ կը նկատէ Ռուսիոյ Մէծն Պետրոս կայսեր ալ աջակցութիւնն ու հաւանութիւնը, քանի որ, առանց անոր թոյլառութեան կարելի չըլլար կասպից Ծովու եզրքը զօրք զրկել: Այսպէս, իսրայէլ Օրի յանձնարարական նամակներ ստանալով Աւստրիոյ կայսրէն, Պֆալցի իշխանին և Լեհաստանի թագաւորէն, մեկնեցաւ Մոսկովա, 1700 Յունիս 50ին:

Մէծն Պետրոս սիրալիր ընդունելութիւն մը կ'ընէ հայ զոյգ պատուիրակներուն, և ուշադրութեամբ զանոնք մտիկընելէ յետոյ, կարգ մը հարցումներ կ'ուղղէ անոնց:

Իր ստացած պատասխանները կ'երեւի նպաստաւոր էին իր փայփայած քաղաքական մեծ ծրագիրներուն յաջողութեան համար, որ խանդավառ, անմիջապէս դրական պատասխաններ զրեց Լէօբոլտ կայսեր, Վիլհէլմ իշխանին, ինչպէս և Օրիի ձեռքով հայ Մէլիքներուն, ըսե-

լով թէ ի մօտոյ «հայոց ինդիրը կարգադրել» որոշած է:

Նոյն միջոցին պայթած էր Ռուսո-Շուկա կոփուր, որ արգելք կ'ըլլար հայոց խնդրոյն կարգադրման գործին: Օրի տեսնելով որ պատերազմին պատճառաւ խնդիրը կ'երկարի, Մէծն Պետրոսէն խնդրեց, որ զինքը դեսպան կարգէ Պարսկաստանի մէջ, որպէսզի մօտէն շփում ունենայ հայութեան հետ և պատրաստէ ըմբոստութիւնը:

Մէծն Պետրոս հաճելի կրգանէ Օրիի այս խնդրանքը, կիազօր Դեսպան կ'անուանէ զայն, և անոր կ'ուտայ Գլուղապետութեան աստիճան:

Իսրայէլ Օրի երկու հարիւրի չափ հետեօրդներէ բաղկացեալ շքախումբով մը, որուն մէջ կային ամէն ազգէ զանազան գիրքով անձեր, ճամբայ ելաւ զէպի Պարսկաստան, իր հետ առնելով նաև 12 փոքրիկ թնդանօթ:

Մինաս վարդապետ մնաց Մոսկովա, իբրեւ ներկայացուցիչ, շարունակելու համար բանակցութիւնները:

Իսրայէլ Օրի իր շքախումբով կը համնի Շամախի, ուր կ'ըստիպուի երկար ատեն սպասել, որովհետեւ Պարսիկ իշխանութիւնը այսպիսի շքեղ զեսպանութենէ մը վախնալով կը վարանէր զայն ընդունիլ: Շահը կը կասկածէր թէ՛ Ռուսիոյ Զարը ինչո՞ւ համար հայ ազնուական մը զեսպան կը զրկէ: Եւրոպացիք ևս կը թելապրէին Շահը՝ որ չընդունի այդ զեսպանութիւնը:

Հակառակ բոլոր մտահոգութիւններուն, ՀիհՍէՅին ՇԱՀ ստիպուեցաւ ընդունիլ իսրայէլ Օրին:

Սպահանն մայրաքաղաքը փառաւոր ընդունելութիւն մը ըրաւ հայազգի զեսպանին (1709): Քանի մը օր վերջ Օրի ներկայացաւ Շահին և անոր յանձնեց Մէծն Պետրոսի ինքնագիր նամակը: Դեսպանը զրեթէ սպահական ոճով մը խօսեցաւ Շահին հետ, Պարսկաստանի մէջ հայերու հանդէպ հալածողական քաղաքականութիւն մը ի գործ զրուելուն հոմար: Հիւսէյին Շահ մեծ պատիւներ

Եւ-ՑԵՑ

23839-5



շոայլեց Օրիին, և խոստացաւ այնուհետեւ մեղմութեամբ վարութիւնը չայոց հետ:

Օրիի ներկայութիւնը և անոր վայելած մեծ հեղինակութիւնը անսահման խանդավառութիւն և մեծ յոյս ստեղծեց հայ ժողովուրդին մէջ:

Միւս կողմանէ, Ղարապաղի Մէլիքները Մինաս վարդապետին հետ խորհրդակցելով, զինուրական պատրաստութիւններ կը տեսնէին՝ Մեծն Պեարոսի յուսագրիչ խօսքերէն հրապուրուելով:

Իսրայէլ Օրի երկու տարի մնաց Սպահան, բայց չի գիտցուիր թէ ի՞նչ զործունէութիւն ունեցաւ հոն՝ հայ ազատագրական ծրագրին յաջողութեան տեսակէտով:

Օրիի ներկայութիւնն ի Պարսկաստան՝ Եւրոպացւոց քունը կը խանգարէ. անոնք կը սկսին գձուձ և նպատակաւոր տարածայնութիւններ հանել, ըսելով թէ, Իսրայէլ Օրիի անունին ատոերը փրանսերէնի ձեւափոխելով կը նշաշակէ ՆԱՌ ԹԱԳԱՀԻՈՐ ՊԻՏԻ ԸԼԱՅՅԱ Ա սերուացուոց հայոց անունու մէջ, և մարմինը թաղուեցաւ նոյն քաղաքին հայոց եկեղեցւոյ բակը (1711 տարւոյ Օգոստոս), իր հետ գերեզման տանելով հայոց անկախութեան իր հոյակապ ծրագիրը:

Շահը մտահոգ էր, ուստի, ամէն հնարամտութիւն ի գործ դրաւ Օրին հեռացնելու համար իր երկրէն:

Մեծն Պետրոս նոյն միջոցին թրքաց հետ պատերազմի բռնուած ըլլալով քիչ մնաց անոնց ձեռքը գերի պիտի իյնար՝ Փրուտ գետին եզերքը (1711):

Այս տեսակ նեղ դրութեան մը մէջ գտնուող Զարը անպատասխան կը թողուր Իսրայէլ Օրիի նամակները, զոր ան կը գրէր Շամախիէն, ուր անցած էր 1710 ի Սեպտեմբերին, օտարներու կողմէ իր դէմ նիւթուած ստոր դաւերուն պատճառաւ:

Օրի յուսահատ էր, յուսահատ էին և Մէլիքները, որովհետեւ, չայոց Խնդրոյն ի նպաստ՝ ո՛չ Եւրոպական պետութեանց, և ո՛չ ալ Ռուսիոյ կողմէ շարժում մը

կը նշամարուէր: Օրի կերպով մը անցաւ Աստրախան, որպէսզի ուղղակի թեթերոպորկի հետ — որ Ռուսիոյ նոր մայրաքաղաքը հոչակուած էր — յարաբերութեան մըտնելով շուտափոյթ կարգադրութեան մը բերէ խնդիրը: Սակայն, Օրիի բոլոր ջանքերը ապարդիւն մնացին, որովհետեւ, պատերազմի հրդեհը բորբոքուած էր Եւրոպիոյ մէջ, և Վեհապետները ատեն չունէին արեւելքի հեռաւոր մէկ անկիւնը բռնութեան ներքեւ գալարուող չայ ժողովուրդով զբաղելու....:

Իսրայէլ Օրի չկարողացաւ դիմանալ իր կրած այնքա՞ն անողոք հիասթափութիւններուն, և իր զժբաղդ չայրենիքին փրկութեան սիրոյն համար քսան երկա՛ր տարիներով թափած ի՛ր ջանքերուն անպտուղ մնալէն յուսահատ՝ մեռաւ Աստրախանի մէջ, և մարմինը թաղուեցաւ նոյն քաղաքին հայոց եկեղեցւոյ բակը (1711 տարւոյ Օգոստոս), իր հետ գերեզման տանելով հայոց անկախութեան իր հոյակապ ծրագիրը:

Իսրայէլ Օրիի վաղահաս մահէն յետոյ, անոր աշակից Խարբերդցի Մինաս վարդապետ եւս կը յուսալքուի. Եսայի կաթողիկոսէն Արքեպիսկոպոսութիւն ընդունելով Ռուսաստանի Առաջնորդ ու Աղուանից կաթողիկոսութեան ներկայացուցիչ կարգուեցաւ (1716):

Այսպէս վիժեցաւ ազատութեան անդրանիկ փորձերը, Եւրոպացւոց և, մանաւանդ Ռուսիոյ քաղաքական խարդախ Խաղերուն երեսէն:

Սակայն, հակառակ այս լքումին և յուսավրիպումներուն, Եսայի կաթողիկոս ձեռք առաւ չայրենիքի փրկութեան խնդիրը, և յարաբերութեան մտաւ Մեծն Պետրոսի հետ, մի՛շտ անկէ սպասելով այս գործին իրականացումը:



Գ

ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ  
—00—00—

ԱՐԵԱԿԱՆՔ ԴԻՊԻ ԿՈՎԿԱԾ ԵՒ ՆԱՀԱՆՁ

Հայերը եւ վրացիները զոհ դուս նենգամտութեան

— | o | ——

Երբ ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ ՌՈՌԱԿԱՆ գահը բարձրացաւ, ՌՈՌԱԿՈՅ սահմանները ծովերէ հեռու կը դժոնուէին, որով զուրկ էր արտաքին հաղորդակցութենէ: Ուստի, իր դըլ խաւոր ձգտումներէն մին եղաւ իշնել մինչեւ ծովերը և տիրել անոնց: Այս կերպով պիտի ունենար հզօր նաւատորմիդ մը և պիտի կրնար լայն հաղորդակցութիւններ ունենալ բոլոր աշխարհի հետ:

Զարին այս ծրագրին յաջողութեան արգելք էին իւլամ Օսմանցիներն ու Պարսիկները, և քրիստոնեայ Շըւէտը, որոնց ձեռքն էին մէկրածակայ ծովերը:

Առաջին առիթով Շուէտի դէմ կոռւելով տիրեց Պալթիկ ծովուն: Յետոյ մտածեց Սեւ և կասպից ծովերուն վրայ: Պալքանեան թերակղղիին Սլաւ, Յոյն և կովկասի Հայ, Վրացի ազգերուն պաշտպան հոչակեց ինքզինքը, որպէսզի պատրուակներ ստեղծէ, և ծովէ ծով ծաւալերու իր ծրագիրը յաջողցնէ:

Խսրայէլ Օրիի մահէն քանի մը տարի յետոյ, Աֆղանները յարձակեցան Պարսկաստանի վրայ, իսկ կովկասեան լեռնականներ արշաւեցին Հայաստան:

Կովկասի և իրանի: մէջ տիրեց մեծ շփոթութիւն:

ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ այս առիթէն օգտուելով մեծ բանակ մը կազմակերպեց, և ծովէն ու ցամաքէն յարձակելով Պարսկաստանի վրայ, վրաւեց Տերպէնառը և Պագուն:

Փրկութեան ժամը հնչած էր ուրեմն կովկասի քրիստոնէից համար: Պէտք էր ոտքի ելել, պարզել ապստամբութեան նուիրական դրոշակը, օգտուիլ առիթէն:

Վրաց ՎԱԽԹԱՆԿ թագաւորը զօրեղ բանակով մը թիֆլիսէն ճամբայ ելաւ կայսեր միանալու համար, իսկ Հայոց ԵՍՍՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍը, Ղարապաղցի 10.000 կարիճներու գլուխն անցած միացաւ Վախթանկի զօրքերուն: Մինաս Արքեպիսկոպոս արդէն կը գտնուէր ոուսաց բանակի կողքին:

Մեծ և ընդհանուր էր ոգեւորութիւնը Հայոց և Վրացիներու մէջ, որոնք, այլեւս զգուած մահմետական գիշատիչ ու կեղեգիչ լուծէն, հոգեւին կը տենչային թօթափել այդ լուծը, և խաչակիր ու մեծազօր Ռուսիոյ շնորհիւ տիրանալ անկախ և ազատ Հայրենիքի մը:

ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ պաշարեց (1725 Օգոստոս 25), Շամախին, սակայն հազիւ թէ զայն պիտի գրաւէր, յանկարծ լրեց պաշարումը, և նահանջեց դէպի Մոսկուա, Պարսից հետ դէմ առ դէմ ձգելով Հայերն ու Վրացիները, որոնք այսպէս անսակնալորէն յուսախաբուած՝ ստիպուեցան ինքնապաշտպանութեան դիմել:

Օսմանցիք՝ իրենց կրօնակից իրանը Ռուսիոյ դէմ պաշտպաննելու համար պատերազմի կը պատրաստուէին: ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ եւս կը զինուէր, և Հայերն ու Վրացիները կը դրդէր որ իրենց բոլոր ուժերը կասպից ծովուն եզերքը խմբելով, մինչեւ վերջին բոպէն դիմաղրեն, և եթէ նեղը մնան՝ անցնին Ռուս սահմանը:

Զարը տեսնելով որ երկու տէրութեանց դէմ կարող պիտի չըլլայ կոռւելու, խոհեմութիւն սեպեց հաշտուիլ: Բեթերսպուրկի մէջ 1725 Սեպտեմբեր 25 ին ստորա-

գրուի Ռուս-Պարսիկ դաշնագիրը, որով Ռուսիա կ'ըստանար Տէրպէնտ, Պաքու և Քիլան քաղաքները, իսկ միւս կողմէ յանձնառու կ'ըլլար Պարսկաստանը պաշտպանել, ճնշել ապատամբութիւնները և հակառակիլ չայոց և Վրաց ազատութեան դատին:

Հայերն ու Վրացիները այս դաշինքէն անտեղեակ կը շարունակեն իրենց կոփւն ու դիմումները՝ անօգուտ կերպով: Միւս կողմէ, Օսմանցիք իրանի օգնելու պատրուակով վրաւեցին Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը. Վախիթանկ իր զօրքով չուեց Ռուսիա:

Թուրքերը հետզետէ տիրեցին ամբողջ Վրաստանի և Հայաստանի մեծագոյն մասին, և դիմեցին դէպի Ղարապաղ ու Ղափան:

Մէլիքները խիստ նեղ դրութեան մը մատնուեցան, երեք հոդինոց Պատուիրակութիւն մը զրկեցին թեթերապուրկ, իրենց վիճակը պարզելով օգնութիւն հայցելու համար: Հազիւ վեց ամիսէն Պատուիրակները կրցան համարի թեթերապուրկ, ուր քաղաքական հանգամանքները բոլորովին փոխուած գտան: Զարը հաշտութիւն կնքած էր թուրքիոյ հետ (1724 Յունիս 24), որով, կասպից ծովուն արեւմտեան եղերքը Ռուսիոյ, իսկ մնացած մասը Ղարապաղն ու Ղափանը՝ թուրքիոյ բաժին կ'իյնար:

Մէծն Պետրոս խորհուրդ կուտայ Հայ Պատուիրակներուն որ հայերը գաղթեն նոր գրաւուած ոուս երկիրները, ուր անոնք պիտի գայելեն լայն ազատութիւններ:

Հայ ժողովուրդը մեծ վրդովումի մատնուեցաւ՝ երբ տեսաւ այնքա՞ն փայփայած իր մեծ յոյսին, գաղափարին խորտակումը, շնորհիւ Ռուս նենք քաղաքականութեան, որուն երեսէն, չարաշար տուժեց յետագային ալ մեր քամբաղդ ժողովուրդը:

—————ooo—————

Դ

Դ Ա Ի Ի Թ Պ Է Կ

Ե Ի Ի Ր

Պ Ա Տ Ե Ր Ա Զ Մ Ն Ե Ր Ը

ՍԻՒՆԵԱՅ ԱՇԽԱՐՀ ՃԻՆԳ ՏԱՐԻ ԱՆԿԱԽ ԵՒ ԱԶԱՏ

Ղարապաղի Մէլիքները խիստ ցաւեցան Մէծն Պետրոսի կողմէ նենգութեամբ լքուելնուն համար, և որոշեցին ամէն գնով պաշտպանել իրենց երկիրը:

Նոյն միջոցին. կովկասի լեռնաբնակ լեզկիները մեծ բազմութեամբ կը խուժեն Սիւնիք և կը հասնին մինչեւ Սեւանայ լիճ: Մէլիքները միաբանելով Ուտէացւոց Յովհաննէս իշխանին հետ, ուժգին կոփւներէ վերջ կը հալածեն զանոնք երկրէն դուրս:

Այս յաղթութիւնը կ'ոգեւորէ Մէլիքները, որոնք Իրանի Ճիւսէյին Շահին գահընկեցութենէն օգտուելով կը պարզեն ըմբոստութեան դրօշ, և Վրաստանէն ՍիւնեՅի Դ Ա Ի Ի Թ Պ Է Կ ը կը հրաւիրեն, որ գայ Սիւնիք, և գլուխ կանգնի իրենց այս ձեռնարկին:

Դաւիթ Պէկ մեծ անուն հանած էր Վրաստանի մէջ իրեւել քաջ, անվեհեր, փորձառու և հնարագէտ զօրապետ:

Իր հայրենակիցներուն հրաւէրը սիրով ընդունեց, Դաւիթ Պէկ և բուռ մը քաջերով եկաւ բանակիլ Սիւնիքի անմատչելի լեռները,

Դաւիթ Պէկի առաջին գործը եղաւ երկրին անդորրութիւնը իրենց յելուզակութիւններով խանգարող Ճ Կ Ա Ն Շ Ի Ր և Կ Ա Ր Ա Զ Ո Ր Լ Ո Ւ կոչուած թուրք վայ-

րենի ցեղերը մաքրել: Այս գործին յաջողութիւնը շուտով տարածեց իր համբաւը. ժողովուրդը սիրտ առաւ և հետզհետէ Դաւիթ Պէկի միացան կտրիճ երիտասարդներ, որոնց վրայ Դաւիթ Պէկ սպարապետ կարգեց սպայ Մխիթարյան: Հայ զօրաց թիւը հասաւ 2.000 հոգիի:

Միւնեաց Աշխարհի խաղաղութիւնը կ'ամրանայ և ժողովուրդը կը լծուի շինարարութեան: Սակայն և այնպէս, Պարսիկները կը խորվուին ու կը յարձակին Միւնիքի վրայ: Դաւիթի կը միանան ԹՌՈՐՈՍ ԻՇԽԱՆ, քաջն Ահետիք ՔԱՀԱՆԱՅԱՅՅԱՅ, ԻՇԽԱՆ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄԵԱՆ իրենց զօրքերով: Հայոց զօրութիւնը 7.000 մարտիկներէ կը բաղկանար այժմ, և այս թիւը վախ կ'ագդէր Հայոց թշնամիներուն:

Միւնչեւ այդ ատեն իրարութշնամի եղող Պարսիկ Խաները, Հայկական աւելի մեծ վտանգի մը առջեւ չգտնուելու կանխահոգութիւնով միացած էին: Դաւիթ Պէկ ինք յառաջ նետուեցաւ: Առաջին հանդիպումը խիստ յաջող եղաւ, Պարսիկ յարձակող ուժերը ցիր ու ցան եղան: Այս յաղթութենին յետոյ Դաւիթ Պէկ կ'ուզէ աւելի յառաջ խաղալ, բայց, ՆԱԽԻԶԵԽԱՆԻ Հայերուն կրած պարտութիւնը զինքը կը ստիպէ քաշուիլ ՀՈԼԻԶՈՐ գիւղը ուր կը շինէ ու կ'ամրացնէ նոյնանուն բերդը (1724):

ՀՈԼԻԶՈՐ եղաւ Հայոց փոքրիկ մայրաքաղաքը, և Դաւիթ Պէկ իր ընտանիքը փոխադրեց հոն:

Պարսիկ Խաները իրենց պարտութեան վրէժը լուծելու համար կը միաբանին Բարդուշատի Ֆաթալի խանին հետ, և 12.000 զօրքով կը յարձակին Զավսդուրի վրայ, ուր կը բանակէր Թորոս իշխան: Հայերը քանիցս ետ կը մղեն յարձակողները և նոյն իսկ կը յաջողին թշնամու հողերէն գրաւել:

Դժբաղդաբար, Թորոսի տարած յաղթութիւնները նախանձը կը շարժեն Մէլիք ՖՐԱՆԳՈՒԼԻՆ, որ դաւա-

ճանութեամբ բաժնուելով Թորոսին՝ անցաւ պարսիկներուն կողմ, որով, յաղթական Հայերու գլխուն՝ պարտութեան հարուածը իջաւ անակնկալօրէն:

Հայ կտրիճները պաշարուեցան խիստ սեղմօրէն. և թէև արիաբար կոռւեցան, սակայն թշնամիին ահեղ ուժին առջեւ նահանջեցին: Այս կորիւին մէջ ինկան Թորոս իշխան և 5.000 կտրիճ Հայեր:

Յաղթական այս կորիւէն սիրտ առած՝ Պարսիկները չորս կողմ աւեր սփռելով և մեծ ուժերով եկան պաշարել ՄԵՂՐԻ քաղաքը: Մէլիքները ամէն ճիզ թափեցին որ ՄԵՂՐԻՆ պաշտպանեն, բայց անօգուտ, որովհետեւ, ոսոխին ուժը անպարտելի էր: Ուստի յուսահատ, վճռեցին անձնատուր ըլլալ:

Ճիշտ այդ բոպէին իշխան ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄԵԱՆ 2.000 զօրքով օգնութեան հասաւ: Այս լուրը կրակեց սրտերը, և ահա սկսաւ ահեղ ու գիրկնդիման կորիւ մը:

ՄԵՂՐԻՑԻՔ ներսէն, Շահումեանի ուժերը դուրսէն ինկան Պարսիկներուն վրայ և ահուելի ջարդ մը տուին:

Շահումեանի տարած այս փառաւոր յաղթութեամբ կը լուծուի Թորոս իշխանի և իր նահատակ ընկերներուն վրէժը: Կոռւի դաշտին վրայ Պարսիկները թողուցին 11.000 դիակ և բազում աւալը: Մնացեաները ցիրուցան փախան (1725):

Այս կերպով նորահաստատ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՔԻՒԿ ԿԵՑՈՒԹԻՒՆԸ ընդարձակուեցաւ և զօրացաւ:

Հայրենի հոլին վրայ ծլած Հայ Անկախութիւնը հազիւ շունչ պիտի առնէր, երբ աւելի զօրաւոր թշնամի մը վլուն ցցեց. այդ թշնամին Օսմանցին էր:

Օսմանցիք աչքերնին տնկած էին դէպի Արևելք, դէպի կովկաս և Պարսկաստան:

Օսմանցիները օգտուելով Արևելքի մէջ տիրող կա-

ցութենէն, և յենով Մեծն Պետրոսի հետ կնքուած դաշինքի պայմաններուն, երկու զօրաւոր բանակ դրկեցին: Առաջին բանակը, որ կը գտնուէր Ալպանացի Քէ Օթրի հլի ԱՊՏՈՒԼԱՀ ՓԱՇԱՅԻ ճրամանին տակ, գըրաւեց երեանը, Նախիջևանը, Դավրէժը և յառաջացաւ մինչև Համատան: Խոկ երկրորդ բանակը, ՀԱՇԻ ՄՈՒՄԹԱՅԱ ՓԱՇԱՅԻ առաջնորդութեամբ յարձակեցաւ Ղարապղի Հայկ. Իշխանութեան վրայ:

Ան ու սարսափ տիրեց ամեն կողմ: Դաւիթ Պէկի շուրջինները, կազմակերպուած թուրք հզօր բանակը տեսնելով յուսահատեցան: Զօրքը բարոյալքուեցաւ և շատեր քաշուեցան անմատչելի լեռները:

Օսմանցիք պաշարեցին ՀՈԼԻՉՈՐԸ 70.000 զօրքով: Դաւիթ Պէկ իր հաւատարիմ զինակից ընկերներով և 150 զօրքով կ'որոշէ մինչեւ կերջին շունչ պաշտպանել բերդը: Հիանալի ու հերոսական էր բուռ մը կտրիճներուն մղած պայքարը և իրենցմէ երկուհարիւր անգամ ուժեղ թուրք կանոնաւոր զօրաց դէմ ցոյց տուած ընդդիմութիւնը: Թուրքերը թնդանօթի ահեղ կրակի մը կ'ենթարկեն Հոլիծորը: Բերդապահ կտրիճները անփոյթ են:

Կոռւի տաք միջոցին Միսիթար և Տէր Աւետիք քաջ զօրականները խումբ մը քաջերով, բերդի գաղտնի մէկ դրնէն դուրս ելլելով յանկարծակի յարձակեցան թրքաց վրայ, և զանոնք շփոթութեան մատնելով անխնայ կոտորեցին: Այս անակնկալ հարուածէն ահարեկ թշնամին սկսաւ փախչիլ (1726):

Հաճի Մուսթաֆա Փաշա շունչը երեան առաւ, զոր նախապէս գրաւած էր:

Սակայն, Հաճի Մուսթաֆա փաշայի ծանր ՃՆՇԵց այս պարտութիւնը: Նոր զօրք գումարեց և կրկին պաշարեց Հոլիծորը:

Դաւիթ իր հնարագիտութեամբ և անպարտելի կո-

րովով գիւցազնութեան նոր զրուագ մըն ալ աւելցուց Հայ պատմութեան մէջ: Օսմանցւոց բանակին վրայ գիշերանց երամակ մը էտ ձի թող տալով կատղեցուց թշնամիին ձիերը, և զօրաց մէջ ինկած շփոթութենէն օգտուելով, յարձակեցաւ անոնց վրայ և փառաւոր յաղթանակ մը տանելով, նորածիլ Հայրենիքը փրկեց վաղահաս ու մհասափիւր կործանումէ մը:

Դաւիթ Պէկի թրքաց վրայ տարած յաղթութիւնները հաճոյ թուեցան Պարսից ԹԱՇՄԱԶԲ Բ. ՇԱՀԻՆ որ հրովարտակով մը իր ինդակցութիւնը յայտնեց, և անոր տուաւ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ տիտղոսը, և իր անունով դրամ կտրելու իրաւունք:

Այսպէս, վեց տարի անընդհատ կոռւելով Դաւիթ Իշխան հիմնեց ՍԻԽՆԵԱՅ ԱՇԽԱՐՀի փոքրիկ իշխանութիւնը՝ ի մեծ ինդութիւն բազմատանջ և անտէրունջ Հայկազն ժողովուրդին:

Բայց ափսո՞ս, Հայոց սև բաղդէն, շատ կարճ տեւեց անհուն զոհողութեամբ ձեռք բերուած այս անկախութիւնը. որովհետեւ Դաւիթ Պէկ, հիւանդանալով մեռաւ, — և ըստ ոմանց՝ հայ գաւաճանի մատուցած թոյնով — կարճ շրջանի մը մէջ աննման հերոսի և հնարագէտ զօրագարի մը համբաւը թողլով (1728):

\*\*\*

Դաւիթ Պէկի անակնկալ մահէն սիրտ առին Օսմանցիք և որոշեցին փոքրիկ՝ բայց իր գիրքով և զիմանական ուժեղ կեցուածքով մտահոգութիւն պատճառող Հայկ. իշխանութիւնը հիմնովին բնաջնջել, ուստի, երրորդ անգամ ըլլալով պաշարեցին Հոլիծորը:

Հայոց սպարապետ և Դաւիթ Պէկի յաջորդ իշխան ՄԽԻԹԱՐ կ'ուզէ զիմագել, բայց բերդապահները դաւե-

լով բերդը յանձնեցին Թրքաց՝ խոստում առնելով որ  
իրենց թոյլ պիտի տրուի ազատորէն բերդէն մեկնելու:

Օսմանցիք խոստումնին դրժեցին. բերդը գրաւելէ  
յետոյ բոլորը սրէ անցուցին:

Միսիթար՝ որ կրցած էր փախչիլ, նոր ոյժ հաւա-  
քելով քանի մը քաղաք գրաւեց: Թուրք զօրքը ինկաւ  
Միսիթարի ետևէն. Միսիթար իր մարդոցմով ամրացաւ  
ԽՆՉՈՐԵՍՔ բերդին մէջ:

Մատնիչ և դաւաճան քանի մը հայեր միաբանած՝  
գիշեր մը քնացած պահուն կը կտրեն Միսիթարի գլուխը  
և կը զրկեն Դավրէժ նստող թուրք փաշային:

Փաշան խիստ կը ցաւի այսպիսի քաջ զօրավարի մը  
դաւաճանօրէն գլխատուելուն վրայ, և կը հրամայէ որ  
տեղն ու տեղը գլխատեն այդ դաւաճանները՝ իբրև ար-  
դար հատուցում:

Այս ազգադաւ դէպքերէն յուսահատ՝ Տէր Աւետիք  
իր ընտաննօք քաշուեցաւ Ս. Երուսաղէմ, իր մեղերը  
քաւելու համար:

Այսպէս վերջացաւ Սիւնեաց Աշխարհի անկախու-  
թիւնը, որ հազիւ հինգ տարի ապրեցաւ, և որուն հա-  
մար ինկան բազմաթիւ քաջեր:

Դաւիթ Պէկի հիմնած իշխանութիւնը ո՛չ միայն կարե-  
լի էր տեւականացնել, այլ եւ ընդարձակել զայն ՚եթէ Հայ  
դաւաճաններ չի գտնուէին եւ ամենքը անհախանձօրէն բոլո-  
րուէին ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵՍՆ ԳՈՐԾԻՆ շուրջ:



## ՄԵԼԻՔՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒԿՈՒԹԻՒՆԸ

— | —

ԶԱՐՅ ԿԲ ՄԵՐԺԷ ՀԱՅՈՅ ՕԳՆԵԼ,

Պատերազմ Օսմանցւոց եւ Պարսից միջեւ

—) (o)—

Հերոսական խիզախումներով և ծանր զոհողութիւ-  
նով հիմնուած մանուկ Հայաստանի իշխանութիւնը դա-  
ւաճանօրէն քանդուելուն վրայ Մէլիքները չե՞ն յուսահա-  
տիր, այլ, անկախութեան պայքարը ուժգնօրէն կը շարու-  
նակեն: Ուստի, Մէլիք ԱհԱն, իր ԹԱՐԻԽԱՆ եղբայրը  
Բեթրսպուրկ՝ Զարին մատ կը զրկէ յայտնելու՝ թէ Հայ  
զօրականները պատրաստ կ'սպասեն Ռուս բանակի օգ-  
նութեամբ ազատելու Սիւնիքը Ղարապաղն ու Երևանը:

Արքունիքը սակայն որ բարեկամութեամբ կապուած  
էր Պարսից հետ, կը մերժէ օղնել Հայոց, և կը թելադրէ  
գաղթել Ռուսիա:

Այդ միջոցին, Պարսից Թահմազը Բ, Շահը օգուտ  
քաղելով Թրքաց տկարութենէն, գրաւեց ամբողջ Հայաս,  
տանը (1750): Յաջորդ տարին, ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒՀ  
Առաջինի սպարապէտ ՀէքիՄ ԶԱՏէ ԱԼԻ ՓԱՇԱ մէծ  
ուժով ինկաւ Պարսից վրայ, և ՀԱՄԱՍԱՆի մօտ, կու-  
րիճանի դաշտին մէջ չարաչար պարտութեան մատնեց  
դանոնք: Շահը կ'ըստիպուի Թրքաց զիջիլ մինչև Երանու  
գեաը (1752):

Պարսկաստանի մէջ ներքին քաղաքական խոռվու-  
թիւն մը ծայր տուած էր: Երկրին գահը ձեռք ձգելու

համար ԽՍՆերը կը պայքարէին իրարու դէմ: Ասոնցմէ ամենէն հզօրը՝ Խօրասանցի ՆԱՏԻՐ ԱԼԻ, Թրքաց դէմ տարած իր քանի մը յաղթութեամբ, — մանաւանդ Արփա Զայի առջև, 1753 Յունվար 14ին — ո՛չ միայն վերագրաւեց Հայաստանի մէկ մասը, այլ և յաջողեցաւ Պարսից Գահը բարձրնալ (1756): Ղարապաղի Մէլիքները առիթէն օգտուելով կոտորեցին իրենց սահմանին մէջ գտնուող Թուրքերը:

Նատիր Ալի ինքզինք Շահ կը հոչակէ (1756 Մայիս 24): Թագալրութեան հանդէսին հրաւիրուած էին Ս. Էջմիածնի կրետացի Աբրահամ Կաթողիկոսն ու Մէլիքները: Կաթողիկոսը Շահին սուրը օրհնեց և կապեց անոր մէջքը: Հայոց Հայրապետը Շահին մտերիմն էր, այս պատճառաւ Շահը քաղցրութեամբ վարուեցաւ Հայ ժողովուրդին հետ, Մէլիքները հաստատեց իրենց իշխանութեան մէջ, իրաւունք տուաւ անոնց ինքնազլուխ իշխելու իրենց երկրին մէջ, փոխարէն որոշ տուրք մը վճարելով: Աբրահամ Կաթողիկոս յաջողեցաւ Շահէն վերլուստանալ Ս. Էջմիածնայ յափշտակուած կալուածները:

Նատիր Ալի Շահ 1746 թուին ստիպուեցաւ Օսմանցիներու դէմ ճակատի երևանի մօտ, ուր, չորս օր պատերազմելով ջախջախեց Թուրք բանակը, բայց սահմանները անփոփոխ պահելով հաշտուեցան:

Ցաւալի է ըսել, որ Հայ Մէլիքները, Նատիր Շահին կողմէ իրենց տրուած անկախութենէն չօգտուեցան. Փոխանակ միանալով Դաշնակցային իշխանութիւն մը հաստատելու, իրարու հետ անհամաձայն գտնուելով պառակտեցան: Մէլիք ՇԱՀՆԱԶԱՐ սպաննեց իր երեց եղբայրը, և անկէ խլեց ՎԱՐՍՆԱՅԻ իշխանութիւնը:

ԿիկիՍՏԱՆԻ Մէլիք ԵՈՒՍՈՒԹ և ԶՐԱԲԵՐԴԻ Մէլիք ԱԴԱՄ միաբանելով ուղեցին պատժել Շահնազարը, Շահնազար իր աղջիկն ու ՇՈՒՇԻ բերդը Պարսից ՓԱ-

ՆԱՀ ԽՍՆԻ յանձնելով՝ ինք ելու երկու Մէլիքներուն դէմ և տամներկու տարի կտուելով յաղթեց անոնց. Մէլիքները փախան Վրաստան: Փանահ իշան տիրեց անոնց երկրին:

—————ooo—————

## Զ

ՌՈՒՍԵՐԸ ԴԵՊԻ ԿՈՎԿԱՍ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՏԱՐԻՆԵ Բ. ԵՒ ՅՈՎԱՔ ԱՐԴՈՒԹԵԱՆՑ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԹԱԳԱՆԻՈՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՓՈՐՁԵՐ

ՆՈՐ յՈՒԱՆԵՐ ԵՒ ՆՈՐ պատրանքներ

————— | —————

Ոռուք աչքերնին տնկած էին դէպի Կովկաս և Հայաստան: Ռուսական գահին վրայ բազմած էր Մեծին Պետրոսի կինը՝ ԿԱՏԱՐԻՆԵ Բ. Կայսրուհին (1762-1796), որ Հայերը հրաւիրեց իր երկիրը, ու մեծամեծ արտօնութիւններ տուաւ անոնց: Այսպէս, Խրիմէն 13 հազար Հայեր գաղթեցին Պետրապիա, և հիմնեցին ԳՐԻԴՈՐԻ-ՍՈՊՈԼՐ, Տօն գետին վրայ՝ ՆՈՐ ՆԱԽԻՉԵԽԱՆ, շէնցուցին ու ծաղկեցուցին զանոնք:

Հայ Մէլիքներու սրտին մէջ ազատութեան նոր ձգտում մը ծնաւ: Մէլիք Աղամի որդին ՄէջձԼՈՒՄ, Մէլիք եռուսուֆի որդին ԱԲՈՎ, ու Տիգանի Մէլիք ԲԱԽ-ԱԼՄ Ռուսաց կողմն անցան: Փանահ իշանի որդին իպրահիմ՝ տակն ու վրայ ըրաւ անոնց երկիրը, և ժողովուրդը ստիպուեցաւ գաղթել Վրաստան և այլուր:

Ոռւսական երկրակալական ախորժակը սրուած էր, և կատարինէ Բ. Զարուհին՝ Հայոց մէջ Ռուսիոյ հանդէպս ստեղծուած համակրութիւնը օգտագործեց ի նպաստ իր քաղաքական ծրագիրներուն:

Աստրախանի առաջնորդ Արդութեանց Յովսէփ Արքեպիսկոպոս՝ որ մեծ ազդեցութիւն ունէր պետական մարդոց մօտ, ու սիրելի էր նաեւ կատարինէ կայսրուհւոյն, իր ազգին երջանկութեան եւ բարօրութեան համար գիշեր ցորեկ տքնեցաւ եւ յաջողութիւններ ձեռք բերաւ: 1781ին, Նոր-Նախիջեւանի մէջ իր ջանքերով բացուեցաւ Հայկական Դատարան, որուն համար 126 յօդուածէ բաղկացեալ Դատաստանագիրք մը գրեց, որ մինչեւ ծանօթ Պօլօժէնիոյ հրատարակումը իր գոյութիւնը պահեց: Ան էր որ հիմնեց Պետարապիոյ ԳՐԻԳՈՐԻՍՈՂՈՅԹԸ քաղաքը, ուր հաստատուեցան Թուրքիայէն գաղթող Հայերը. անոնց տնտեսական ապահովութիւնը և առանձնաշնորհումներ ձեռք ձերլու համար քանիցս Բեթերսպուրկ գնաց ու յաջողեցաւ հրովարտակներ ստանալ, որոնց զօրութեամբ Աստրախանի, Գրիգորիսօպոլի, Ղղարի, Տէրպէնտի, Խրիմի և Մողոկդ Հայ գաղութներուն կ'արտօնուի ունենալ իրենց Հայկական Դատարանները, և կառավարուիլ տոհմային օրէնքներով:

Յովսէփ Արքազան, կայսրուհին հետ ունեցած ջր մտերմութենէն ու ազդեցութենէն օգտուած է միշտ, ու անոր խորհրդով պատրաստեց կազմուելիք ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱԼՈՐՈՒԹԵԱՆ մը ծրագիրը, որ է,

Ա.— Հայկական Նախանգները Ռուսիոյ անմիջական հովանաւորութեան ներքեւ պիտի կազմեն առանձին թագաւորութիւն մը:

Բ.— Հայերը տարեկան տուրք մը պիտի վճարեն Ռուս պոտութեան. իսկ պատերազմի ատեն զօրքի

Գ.— Հայաստանը պիտի կառավարուի իր սեփական օրէնքներով :

Դ.— Ռուսական զօրաբաժին մը պիտի մնայ Հայկական Նախանգներուն մէջ՝ որոշ ժամանակի մը համար, թէ՛ երկրին պաշտպանութեան, եւ թէ անոր անդորրութեան վրայ հսկելու համար :

Ե.— Հայոց Թագաւորին ընտրութիւնը պիտի կատարուի կայսրությոն ձեռքով, եւ Թագաւորը իր դեսպանը պիտի ունենայ բեթերսպուրկի մէջ :

Զ.— Մայրաքաղաք պիտի ունեայ ԵՐԵԽԱՆԸ եւ կամ ՎԱՂԱՐԺԱՊԱՏԸ իսկ Հայոց ազգային գրօշակը պիտի ըլլայ եռագոյն :

Է.— Երկու Երկիրները կը կապեն առեւտրական դաշնիք, եւ կը հաստատեն մաքսային օրէնքներ :

Արդութեան Արքեպիսկոպոսի մտերիմ և գլխաւոր աջակիցն էր Պոտէմքին իշխանը, որ մեծ հեղինակութիւն կը վայելէր արքունիքին մէջ, և Հայաստանի Թագին թեկնածու էր: Պոտէմքին իր բոլոր ձիգը թափեց և աշխատեցաւ որ իրականանայ այս ծրագիրը, ու ինքն ալ զգենու Հայոց Թագն ու Ծիրանին՝ ի մեծ խնդութիւն բազմատանջ Հայ Ազգին:

Բանակցութիւնները դեռ կը շարունակուէին և վերջնական ձեւ մը դեռ չէր ստացած այս ծրագիրը, երբ գրադարար, Ռուսաց մեծազօր կայսրուհին կատարինէ Բ. մեռաւ (1796), որով գալրեցան բանակցութիւնները:

Կատարինէի կը յաջորդէ ՊՕՂՈՍ Ա. (1796-1801), որ իր նախորդներուն պէս Հայոց հանդէպս բարեացակամ կը գտնուի, օգտուելու համար անոնցմէ:

Զարը մտերմացաւ Արդութեանց Արքազանի հետ, որ երբեւ Ռուսօֆիլ ազգասէր մը համբաւոր դարձած էր:

Նոյն միջոցին Հայոց Բնդհանուական Հայրապետ ՀՈՒԿԱՍ Ա. ԿԱՐՆԵՅՅԻ վախճանած ըլլառվ, Էջմիածնի Միաբանութիւնը ժողով կը գումարէ նոր ընտրութիւն կատարելու համար: Կ'ուզուի Արդութեանց Արքեպիսկոպոսը ընտրել, բայց ազդեցիկ միաբաններէն Մինաս Արքեպիսկոպոս կ'ընդդիմանայ յայտնելով թէ:

« Քանի որ Ա. Էջմիածնի Օսմանցւոց գերիշանութեան ներքեւ կը գտնուի, խոհեմութիւն չէ իր ոռուամէր և թրքատեաց ընթացքով ծանօթ մէկը բազմեցնել Մայր Աթոռոյ վրայ, զի այս պարագան կրնայ կարգ մը կասկածներու տեղի տալ, և պատճառ դառնալ Հայ ժողովուրդի վնասին»:

Միաբանութիւնը բանաւոր կը գտնէ այս դիտողութիւնը և երկու թեկնածուներ կ'ընտրէ, — մին՝ Ռուսատանի մէջ Ա. Էջմիածնայ Ծայրագոյն նուիրակ ԵֆրեՄ ԱրքեՊ. ԶՈՐԱԳԵՂՅԻ, իսկ միւսը՝ Կ. Պոլսոյ Նուիրակ ԴԱՆԻԵԼ ԱՐՔԵՊ. ՍՈՒՐԱՄԱՆԵՅԻ, որ Պատրիարք ընտրած էին Պոլսոյ մէջ:

Հնարութեան թուղթերը Դաւիթ Եպիսկոպոսի միջոցաւ կը դրկեն Պոլիս, որպէս զի, երկու թեկնածուներէն մին ընտրեն, և կայսրական վաւերացման ենթարկելով հրովարտակը ստանան:

Ռուսերը կ'իմանան իրողութիւնը, լուր կը դրկեն Միաբանութեան, ըսելով թէ Արդութեանցէ զատ ուրիշ ո'հէ ընտրութիւն պիտի չճանչնան:

Միաբանները կրկին ժողով գումարելով Եփրեմի տեղ Յովսէփ Արդութեանցը կը նշանակեն, և մասնաւոր նամակով մը զայն կը հասցնեն Դաւիթ Եպիսկ.ին ի կարին, ուր դեռ նոր հասած էր ան:

Օսմ. կառավարութիւնը, իր հպատակ Հայոց ներքին խնդրոց մէջ Զարին միջամտութիւնը լսելով կը յայտնէ Հայոց որ Յովսէփը չընտրեն: Կ'ընտրուի կեսարիոյ

Առաջնորդ ԱՏԵՓԱՆՆՈՍ ԱՐՔԵՊ. ը: Կեսարացիք ոտքի կ'ելլեն և չե՞ն թողուր որ իրենց Առաջնորդը հեռանայ: Ստեփաննոս կը հրաժարի:

Այս հրաժարման վրայ, Պոլսոյ երեւելինները, — Ամիրաներ, միւթէվէլլիններ, արհեստապետներ ժողով գումարելով կաթողիկոս կ'ըտրեն նիկոմիդիոյ Առաջնորդ և Արմաշը բարեկարգիչ ԲԱՐԹՈՂԻՄԵԽՈՍ ԱՐՔԵՊ. ԿԱՊՈՒՏԻԿԵՍ ԱՆՆՈՐ, սակայն ճնշումի տակ ա'ն ալ կը հրաժարի: Երրորդին կ'ընտրեն Պոլսոյ Պատրիարք ԴԱՆԻԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍը:

Զարը կը ցանկար Մայր Աթոռոյ Հայրապետ տեսնել Արդութեանցը, որպէս զի, անոր միջոցաւ ամբողջ Հայ ժողովուրդը Ռուսիոյ կապէ, ու իր քաղաքական ծրագիրներուն ծառայեցնէ: Թրքահայերը գիաէին այս պարագան, և կը զգուշանային:

Ռուսաց Զարը տեսնելով որ Յովսէփի ընտրութիւնը ձախողած է, Պոլսոյ իր դեսպան ԹԱՄԱՐՈՎԿի միջոցաւ խոռվութիւն կը ձգէ Հայոց մէջ. և միւս կողմէ ճնշում բանեցնելով Բ. Դրան վրայ՝ Դանիէլը թենէտոս կղզին աքսորել կուտայ:

Վերջապէս, Օսմ. կառավարութիւնը տեսնելով որ, այս ինտիրը քաղաքական բարդութիւններ առաջ պիտի բերէ, ճարահատ, խորհուրդ կ'ուտայ Հայոց, որ Յովսէփ Արդութեանցը ընտրեն: Գրեթէ բռնութեամբ է որ Յովսէփ կաթողիկոս կ'ընտրուի և Օսմանցւոց ու Պարսից վեհապետներու կողմէ ֆէրմաններով կը հաստատուի ըստ սովորութեան:

Պօղոս Ա. Զարը գոհ մնալով այս յաղթանակէն, ինք ևս մասնաւոր հրովարտակով կը վաւերացնէ Յովսէփի ընտրութիւնը և կը հրամայէ մեծահանդէս ընդունելութիւններ կատարել Հայոց Հայրապետին, դէպի Ա. Էջմիածին անոր ճամբորդութեան ընթացքին:

է

## ՀԱՄԱՏԱՆՅԻ ՅՈՎԱԿԻՓ ԷՄԻՆԻ

Ա Զ Ա Տ Գ Ր Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

— | o | —

Զարմանալի պարագայ մըն է՝ որ նախկին Հայ ազատագրական ձեռնարկներուն ուսհվիրանները եղած են գրլիսաւրաբար Պարսկաստանէն Հնդկաստան գաղթող Հայեր, ինչպէս՝ Խորայէլ Օրի, Յովսէփ Էմին, Յովսէփ Ամիրխան, Սեթ Աբգար, և այլն:

Այս պարագան սակայն իր որոշ հիմնակէտն ունի: Զէ՞ որ Հայ ժողովուրդը մահմետական լուծի տակ, դարերով ճնշուած, հարստահարուած ու հալածուած է, և այդ իսկ պատճառով խմորուած են ազատագրական պարահներն ու ըմբոստութիւնները:

Երբ Պարսկահայեր Հնդկաստան կ'երթան բաղդ որոնելու համար, հոն կը տեսնեն ազատ կեանք, ցեղերու հաւասարութիւն և արդարութիւն, և յիշելով Հայրենիքի Հայոց օտար անարդ լուծի ներքեւ կրած բազմատեսակ նեղութիւնները, գաղափարներ կը յղանան զանոնք ազատելու այդ բռնակալութենէն, և մարդավայել կեանքի մը տիրացնելու:

Խորայէլ Օրիէն վերջ նո՛ր Խորայէլ մըն է նաև բնիկ Համատանյի ՅՈՎԱԿԻՓ ԷՄԻՆԻ, այլ անուամբ Ճօղէփ Էմին, որ իր նախնական կրթութիւնը ստացած էր Ճնդավայրի տոհմային դպրոցին մէջ:

Յովսէփ Էմին հազիւ 17 տարեկան, կը թողու Համատանը և կ'անցնի կալկաթա՝ իր հօրը քով, ինքն ալ

Մայր Աթոռոյ Միաբանութեան կողմէ հրաւիրակներ կուգան՝ Վրաստանի մայրաքաղաքը, ու հոն կրսպասեն Ս. Կաթողիկոսին դալստեան, զայն Մայր Աթոռ առաջնորդելու համար:

Յովսէփ Կաթողիկոս փառաւոր ուղևորութեամբ կը համնի Թիֆլիս, և երբ կը պատրաստուեր հրաւիրակ եկող միաբաններուն հետ մեկնիլ Ս. Էջմիածին, հիւանդանալով — և կամ, ըստ տիրող կարծեաց՝ բաղնիքի մէջ Վրացիներէ թունաւորուելով — կը վախճանի, տակաւին օծում չընդունած (1801 Մարտ 2): Մարմինը կը փոխադրեն Ս. Էջմիածին, և կը թաղեն Սիմէօն Կաթողիկոսի դամբարանին մէջ:

Արդութեանցի մահով երրորդ անգամ ըլլալով վիժեցաւ Հայկ. Թագաւորութեան մը ծրագիրը:



ՅՈՎԱԿԻՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ

իր կարգին իր բաղդը փորձելու: Հո՛ն, շնորհիւ տիրող իրաւակարգին, կը յաջողի շփում ունենալ Անգլիացիներու հետ և առիթ կ'ունենայ ծանօթանալ կարգ մը պաշտօնատարներու: Էմին յափշտակուած երկրին մէջ տիրող ազատութենէն, կը խորհի անցնիլ Անգլիա, ուսանիլ զինուորական արուեստը, դառնալ Հայրենիք, կըթել ժողովուղը այդ արհեստին մէջ, և ապստամբութիւն յառաջացնելով փրկել Հայրենի Աշխարհը օտար կեղեքիչու բարբարոս լուծէ:

Կալկաթա համնելէն չորս տարի յետոյ, 1734 ին, շոգենաւ կը նստի Յովհաննէս Մասենեան անուն ընկերոջ մը հետ, Անգլիա երթալու համար: Շոգենաւին մէջ ծառայութիւններ կը կատարէ, իր ճամբու վարձքին փոխարէն: Երբ Լոնտոն կը համնի, կը սկսի նեղութեան և զըրկանքի օրերը՝ իրեն համար:

Թէպէտ եւ Լոնտոնի մէջ կան եղեր Հայազգի առեւտրականներ, սակայն էմին կը զգուշանայ անոնց հետ ծանօթանալէ, չգիտցուիր ինչո՞ւ: Բայց, օրին մէկը, երբ իր ծրագրին վրայ մտածուն կը շրջէր, հանդիպեցաւ քրտական տարագով մարդու մը: Էմին հետաքրքրութեամբ կը մօտենայ անոր, կը ծանօթանայ և կը հասկնայ որ Հայ մըն է. և ամէն տարուան պէս եկած է Լոնտոն, իր հետ բերած արաբական նժոյները ազնուականներուն վաճառելու համար, Յովսէփ էմին իր ծառայութիւնը կ'առաջարկէ անոր, որ սիրով կ'ընդունի:

Էմին, իբրեւ թարգման ընկերանալով այդ մարդուն, կը յաջողի ծանօթանալ շարք մը Լորտերու կարգին նաև Նորթընպրլէնտի Դուքսին: Էմին իր ճարպիկութեամբ և համարձակ խօսելակերպով սիրելի կը դառնայ Դուքսին, ու մտերմօրէն անոր կը բանայ իր սիրտը, կը պատմէ ազգին ծագումը, փառաւոր անցեալը ու դժբաղդ ներկան: Կը պարզէ նաև իր ծրագիրը՝ իր ճնշուած ցեղին փըր-

կութեան համար, և զինուորական արուեստի մասին իր ունեցած հետաքրքրութիւնը:

Դուքսը խիստ գնահատելով էմինի այս բոլոր յայտ, նութիւնները, կ'ուզէ օժանդակել անոր: Իր խոկ ձեռքով նամակ կը գրէ թագաւորին երկրորդ զաւակ ՔԸՄՊԸՐ-ԼէՆՏԻ Դուքսին, և իմ անոր ներկայացնելով, անկէ կը խնդրէ անհրաժեշտ օգնութիւնն ընել, զինուորական ուսում տալու համար անոր:

Արքայորդին շուտով կը համակրի էմինի, և գայն իր հովանաւորութեան տակ առնելով կը դրկէ Ուօլինի զինուորական զինանոցը: Յովսէփը կ'ըլլայ ձօզէֆ էմին, որ զինուորական ուսման կը հետեւի քանի մը տարի, և հմտանալով անոր, կը դառնայ սպայ:

Այն ատեն ձօզէֆ կ'որոճայ իր ծրագրին իրականացման վրայ: Կը թողու Անգլիան, և քանի մը հետեւորներով բրօբականտային գաղտնի ճամբորդութեան մը կը ձեռնարկէ դէպի Հայրենի Աշխարհ:

Նախ կ'երթայ Խոկէնտէրուն, ուրկէ հետզհետէ զանազան կարեւոր և հայաշատ քաղաքներ, ի մէջ այլոց Հալէպ, Խնուս, կարին, երեւան և Վաղարշապատ կը հանդիպի, ու իր ազատագրական ծրագիրը կը պարզէ Հայ երեւելիներու և մտաւորականներու՝ անոնց ներշնչելով յեղափոխական գաղափարներ, և ջանալով անոնց սրտին մէջ արծարծել Հայրենիքի սէրն ու գաղափարը:

Շատերէն պատիւ տեսաւ, սակայն խիստ շատեր ալ ատեցին զինքը, ընդզգեցան իր դէմ ու նոյն խոկ կեանքին սպառնացան:

Ձօզէֆ էմին այս տառապալից ճամբորդութենէն Լոնտօն դարձին կը սկսի թղթակցիլ Վրաստանի ՀերԱկէ թագաւորին հետ. անոր կը նկարագրէ Անգլիոյ զօրութիւնը, մէծութիւնը և ժողովրդեան հանգիստը, շնորհիւ արդար օրէնքներու և զինուորական յառաջդիմութեան:

Էմին կ'առաջարկէ անցնիլ Վրաստան, զինուորական արհեստը սորվեցնել Վրացիներուն և Հայերուն, և միացեալ ուժերով ապստամբիլ, եւ Պարսից անարդ լուծէն փրկել Վրաստանն ու Հայաստանը:

Էմին՝ պարզ թղթակցութեամբ չի գոհանար սակայն, կարգ մը յանձնարարական նամակներով կը մեկնի դէպի թեթերսպուրկ, և անկէ կ'անցնի Վրաստան, Հերակլ թագաւորին մօտ, կը խօսի, կը ջանայ Հայոց և Վրաց միջեւ գործակցութիւն մը ստեղծել: Անկէ կ'անցնի Ս. Եղմիածին, ՍիՄէՕՆ Ա. Երեւանցի կաթողիկոսին, Մէլիքներուն և մեծամեծաց հետ կը խօսի իր ծրագրին ի նպաստ անհրաժեշտ համագործակցութիւնը ապահովելու համար, և ամբողջ քսան և հինգ երկար տարիներ ինքինքը կը նուուիրէ այս ինսլոյն: Ի՞նչ օգուտ սակայն, որ իր բոլոր ջանքերն ու աղերսանքները արդիւնք մը չունեցան: Իրարու հանդէպ անվստահութիւն, նախանձ, ատելութիւն ունեցող ժողովուրդի մը մէջ շա՛տ դժուար էր համերաշխութիւն գոյացնել: Այս անմիաբանութիւնը, և իր հայրենասիրական մեծ ջանքերուն անպտուղ մնալը տեսնելով Էմին, կը յուսահատի և լքելով կովկասի իր առաքելութիւնը՝ կ'անցնի Պատրա, ու անկէ կալկաթա, ուր կը գտնէ իր նախկին զինուորական ընկերները, և որոնց միջամտութեամբ Անգլիական կառավարութիւնը թոշակ կը կապէ ձօղէֆի:

Էմին, զինակից բարեկամաց ինսլուանքով իր կենսագրութիւնը գրի առած է անգլիերէն լեզուով: Իր զինակից զօր. Լարնաքի 1792 ին հրատարակեց զայն բարեկամաց համար հարիւր օրինակ միայն, հետեւեալ վերնագրով,

*The life and adventures of Joseph Emin, an armenian written in English by himself, 1792, London.*

Այս գիրքը, որ լսա կոնսոնաբնակ Տիար Պետրոս Տօնապեանի տուած տեղեկութեանց, կը բաղկանայ

640 Էջ, ճշգրիտ աեղեկութիւններ կ'ուտայ կովկասեան ցեղերու — Հայ, Վրացի, Մնկրել Լեզկի ևայլն — վրայ, նկարագրելով անոնց կենցաղը, սովորութիւնները: (Տե՛ս Տ. Մուշեղ Սերոբեանի «Մանչէսպի Հայ Գաղութը» անուն գրքին առաջին յաւելուածը):

Էմին բաւական յառաջացած տարիքին կ'ամուսնայ Նոր-Ջուղայի մէջ, և իր թոռը կ'ըլլայ Սեթ Արգարի կողակիցը: Սեթ Արգարի վրայ պիտի խօսինք մեր պատմութեան երկրորդ Հատորին մէջ:

\* \* \*

Մինչև հոս, Հայաստան Աշխարհի անկախութեան բաղձումէն մինչև 19րդ դարու նախօրեակին վրայ իր ներածութիւն՝ խիստ կարեւոր ու հետաքրքրական ամփոփի հայեացք մը նետելէ վերջ, անցնինք այժմ մեր բո՛ն և ընդարձակ՝ ժմթ. Դարէն մինչեւ մեր օրերու ՀԱՅՈՅ ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ:



## ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ

Բազմամեայ և տքնածան աշխատութեամբ չենք յաւակնիր թէ եղական գործ մը արտադրած ենք, սակայն, յարգելի ընթերցողը պիախ տեսնէ՝ թէ մենք տարբեր ուղղութեան մը հետեւած ենք, ա'յն է Թուրքիոյ ներքին և արտաքին կարեւոր եւ հետաքրքրաշարժ գէպքերն ու պատերազմներն ևս արձանագրած ենք ամփոփ կերպով մը, պարզապէս ընթերցողին տալու չայ Դատին ձախողութեան պատճառները վերաքննելու, ինչպէս և չայ ժողովուրդին ենթարկուած ՅԱՀԵՏ ԱՆԴԱՐՄԱՆԵԼԻ ԱՂԵՏԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱԿՑՈՒՅԻՆ ՃՇԴԻՆ:

### ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

անուն սոյն ուսումնասիրութիւնը, որ ազգային նշանաւոր գործիչ հանգուցեալ Մկր. Փորթուգալեանի փեսայդ. Եղիշէ Թորոսեանի խմբագրութեամբ և ի Մարսէլլ քաղաքս լոյս տեսնող «ՀԱՅ ՄԻՒՏ» Շաբաթաթերթին մէջ մաս առ մաս կը հրատարակուի, պիտի բաղկանայ ԵՐԵՔ ՀԱՏՈՐէ, հետևեալ բովանդակութեամբ:

Ներկայ Ա. ՀԱՏՈՐը ունի «իբր Ներածութիւն» ամփոփոյք մը՝ չայոց անիշխանական շրջանի մինչեւ ԺԹ. Դարու մուտքը տեղի ունեցող ամենակարեւոր գէպքերն ու ազատագրական առաջին շարժումները, որդէ յետոյ կըսկսի 19րդ Դարու չայոց Պատմութիւնը, և կը հասնի մինչև 1869, այսինքն հոգելոյս ԽԹԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ի Պատրիարքութեան նախօրեակը:

Յաջորդ Բ. ՀԱՏՈՐը պիտի պարունակէ 1869 էն մինչև 1908 թուականը, այսինքն, Խրիմեան Հայրիկի Պատրիարքութեան սկսեալ մինչև ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ երկրորդ անգամ հոչակումը տեղի ունեցած ազգային - քաղաքական բոլոր անցքերը:

Իսկ Գ. ՀԱՏՈՐով պիտի խօսինք՝ Օսմ. Սահմանադրութեան մինչեւ 1950 տարին պատահած չայկ. գէպքերու վրայ, փաստացի և անկողմնակալ կերպով:

Այս աշխատասիրութեամբ չենք յաւակնիր թէ եղական գործ մը արտադրած ենք, սակայն, յարգելի ընթերցողը պիախ տեսնէ՝ թէ մենք տարբեր ուղղութեան մը հետեւած ենք, ա'յն է Թուրքիոյ ներքին և արտաքին կարեւոր եւ հետաքրքրաշարժ գէպքերն ու պատերազմներն ևս արձանագրած ենք ամփոփ կերպով մը, պարզապէս ընթերցողին տալու չայ Դատին ձախողութեան պատճառները վերաքննելու, ինչպէս և չայ ժողովուրդին ենթարկուած ՅԱՀԵՏ ԱՆԴԱՐՄԱՆԵԼԻ ԱՂԵՏԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱԿՑՈՒՅԻՆ ՃՇԴԻՆ:

Աւելորդ չըլլար անշուշտ հոս աւելցնել, թէ մեր միակ նպատակը եղած է, նոր և ապագայ սերունդին տալ մեր ընտրած և ապրած ժամանակաշրջանի չայոց ճրշգրիտ Պատմութիւնը, ժողովրդական գիւրըմբոնելի լեզուով մը խմբագրուած:

Մեր պատրաստած սոյն եռահատոր Քննական Պատմութիւն չայոց բազմաշխատ երկասիրութեան իբր աղբիւր ծառայող հատորներու ցանկը պիտի ներկայացնենք Գ. Հատորի վերջին էջերուն մէջ:

Մարտէլլ, 29 Սեպտեմբեր 1952

ԼԵՒՈՆ ՃԷՐԱՀԵԱՆ

ԳՐԱՖԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԵԲ ԱՅԼ. ԲՈԼՈՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԿԲ ՊԱՏԿԱՆԻՆ

## ՔՆԱԿԱՆ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Տասնեւիններորդ Դարէն մինչեւ մեր օրերը )

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հայաստան՝ Թուրք եւ Պարսիկ տիրապետութեան  
տակ .— Ռուսաց Պօղոս Ա. և Ալէքոանդր Ա.  
Զարերն ու Հայերը .— Նարուէօն ։ Ալէքսանդր  
Դաշնակցութիւնը, ՌուսօՊարսիկ կոիւները  
և Ղարապաղի գրաւումը .— Արեւելեան  
Խնդիրը և Թուրքիոյ ճակատագիրը .—  
Ալէքսանդր Զարին Հայոց ուղեալ Հրա-  
վարտակը .— Մէլիքներու յուսա-  
խաբութիւնը

---

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Հայ ժողովուրդը Թուրք եւ  
Պարսիկ իշխանութեանց լուծին տակ. զրեթէ նշաւակ էր  
դարձած կեղեքումի և հարստահարութեանց: Յետամնաց  
և մոլեռանդ այդ տարրերուն մէջ Հայ ժողովուրդը չէր  
կարող յառաջդիմել ու զարգանալ: Ընդհակառակը, դա-  
րերով շարունակուող պատերազմները. աւերները, սովը,  
անգործութիւնը և հալածանքը ստիպած էին որ շատեր  
իրենց հայրենիքը լքելով հեռանան դէպի օտար երկիր-  
ներ, յառաջդիմելու. զարգանալու, ազատ ու հանգիստ  
կեանք մը ապահովելու միջոցները փնտուելու համար:

Հայ ժողովուրդը հայրենի հողին վրայ իր չի գտած դիւրութիւնները օտար հորիզոններու տակ վայելելով, սկըսաւ յառաջդիմել ու հարստանալ, որով, հետզհետէ հիմնուեցան ԼեշԱՍՏԱՆԻ, ՌՈՒՍԻԱՅ, ՏԱԶԿԱՍՏԱՆԻ, ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ, ՀՆԴԿԱՍՏԱՆԻ և այլ երկիրներու Հայ Գաղթականութիւնները, որոնք մեր Յեղին պատիւը բարձրացուցին օտարներու առջեւ, ու մի՛շտ զօրավիդ կանգնեցան Երկրի դժբաղդ ժողովուրդին կարօտութեանց:

ԺԹ. Գարու սկիզբները երբ Արեւելքի մէջ Ռուսական դրօշը սկսաւ ծածոնիլ, ծաւալիլ մինչեւ կովկաս, բնականաբար, գերութեան տակ հեծող Հայ ժողովուրդը պիտի ցանկար ազատիլ իր շղթաներէն, և եթէ չէր կարող անկախ Հայրենիք մը ստեղծել. դո՞ւնէ կրնար քրիստոնեայ Ռուսիոյ հովանիին տակ թոփչք տալ իր բազմազան ձգտումներուն, և լուսաւորութեան յառաջդիմութեան ճանապարհով կոանել ապագայ Հայրենիքի մը հառտատուն հիմերը:

Դէպի նորածաւալ Ռուսական կայսրութիւնը հակող Հայոց համակրութիւնն ու սէրը՝ գլխաւորաբար յառաջ եկած էր քրիստոնեայ պետութեան որդեգրած քաղաքական ուղիէն, որ լայնօրէն կը բանար Հայոց առջեւ ամեն տեսակ ազատ ասպարէզներու դները, ու մանաւանդ կը շոյեր յաճախ Հայ ժողովուրդին ազատատենչ տրամադրութիւններն ու հակումները, տարբեր խնդիր, թէ անոնք միշտ մնացին անիրականալի:

Ռուս պետութեան համար մեծ արժէք ունէր Զարի Գահին Հայոց ցոյց տուած համակրութիւնն ու անձնուել ծառայութիւնները, որով կը դիւրանոր կովկասի մէջ Մոսկօֆեան յառաջիւազման ծրագիրներուն անվրէպ իրականացումը:

ՊՕՂՈՍ Ա. ԶԱՐ հոյակապ ծրագիր մը պատրաստած էր իր բոլոր մանրամառնութիւններով: ՆԱԲՈԼԷՕՆ Ա.

ՊՕՆԱԲԱՐԴԻ մտերմական յարաբերութիւն կը հաստատէ Զարին հետ, որ կը յանգի դաշնակցութեան մը՝ Ֆրանսայի և Ռուսիոյ միջեւ՝ ընդդէմ Անգլիոյ: Այս երկուքը միացեալ ուժերով պիտի ջախջախէին Անգլիոյ զօրութիւնը Հնդկաստանի մէջ, և զայն նուաճելէ վերջ, պիտի գրաւէին Պարսկաստանը, Աֆղանստանը, Թուրքիստանը, Եգիպտոսը, Թուրքիան, և կ. Պոլսոյ մէջ պիտի վերջացնէին Օսմանեան տիրապետութիւնը: Բոլոր այս նուաճումները պիտի կատարուէին 1801ի գարնան, չորս ամսուայ կարծ շրջանի մը մէջ: Բայց հազիւ թէ ծովակալ ՆՈՐԻՆԿ իր խազախ բանակներով գործի սկսած էր. ու Վոյկան անցնելով պիտի արշաւէր Պուխարա, Զար Պօղոս սպաննուեցաւ նոյն տարւոյ Մարտ 24ին, որով, ամէն բան տակնուվրայ եղաւ:

Պօղոսի յաջորդեց ԱԼԵՔՍԱՆԴՐ Ա. (1801-1823), որ նոյնպէս ինքինք Արեւելքի Քրիստոնէից պաշտպան հոչակեց: իր քաղաքական ծրագիրը տարբեր էր: Անկէ դրդեալ, Սերպերը խմբուելով նշանաւոր ազգ գործիչ և հարուստ ՃՈՐՃ ԲԵԹՐՈՎՎԻՉի շուրջ, ապստամբեցան Թորդքական իշխանութեանց դէմ: Ճօրճի մեծ յաղթութիւններ տարաւ Թուրք փաշաներու վրայ, ազատեց մայրաքաղաք Պէօլրատը (1806): Նաբոլէօն իր Սեպասթիան զօրապետը և բաղմաթիւ սպայ ու զինւոր Պոլիս կը որկէ Սուլթան Սէլիմի ոյժը զօրացնելու համար: Նաբոլէօն նամակ մըն ալ կը գրէ բարեկամ Սուլթանին՝ ըսելով,

« Դադրեցա ՞ր իշխելէ, արթնցի՛ր, Աէ՛լիմ, բարեկամներդ կանչէ նախարարութեան, վոնտէ դաւաճանները, քու ճշմարիտ բարեկամներուդ յանձնուէ . . . ապա թէ ո՛չ, պիտի կորանցնես երկիրդ, կրօնքդ և ամբողջ գերդաստանդ »:

Անգլիա և Ռուսիա Սէլիմէն կը պահանջեն Սեպասթիանի հեռացումը: կը մերժուին: կը ծաղի պատերազմ (1807):

Գապագճը Օղուն բռնեց ու սպաննեց իր ապարանքին մէջ: Պահանջեց որ Սէլիմը կրկին գահ բարձրացնեն, սակայն անոր դիակը յանձնեցին իրեն: Այս ատեն գահակալեց ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄԵԴ Բ. (1808 Յուլիս 28):

Ենիչէրիք ոտքի ելան և ուզեցին Մուսթաֆան նըստեցնել: Սուլթան Մահմուտ խեղդել տուաւ զայն, որով, Ա. Օսմանի մեծ շառաւիդէն միայն ինք մնացած ըլլալով, խոռվութիւնք դադրեցան, և բոլորն ալ հնազանդութիւն յայննեցին Մահմուտ Բ. ի

Այդ միջոցին կառավարութեան տկարութենէն օգտուելով Պալքաններու մէջ ծանր խոռվութիւններ տեղի ունեցած էին: Նարուչօն Անգլիոյ հետ կոռի բռնուած ըլլալով Թիլսիդի մէջ Ալէքսանդր Զարին հետ հանդիպում մը ունեցաւ: Երկու կայսրերը Դաշնակցութիւն մը կընքեցին, որով կ'որոշուէր Թուրքիոյ ճակատագիրը: Ֆրանսա պիտի ստանար Ալպանիան, Պօնան և Յունաստանը Ռուսիա՝ Մոլտավիան, Վալաքիան և Պուլկարիան: Իսկ Աւստրիոյ կը թողուէր Սերպիան ու Բուլղարին, մինչեւ Սելանիկ երկնալով:

Այս բաժանումով Պոլիս Ռուսիոյ կը տրուէր, իսկ Նեղուցներու բանալիները ֆրանսա իրեն կը վերապահէր, որու մասին կարելի չեղաւ կարգադրութեան գալ երկար ատեն:

Այս բաժանումը սակայն երբէ՛ք չիրականացաւ :

Ռուսիա չորս տարի կոռւցաւ Թուրքիոյ դէմ, և ի վերջոյ, Պուրէշի դաշնադրութեամբ (1812 Մայիս 28), Ռուսիա միայն Պետարապիան իրեն կցեց, իսկ Մոլտավակիան վերադարձուց Թուրքիոյ:

Նոյն միջոցներուն էր, որ Պարսից ՖԱԹԱԼԻ Շահը, իր Ապագաս Միրզա որդուն հրամայեց արշաւել կովկաս գրաւել Վրաստանն ու Ղարապաղը: Ապագաս Միրզա անդուգն ու փառասէր էր, իսկ Ռուսերը՝ Եւրոպական Հակատներուն վրայ Նարուչօնի դէմ պատերազմով զբարնն, Պատմ. Հայոց՝ Ա. Բատոր. Լեւոն ձէրախեան

Ռուսական 100.000 գինւորներ գրաւեցին Մոլտօվակիան (արդի Ռումանիա), իսկ Անգլիական նաւատորմիդ մը, ծովակալ ՏԸ.ԲՎ.ՈՐԹԻ հրամանատարութեամբ 1807 Փետր. 19 ին բռնի մտաւ Պոլիս, և խարսխեց Սուլթանին պալատին դէմ: Պոլսոյ բնակչութիւնը սարսափի մատնուեցաւ, Սէլիմ ուզեց գոհացում տալ Անգլիացւոց, սակայն, Սեպասթիանի ընդդիմացաւ և համոզեց Սուլթանը պաշտպանել մայրաքաղաքը ամէն գնով: Բոլոր ժողովուրդը զինւորներու հետ կ'աշխատի ֆրանսացւոց հրամանին տակ, ամբողջ ծովեզերքին երկայնութեանը պատնէշներ և ամրութիւններ կանգնելու, որոնք պաշտպանուեցան բազմաթիւ թնդանօթներով: Ծովակալ ՏԸ.ԲՎ. վորթ, որ բանակցութեան մտած էր Սուլթանին հետ, ծուղակի մը մէջ չի խնալու համար խոհեմութիւն համարեց փախչիլ: Մարտ 1ին ճամբայ ելաւ դէպի Տարտանէլ և 1200 թնդանօթներու կրակին ենթարկուելով անցաւ Տարտանէլը, կրոնցուց 600 զինւոր և 2 ուզմանաւ:

1807 Մայիս 28ին յեղափոխութիւն մը պայթեցաւ Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ: Օաար մանաւանդ Ֆրանսական ազգեցսւթեան ենթարկուող Սուլթանին դէմ էին բոլոր հին թուրքերը և Ենիչէրիները, որոնք այդ չինդշաբ թի օր ապստամբելով գացին պալատը պաշարեցին, ու Սուլթանին աւագանիէն տամներկու հոդի ձերբակալելով սպաննեցին: Յաջորդ օր, Ռուբաթ, Ենիչէրիները իրենց պետ Գապագճը Օղուի և եպարգոսի փոխանորդ Մուսսա փաշայի առաջնորդութեամբ գացին Սուլթանը զահէնվար առին, ու անոր տեղ թագաւոր նստեցուցին չամիտ Ա. ի որդի ՄՈՒՍԹԱՖԱ. Գ.ն, իբր և Սուլթան և Խալիֆա:

Սուլթան Մուսթաֆա հազիւ քանի մը ամիս կրցաւ թագաւորել, վասնզի, Սէլիմի կողմնակից և անոր հաւատարիմ ծառաներէն Ռուսաճուգի հրամանատար Պայրափառ տար Մուսթաֆա փաշա իր բանակով կ. Պոլիս եկաւ:

ղած ըլլալով չի կարողացան ուշադրութիւն դարձնել այս կոռուին, որով, Պարսից արքայորդին առանց մեծ դժուարութեան գրաւեց Ղարապաղը :

Ապասս Միբզայի այս արշաւանքը առիթ տուաւ որ Հայ Մելիքները իրենց նայուածքները ուղղեն դէպի ազատարար Ռուսիան : Շուտով համաձայնութիւն գոյացաւ Մելիքներուն և Զարին միջև : Կամաւորական գունդեր կազմուեցան, և ոռու զօրաց օդնութեամբ Պարսից բանակը ետ մղելով գրաւեցին Գանձակն ու Շուշին(1815):

Հայոց մէջ մեծ խանդավառութիւն յառաջ բերաւ այս յաշողութիւնը, սրտերու մէջ նոր յոյսեր ծնան:

Զար Ալէքսանդր շատ գոհ մնաց Հայոց ցոյց տուած անձնուեր ծառայութիւններէն, և որպէսզի մնանց հայրենասիրական եռանդը շոյէ ու աւելի լաւ օգտուի, հետեւեալ յուսադրիչ ՈՒԲԱԶԸ ուղղեց Հայ ժողովորւդին:

Մեր Սիրեցեալ, եփ ՀԱԱԱՏԱՐԻՄ ՀՊԱՏԱԿ ՀԱՄՕՐԻՆ ՀԱՅՈՑ ԱԶԴԻՆ որ կը բնակի Վրաստանի մէջ, եւ զանիկա բաղկացնող բոլոր դասակարգի անձերուն Մեր կայսերական շնորհները :

Վրաստանի սեր գլխաւոր իրամանատարի զեկուցումէն Ֆշարիտ գոհունակութեամբ տեսանք մեր սրտին ախորժելի նոր վկայութիւն այն հաւատարիմ հպատակութեան այն երախտագիտական զգացումները՝ որնցմով, Վրաստանաբնակ Հայոց բոլոր հասարակութիւնը ոգեւորուած են դէպի մեր բարձր հովանաւորութիւնը եւ հայրական հոգատարութիւնը՝ անոնց, ինչ պէս եւ այնտեղի բոլոր ժողովուրդներու բարեկեցութեան համար: Անոնք ապացուցին այս զգացումները բոլոր դէպերու մէջ, հաստատուն հաւատարմութեան բազմատեսակ փորձերով: Անոնք ցոյց տուին օրինակելի հաստատամտութիւն եւ անձնուիրութիւն այն միջոցին՝ երբ թեթեւամտութիւնը եւ չարակամութիւնը իգուրկ' աշխատէին սասանեցնելու Վրաստանի մէջ մեր հաստա-

տած խաղաղութիւնը, եւ անոնք, խուվայոյզ իանգամանք ներու մէջ՝ մնացին հաստատ եւ անսասան, զրիելով իրենց ստացուածքը եւ բոլոր միջոցները, նոյն իսկ իրենց կեանքը: յօդուտ ժեր ծայացութեանց եւ ի բարօրութիւն հասարակաց:

Վրաստանաբնակ ամբողջ չայոց Ազգի եւ անոր բոլոր դասակարգերու այդպիսի ջերմեռանդութիւնը, անոնց ծառայութիւններն եւ մեծագործութիւնները մեր վրայ ախորժեի պարտականութիւնը կը դնեն վկայել ամբողջ աշխարհի առջեւ մեր դէպի տնոնց ունեցած արդաքացի երախտագիտութիւնը եւ բարեհանութիւնը :

Թող պահուի այս վկայութիւնը, ի պատիւ եւ ի փառս անոնց —ՀԱՅՈՑ—. եւ ի յիշատակ ապագայ սերունդներու:

Կը մնամք դէպի Մեր կայսերական բարեհան ողորմեւեամբ,

### ԱԼԷՔՍԱՆԴՐ Ա.

15 Սեպտեմբեր 1815  
ՏԻՊԼԻՑ

Կայսերական այս հրապարակային վկայութիւնը աննկարագրելի խանդավառութիւն յառաջ բերաւ տառապեալ և փրկութեան ծարաւի համայն Հայ ժողովուրդին մէջ: Ամենուն աչքը դարձեալ Մոսկօֆեան Գահին էր դարձած, որ ահա այսպէս ամբողջ աշխարհի առջեւ կուգար կատարել տեսակ մը պաշտօնական «ՈՒԽՏ և ՎՀԿԱՅՈՒԹԻՒՆ» առ Ազգն Հայոց, ի փոխարէն այդ ժողովուրդին գերազոյն, անձնուել և հաւատարիմ ծառայութեանց՝ Ռուսական կայսերական Գահին պանծացման և անոր զրօշակի յաղթական ծաւալման՝ բարբարոս և մահմետական երկիրներու վրայ :

\* \* \*

Հակառակ որ Հայ ժողովուրդը քանիցս խարուած էր Ռուսական մեծաշոյինդ խոստումներէն, այսու հանգերձ

յուսոյ կայծը չէր մարած , և մի շտ կ'երեւակայուէր , թէ օր մը , չայ Ազգն ալ վերջապէս պիտի տիրամնար իր ցանկացած Ա. Զ. Ա. Տ Հ Ա Յ Ե Ն Ի Ք ին , հո՞ն ուռնանալով զարգանալու . հարստանալու , և իբրեւ քաղաքակրթեալ ու կազմակերպուած ազդ և պետութիւն՝ իր որոշ տեղը գրաւելու համար մարդկային ընկերութեան մէջ :

Բայց ի՞նչ հակասութիւն խօսքի և գործի : Հազիւ թէ Ռուսիա և Պարսկաստան 1815 չոկտ . 25ին կիւլիս-թանի մէջ կնքեցին հաշտութիւն և Ռուսիա տիրացաւ Հայ ժողովուրդի կտրիճ զաւակներուն արեամբ գնուած Ղարապաղի , Շուշիի և Գանձակի , Զարը, իր խոստումին բոլորովին հակառակ գործ տեսաւ : Ո՛չ միայն Հայ Մելիքները զրկեց իրենց կէս անկախ հայրենի ժառանդութիւններէն , այլ և , գրաւուած այդ երկիրներուն վրայ կառավարիչ կարգեց Հայոց վաղեմի թշնամի և Ղարապաղի նախկին բռնակալ իպրահիմի Խանը : Այս ապերախտ կարգադրութիւնը խոցեց Հայոց սիրտը : Քաղաքացի և գիւղացի ժողովուրդը՝ որ կը սարսափէր իպրահիմի վը-րէժինդրութենէն , ստիպուեցաւ ուրիշ տեղ գաղթել , ճա-րակ չըլլալու համար անոր կեղեգումներուն :

Այսպէս վարձատրուեցան Ռուս Գահին հանդէպ Հայ ժողովուրդին ցոյց տուած անձնուէր ծառայութիւնները :

Իպրահիմ շուտով իր գոյնը դուրս տուաւ , ապստամբեցաւ , բայց սպաննուեցաւ : Ցաջորդ կարգեցին անոր որդին՝ Մէհտի Խանը , որ աւելի ճարպիկ փրթաւ , Պարսկաստան անցաւ , և Թաթալի Շահին օգնութեամբ բանակ մը կազմելով սկսաւ Ռուսերը քշել Ղարապաղէն ու Տաղիստանէն : Այսպէս Մելիքները յուսախար եղան , և իրենց ցոյց տուած անձնուիրութեանց համար կորմնցուցին իս-լամ լսւծի տակ իսկ իրենց վայելած կիսանկահութիւնը . Բայց Հայը , ազատութեան հեռանկարէն մտրակուած՝ պատրաստ էր միշտ զոհաբերուելու անոր սիրոյն :

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը և Թրքահայոց վիճակը մինչեւ Ժմբ . Դարուն սկիզբը , ներքին անհամաձայնութիւններ . — կրօնական վէճեր և պառակտում Հայոց մէջ . — Աւետիք Պատրիարք Եւգոկիացի , Յովհաննէս կոլոտ , Յակոբ Նալեան , Կաղզուանցի Զաքարիա , Համատանցի Յովհաննէս Պատրիարքներ . — Միտրֆար Աբբաս և իր Միտրա-նութիւնը ,

—( o )—

Ինչպէս մեր պատմութեան ներածութեան մէջ տեսանք , Օսմանցւոց Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ Բ . արքան Բիւզանդիոնի տիրելով վերջ տուաւ Արևելեան կայքութեան և այդ պատճառաւ կոչուեցաւ Ֆ. Մ. Ի. Հ : Սուլթանը Պոլիս իր յաղթական մուտքէն յետոյ , խոհեմութիւն սեպեց սիրաշահիլ ընիկ ժողովուրդը , իր լուծը անոնց տանելի ընելու համար : Աւստի , մասնաւոր ֆէրնոնց տանելի ընելու համար : Աւստի , մասնաւոր ֆէրնոնց մը վերահաստատեց Յունաց Պոլսոյ ՏիեզերԱկւն ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆՆԵՐ և անոնց տուաւ կրօնական լայն առանձնաշնորհութեան :

Հինէն իվեր Պոլիս հաստատուած չայ գաղութ մը կար, որ գլխաւորաբար կը բնակէր Ղալաթիոյ և շրջակայից մէջ: Թուրքերու օրով ալ, մայրաքաղաք եղող էտիրնէի (որուն Սուլթան Սէլիմի հոչակաւոր և գեղակերտ մզկիթը Սարգիս գալֆա անուն չայ մը շինած է), Մալկարայի, Ռոտոսթոյի և այլ քաղաքներու մէջ իրբեւ գործաւոր չայաստանէն բերուած չայերէ գաղութներ ևս կազմուած ըլլալով, Սուլթան Մէհմէտ ուզեց իր հովանին տակ ապրող Հոյերուն վրայ եւս կրօնապետ մը կարգել: Ուստի, իր ամենամտերիմ բարեկամ և Պրուսայի Առաջարդ Յովակիմ Եպիսկոպոսը Պոլիս հրաւիրելով Թուրքիոյ չայոց Պատրիարք կարգեց, և տուաւ չա, յոց այն բոլոր իրաւու նքները՝ ի՞նչ որ տուած էր Յոյն ժողովուրդին:

Ասկէ զատ, Սուլթանը խորհուրդ տուաւ Յովակիմ Սրբազնին՝ որ չայերը գան հաստատուին թուրքիոյ սահմաններուն մէջ, և գլխաւորաբար Պոլիս ու շրջակաները, շինցնելու և բազմամարդ դարձնելու համար աւերակոյտի վերածուած այդ տեղերը:

Բիւզանդիոնի լոյս ափերը վաղուց ծանօթ էր չայոց: Անոր հմայքը և Ֆաթիհի տուած ամէն կարգի դիւրու թիւնները հրապուրեցին մեր ժողովուրդը, որով, Խրիմէն, Կարինէն կեսարիայէն. Ակնէն, Աերաստիայէն, Բալուէն, Եւղոկիայէն, Տրապիզոնէն, Անտոպէն և ուրիշ տեղերէ բազմաթիւ չայեր եկան, հաստատուեցան կ. Պոլիս, ինչպէս նաև ծովափնեայ ուրիշ քաղաքներ: կ. Պոլոյ չայոց թիւը հետզհետէ այնքան շատցաւ՝ որ մինչեւ քա, ոորդ միլիոնի հասաւ:

Հայերը Պոլոյ մէջ ի սկզբան վեց գլխաւոր թաղերու մէջ — Գում - Գարու. Ենի - Գարու, Սամաթիա, Պալաթ, Թօփ - Գարու, Խասգիւղ, նաև Ղալաթիա բնակեցան, յետոյ ցրուեցան ամէն կողմ:

Անիի կործանումէն յետոյ 70.000 չայեր գաղթեցին Պոլիս և Փոքր-Ասիոյ զանազան քաղաքները: Անի: քաղաքի իշխան և մեծամեծներէն շուրջ 70 ընտանիք, իրենց բոլոր հարստութեամբ Ակն քաղաքը հաստատուեցան, և ժամանակի ընթացքին անոնցմէ շատեր անցան Պոլիս, ուր գրամական գործանութեամբ զբաղելով, յաջողեցան Տէրութեան գրամական գործանութիւնները հետզհետէ իրենց ձեռքին մէջ կելլոնացնել: Հայոց այս դասակարգը պաշտպանութիւն գտաւ փաշաներէ ու եպարգուներէ և մինչեւ իսկ Սուլթաններէ, ու կոչուեցան Աղա, Զելէպի, Ամիրա: Շատ չայեր ալ պետական պաշտօնի տիրացան:

Պոլիս ու ամբողջ Թուրքիա ծաղկեցաւ չայոց վաճառականութեամբ, արհեստներով, ու հողագործութեամբ:

Ամենէն աւելի յառաջդիմեց ու ծաղկեցաւ Պոլոյ Հայութիւնը: Եւ որովհետեւ Պոլիս Հայոց պյուխ ու կերրոն կը համարուէր թէ՛ հարստութեամբ, թէ՛ հոծ Հայութեամբ և թէ իրբեւ Պատրիարքանիստ ու պետութեան մայրաքաղաքը ըլլալուն, ժողովրդեան է՛ն գորել տարրը կազմող Ամիրանները իրենց քմահաճոյքին համաձայն կը վարէին ազգալին բոլոր գործերը, Պատրիարքներ վար կ'առնէին և ուրիշներ կը բազմեցնէին: Իրենց ու զած կրօնականները գաւառներու Առաջարդ կ'ընտրէին, իրենց ազգեցութեան շնորհիւ՝ պետութեան վաւերացման կ'ենթարկէին այս ընտրութիւնները. իոկ իրենց ատելի եղողները պաշտօնէ կը ձգէին, ու մինչեւ իսկ աքսորել կուտային հեռաւոր տեղեր:

Այսպէս, 1461էն սկսեալ մինչեւ Ժթ. Դարու մուտքը, գրեթէ 500 տարի — Պոլոյ Պատրիարքական աթոռը բազմեցան աւելի քան 30 հոգեւորականներ:

Ահաւասիկ ընդհանուր ցանկը Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան աթոռը բազմողներուն, սկիղըն մինչ Ժթ. դարու մուտքը:

ԱԹՈՒԹ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵՅՆ		
	—   o   —	
ԱՆՈՒՆ		ԾՆՆԴԱՎԱՅՐ
Յովակիմ Եպիսկոպոս	Պրուսա	1861 - 78
Նիկողայոս		1478 - 89
Կարապետ		1489 - 09
Մարտիրոս		1509 - 26
Գրիգոր		1526 - 37
Աստուածատուր Վարդ.		1538 - 50
Ստեփաննոս Վրդ.		1550 - 61
Տիրատուր Կաթողիկոս Սսեցի		1561 - 63
Յակոբ Եպիսկ.		1563 - 73
Յովհաննէս »	Տիմարպէքիր	1573 - 81
Թովմաս »	Գաղատիոյ	1581 - 87
Սարգիս »	Ուլնիոյ	1587 - 90
Տիրատուր Կաթողիկոս Սսեցի (Կրկն.)		1596 - 99
Յովհաննէս »		1590 - 91
Ազարիա Կաթ.	Զուղա	1591 - 92
Մելքիսեդեկ Կաթողիկոս Գառնեցի		1599 - 00
Յովհաննէս Խուլ Պոլիս		1600 - 01
Գրիգոր Եպիսկոպոս	Կեսարիա	1601 - 08
Յովհաննէս Խուլ (բ. անգամ)		1608 - 10
Գրիգոր Կեսարիա (բ. անգամ)		1611 - 21
Յովհաննէս Խուլ (գ. անգամ)		1622 - 23
Գրիգոր Կեսարիա (գ. անգամ)		1623 - 26
Զաքարիա Վանեցի		1926 - 31
Յովհաննէս Խուլ (գ. անգամ)		1631 - 36
Զաքարիա Վան Դարձեալ		1636 - 39
Դաւիթ Արեւելցի		1639 , 41
Կիրակոս »		1641 - 42
Խաչատուր (Մինտէրձի) Սեբաստիա,		1642 - 42
Դաւիթ (բ. անգամ )		1643 - 44

Թովմաս	Բերիա	1644 - 44
Դավիթ (գ. անգամ )		1644 - 50
Եղիազար	Ա. Հնթապ	16 0 - 52
Յովհաննէս	Մուղնի	1652 - 57
Թովմաս	Բերիա (բ. անգամ )	1657 - 59
Մարտիրոս	Կաֆա	1659 - 60
Ղազար	Սեբաստիա	1660 - 63
Յովհաննէս Թիւթիւնձեան		1663 - 64
Սարգիս	Թէքիրտաղ	1664 - 65
Յովհաննէս Թիւթիւնձի, (Կրկն.)		1665 - 67
Սարգիս Թէքիրտաղ (Կրկն.)		1667 , 70
Ստեփաննոս	Մեղրի	1670 - 74
Յովհաննէս « Թօփալ »	Ամասիա	1674 - 75
Անդրէաս « Ճեհեննամ Վերտիվէնի » Պոլիս		1675 - 76
Կարապետ « Գայսերի Տէր Կրպօ »		1776 - 79
Սարգիս « Էքմէքձի »		1679 - 80
Կարապետ « Տէր Կրպօ (Դարձեալ)		1680 - 81
Թորոս Ստամպօլցի		1681 - 84
Կարապետ ( Երրորդ անգամ )		1684 - 86
Եփրեմ Ղափանցի		1686 - 87
Կարապետ — Զորլորդ անգամ —		1687 88
Թորոս Ստամպօլցի — Դարձեալ —		1688 - 88
Խաչատուր		1688 - 89
Կարապետ Կեսարացի (ե. անգամ )		1692 - 94
Մատթէոս » Սարը մականուանեալ		1694 - 98
Եփրեմ Ղափանցի (Կրկն անգամ )		1698 - 99
Մելքիսեդեկ Սուպհի մականուանեալ		1699 - 700
Միհիթար Քիւրտիստանցի		1700 - 701
Մելքիսեդեկ Սուպհի Դարձեալ		1701 - 702
Եփրեմ Ղափանց Երրորդ անդամ		1702 - 703
Ահեծիթ ԵհղուկիԱՅի		1703 - 704
Գալուստ Ամասիացի « Կայծակ »		

Ներսէս Պալաթցի		1704 704
Աւետիք Եւգոկիացի կրկին		1704 706
Մարտիրոս Երզնկացի «Քիւհանձի»		1706 706
Միքայէլ Խալբերդցի		1706 707
Սահակ Ապուչեխցի		1707 707
Յովհաննէս Զմիւռնիացի		1707 707
Սահակ Ապուչեխցի դարձեալ		1708 715
Յովհաննէս Գանձակեցի		1714-715
Յովհաննէս Բաղիշեցի կոլոտ		1715 741
Յակոբ Նալեան Զմարացի		1741 749
Պրոխորոն Սիլիսդրէցի		1749-49
Մինսս Կաթողիկոս Ալին		1749-5
Գէորգ Ղափան		1751-52
Յակոբ Նալեան (կրկին)		1752-64
Գրիգոր Պասմաճեան	Պոլիս	1764-73
Զաքարիա Փագուզեան	Կաղզուան	1773-80
Յովհաննէս	Համատան	1781-82
Զաքարիա Բոգուզեան (կրկին)		1782-93
Դանիէլ Սուրբմառեցի		1799-1800

—o—

Պատրիարքը պետական գանձին կը վճարէր տարեկան տուրք, անկէնկուտանար Պատրիարքական աստիճան համարուող կապայ կամ Խիլայ ըսուած հագուստը:

Այս երեք դարու Մըջանին մէջ ժամանակ եղաւ, որ ամենին շատ կաշառք տուողներ գրաւեցին պատրիարքական աթոռը: Ասոր համար ժողովուրդին մէջ խոռոշութիւն կը ծագէր, և ցոյցեր տեղի կ'ունենար: Ժէ, և Ժըդարերու Թրքահայ պատմութիւնը լեցուն է նմանօրինակ դէպքերով:

Նախապէս կոստանդնուպոլսոյ մէջ գաղութմը կազմողները, Զելէպիններ ու Ամիրաններ կը վարէին ազգային գործեր՝ իրենց կամքին համաձայն: Գաւառներէն հետք-հետէ մայրաքաղաք հաստատող հայեր կարհամարհուէին ազգակից բնիկներէն իրեւ արեւելք ցի, դրսեցի, խը մպըւ քէօյլիւ ևայլն. ու երբէ՛ք չէին հանդուրծեր որ անոնք իրաւունք ունենան ազգային վարչական ու կրօնական գործերուն խառնուելու: Ամիրաններն ու Զելէպինները հարուստ էին և մեծ ազգեցութիւն ունէին պետութեան մօտ, որով, շատ դիւրաւ կրնային ճզմել կամ աքսորել տալ իրենց հակառակորդները:

Եկորները հետզհետէ շատցան ու զօրացան. կազմեցին առեւտրական և արհեստապետական միութիւններ: Ազգային գործոց մասնակցելու պայքարը սաստկացաւ:

Ներքին այս պայքարները կարծես բաւական չէին, և ահա աւելի ծանր ու պառակտիչ դէպքեր եւս եկան ճնշել Ազդը և քայքայել անոր կենսունակութիւնը :

Պապերը, Ռուբինեանց թագ աւորութեան Մըջանին ակսեալ գործի լծուած էին, չայ ժողովուրդը լուսաւորչական Մայր Եկեղեցին բաժնելով իրենց դահուն հպատակեցնելու համար, օդտուելով երկրին մէջ տիրող նը պաստաւոր պայմաններէն :

Այս նպատակաւ քանի քանի անգամներ նուիրակներ ու առաքելութիւններ զրկուեցան Կիլիկիա, որոնք յաջողեցան խոշոր ճեղքուածք մը բանալ մեր ժողովուրդին մէջ, ու անկէ կարեւոր մաս մը գրաւել: Աւելի վերջերը, իրենց կրօնական այս գործունէութիւնը թուրքիւ մէջ պետական արդելքի չհանդիպելով, կաթոլիկ զանազան միաբանութիւններ ասպարէզ զտան, նոր թափով վերսկսելու իրենց մարդուրսորդութեան գործը:

Նպատաւոր յաջողութիւններէ սիրտ առնելով, կղմէս Հ. Պապը, Արեւելքի մէջ իր գործունէութիւնը ա՛լ

Ներսէս Պալաթցի		1704	704
Աւետիք Եւդոկիացի	Կրկին	1704	706
Մարտիրոս Երզնկացի « Քիւհանձի »		1706	706
Միքայէլ Խարբերդցի		1706	707
Մահակ Ապուչեխցի		1707	707
Յովհաննէս Զմիւռնիացի		1707	707
Մահակ Ապուչեխցի	Դարձեալ	1708	715
Յովհաննէս Գանձակեցի		1711-715	
Յովհաննէս Բաղիշեցի	Կոլոտ	1715	741
Յակոբ Նալեան Զմարացի		1741	749
Պրիխորոն Սիլիադրէցի		1749-49	
Մինաս Կաթողիկոս	Ակն	1749-	5
Գէորգ	Ղափան	1751-	52
Յակոբ Նալեան (Կրկին)		1752-	64
Գրիգոր Պասմաճեան	Պոլիս	1764-	73
Զաքարիա Փրգուղեան	Կաղզուան	1773-	80
Յովհաննէս	Համատան	1781-	82
Զաքարիա Բոգուղեան (Կրկին)		1782-	93
Դանիէլ Սուրմառեցի		1799-	1800

—o—

Պատրիարքը պետական գանձին կը վճարէր տարեկան տուրք, անկէն՝ ոտանար Պատրիարքական աստիճան համարուող Կապայ կամ Խիլայ ըսուած հագուստը :

Այս երեք դարու շրջանին մէջ ժամանակ եղաւ, որ ամենէն շատ կաշոք տուողներ գրաւեցին պատրիարքական աթոռը: Ասոր համար ժողովուրդին մէջ խոռվութիւն կը ծագէր, և ցոյցեր տեղի կ'ունենար: Ժէ, և Ժէ դարերու Թրքահայ պատմութիւնը լեցուն է նմանօրինակ դէպքերով:

Նախապէս Կոստանդնուպոլսոյ մէջ գաղութ մը կազմողները, Զելէպիներ ու Ամիրաներ կը վարէին ազգային գործերը՝ իրենց կամքին համաձայն: Գաւառներէն հետքնետէ մայրաքաղաք հաստատող հայեր կարհամարհուէին ազգակից բնիկներէն իրեւ արեւելքցի, դրսեցի, խը մպը, քէօյլիւ ևայլն. ու երբէ՛ք չէին հանդուրժեր որ անոնք իրաւունք ունենան ազգային վարչական ու կրօնական գործերուն խանուելու: Ամիրաներն ու Զելէպիները հարուստ էին և մեծ ազգեցութիւն ունէին պետութեան մօտ, որով, շատ դիւրաւ կրնային ճզմել կամ աքսորել տալ իրենց հակառակորդները:

Եկորները հետզհետէ շատցան ու զօրացան. կազմեցին առեւտրական և արհեստապետական միութիւններ: Ազգային գործոց մասնակցելու պայքարը սաստկացաւ:

Ներքին այս պայքարները կարծես բաւական չէին, և անա աւելի ծանր ու պառակտիչ դէպքեր եւս եկան ճնշել Ազգը և քայքայել անոր կենսունակութիւնը :

Պապերը, Ռուբինեանց թագաւորութեան շրջանէն սկսեալ գործի լծուած էին, չայ ժողովուրդը լուսաւորչական Մայր Եկեղեցին բաժնելով իրենց դահուն հպատակեցնելու համար, օդուուելով երկրին մէջ տիրող նըպաստաւոր պայմաններէն :

Այս նպատակաւ քանի քանի անդամներ նուիրակներ ու առաքելութիւններ զրկուեցան Կիլիկիա, որոնք յաջողեցան խոշոր ճեղքուածք մը բանալ մեր ժողովուրդին մէջ, ու անկէ կարեւոր մաս մը գրաւել: Աւելի վերջերը, իրենց կրօնական այս գործունէութիւնը թուրքիւ մէջ պետական արդելքի չհանդիպելով, կաթոլիկ զանազան միարանութիւններ ասպարէզ գտան, նոր թափով վերսկսելու իրենց մարդուարդութեան գործը :

Նպաստաւոր յաջողութիւններէ սիրտ առնելով, Կղեմէս Հ. Պապը, Արեւելքի մէջ իր գործունէութիւնը ա՛

աւելի հաստատ հիմքու վրայ դնելու համար 1597թ վարդապետը Պարսից Շահին հրովարտակով Երեւան գա, հիմեց «ՀԱՒՍՈՅ ՏԱՐԱԾՄԱՆ, ՄԻՈՒԹԻՒՆ» ը, և ոլով կը հիմէ առաջին հայ կաթոլիկ եկեղեցին:

«ՀԱՒՍՈՅ ՏԱՐԱԾՄԱՆ ԴՊՐՈՅ» ով աւելի զօրացուեցա զութիթներու այս յանդգնութիւնը, կը զայրանան, և յար-Այդ բրոբականտային գործունէութեան յառաջապահները ձակելով կաթոլիկ ժամուն վրայ, քարուքանդ կընեն եղան Յիսուսեան - Ժեզուիթ - Կոչուած կրօնաւորները զայն, և քարոզիչ Դարրիէլ Շինոնը բոնելով խուցի մը Երևանը հետ միեւնոյն ատեն ծնունդ առին նաև ու կը բանտարկեն (1668):

Իսոնց հետ միեւնոյն ատեն ծնունդ առին նաև ու կը բանտարկեն 1684 ին:

Թէև Շահ Ապաւասի հրովարտակով ուրիշ վարդատարածուեցան Հայաստանի, կովկասի, Պարսկաստանի պետներ կերթան Երևան, և զանազան հրապուրիչ ու Թուրքիոյ բոլոր անկիւնները. բացին կրօնական զպրոց Խափուսիկ միջոցներով կուգեն իրենց սկզած գործուներ, և սկսան ձրի կրթութիւն տարածել ուսման ծարաւ ւականացնել, բայց, Լուսաւորչական կրօնաւորաց ահեց Քրիստոնեայ ժողովրդոց մէջ, ջամբելով նաեւ կաթոլիկ պայքարէն պարտուած և յուսահատ՝ կը լքեն Երևանի կրօնի բոլոր հիմնական վարդապետութիւնները:

Երենց բրոբականտան: Նոյնը եղաւ Նոր Զուղայի մէջ, իրենց բոլոր հիմնական պահանջման մէջ, ուր Հայերը քանդեցին կաթոլիկ նոր եկեղեցին:

Ժեզուիթները, 1668 ին յաջողեցա նկարնոյ մէջ հաստատուիլ և հետզհետէ կազմել կաթոլիկ հայ համայնք մը: Բաժնուող հայերը կ'սկսին խորթ նայիլ իրենց արենա կիցներուն, և նոյն իսկ կըզգուշանան շփում ունենալի:

Ժեզուիթները Պարսկաստանի մէջ իրենց ձեռք բերած յաջողութիւններէն, ինչպէս նաև. Պարսից լուծէն Հայոց ազատութեան ի խնդիր, Եւրոպիոյ կաթոլիկ պետութիւններու եկեղեցիներու միացման առաջարկին՝ Խորայէլ Օրիի և Յակոբ Զուղայեցի կաթողիկոսի կողմէ գտած ընդունելութենէն քաջալերուելով, ջանացին իրենց ազգեցութեան ներքեւ առնել Ս. Էջմիածինը, որպէսզի, շատ կարճ շրջանի մը մէջ ամբողջ Հայութիւնը կարենան կաթոլիկացնել:

Պապականութեան առաքեալները չէին բաղիսած ո՞նուի ԹՈՒՐՓԻՈՅ ՇՈՅՈՅ ՊՈՏՏԻԱՐ (1702):

Ուստի, իրենց ազգեցիկներէն ԳԱԲՐԻՅԵԼ Շինոն Մայրան Աթոռոյ Միաբանները չեն կրնար մարսել Ժե-

Այդ բրոբականտային գործունէութեան յառաջապահները ձակելով կաթոլիկ ժամուն վրայ, քարուքանդ կընեն Եղան Յիսուսեան - Ժեզուիթ - Կոչուած կրօնաւորները:

Շինոն կը մեռնի բանտին մէջ 1684 ին:

Թէև Շահ Ապաւասի հրովարտակով ուրիշ վարդատարածուեցան Հայաստանի, կովկասի, Պարսկաստանի պետներ կերթան Երևան, և զանազան հրապուրիչ ու Թուրքիոյ բոլոր անկիւնները. բացին կրօնական զպրոց Խափուսիկ միջոցներով կուգեն իրենց սկզած գործուներ, և սկսան ձրի կրթութիւն տարածել ուսման ծարաւ ւականացնել, բայց, Լուսաւորչական կրօնաւորաց ահեց Քրիստոնեայ ժողովրդոց մէջ, ջամբելով նաեւ կաթոլիկ պայքարէն պարտուած և յուսահատ՝ կը լքեն Երևանի կրօնի բոլոր հիմնական վարդապետութիւնները:

Կաթոլիկ բրոբականտային ամենէն նպառտաւոր միջավայրը Պոլիս եղաւ: Հայ կղերէն մաս մը միացաւ կաթոլիկներուն, և ահա սկսան ազգամիջեան կրօնական հալածանքները:

Կաթոլիկութեան դէմ բացուած պայքարին մէջ նը-շանաւոր եղած է Եկ՛ո՛կի Աշի Ակե՛տի ՊՈՏՏԻԱՐ: Որ կեռ վարդապետ երբ Պոլիս կուգայ, իր քարոզութիւններով մէծ ժողովրդականութիւն կը գտնէ: Իր համբաւը իսլամ իւլէմաններու մէջ իսկ կը տարածուի, և նոյն ատենուան ՇէՅլ - Իիլ - ԻՍԼԱՄ էֆէնտին յաճախ ճաշի կը հրաւիրէ Տէր Աւետիք վարդապետը, և կ'սքանչանայ անոր իմաստութեան և արթնամտութեան վրայ:

Ժեզուիթները կաթոլիկները պատճեն կը կաթոլիկացները:

Երբ Աւետիք պատրիարք գահ բազմեցաւ՝ ամէն կցղմէ շնորհաւորական այցելութիւններ եղան իրեն-թրանս. դեսպան Մ. Ֆէրիթօլ և Գաբրոչիններու պետ. ու Պապին նուիրակ ՀԱՅՐ ՀԱԿԻՆԹՈՍ ևս եկան շնորհաւորել զայն: Խօսակցութեան ընթացքին այնքան զմայլեցան անոր մտքի կարողութեան վրայ՝ որ խոստացան օգնել իրեն՝ դադրեցնելու համար կրօնական երկ պառակութիւնը:

Աւետիք Պատրիարք ո՛չ միայն յաջողեցաւ իր հօտէն փախչաղները վերադարձնել, այլ և, պապանձեցնել հակահայ մեղաղըանքներն ու բամբասանքները:

Այս յաջողութիւնը կաթոլիկ կրօնաւորներուն քունը փախցուց, որոնք դարձեալ գործի լծուեցան: Նոյն մի ջոցին, 23.000 ԵԽՆԻՀԵՐԻՆՆԵՐ ապստամբելով, Սուլթան Մուսաթաֆան գահընկէց ըրին, ու անոր տեղ գահ բարձրացուցին Սուլթան Մ'ԷԿՄԷտր: Օգտուելով այս փոփոխութենէն, Եւրոպական կաթոլիկ դեսպաններ՝ Օսմանեան կառավարութեան դիմելով, Աւետիքի հրաժարումն ու աքսորուիլը պահանջեցին: Աւետիք պատրիարք ձերբակալուեցաւ, ու գահընկէց ըլլալով Եէտի Գուլէի բանտին մէջ բանտարկուեցաւ:

Անակնկալ այս դէպքը »ուզեց Պոլսահայութիւնը՝ որ ոտքի ելաւ, և պահանջեց իր սիրելի պատրիարքը՝ Լատինները կաշառելոր կառավարական պաշտօնեանները՝ աքսորել տուին բազմաթիւ պարագլուխներ, կարծելով թէ պիտի կրնան այս կերպով վախ աղդել ժողովրդեան՝ որ ստիպեալ հրաժարի Աւետիք վարդապետը վերստին պատրիարք ընելու իր պահանջումէն:

Հայ ժողովուրդը աւելի կը բորբոքի, ու մեծ բազմութեամբ մը կը դիմէ Եպարքուին, և անոր կը մատուցանէ բազմաստորագիր բողոք մը, որով կը յայտնէ թէ Աւետիք վրդ. Ազգին և Տէրութեան հաւատարիմ ու սիրելով. Ազգին և Տէրութեան յարած,

թէլի պատրիարքն է, և տեղի ունեցող բոլոր խոռվութիւնները արդինք են կաթոլիկ բրոբականտին և օտար գրգութիւններու: Եպարքու քննելով խնդիրը իրաւացի կը դանէ: և Աւետիքը կրկին դահ կը բազմեցնէ (1704):

Մեծ կըլլայ տառապեալ Հայ ժողովուրդին ցնծութիւնը՝ իր սրիելի Պատրիարքին վերադարձը տեսնելով:

Դեսպան Ֆէրիօլ և Հայր Հակինթոս կրկին կ'այցելէն Աւետիքի: Պատրիարքը սիրով կ'ընդունի իր զոյգ մը անգութ թշնամիները, և ներողամտութեամբ տոգորեալ պատշաճ հիւրասիրութիւնը ընելով խիստ ամօթապարտ ձգեց զանոնք:

Պահ մը դադրեցան վէճերը, սակայն, թշնամիները գաղտնօրէն ամէն ջանք թափեցին և վերջապէս Բ. Դըրան միջոցաւ Թենէտոս կղզին աքսորել տուին Հայոց պերճարան և անվեհեր Պատրիարքը, որ երկրորդ անգամ հազիւ 13 ամիս պաշտօն վարեց:

Սաոյ ՄԱՏԹԷՈՍ կաթողիկոսը և Աւետիքի յաջորդ ՄԱՐՏԻՐՈՍ Պատրիարքը, որոնք կաթոլիկութեան ջատագովներ և Աւետիքի ալ թշնամի էին, Շէյխ-Իւլ-Իսլամի մօտ սոսկալի զրպարտութիւններ ըրին անոր մասին, և պահանջեցին որ Աւետիք զիխատուի Թենէտոսի մէջ:

Շէյխ-Իւլ-Իսլամը երբ մերժեց անոնց խնդրանքը, անոնք դիմեցին Ֆրանսայի դեսպանին, որ ճար մը գտնէ Տէր Աւետիքը Ֆրանսա փախցնելու և Պապին ձեռքով սպաննել տալու այդ ոխերիմ թշնամին:

Բոլորը միաբանելով կը յաջողին կաշառել Սուլթանին աւագ պաշտօնեան (Շէյխ էֆէնտի), որ հրաման կուտայ ֆրանսացւոց իրենց նաւով Տէր Աւետիքը վերցընել գաղտնապէս Թենէտոս կղզիէն. և ի՞նչ որ կուգեն ընեն զայն, միայն թամ. Տէրութեան սահմաններէն դուրս պէտք է ընեն:

Այսպէս, կաթոլիկութեան յարած, և «Տէօնմէ» կամ

«Աղթարմա» կոչուած Հայ բարձրաստիճան կղերէն մէկ քանիին, ինչպէս և Հայ Եկեղեցիէն ուժացած կարգ մը իշխանաւորներու զաղտնի դաւադրութեամբ ու գործակ, ցութեամբ, Ֆրանսացիք առևանգեցին Թենեստոս աքսորեալ ՀԱՅՈՅ ԵՐԿԱԹԷ ՊԱՏՐԻԱՐՔԸ և Մարտիփա տարին, ուր ատեն մը շղթայակապ պահեցին, բայց, Երբ Հայ ժողովուրդը իրագեկ եղաւ ճշմարտութեան և ծովածաւալ բազմութեամբ Սուլթան Մեհմէտ կայսեր դիմելով ամբողջ անցած դարձածը պատմելով արդարութիւն և իրենց սիրելի Պատրիարքին ողջամբ վերադարձուիլը ինզրեցին, կաթոլիկ կրօնաւորները անմիջապէս Աւետիքը փոխադրեցրն Նորմանտիոյ մօտ վանք մը, ուր հինգ տարի պահեցին: Յետոյ տանին Բարիզի նշանաւոր ՊԱՄԹԻՅՅԼ ըսուած բանտը, ուր Հայոց խեղճ և անաւոր դժբաղդ հողեւոր պետը 10 ամիս տանջալից և անհանդուրժելի կեանք մը պարտադրօրէն շնչելէ վերջ, իր հոգին կ'աւանդէ, 1711 Յուլիս 21ին:

Հայ ժողովուրդին և անոր գլխաւորներուն բոլոր փնտոտուքներն անօգուտ մնանին(1):

\* \* \*

Աւետիքի վերադարձէն յուսահատ Հայք, կ: Պոլսոյ Պատրիարք ընտրեցին Մշոյ Ս. Կարապետ կանքի ներկայարար պատմառաւ ծնունդ կ'առնէին հակառակութիւններէն ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՎԱՐԴԻ. որ հուն միաբաններէն ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՎԱՐԴԻ. որ հուն միաբաններէն ընդդէմ կաթոլիկ կղերին, որոնք բարձր ուսում առած և պատրաստուած հոգեւորականներ էին, և կը ջանային օգտուիլ մերիններուն տգիտութենէն:

1.—Մեր Պատմագրական Մատենաշարի Ե. Իրատարակութիւնը պիտի կազմէ ԵԽԳՈԿԻԱՅԻ ԱՒԵՏԻԱՐՔԸ Ա. Ճ.

Նորընտիր Պատրիարք Յովհաննէս Կոլոտ, հազիւ 57 տարեկան էր, իր պերճաբանութեամբ և ազգօգուտ գործունէութեամբ շատ քիչ ժամանակի մէջ ազգին սիրելին դարձաւ: Աւետիք՝ Երուսաղէմի Պատրիարք կարգեց իր միաբան ընկերներէն՝ Բաղիշու Շիրվան գիւղացի և Տարօնոյ Սուրբ Կարապետ վանքի Վանահայր Գրիգոր ՎՐԴԻ. (1713 - 1749), և անոր պաշտօնը արքունի հրովարտակով հաստատել տուաւ: Այս կերպով Երկու Սթոռներն ալ մտան բարեկարգութեան շաւղին մէջ, երկու ազգասէր, սիրակթորդ և միաբան Պատրիարքներու շնորհիւ:

Երուսաղէմի Հայոց Վանքը 300 քսակ (մէկ քսակը 300 արծաթ դուրուշ էր) պարտք ունէր: Գրիգոր Պատրիարք ուխտեց Վանքը ազատել այս պարտքէն: Վիզէն Երկաթ շղթայ կախեց, և կ. Պոլիս երթալով չորս տարի մնաց հոս, ուր Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի աջակցութեամբ բարեսէր ազգայիններէ առատ նուէրներ ըստացաւ, որոնցմով ո՛չ միայն Վանքին պարտքը վճարեց, այլ և Հալէպի ու Եղիպտոսի մէջ հասոյթարեր կալուածներ ապահովեց ի նպաստ Վանքին:

Գրիգոր՝ ՇՂԹԱՅԱԿԻՐ կոչուեցաւ:

Յովհ. Կոլոտ շատ կը ցաւէր Հայ կղերին տգիտութեան վրայ, որոյ պատճառաւ ծնունդ կ'առնէին հակառակութիւններ ընդդէմ կաթոլիկ կղերին, որոնք բարձր ուսում առած և պատրաստուած հոգեւորականներ էին, և կը ջանային օգտուիլ մերիններուն տգիտութենէն:

Իրեւ գարման, Իւսկիւտարի մէջ հիմնեց ԴՊՐՈՅՑ-ԼՆԾԱՅԱՐԱՆ մը, ուր սկսան ուսանիլ բազմաթիւ աշակերտներ: Հաստատեց ՏՊԱՐԱՆ մը, և հրասարակել արշաւ բազմաթիւ գիրքեր: Ասկէ զատ, Լատիններէնի և Հայերէնի հմուտ Տէր Ղուկաս Վարդապետ Աբրահամնեանը

“Բնն. Պատմ. Հայոց” Ա. Իատոր - Լեւոն ձերախեան

իր մօտ հրաւիրելով, անոր թարգմանել և հրատարակել տուաւ կովուտի փիլիսոփայական գործերէն ֆիջիբԱն, ՄէթԱֆիջիբԱն, ԼՕԺԻՔԱն, ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ը, ԳԻՐՔ ԿԵՆԴԱՆԵԱՅ ԵՒ ՄԵՌԵԼՈՅ ը, ԻՆՉՎՀԱ ՆԱև Սկոթի ԱԱ-ՇՈՒՍԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ը :

Կաթոլիկ կղերի արտաքերած այս գանձերէն օգտուիլ ջանալով հանդերձ, երբէք հալածանք չի հանեց օտար կղերին դէմ, այլ ջանաց հաշա ապրիլ անոնց հետ, թէն ասոր համար ամբաստանեցին զինքը թէ կը ձգտի Պապականութիւնը ներմուծել չայոց մէջ:

Կոլոտի ջանքերով հիմնուած ԸՆԺԱՐԱՆէն դուրս եկան կարող աշակերտներ, ինչպէս՝ Յակոբ Նալեան, որ յետոյ եղաւ Պատրիարք, Սահակ Վրդ. ԱՀՄԳԻՆ մակար, Գրիգոր Վրդ. ԽՈՒԶԻ, Սարգիս Վրդ. ՇՆՈՐ-ՀԱԼԻ, և այլն:

Այս կրթասէր և շինարար Պատրիարքի ջանքերով նորոգուեցան Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ, Պալաթու Ս. Հրեշտակապետ, Խոկիւարի Ս. Կարապետ, Օրթա- գիւղի Ս. Աստուածածին և Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցիները:

Յովհաննէո կոլոտ 23 տարի Խաղաղութեամբ կառավարեց ազգը, — ինչ որ կ'ապացուցանէ իր վարչային անվիճելի կարողութիւնը —, և վախճանեցաւ 1741 ին: Մարմինը ամփոփուեցաւ իր նորոգել տուած Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ բակին մէջ: Վրան կանգնուած է մարմարեայ շիրիմ մը :

\* \* \*

Կոլոտի յաջորդեց իր աշակերտը՝ ՆԱԼԵԱՆ ՅԱԿՈՒ, որ կը շարունակէ իր նախորդին խոհական ընթացքը: Ժեղութները անոր թոյլատու ընթացքէն օգտուելով:

ՊՐՊՈՒԵՋԻՆ ամբոխը Պատրիարքին դէմ: Ժողովուրդը մեծ բազմութեամբ յարձակեցաւ Պատրիարքարանի վրայ, և Նալեանը զահընկէց ըրաւ (1748):

Օսմանեան կառավարութիւնը երբէք չէր միջամտեր տեղի ունեցող կրօնական այս վէճերուն: Բայց տեմնելով որ, օտար բրոբականոր ծանր գրգութիւններ յառաջացուցած է իր խաղաղ և հաւատարիմ հպատակ Հայ ժողովուղին մէջ, մինչեւ իսկ Տէրութեան մէկ պաշտօնատունը համարուող Պատրիարքարանի վրայ յարձակելով իրենց գիտնական ու խոհեմասէր Պատրիարքը բռնութեամբ գահազուրկ ընելու աստիճան կը սկսի արգելիչ միջոցներ ձեռք առնել, օտար կրօնաւորաց յարաճուն և խոռվայոյզ գործունէութեանց դէմ: Ոյժ կուտայ Լուսաւորչական Հայոց և անոնց պետերուն, որ անվախօրէն հալածանք հանեն օտար կրօնաւորաց դէմ, և աշխատին խափանել ազգին մէջ ծագած երկուութիւնն ու անմիաբանութիւնը:

Նալեանի յաջորդեց Պրոխորոն Սիլիստրէցի, որ քանի մը ամիսէն հրաժարեցաւ, և որուն յաջորդեց Մինաս Ակնեցի: Երկու տարի վերջ կը նստի Գէորգ Ղափանցի, որուն կը յաջորդէ կրկին Նալեան:

Եկող գացող այս Պատրիարքները ամէն ջանք թափեցին, բայց ի զուր, երկարակութիւնը աւելի սաստկացաւ: Կառավարութիւնը չուղեց ճանչնալ կաթոլիկ Հայերը՝ իրեւ ուրոյն հասարակութիւն, որոնց հոգեւոր պէտքերը կը հոգային ժեղուկիթ կրօնաւորները:

Կաղզուանցի ԶԱՐԱՐԻԱՆ, և Համատանցի ՅՈՎՃԱՆ-ՆԵՍ Պատրիարքներու բոլոր ջանքերը ապարդիւն անցան և չկարողացան Մայրէնի Եկեղեցւոյ ծոցը դարձնել դաւանափոխ ազգայինները, որոնք Եւրոպական կաթոլիկ պետութեանց աջակցութենէն քաջալերուելով, կը ձգտէին ունենալ առանձին Պատրիարք և Վարչութիւն:

Համատանցիին յաջորդեց դարձեալ կաղզուանցի, որ մինչեւ իր մահը (1799) մնաց Պատր. Աթոռին վրայ, և հալածանքը չի դադրեցաւ գոյութիւն ունենալէ:

Կաղզուանցիի յաջորդեց Ս. Էջմիածնայ Պոլոյ նուիրակ Դամիէլ Եպիսկոպոս Սուրբմառեցի, որ հազիւ տարի մը պաշտօնավարեց, և Արզութեանցի յաջորդ Դաւիթ Դ. Էնեղէթցիի մահէն վերջ, Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուեցաւ (1804):

\* \* \*

### ՄԻՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Այս բոլոր եկող ու գացող Պատրիարքներու և ազգային կարեւոր դէմքերու կողմէ միութեան և համերաշխութեան համար թափուած ճիգերը ապարդիւն մնացած էին: Յայտնի էր, որ Հայ ժողովուրդը բաւական տուժած էր այս ներքին կրօնական երկպառակութիւններէն, որ փոխուած էր թունալից ատելութեան մը:

Այս անտանելի և անվերջանալի վիճակը աւեսնելով, երկու կողմերէն ալ բանիբուն և խոհական ազգայիններ միջոց մը կը փնտուն համերաշխութիւն մը գոյացնելով վերջ տալու համար ազգամիջեան այս կնճիռին:

Եւ այդ առիթը կը հասնի ինքնին:

Ա.Բ.Ա. ՓՈՐՁԻ. — Ս. Երուսաղէմի Թէ՛ՌԴՈՐՈՍ Գ. ՎԱՆԵՑԻ (1799-1819) Պատրիարքի օրով, 1808 ին, Սուրբ ՎԱՆԵՑԻ (1799-1819) Պատրիարքի օրով, 1808 ին, Սուրբ Յարութեան հոյակապ տաճարը հրոյ ճարակ եղաւ: Վերարութեան հոյակապ տաճարը հրոյ ճարակ եղաւ: Վերարութեան ատեն, Յոյները Դամասկոսի կոււակալին և ազդեցիկ Արաբներու միջոցով, ամէն ճիգ թափեցին որպէսզի Հայերը զրկէն՝ Ս. Յարութիւն տաճարին մէջ ունեցած իրենց իրաւունքէն:

Այս անակնկալ դէպքը վրդովեց բոլոր Հայութիւնը,

առանց իտրութեան կուսաւորչականի և կաթոլիկի:

Հայ երկու յարանուանութեանց գլխաւորները, կրօնական թէ աշխարհական, ժողով կը գումարեն, և իրրեմէկ մարդ ու զանգուած, Տէրութեան մօտ ազդու բողոք կը բարձրացնեն Յունաց այս անիրաւ յափշտակութեան դէմ: Դատ ու գատաստան տեղի կ'ունենայ, և արդարադատ — Ա.ՏԼԻ — կոչեցեալ Սուլթան ՄԱՀՄՈՒՏ Բ. արքան, մամնաւոր հրովարտակով կը հաստատէ Ս. Տեղեաց վրայ Հայոց ունեցած վաղեմի իրաւուքները, զոր է՛ՕՄէ՛Ր ԽԱԼԻՖԱՆ Երուսաղէմը գրաւելէն յետոյ ( 657 թուին Քրիտոսի, որ ատեն Հայերը ունեցան իրենց առանձին Պատրիարքը, Աբրահամ Ա. ), տուած էր Հայ Ազգին: Միւնոյնը ըրած էր նաև Օմանցւաց ԵՄՎՈՒԶ ՍՈՒՀԹԱՆ ՍԵԼԻՄ արքան, երբ Եգիպտացիներէն գրաւեց Երուսաղէմը, 1317 թուին:

Այս յաջողութիւնը, ուրախութիւն պատճառեց բոլորին, և առիթ մը եղաւ որ միաբանութեան ու համերաշխութեան մը գալու փորձեր սկսին:

Բարերդցի Զամաշրմեան Յովհ. Պատրիարքի (1802-1815) օրով տեղի ունեցան այդ իորհրդակցական ժողովները, ուր քննուեցան աստուածաբանական և ծիսական ելոյթներ և կարելի եղաւ համաձայնութիւն մը գոյացնելուակայն, գոլէժական ոչ-հայ կաթոլիկ վարդապետներու զանգան խանգարիչ միջոցները արգելք հանդիսացան ազգամիջեան այս միութեան, որ այսպէս, վիճեցաւ և մեծ ցաւ պատճառեց Հայ ժողովուրդին:

Հայ կաթոլիկները՝ որ իրենց կարգ մը հոգեոր պէտքերը կը հոգային դոլէժական և Ժեզուիթ կրօնականներու միջոցաւ, միացած կը մնային դեռ Մայրենի Եկեղեցին՝ կարգ մը ծիսական արարողութեանց մէջ, մինչ օտար կաթոլիկ կղերը կ'ուզէր բոլորովին հեռացնել զանգանք այդ ծէսերէն ալ և կապել պապականին:

**ԵՐԿՐՈՐԴ ՓՈԲՉ.** — Առաջին անյաջողութենէն ետք միութեան երկրորդ փորձը տեղի ունեցաւ 1816 17 ին:

Այս փորձին նախաձեռնարկ եղան Մինիթարեան Հայրերը, որոնք կը բաղձային Հայ կաթոլիկները չի հեռացընել Մայրենի Եկեղեցին, և կ'ուզէին ապացուցանել պապական պետերուն՝ թէ Հայ Եկեղեցին բոլորովին չէ շեղած իր Ուղղափառութենէն. և թէ ճշմարիտ քննութիւն մը և համերաշխելու փափաքը պիտի արդարացընէր այս տեսակէտը:

Եւ որպէսզի այս կէտը ճշդէ՛, Հայր Մ. Վ. Զամշեան ՎԱՇԻ, ՀԱՅԱՏՈՅ անունով գիրք մը գրեց, որով բացայատօրէն կ'ապացուցանէր թէ Հայաստանեայց Եկեղեցին ուղղափառ է, և հերետիկոսական կամ հերձուածող չէ՛:

Այս պատուական զրութեան ձեռագիրը բնագիրը գումական վարդապետ մը գողցաւ և ղրկեց Հոռվմայ Պապին: Մինիթարեան Միաբանութիւնը ամբաստանուեցաւ թէ սրտով և հոգիով պապական չէ՛, այլ՝ երեսանց:

Մինիթարեանք ստիպուեցան ապացուցանել իրենց կաթոլիկութիւնը և պաշտպանել միութեան գաղափարը: Ասկէ զատ, բաղձալի միութիւնը կարելի ընելու համար, գոլէժական վարդապետներն ալ հրաւիրեցին մասնակցիլ խօսակցութիւններուն:

Եղան ժողովներ, զիջողութիւններ, բայց ընդունայն: Վիժեցան այս փորձերն ալ, որովհետև կաթոլիկ կղերը չեր բաղձար Հայ կաթոլիկ ժողովուրդին կամքին ընդաշել, վասնզի, արտաքին ազգակներ և քաղաքական ինդիրներ կը հետապնդուէին օտարներու կողմէ: Ֆրանինդիրներ կը հետապնդուէին օտարներու կողմէ: Թրանսացիք թեարկութեան իրաւունք ստացած էին թուրքիոյ կաթոլիկներուն վրայ, իսկ Ռուսիա, միենոյն իրաւունքը ձեռք բերած էր թուրքիոյ օրթոսոքո և Հայ ժողովրդոց ձեռք բերած էր թուրքիոյ օրթոսոքո և Հայ ժողովրդոց վրայ: ՍՈՒՐԲ ԶԻՆԱԿՑՈՒԹԻՒՆ մը կազմուած էր Ռուսիւրութեան, Վատիկանի պալատին և բազմաթիւ Տաճարներու շքեզութեան ու վեհութեան մասին իր ստացած տեղեկութիւններն ալ մեծապէս ազդեցին իր վրայ:

Այս բոլոր օտար ազգակները զիրար կը խաչաձեւէին, մինչ Հայ ժողովուրդը՝ մատնուած ներքին կրօնական և պառակտիչ վէճերու, չէր կրնար վճռական քայլ մը առնել ձերբազատուելու համար այդ քայքայիչ վէճերէն:

Ամիրաներն ալ երկու մասի բաժնուած էին, Մէկ մասը համակիր էր կաթոլիկութեան, իսկ միւս գորաւոր մասը հաւատարիմ մնալով Մայրենի Եկեղեցւոյ, հակառակ դիրք բոնած էր:

Միութեան այս երկրորդ փորձն ալ վիժեցաւ:

—o— | —o—

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅ ԵՒ ԻՐ ՄԻԱՅԱՆՈՒԹԻՒՆԸ: — Մինիթար ծնած է Սեբաստիա, 1676 Փետրուար 7 ին, և աւազանի անուամբ կոչուած էր Մանուկ:

Մանուկ կը դաստիարակուի երկու բարեպաշտ կիներու ինսամքին աակ, և փոքր հասակին մէջ մասնաւոր սէր կը տածէ կրօնաւորութեան և Ս. Գրոց ուսման:

Սեբաստիոյ Ս. Նշան Վանքին մէջ Մանուկ ձեռնարուեցաւ Սարկաւագ, և տարիէ մը աւելի հոն Ս. Գրոց ուսմամբ պարապելէ վերջ, պատեհութիւն մը զինքը մը զեց դէպի Ս. Էջմիածին: Անկէ անցաւ Սեւանայ Վանք, բայց անապատի կեանքէն չախորժելով գնաց Երեւան, և իր ծննդավայրը դառնալու տաեն, Հասան-Քալէի Սուրբ Աստուածածնի Վանահօր ինդրանքին վրայ դասատուի պաշտօն վարեց վանքին մէջ: Այդ ըրջանին պապական կրօնը բաւական ծաւալած էր կարնոյնահանդին մէջ, և Մինիթար յարաբերութիւն հաստատելով երբեմն չոռվմ բնակող անձի մը հետ, անկէ հմայուեցաւ: Պապին հզօրութեան, Վատիկանի պալատին և բազմաթիւ Տաճարներու շքեզութեան ու վեհութեան մասին իր ստացած տեղեկութիւններն ալ մեծապէս ազդեցին իր վրայ:



ՄիհթԱր ԱբբԱՅ  
Հիմնադիր համանուն Միաբանութեան

Միհթար Կարինէն Երուսաղէմ, յետոյ Սեբաստիա  
կ'ամնցնի, և հոն վարդապետ կը ձեռնադրուի:

Միհթար վարդապետ կ'որոշէ հիմնել կրօնական մի-  
աբանութիւն մը, չայ ժողովուրդին հոգեւոր քարոզիչներ  
և ուսուցիչներ պատրաստելու նպատակաւ: Որովհետեւ  
ինք այդ գործին անհրաժեշտ հմտութիւնը չունէր, և իր  
ուժին ալ վեր էր ատանկ միութեան մը կազմութիւնը,  
կ'երթայ Պօլիս, և կաթոլիկ դպրոցէ ուսած Խաչատուր  
գիտնական վարդապետին աջակցութիւնը կը ինսպիրէ, սա-  
կայն կը մերժուի: Նոյն թուականներուն կ. Պոլսոյ մէջ  
ահեղ պայքար կար պապականութեան դէմ: Միհթար  
Լատիներէնէ իր քանի մը թարգմանութիւններուն համար  
կ'ամբաստանուի, որով կ'ստիպուի Գարուչինեանց մօտ  
ապաստան փնտոել: Միհթար իր աշակերտներով 1701  
տարւոյ Սեպտեմբեր 8ին կը հիմնէ իր Միաբանութիւ-

նը և կը հաստատուի նախապէս Վենետիկեան իշխանու-  
թեան ենթակայ Մորէա կղզին:

Կառավարութիւնը Միհթարի իննդրանքին վրայ հող  
կը տրամադրէ վանք կառուցանելու համար, ինչպէս և  
երկու կալուած, որպէսզի անոնց եկամուտով Միաբանու-  
թեան գոյութիւնը ապահովուի:

Միհթար ստիուցաւ Հոռվմայ պապական իշխա-  
նութեան ներկայացնել Միաբանութեան կանոնագիրը,  
որ վաւերացուց զայն 1712 ին: Այս կերպով Միհթար  
յարեցաւ Հոռվմէական Եկեղեցին:

Կը ծագի Թրքօ - Վենետիկեան պատերազմը, որուն  
հետևանքով Միհթար իր աշակերտներուն հետ կը հաս-  
տատուի Վենետիկի Ս. Ղազար կղզին մէջ, զոր Վենե-  
տիկի ծերակոյտը շնորհած էր, 1717 Սեպտ. 8ին:

Իտալական հողի վրայ այսպէս հիմնուեցաւ Վենե-  
տիկեան Միաբանութեան Ս. Ղազարու Վանքը, ուր Մը-  
խիթար ամրապէս հաստատուելով, իր աշակերտներուն  
հետ նուիրուեցաւ Հայ լեզուի, մատենագրութեան ճոխա-  
ցումին: Միհթար 50 տարի ապրեցաւ Ս. Ղազար վան-  
քին մէջ, և խաղաղութեամբ կնքեց իր կեանքը ( 1749  
տարւոյ Ապրիլ 27 ):

Միհթար Աբբաւի մահէն յետոյ Միաբանութիւնը  
տարուէ տարի ուռճացաւ և բազմաթիւ ուսումնասէր ու  
գիտուն անձեր հասցուց: Հիմնուեցաւ տպարան, մատե-  
նադարան, և ուր հաւաքուեցան բազմաթիւ հայերէն ձե-  
ռագիրներ: Հրատարակուեցան ամէն կարգի օգտակար  
գիրքեր, որոնք ճոխացուցին հին և նոր հայերէնը:

Այսպէս, ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ԲԱՌԱԳԻՐԻ մը յօրինեց  
նոյն ինքն Միհթար Աբբանայր, որ իր մահէն վերջ լոյս  
աեսաւ: ՀԱՅԿԱԶԵԱՆ հսկայ բառարանը պատրաստեցին  
երեք տքնաշան վարդապետներ, Աւգերեան, Աւետիքեան  
և Սիւրմէլեան Հայրերը: Հայր Միհթարէ Զամչեան առա-

չին գրաբար կատարեալ քերականութիւնը կազմեց, ինչ  
պէս նաև երկհատոր Հայոց Պատմութիւնը, որ սկիզբէն  
մինչև 1784 թուականը կը համնի:

Հ. Ղ. Ինձիձեան հրատարակեց Հնախօսութիւն  
Հայոց և Աշխարհագրութիւն Հայոց գիրքերը:

Մեծանուն բանաստեղծ և գրագէտ Հ. Ղ. Ալիշան  
հրատարակեց Սիսուան, Այրարատ և Սիւնիք  
անուամբ երկերը, որոնցմով կը նկարագրէ այդ երկիրները:

Հ. Գ. Զարբհանէլեան գրեց Պատմութիւն Հայ  
Դպրութեան անուն երկհատոր ուսումնասիրութիւնը:

Միսիթարեանք կրօնական տարակարծութեամբ մը  
երկու մասի բաժնուեցան, որով, բաժնուող մասը 1775ին  
անցաւ Թրիէստէ, և Մարիա Թերէզա Աւստրիոյ թագու-  
հին աջակցութեամբ հոն հաստատեց իր մենաստանը:  
Ասոնք 1811ին փոխադրուեցան Վիէննա, և հոն հիմնե-  
ցին դպրոց, տպարան մատենադարան և թանգարան:

Վիէննայի Միսիթարեան Հայրեն ալ գրական բոլոր  
ճիւղերուն մէջ ալ նշանաւոր հանդիսացած են: Նշանա-  
ւոր է Հ. Ա. Այտընեանի Քերականութիւն Հայ  
աշխարհիկ լեզուի Քննական ուսումնասիրութիւնը:

Վենետիկեանք կը հրատարակեն ԲԱԶԱՎԱՎԵՊ ամսա-  
գիրը, իսկ Վիէննականք՝ ՀԱՆԴԵԼ ԱՄՍՈՐԵԱՅՆ, գրա-  
կան, գիտական և այլ ճոխ բովանդակութեամբ մը:

Զոյգ Միսիթանութիւններն ալ մեծ ծառայութիւններ  
մատուցած են և կը մատուցանեն դեռ Հայ լեզուի և  
գրականութեան, և իրենց վարժարաններով ալ կը դաս-  
տիարակեն բազմաթիւ հայ ուսանողներ:

Մեր միւս հատորներուն մէջ կրկին պիտի իուսինք  
Միսիթարեանց վրայ:



### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴԻ

Յարութիւն Ամիրայ Պէզճեան.— Տիւզեան  
գերդաստանի գլխուն պայթած մեծ  
փորձանքը.— Համերաշխումի  
երրորդ ամուլ փորձը:

Կարսէն Պոլիս գաղթելով, Կէտիկ Փաշայի մէջ կը-  
տաւագործութեամբ զբաղող Պէզճի Պօղոս աղայի որդին  
էր Յարութիւն Պէզճեան, որ ծնած է 1771 Ապրիլ 10ին:

Յարութիւն՝ որ քիչ շատ կարդալ գրել սովորած էր,  
նախապէս զբաղեցաւ մետաքսավաճառութեամբ, որու-  
պատճառաւ կոչուեցաւ ԳԱԶԱԶ ԱՐԹԻՆ: Յետոյ ժամա-  
նակ մը Տիւզեաններու մօտ ծառայեց իրը գործակատար  
և մեծ համբաւ շահեցաւ իրը հաւատարիմ, ուղղամիտ և  
իմաստուն մարդ:

Տիւզեան Յովհաննէս Զելպիի մահէն վերջ, անոր  
երկու որդիքը՝ Գրիգոր և Սարգիս Զելպիիներ, իրենց բո-  
լոր ձեռնարկներուն մէջ խորհրդակից կընեն Արթինը:

Տիւզեանները կը վարէին արքունի փողերանոցին  
տեսչութիւնը: Պէզճեան կը տեսնէ որ, բոլոր պաշտօն-  
եաները զեղիս կեանք մը կը վարեն, կողոպտելով փողերո-  
նոցին հասոյթները, և ի վեաս Տիւզեան եղբարց:

Ուշի ուշով ինսդիրը քննելէ վերջ, Պէզճեան իրողու-  
թիւնը իր պետերուն կը յայտնէ, բացարելով թէ փո-  
ղերանոցի այս վիճակը կրնայ պատճառ ըլլալ իրենց  
անկումին և փացումին:

Գրիգոր և Սարգիս Զելէպիները ժարսափմամբ կը լսեն  
այս իրողութիւնը, և փողերանոցին գործերը դադրեցնելով  
Պէզճեանի լայն իրաւասութեամբ պաշտօն կուտան՝ որ  
ուզածին պէս կառավարէ փողերանոցը, և մինչեւ մէկ  
տարի ամէն բան կարգի դնէ :

Պէզճեանի անունը և պաշտօնը կը խրտչեցնէ փողերա-  
նոցի բոլոր պաշտօնեաները, որոնք, ըմբռնելով իրենց  
գլխուն գալիքը, և հասկնալով թէ այլեւս պիտի չկարե-  
նան շարունակել իրենց նախկին զեղիս ու շոայլ կեանքը,  
կը բողոքեն: Ասոնց կը միանայնաւ Գրիգոր և Սարգիս  
Զելէպիներու հօրեղբօրորդին՝ Մկրտիչ Զելէպի, որ բար-  
կութեամբ անոնց երեսին կը պոռայ՝

Միակ հայ մը. և ա՛ն ալ Պէզճեանը, չի՛ կը նար-  
այդ տեսակ բարեկարգութիւն մը կատարել, միթէ մենք  
այնքան անճարակ ենք, որ պիտի չկարենանք անհրա-  
ժեշտ դարմանը տանիլ:

Տիւզեան երկու եղբայրները, իրենց ազգականին այս  
խօսքերուն վրայ ետ կ'առնեն իրենց որոշումը:

Յարութիւն պէզճեան, որ սրտովին կը ցանկար իր  
տէրերը փրկել վաղահաս վտանքէ մը, երբ անոնց այս  
վերջին որոշումը կիմանայ՝ չուզէր պատասխանաւու-  
րլալ, ուստի, հրաժարելով իր պաշտօնէն՝ կ'ստանայ իր  
բարւոք գործունէութեան պաշտօնական վկայագիրը:

Սուլթան Մահմուտի ամենասիրելի խորհրդականնեն-  
րէն չալէթ էֆէնտի, իր բարեկամ Խայրուլլահ էֆէնտին  
փողերանոցի վերատեսուչ կը կարգէ:

Նոր վերատեսուչը ցասումով կը դիտէ Տիւզեաննե-  
րու փարթամ կեանքը, դոր կը վարէին՝ շնորհիւ փողե-  
րանոցին:

Խայրուլլահ վֆէնտի, Սուլթանէն հրամանագիր հա-  
նելով փողերանոցին հաշիւները քննել կ'ուտայ, որմէ  
կը յայտնուի թէ փողերանոցը խիստ գէշ վիճակ մը ունի:



ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱՅՅ ՊԷԶՃԵԱՆ  
Ազգային մեծ և անզուգական բարերար

Արքունի հրամանաւ, 1819 Օգոստոս 29 ին փողե-  
րանոցին մէջ կը բանտարկուին Գրիգոր և Սարգիս Զե-  
լէպիք. Օգոստոս 31 ին Միքայէլ Զելէպին, իր քեռայրը՝  
Յովհաննէս Ալիքսանեան, Տիւզեան Մկրտիչ Զելէպի, և  
քեռայրը՝ Յովսէփ Զելէպի Ազնաւոր:

Այս բանտարկեաները կը բռնադատուին ստորագրե-  
լու թէ Տիւզեանները պարտական են արքունի գանձին:

Երեք Զելէպիները կ'ստորագրեն, բայց, Ազնաւորեան  
կը մերժէ ստորագրել, և իսկոյն շղթայի կը զարնուի:

Երկու օր վերջ, Սեպ. 2 ին, արքունի հրամանով փո-  
ղերանոցին բոլոր պաշտօնեաները, գործականները, միջ-  
նորդները, Զելէպիներուն ազգականները, այր թէ կին.  
կը ձերբակալուին: Այրերը կը դրկուին բանտ, իսկ, կին  
ու մանուկները՝ գում գարուի Ազգ. Պատրիարքարան  
կը փոխադրուին:

Ասկէ զատ, սոյն բոլոր բանտարկեալներուն բնակարանները կը կնքուին, և ոստիկաններու հսկողութեան կը յանձնուին :

Ահ ու սարսափ կը տիրէ չայ ժողովուրդին մէջ ի տես այս անակնկալ հալածանքին : Ոչ ոք կը համարձակի հետաքրքրուիլ այս ինդրով :

Յարութիւն Պէզճեան սաստիկ կը տիրի, վասնզի, ինք գուշակած էր արդէն այս վտանգը, և զգուշացցուցած՝ Տիւզեանները, որ այսպիսի փափուկ ժամանակի մէջ, այսպիսի մեծ ու փափուկ գործի մը համար որքա՛ն զգոյշ ու հեռատես ըլլալ պէտք էր, կասկածի ու նախանձի տեղի չտալոյ համար. մինչ փողերանոցի պաշտօնեանները, տեսուչ ու վարիչները, բացէ ի բաց զեղիս ու շոայլ կեանք մը կը վարելին, նախանձը շարժելով նոյն իսկ կայսերական Աւագանին, և պետութեան բարձր պաշտօնատար Ներուն, որոնք խեթիւ կը նայէին հպատակ չայերու այսքան յառաջդիմութեան, շոայլ և իշխանական կեանքին : Ճակտի քրտինքով, կամ արդ դար կաստակով իսկ պէտք չէր այդքան աշքի զարնող շոայլութիւննիր ընել, ու պատուհաս բերել իրենց զիմուն :

Գազազ Արթին իզուր կը ճգնէր օգնութեան միջոց մը փնտոել, և ազատել իր բարերարները :

Փողերանոցին հաշիւններուն մէջ իրենց զեղծումներով ամբաստանուած և մահուան գատապարտուած գրիգոր և ՍԱՐԳԻՍ ՏԻՒԶԵՍՆ ԶԵԼՔՊԻՆՆԵՐԸ 1813 չոկտ. 2 ի Շաբաթ օր, առտուան ժամը տասնըմէկին կը կախեն Պապը չիւմայունի մէջ, իսկ ՄԻՔԱՅԻԼ ԶԵԼՔՊԻՆ ալ, ԵԽՆԻ Գիւղի իր ծովեզերեայ փառաւար և շքեղ տպորանքին պատուհանէն կը կախեն : ի մեծ սարսափ ժողովուրդին :

Այս դժբաղդներուն մարմինները կը յանձնուին Ազգային Պատրիարքարան, որ կը թաղէ զանոնք Գուրութէ մէկի իրենց ընտանեկան դամբարանին մէջ: միւռ բանտարկեալները կ'աքսորուին Ծնատողուի խւրերը :

Արքունի հրամանաւ, Տիւզեան գերդաստանի տունիրը կը գրաւուին իրենց բոլոր ինչքերով :

Ինչքերու գրաւումի ատեն կը տեմնուի որ այդ տուներուն մէջ, մասնաւոր սենեակներ կան իրեւ աղօթատեղի, ինչպէս և զանազան կրօն: պատկերներ, զարդեր, դգեստներ ու սեղան:

Կառավարութիւնը քննութեամբ կ'ստուգէ որ, Տիւզեանները, ինչպէս և կարգ մը չայեր, չէին ճանչնար չայոց Պատրիարքին իրաւասութիւնը, և պապականութեան յարելով անջատ ու գաղտնի կրօն, արարողութիւններ կը կատարէին իրենց տուներուն մէջ:

Այս պարագան առիթ կ'ըլլայ որ կառավարութիւնը աւելի խստացնէ իր հալածանքը օտար բրոբականտի հետեւող, ու Ազգէն անջատուիլ փորձոզներուն զէմ:

Կառավարութիւնը հրաման կընէ չայոց Պատրիարքին՝ որ ամէն գնով առաջքն առնէ կրօնական այս բաժանումին, վասնզի, բոլոր չայերու կրօնապետ միայն չայոց Պատրիարքը կը ճանաչէ, որ Բ. ԴՐԱՆ առջեւ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒԻ է ամբողջ Ազգին համար :

Նոյն ատենի չայոց Պատրիարքն էր ԱԴՐԻԱՆՈՒ ՊՈՂԱՑԻ ՊՈՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (1815 - 1823):

\* \* \*

ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԵՐՈՐԴ ՓՈՐՁԲ. — Պօղոս Պատրիարք իր մօտ կը հրաւիրէ չայ լուսաւորչական և չայ չոռվմէ ական երեւելինները, ու անոնց կը հաղորդէ կայսերական այս հրամանը.

Սկսան միութեան փորձերը : Երկուստեք կը համաձայնին որ, գիտնականներէ յանձնախումբ մը կազմուի միութեան պայմանները ուսումնասիրելու պաշտօնով, որուն բերած տեղեկագիրը ընդհանուր ժողովի մը մեջ կը վաւերացուի :

Երեք ամիս կը տեւեն յանձնաժողովին քննութիւնները, երբեմն Պէզճեան Յարութիւնի Ելնի Գարուի ծովեղերեայ ապարանքին մէջ, և երբեմն ալ Պալեան Գրիգոր Ամիրայի ապարանքը:

Փոխադարձ զիջողութիւններու շնորհիւ կարելի կը լայ ՀԱՄԱՉԱՐԱՅԻՐԸ պատրաստել :

ՄիՌԻԹԵՈՒՆ այս ՀԱՄԱՉԱՐԱՅԻՐԸ վաւերացնելու համար, Պօղոս Պատրիարք 1820 Ապրիլ 18 ին Մայր Եկեղեցւոյ մէջ փառաւոր հանդէս մը տալով ընդհ. ժողովի կը հրաւիրէ Լուսաւորչական ու Կաթոլիկ մեծամեծներն կը կղերը: Քանի մը կաթոլիկացած վարդապետներ վեռու կղերը: Քանի մը կաթոլիկացած վարդապետներ վեռու փիլոն կ'ստանան Պօղոս Պատրիարքէն, որ բոլոր ժողովրդեան կը բացատրէ միութեան համաձայնագրոյ պարունակութիւնը ու կը հրաւիրէ բոլորը՝ ստորագրել այդ համաձայնագիրը:

Բոլոր ներկաները կ'ստորագրեն:

Ցնծութիւն և ուրախութիւն աննկարագրելի կը լլալ ժողովուրդին մէջ: Օրերով իրարու փոխադարձ հանդէս ու խնճոյքներ կը սարքուին:

Նոյն տարւոյ Մայիս 17 ին կը հրատարակուի գլուխոյ մը, ԴՐԱԽԵ: Ռ ՍԻՐՈՅՑ անուամբ, և Գր. Լուսաւորչի պատկերով, որով, հրաւեր կ'ուղղուէր հեռացող Հայոց վերադառնալ Մայրենի Եկեղեցւոյ ծոցը:

Մակայն, աւազ, որ այս միութիւնը շատ կարծ կեանք մը կ'ունենայ:

Ժողովրդեան մեծագոյն մասին մէջ ծայր կ'ուտառ դժգոհութեան ալիք մը՝ Պօղոս Պատրիարքին դէմ, ամ-

բաստանելով զայն, որ ինքն իր գլխուն, կրօնա-դաւանական իննդիրներ քննելու իրաւունք չունէր, և մի՛ այն Հայոց Վեհ. կաթ. ի նախագահութեամբ գումարուած Եկեղ. Ընդհանուր ժողով մը կրնար ձեռնհասօրէն վճիռ արձակել:

Միւս կողմէ բրոբականտի Լատին վարդապետները խիստ գժգոհ մնացին այս միութենէն. ասոնց միացած էին Անգարացի մոլեռանդ կաթոլիկ Հայերը:

Այս կերպով ՄիՌԻԹԵԸՆ դէմ դաւեր սկսան :

Նոյն միջոցին, ըստ Համաձայնագրին, 1820 Յուլիս 12 ին, Պօղոս Պատրիարք, Մայր Եկեղեցւոյ մէջ կը կատարէ Վերջին ՕԾՄԱՆ իիլի օրհնութիւնը, և յուրու Եկեղեցիներուն կը դրկէ, հրամայելով որ ըստ փափառղաց վերջին օծում կատարեն:

Այս օծումն ու հրահանգը աւելի մեծ անպատեհութիւն մը կ'ստեղծեն Լատին կրօնաւորներուն համար, որոնք բուռն թափով յառաջ կը տանին իրենց գրգութիւնները ժողովուրդին մէջ՝ ընդդէմ միութեան :

Գոլէժական ԳՈՒՅՑԻԱՆԹԻ անուամբ կրօնաւոր մը, կը համողէ Անգարացի միամիտ և մոլեռանդ կաթոլիկ Հայ մը, և անոր տալով իր ձեռքը անցած բազմաթիւ Հրաւէր Սիրոյ գրքոյիները որոնց վրայ Ս. Լուսաւորչի պատկերին տեղ Պապին պատկերը փակցուցեր էր, կը թելազուէ զայն երթալ գրգուել հայ խանութպահները ընդդէմ միութեան:

Մոլեռանդ Անգարացին Լուսաւորչական ձեւանալով, կը շրջի շուկաները, ու խանութէ խանութ մտնելով կուսաւորչական Հայերու ցոյց կուտայ գրքոյիները, կը գրգուէ զանոնք ըսելով, — « Հայեր, ի՞նչ կեցեր էք, տեսէ՛ք, մեր Պատրիարքը կաթոլիկ է եղեր, Փրանկացեր է, ելեք հաւաքուեցէ՛ք, երթանք բողոքել՝ թէ մենք կուսաւորչի զաւակներ ենք և ո՛չ թէ Պապին...» :

“Քնն. Պատմ. Հայոց” Ա. Իատոր. Լեւոն ձերախեան

Բազմաթիւ չայ խանութպամներ, որոնց մեծ մասը կեսարացի արհեստաւորներ, իրար կ'անցնին, և յաջորդ կիւրակի, ահագին բազմութեամբ կը դիմեն Պատրիարքանիստ Մայր Եկեղեցին, և կ'սկսին ցոյց կատար ել, պոռալ, կանչել: Կը պահանջեն որ Պօղոս Պատրիարք գայ, և բացատրութիւն տայ իր արարքներու մասին, և հանդարտեցնէ գայթակղեալ ժողովուրդին միտքը:

Պատրիարքարան գտնուող քանի մը բարձրաստիճան հոգեւորականներ իզուր կը փորձեն հանդարտեցնել ժողովուրդը: Ծովածաւալ ցուցարարները տեսնելով որ Պատրիարքը չի հաճիր երեւնալ, ու բացատրութիւն տալ, բռնութեան կը դիմեն և յարձակելով Պատրիարքարանի վրայ, կը կոտրեն դռները, ջարդ ու փշուր կը ընեն պատուհանները, և կը խուժեն ներս. սակայն, ո՛չ ոք կը գտնեն հոն:

Պօղոս Պատրիարք, գուշակելով իր գլխուն գալիքը, յաջողած էր փախչիլ, ու դրացի թուրքի մը տունը պաստանիլ:

Այս մեծ անակնկալը, և ժողովրդային իրարանցումը պատճառ կը լան որ կառավարական զօրքը միջամբուէ, և արիւն հոսի:

Արիւնալի այս բաղխումին մէջ կը փիրաւորուին բազմաթիւ անձեր:

Զօրքը կը շրջապատէ Պատրիարքարանը, և կը յաջողի ցրուել ժողովուրդը: Կը ձերբակալուին բազմաթիւ ցուցարարներ, և անոնց գլխաւորները մահուան կը դատապատին:

1820 Սեպտ. 18ին (Հին Տօմար) — Խաչվերացի տօնին Շաբաթ երեկոյ, — մինչ Մայր Եկեղեցւոյ մէջ ԼՈՅՍ ԶՈՒՄ ԹՐ կ'երգուէր, դուրսը, Եկեղեցւոյ մայր վրան առջեւ կը գլխաւորւի ՍՍԳԱԵԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐԱՆ: Սամաթիա, իր սրճարանին առջեւ՝ ԳԻՆԵՊԱՆ ՏԵ-

ԼԻ ՊԱՂՏԱՍԱՐ աղան. Տիվան եօլու, Զեմպէրլի Թաշի առջեւ կը գլխաւորւի կեսարացի Յակոբ աղան. Սուլթան Պայազիտի մօտ, Բարմագ Գաբու ըսուած տեղը կը կախուի Ազարիա անուն պատանին:

Իսկ մնացեալ ցուցարարներէն շատերը, որոնց մէջ էր նաև Յարութիւն Պէղճեան, կ'աքսորուին Անատոլուի գանազան կողմէրը:

Ահա ա'յսպէս, միութեան երրորդ փորձն ալ կը վիմի, օտար և չայ դաւաճան ձեռքերու միջոցաւ, որոնք պատճառ կ'ըլլան բազմաթիւ անմեղ չայերու մահուան կամ աքսորին:

Այս արդիւնքը կը յուզէ բոլոր չայերը անխտիր:

Դաւաճան և կեղծ սարկաւագը, որ նոյնպէս բաժնարկուած էր, իր վախէն իսլամական կրօնը կ'ընդունի, և յայսպիսով կը յաջողի ճողոպարիլ ծանր պատիժէ, ու ազատ կ'արձակուի արգելարանէն, անշուշտ քաջ գիտնալով, որ վրիժառու ձեռք մը պիտի չուշանար իր դաւաճանի և մատնիչի արդար վարձատրութիւնը տալ իրեն:

Այս մահապատիժներն ու աքսորները ամենուն վախազգեցին: Կը վնտուէր միջոց մը, որպէս զի, միանգամ ընդ միշտ վերջ տրուէր այս յոյժ ցաւալի և քանդիչ երկպառակութեանց:

ԳԼՈՒԽ ԶՈՐՈՈՐԴԻ

—(o)—

ԱՊՊՍՍ ՄԻՐԶԱՅԻ արշաւանքը.— ՌՈՒՍ-ՊԱՐ-  
ՍԻԿ պատերազմը.— ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ,  
Հայոց ազատագրութեան խնդիրը և Հայ-  
կական կամաւորագունդին յաղթական  
պատերազմները.— Ռուսիա դարձ-  
եալ կը դրժէ իր խոստումը:

~~~~~

Ինչպէս ասկէ առաջ տեսանք, 1815 ին, կիւլիստանի  
դաշնագրութեամբ, Ապպաս Միրզա հրաժարած էր Ղա-  
րապաղէն ու Գանձակէն :

Ապպաս Միրզա, այս հաշտութիւնը լոկ զինադուլ մը  
նկատելով, կը պատրաստուէր վերագրաւել իր կորսնցու-  
ցած երկիրները :

Երեւանի Սէրտար Հասան, և իր եղբայրը Հիւսէյին  
Խաները կ'իշխէին Արարատեան Նահանգին վրայ :

Փառասէր և մեծանուն Ապպաս Միրզա, 1826 Յու-  
լիսին, մեծ զօրութեամբ յանկարծ յարձակեցաւ Ռու-  
սաց վրայ: Անակնկալ այս խուժումին դիմադրելու ան-  
պատրաստ գտնուող Ռուսերը ստիպուեցան նահանջել,  
որով, Պարսկական խոշոր բանակը պաշարմամբ դրաւեց  
ԳԱՆԶԱԿը, պաշշարեց ՇՈՒՇԻՆ, և ընդարձակ հողեր յադ-  
թականներուն ձեռքը անցան:

Հայ ժողովուրդը փոթորկեցաւ: Ազատութեան յոյսն  
ու գաղափարը կը կին ծնունդ առին բոլո՛ր սրտերուն և  
միտքերուն մէջ:



ՄԵծանուն ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ Հայրենասէրն  
Որ գլուխ կանգնեցաւ Հայկ ազատագրական շարժման

Ռուս կայսերական ֆանը բազմող Նիքոլա Ա. Զար  
արդէն ծրագրած էր դէպի Միջերկրական և Սեհ ԾՈՎ  
տարածուիլ, և առիթ կը փնտոէր: Ապպաս Միրզայի ա-  
նակնկալ այս յարձակման վրայ, Զարը ընդհանուր զօ-  
րաշարժ հրատարակեց, և հրամայեց կովկասեան բանա-  
կին, որ անմիջապէս հակայարձակման սկսի, կարելի ե-  
ղած ուժգնութեամբ պատժելու համար Պարսկական այս  
յանդգնութիւնը:

Միւս կողմէ, հանգուցեալ երկայնաբազուկն Յովսէփ  
Արդութեանց կաթողիկոսի « ԱՐՄՈՒՏԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԹԱԳԱԿՈՐՈՒԹԵԱՆ » մը ծրագիրն ու գաղափարը իրա-  
գործելու ջանասիրութեամբ, Թիֆլիսի Հայոց Առաջնորդ  
ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ, գլուխ կը կանգ-  
նի ազատագրական նոր պայքարի մը: Ան, կը տեսակցի

Նորին Վեհափառութիւն Նիքօլա կայսէր հետ, և անոր հաւանութեամբ ու խրախուսանքով, ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒԹԻՒՆ ԿՈՉ մը կ'ուղղէ, հրաւիրելով զանոնք ապստամբութեան և կոռուի, Հայկական Գաւառներու ազատագրումին համար:

Ներսէս Աշտարակեցի այդ կոչով կ'ըսէր,

« Արիացէ՛ք, Հայե՛ր, և մի՛ վախնաք, : Ահա ժամանակ, երբ ամէնքդ վերածնելով ձեր մէջ ձեր նախնեաց սիրազործութիւնները, միաբանութեամբ պիտի քաջալերէք զիրար, ըսելով, — Մեռնի՛նք քաջութեամբ և առանց դաւաճանելու, Հայրենիքին, ու այսպիսով ժառանգենք մեր նախնեաց պանծալի անունն ու փառքը :

« Բոցավառուեցէք արիութեամբ, և զիմազրեցէք մեր թշնամեաց բոլոր խորամանկութիւններուն և աւագակութիւններուն: Դիմազրեցէ՛ք, կամ Ռուսաց զօրքերուն միացած, և կամ ուրիշ կերպ: Եւ եթէ հարկ լինի, մի՛ ինայէք ձեր արեան վերջին կաթիլը: Աստուածային շլնորհը, և Ռուսիոյ Օգոստափառ Խնքնակալին ողորմաց ուշադրութիւնը պսակներ կը հիւսեն թէ՛ ձեզ, և թէ բոլոր ձեր համազգեաց »:

Ներսէս Աշտարակեցի որքան խորագէտ, նոյնքան և ազգասէր, քաղաքագէտ, և մանաւանդ ուազմավար անձ էր: Կրնանք զայն իրաւամբ կոչել ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԴԱՆ ՄՄԻԿՈՆԵՍՆ մը:

Հայոց այս շարժումը կը զուգադիպէր նաեւ Յունական ապստամբութեան, և որու մասին պիտի խօսինք մեր յաջորդ գլխուն մէջ:

Աշտարակեցիի կոչին վրայ բռնկեցաւ Արարատեան Հայոց Աշխարհը: Պայթեցաւ հակապարսիկ ապստամբութիւն: Ամէն կողմ, անկանոն և հերոսական կորիւներ ծայր տուին:

Թիֆլիսի մէջ կազմուեցան կամաւորական գունդեր:

Ներսէս Աշտարակեցի՝ Հայրենեաց Ոգին է այդ օրերուն: Անոր ուազմաշունչ և հայրենասէր ճառերը կ'արձագանգեն ամէն կողմ, և Հայ կտրիճներ գունդագունդ կը դիմեն Թիֆլիս, կամաւորական շարքերը խտացնելու, երթալ փրկելու համար Արարատեան Հայրենի Աշխարհը:

Մեծ է խանգավառութիւնը, և անբացատրելի Հայ ժողովուրդին ազատազրական յոյսով ոգեւորումը:

Կարճ ժամանակի մէջ, ի Թիֆլիս, կազմուեցաւ Հայ կամաւորներու զօրագունդը: 1827 Մարտ 50 ին — արշաւանքէն երեք օր առաջ —, Թիֆլիսի մէկ հրապարակին վրայ, փայլուն զօրահանդէս մը կատարուեցաւ: Հայկան 10.000 նոց զօրագունդը տողանց մը կատարեց եր պետին՝ Ներսէս Աշտարակեցիի առաջնորդութեամբ, որ վեղար ի գլուխ, մէկ ձեռքը խաչ ու միւսը սուր, հըպարտօրէն կը յառաջանար, բազմամբով ժողովուրդին ընդ մէջէն:

Ամէն կողմէ կեցցէ՛ներ օդը թնդացուցին, և աւելի ոգեւորեցին Հայ կտրիճնեիը:

Հոգեւորական զօրապետը ազդու ճառ մը խօսելով Հայ զինուրներուն, Հայրենիքին փրկութեան գաղափարով դիւթեց բոլորը:

Զօրքը, նուագախումբի ոգեսրիչ մասնակցութեամբ, յաղթական օրէն անցաւ իր պետին առջեւէն:

Ալեփառ և հայրենասէր Աշտարակեցին յուզմունքով կը դիտէ իր քաջերուն խանդափառ դէմքերը, և մահը անարգող անոնց հայրենասիրութիւնը, ու կը պոռայ.

— Ապրի՛ք, զաւակներս :

Մինչ հրահրուած զօրքերը կը գոռան:

— կեցցէ՛, մեր պաշտելի Արբազանը:

Այս զօրանցքէն երեք օր յետոյ, Թիֆլիսի Հայոց Մայր եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ Հայկ զօրադին:

զրոշակին օծման հանդէսը, հազարաւոր բաղմութեան ներկայութեան : Նոյն օրն իսկ Հայկ, զօրագունդին մէջ ցրուեցին կովկասեան բանակին ընդհ. հ րամանատար զօրափար Պասկելիչի մէկ շրջաբերականը, որ Հայ ժողովուրդին ու : այ կամաւորներու ուղղած իր խօսքերը կը վերջացնէր սա՛պէս,

« Հա՛յեր,

« Ձեր եռանդը արժանաւորապէս վարձատրուած է : ՄԵճ կայսեր ողորմած աչքը դարձած է դէպի ձեզ: Դուք կ'ունենաք ձեր զրոշակի տակ սեփական զօրագունդիր: Ձեզի շնորհուած է զէնք, որպէսդի ատով օգնութեան համնիք ձեր ճնշուած եղբայրներուն, ապահովութիւն տաք ձեր ընտանիքներուն,, և գրաւելով կայսերական շնորհները, պաշտպան հանդիսանաք ձեր Հայրենիքին : »

1827 Մայիս 17ին, Հայկ. բանակը ճամբայ ելաւ դէպի ճակատ, ամէն կողմէ Հայ ժողովուրդի քաջալերանքին, ու եղբայրական խանդավառ ընդունելութեանց արժանանալով:

Հայոց ազատագրական շարժումը արձագանգ գտաւ ամբողջ կովկասի և մա՞նաւանդ Արարատեան գաւառի Հայութեան մէջ: Բոլոր հայրենասէր ու կտրիճ երիտասարդութիւնը ուրախութեամբ դիմեց զէնքի: Ահա՝ նշանաւոր կղերական մը եւս, ՄԱՆՈՒԿԱՐԵՍՆ զ.րիդոր ենաւոր կղերական մը եւս, ՄԱՆՈՒԿԱՐԵՍՆ զ.րիդոր եղանակն որ փակեցն ու վեղարը նետած, հագուած է ՊԻՄԿՈՂՈՍ որ փակեցն ու վեղարը նետած, հագուած է պարզ գիւղացիի մը պէս, և զինուած ոտքէն մինչեւ զլուխը, նստած սպիտակ նմոյգին վրայ, սուր ի ձեռին, կ'առաջնորդէ 300 հոգինոց Հայկեան բանակ մը, և անկազան կը կուտի, ու անինայ կը հալածէ Պարսից հեղադար կը կուտի, ու անինայ կը հալածէ Պարսից հեղադար զրոշակի մը պէս, և զինուած ոտքէն մինչեւ զարսէս Աշտարակեցի հոս ևս ի լուր աշխարհի Համբայի Տեմշատինի, Սեւանայ Միջաններուն ապրուի համնի Շամշատինի, Սեւանայ Միջաններուն ապրուի

տամբ և հայակուլ Թիւրքաց վրայ, և զանոնք չարաշար կը պատժէ: Գրիգոր Եպիսկոպոս ուժէ և խելքէ վեր, կորով և անընկծելի որիութիւն ցոյց տալուն համար, « Տէլի Քէ՜Շի՜՛ » կոչեցին զայն:

Մանուշարեան Սրբազնի քաջաղործութիւններուն համբաւը մինչեւ Նիքոլա Ա. Զարին ականջը հասաւ:

կովկասեան բանակի մէկ զօրաբաժնին հրամանատար կարգուած էր Հայազգի զօր. իշխան Մատաթեանը, որ 2.000 հոգինոց իր բանակով, և « Տէլի Քէ՜Շի՜՛ » բանակին հետ միացած, Շամքօր զետակի մօտ չարաշար պարտութեան մատնեց Պարսկական 15.000նոց բանակ մը, որ, ուղմաղաշտին վրայ 2.000 դիակ թուրով նահան, մը, որ բաջական շայութիւնը, իր կղերով, խաչով ու բուրգառով դիմաւորեց, և ուրախութեան աղաղակներով ընդունեց Հայազգի յաղթականները:

Ըստի. հրամանատար զօր. ՊԱՄԿԵՒԻՉ, Հայ կամաւորներով ուժեղացած, գրաւեց էջմիածինը, ու պաշրեց Երեւանը:

Ապաս Միրզա հասաւ Արարատ, Եւրոպական սիստէմով կազմակերպուած իր բանակով պաշարեց Սուրբ Էջմիածինը, ու սկսաւ ոմբակոծել Վանքը (1827, Օգոս. 15):

Հայ կամաւորական բանակը, առաջնորդութեամբ Ռուս զօր. ԿՐՍՍՈՎՍԿԻԻ և ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱԿԵՑԻ ի վրոն տուաւ Պարսից բանակին դէմ, և, Մայրականքը աւերումէ փրկելու գերագոյն ճիգով մը կոուի բռնուեցաւ Վանքին այգիներուն մօտ, և փառաւոր յաղթութիւն մը տոնելով, մտաւ Ա. Էջմիածին:

Աննկարագրելի եղաւ Հայոց ցնծութիւնը: Վանքին զանգակները սկսան հնչել, մինչ Միաբանութիւնը, ըգգեստաւորեալ և շարականներով դիմաւորեց բանակը:

Ներսէս Աշտարակեցի հոս ևս ի լուր աշխարհի Հա-

յութեան, հետեւեալը յայտարարեց,

Հայո՞րդիներ,

Այս հասաւ ազատութեան պանծալի օրը, երբ Հայաստանի դարաւոր փառքը՝ աշխարհի վրայ կրկին պիտի կանգնի՛ Խաչի գօրութեամբ: Հասաւ ժամը, երբ մենք պիտի տեսնենք ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՆԻԱՌՆի եւ ՀԱՅՈՅ ԱԶԳԻ Ա. Զ. Ա. Տ. Ի. Ի. Ն. Բ.՝

Հասաւ ժամը, եւ Մայր Աթոռը պիտի վերականգնի իր վաղեմի անկախութեան մէջ: Անգամ մըն ալ արւիւնով ներկենք Հայրենի հողը, եւ ապա ապրինք ազատ:

**Ազատատեանչ ոգիի մը այս խանդակառ խօսքերը**  
միթէ չե՞ն ապացուցաներ թէ Հայ ժողովուրդի որքա՞ն  
ցանկացող էր Հայրենիքի ազատութեան, և երբէք չէր  
հետաքրքրուէր օրուայ Ռուս վարիչներու քաղաքական  
սքողեալ մտայնութիւնով: Հայ ժողովուրդի վարիչներուն  
մեծագոյն սխալը մի՛շտ այս եղած է:

Զօրագար Պասկեւիչ մեծ խոստումներով դրդած էր  
մեծանուն հայրենասէր ն. Աշտարակեցին՝ զլուխ կանգ.  
նիլ Հայկ. դունդերուն: և յաջողած էր նաեւ վէճ. Զարին  
վաւերացման ենթարկել՝ ապագայ Հայաստանի մը կազ-  
իրեւ փաստ ու գրաւական, Հայոց կողմէ մատուցուած  
անփոխարինելի ծառայութեանց ի գնահատութիւն:

**Ազգային ազատագրութեան սիրով վառուած, և օրէ**  
օր ստուարացող Հայկ. գունդերու շնորհիւ —որոնց թի-  
ւը մինչեւ 20.000 ի հասաւ —, Ռուս զօրքը հետզհետէ  
և այլն եայն:

Պասկեւիչ որ երեւանը գրաւելուն համար արժա-  
տուաւ իր Ե Ի Ա Ն Ս Ք Ի մեծ տիտղոսին շուտով դուրս  
կոյնը և նախանձը: Իշխան Մատաթեանի յաղ-

թանակները իր քոնը խոռվեցին: Զի մարսեց Հայազգի  
զօրագարին խլած յաշողութեան դափնին, և առանց ունէ  
պատճառի, հրամայեց որ զօրաբաժնի հրամանատարու-  
թիւնը առնուի Հայ զօրագարէն, և յանձնուի զօր. Վան-  
կրասիէվի, այն գերագոյն բոպէին՝ երբ զօր. Մատաթեան  
պատրաստուած էր վճռական հարուածը տալ Պարսից:

Պասկեւիչ պաղ ընդունելութիւն ցոյց կուտայ նաեւ  
Աշտարակեցին, որ խորագէտ մարդ, կ'ըմբռնէ ընդհա-  
նուր հրամանատարին չկամութիւնը՝ Հայկ. գաւառներու  
մէջ Հայկական ազատ Հայրենիքի մը ստեղծման մասին:

Հայկ. բանսակը յաղթականօրէն յառաջացաւ մինչև  
Դաւրէմ՝ խանդակառութիւն յառաջ բերելով ամբողջ  
Հայութեան մէջ:

Պարսից ՑԱԹԱԼԻ Շահը ստիպուեցաւ հաշտութիւն  
Ենդիւլ: Ռուս և Պարսիկ բանագնացներ գումարուելով,  
1828 ֆետր. 9 իր կնքեցին ԹիհրթՄէն-ԶՈՅ ի հաշտու-  
թիւնը, որու գլխաւոր պայմաններն էին,


Ա. — Կուր և Երասիս դետերուն միջեւ տարածուած  
Հայաստանի մասը Ռուսաց տիրապետութեան թողուլ:

Բ. — Պարսկաստանէն և Արագատականէն Ռուսիա  
գաղթել ուզուներուն երբէ՛ք արգելք ՀԸԱԱԼ:

Գ. — Մեծագումար պատերազմ. տուգանք վճարել:

Ա. յս պայմաններուն հետեւանքով, զնդապեա Ղազա-  
րոս Ղազարեանի առաջնորդութեամբ, 45.000 Հայեր, թո-  
ղուցին իրենց տունն ու տեղը, և ձիւն ձմեռին, զաղթե  
ցին գէպի նորստաց Արարատեան գաւառը, Նախ-Իջևան  
և Երեւան, յուսալով, որ ՀԱՅԿԱԿՈՒՆ ԱՆԿԱՐՈՒԹԻՒՆ Է  
շուտով պիտի հաստատուի այդ հողերուն վրայ, ինչպէս  
խոստացեր էր Ռուսիոյ ամենողորմած Զարը:

Ֆաթալի Շահ իզուր յորդորեց Հայերը, որ խաբուե-  
լով չի հեռանան իրենց հանգիստ տեղերէն:



Գնդապետ Ղազար Լազարեան  
որ Պարսկահայոց գողթը վարեց.

Աննկարագրելի կ'ըլլայ գաղթողներուն թշուառութիւնը: Անա թէ ի՞նչ կըսէ այս մասին Պր. Ա. Երէցեան: « ԱՄԵՆՍՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՎ: ԿԱՍԻ ՀԱՅՔ ԺԹ, ԴԱՐՈՒԻՆ » անունով իր գրքին մէջ:

«Գաղթականներու զոհաբերութիւնը անօրինակելի էր: Անոնք կը թողէին իրենց տունն ու տեղը, պատուական այգիքը, ցանած դաշտերը, հացով լի ամբարները, և ձմրան ցուրտին, մեծ մասամբ հետիոտն, կ'շտապէին դէպի Արաքո: Ծերունիները իրենց ուսերուն վրայ կը կրէին երախաները: Կանայք՝ ճանապարհի 2-5 օրուայ պաշարը: Եւ այն հարուստ գիւղականը՝ որ երէկ փառթամացած էր Աստուծոյ շնորհիւ ամէն բարիքով, այ-

սօր, չքաւորի պէս ոտքով կը տանէր իր բազմաթիւ գերդասսանը, յուսալով թէ, Արաքսի ձախ ափին, Եղեմական դրախտը պիտի մտնէ:

« Ուուսական իշխանութիւնը դրդելով Հայոց գաղթելու, ոչինչ նախապատրաստութիւն չէր տեսած անոնց օգնելու: Բասքեւիչը 25.000 բուպի տալով Լազարեանին, բոլորը թողուց անոր վրայ, և ինքը գնաց Թիֆլիս:

Լազարեան ստիպուած էր դրամ չունեցող գերդաստաններուն բաժնել 5-6 բուպի, որպէս աղքատի ողորմութիւն: Բայց, երբ այդ դրամն ալ հատաւ, Լազարեան ստիպուեցաւ Թեֆլիսեցի Հայ վաճառականներէն, իր պատասխանատութեամբ 2.000 ոսկի փոխ առնել:»

Գաղթականները չ'սպասուած թշուառութեանց հանդիպեցան, ձիւն ձմեռին մնացին բացօքեայ և անօթի: Թիֆլիսահայք իզո՞ւր խորհուրդ տուին գնդ, Լազարեանին, որ գարնան յետաձգէ տեղափոխութիւնը, մտիկ ընող չեղաւ: Գաղթողները չարաչար զղացին իրենց շէն ու ծաղկեալ տունն ու տեղը, գործը ձգելով Ուուսական հողը անցնենուն :

Արդիւնքն այն եղաւ, որ այս 45.000 գաղթողներէն թշուառութեան զոհ գացին 10.000 հոգի: Ուուս իշխանութիւնները ո՛չ միայն չօդնեցին, այլ և, իրենցմէ՛ ու տեղացի Թուրքերէն խիստ նեղուեցան խեղճ Հայերը: ✓

Այս բոլոր տգեղ իրողութիւնները հաստատած է նաև պետական քննիչ կոսպոտին Զուբարէվ, նոր գրաւեալ երկիրներու մասին կառավարութեան տուած իր տեղեկագրին մէջ:

Անա այսպէս, հազարաւոր Հայ քաջերու ցնծագին աշակցութեամբ ու արիւնով շահուած յաղթանակէն վերջ, Ուուսք, խորթ և այլանելի ընթացք մը ցոյց տուին Հայոց հանդէպ, հակառակ տրուած խոստումներուն:

Պատերազմը դեռ նոր էր վերջացած, գրաւեալ հողամասերը վարչական նոր կազմակերպութիւնով մը կը կոչութիւն « ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ », իսկ նորին կ. Մեծութիւն Ռուսիոյ Զարք, իր բազմաթիւ տիտղոսներուն վը բայ աւելցուց նաեւ « ԹԱԴԱԼԻՈՐ ՀԱՅՈՅ » տիտղոսը:

Նիքոլա Ա. Զարք, ի վարձատրութիւն Հայրենասէր Ներսէսի անձնուէր ծառայութիւններուն, 1828 Յունի 25 ին, յատուկ հրովարտակով մը կը գովարանէ վնոր գերազանցապէս անձնութրութիւնը, զոր ան ցոյց անոր գերազանցապէս անձնութրութիւնը, իր տուաւ դուսական արշաւանքի ժամանակ՝ նոյն իսկ իր անձ վտանգի ենթարկելով, եւ թէ, չայ հաւատա թիմ անձաւ վտանգի ենթարկելով, իբրեւ երախտագիտութեան նշան, ժողովական հաւելէալ իբրեւ երախտագիտութեան նշան, եւ հտմակրութեան արտայայտութիւն, կը շնորհէր նմա, մեծագոյն ՇքԱՆՇԱՆԻ . . . :

Ահաւասիկ այդ նշանաւոր գրութիւնը:

« Սրբազն Ներսէս Արհիեպիսկոպոս Հայոց,

« Ի բազմաց հետէ և ի բազում դիպուածս ցուցիք Դրութեան Ռուսաց զյարգոյ Զեր մտերմութիւն, և մանաւանդ յոյժմեան պատերազմին ընդ Պարսից, որոյ բարեյաջող վախճանն՝ որպէս յուսամ ես, ունի ի մօտոյ յարկ ելանել զփոյթ ի մէջ առիք աշխատանօք մեծաւ առ զօրս մէր մինչեւ անձնատուր լեալ յանդիմանակաց վտանգին: Հրամանատարն առանձին կովկասեան զենուրական խմբոյ ձէներալ աղիւդանի Պասկեւչն բազում անզամ ծանոյց ինձ դայդպիս Զեր գովանիւթիւն բազում անզամ ծանոյց յայտ արարեալ՝ թէ ի տիրել ամեսիրագործութեանց յայտ արարեալ՝ թէ ի տիրել ամենայն պատերազմական գործառնութեանց՝ հանդիսաց եալ ի դէպ անձամբ անձին առաւել նախանձաւոր օգտից եալ ի դէպ անձամբ անձին առաւել նախանձաւոր օգտից:

Ռուսիոյ, հաստատուն պահելով ի միջի ժողովրդեանն Հայոց զբարեհամբոյր առ մեզ հարազատութիւն՝ ո՛չ միայն բարեխոն խորհրդատութեամբ և յորդորանոք այլ և անձամբ իսկ լինելով օրինակ և ի նշանակ այնքան օգտակար նպաստից ձերոց և ի ցոյց յատուկ բարեհաճութեան առ մեր ժողովրդեանն Հայոց՝ իրաւունս վարկայ յիս հաղորդակցել զՁեզ կարգի Սրբոյն Աղեքսանդրի Նեւսկոյ զորոյ նշանոն ընդ այսմ յղելով առ Զեզ մնամ միշտ բարեխօժար:

Ի բնութիւն սատրագեալ իսկական ծեռամբ նորին կայսերական Մեծութեան:

Ի Ա. ԲԵԺԵՐՍՊՈՒՐԿ 1828 Յնկր. 25

ՆԻԿՈՂԱՅՈՅ

Ահա այս կերպով մէր ժողովուրդին յոյսերն ու իդէրը կը պսակուէին . . . օդը ցնդելով:

Նենզամիտն Պասկեւիչ, որ արդէն քանիցս ցոյց էր առուած իր հայատեաց ընթացքը. ուստ և հայ լրտեսներու կողմէ, մշայրենասէրն Ներսէսի մասին եղած գձուձ ու անիրաւ զբարտութիւններէն զրգուուած, ԲԵԺԵՐՍՊՈՒՐԿի մէջ ճնշում ի զործ կը գնէ, այդ վտան զ աւոր հոգեւորականը հեռացնելու համար Հայկ: Նահանգներէն:

Անձնուէր ու հայրենասէրն Ներսէս, միշտ զիմումներ ըրաւ Զարին, Պասկեւիչին և Ռուս աւագանիին մօտ, Հայոց խոստացուած ինքնԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ զործադրել պահանջելով, բայց միշտ անլսելի մնացին անոնք:

Եւ իբրեւ լրումն սոյն բոլոր անիրաւութիւններուն, Ներսէս Աշտարակեցին կը հեռացնեն Հայաստանէն, և կը զրկեն Քիշնէվ, իբրեւ Առաջնորդ Պեսարապիոյ:

Հայկ, Դատին ամենահեղինակաւոր պաշտպանին հեռացումով կը մտածուէր հետգիետէ մոռացութեան մատնել խոստացուած ինքնավարութեան ինդիրը:

Ներսէս, խոր ցասումով ու վշտոտ սրտով ստիպուեցաւ համակերպիլ կայսերական այս շնորհին: Տասն եւ հինգ տարի Քիշնէվի մէջ Ներսէս ողբաց իր որբացած Յեղը, և անոր այնքան թափած արիւնը:

Ներսէս, իր աքսորավայրին մէջ պարապ չի կեցաւ, այլ, մերթ ինդ մերթ բողոքներ տեղացուց Զարին և Պասկեիչի մօտ, մի՛շտ յիշեցնելով Ռուս կայս. կառավարութեան խոստմադրուժ ընթացքը, և Հայ ժողովրդի յոյսերուն խորտակումը:

Ներսէս, իր կուրծքին իրոյ, ձախ ծոցին զըպանն կը պահէր Զարին ստորագրած խոստմագիրը, որմէ ոյժ և համարձակութիւն կ'առնէր՝ բողոքի իր ձայնը բարձրացնելու, պատեհ առթիւ:

Ու այսպէս, մէծ Հայրենասէրին, և անոր շունչով գոտեանդուած Հայ ժողովուրդին թափած բոլոր ջանքերը ապարդիւն մնացին: Խեցճ ժողովուրդը տեսակ մը շլւարումի և խարկանքի ենթարկուեցաւ:

Հոս մէջ կը բերենք ուրիշ Ռուս քննիչի մը՝ զօրապետ Վելիսմինովի, Հայոց մասին Ռուս արքունիքին յղած տեղեկագրէն հատուած մը, որ ցոյց կուտայ Ռուսու մտայնութիւնը՝ երախտաւորեալ Հայ ժողովուրդին հանդէպ:

Հայը. աղուէսաբարոյ, խորամանկ եւ նենգամի՞ս ազգէ: Անոնք: Գրգռուած իրենց բնածին ատելութեամբ դէպի Մահմետականները, ո՛չ միայն կալուածատիրոջ իարդիւնք:

տալէ կը իրաժարին, այլ եւ բոլորովին չեն նանչնար զանոնք: Ի հարկէ, այդ բոլորը պիտի վիրաւորեն մահմետական խաները, պէկերը եւ կալուածատէրերը, եւ անոնք պիտի կասկածին թէ ուսւ կառավարութեան գիտութեամբ կը գործեն անոնք, վնասելու համար մահմետականներուն:

Մտիմետականները կովկասի մէջ ուժեղ տարը մըն են, եւ կը կազմեն բնակչաց երեք չորրորդ մասը. որով, պէտք չէ զանոնք վշտացնել Հայոց պատճառաւ, մանաւանդ որ այս պարագայէն օգուտ կրնան քաղել Պարսիկ եւ Օսմաններն տէրութիւնները:

Եւ զօրավարը իր տեղեկագիրը կ'եղրակացնէ աւել ցընելով նաև թէ «Նոյն խոկ Հայաբնակ վայրերուն մէջ մահմետականները պէտք է գերակշիռ դիրք մը ունենան իբրեւ հարկահաւաք և հսկիչ»:

Ռուս կառավարութիւնը որքան ատեն պատերազմի մէջ էր, պէտք ունէր Հայոց և Ներսէսի հայրենասիրութեան: Բայց, երբ պատերազմը շահեցաւ, այլեւս պէտք չունէր Հայոց, և Ներսէսը իբրեւ դ աւաճ ան զըրպարտելով, գրեթէ աքսորեց զայն, իր Հայրենիքէն:

\* \*

Վ Նոյն միջոցներուն Հայոց Ընդհանրական կաթողիկոսն էր Եֆրեմ Ա. ԶՈՐԱԳԵՂՑԻ: որ ընտրուած էր 1809 ին, և որ, 1822 ին հրաժարելով քաշուած էր Հաղորդաւայ վանքը: Ներսէս Աշտարակեցի Եպիսկոպոս կ'սկսի վարել կաթողիկոսական գործերը: Բայց, Ա. Էջմիածին երբ Ռուսաց ձեռքը անցաւ, Զարին հրաւէրով կրկին եկաւ Էջմիածին (1828 Յունիս 18):

Եփրեմ կաթողիկոս թէկ ծեր ու թուլամորթ մէկն էր, բայց երբէ՛ք չի կրցաւ մարսել Հայ ժողովուրդին, և

“Քնն. Պատմ. Հայոց” Ա. Իատոր: Լեռն ձէրահեան



ԵՓՐԵՄ ԿԱՐԹՈՂԻԿՈՍ ԶՈՐԱԳԵՂՑԻ  
( 1809 : 1830 )

Ն, Աշտարակեցիի ցոյց տուած այնքան հայրենանուէր զոհողութիւններուն հակառակ, Ռուս կառավարութեան բոնած անուղիղ ընթացքէն վշտացած, իր ծերութիւնը պատրուակ բռնելով, վերջնականօրէն հրաժարեցաւ Հայրապետական գահէն- 1830 Հոկտ, 8ին

Ռուս կառավարութիւնը ընդունեց Եփրեմի հրաժարականը, և հրամայեց Մայր Աթոռոյ Միաբանութեան, որ նոր կաթողիկոսի ընտրութիւն կատարուի: 1831 Ապրիլ 16 ին, Եփրեմի նախագահութեամբ, Ռուսահայ թեմերու ներկայացուցիչներ ժողով գումարեցին, և ընտրեցին երկու կաթողիկոսական քանտիւտա մին Տեղապահ Մարտիրոս Արքեպիսկոպոսը, և երկրորդը՝ Վրաստանի Առաջնորդ Յովհաննէս Արք. Կարբեցին: Զարը վաւերացուց ԿԱՐԲԵՑԻՆ իբրեւ կաթողիկոս. որ նոյ. 8 ին Հայրապետական օծումը ընդունեց:

### ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

—(o)—

ՄՕՐԱՅՅԻ ՅՈՒՆԱԿԱՆ ապստամբութիւնը և Իպրահիմ Փաշայի խժդժութիւնները—  
Ամէն կողմ հալածանք Յունաց դէմ.— Եւրոպական միջամտութիւն, Նավարինի ծովամարտը.— Ռուսօթուր Քպատերազմը:  
ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մահմետական ճնշումին տակ դարերով հեծող ազգ, գերուն մէջ Յունաստան առաջինը եղաւ Թուրք անարդ լուծը թօթափել ձգտող: Հայոց պէս Յոյներն ալ, իրենց դասական հին յիշատակներով մնած ու անայլայլ մնացած՝ սիրտ ու քաջալերութիւն առին օրթոսքս քրիստոնէից պաշտպան Ռուսիոյ յաղթական նուաճումներէն:

Ալեքսանդր Զարին յոյն թիկնապահ՝ Ալեքսանդր և Տիմիդրիոս Իրսիլանտի եղբայրները, Պալքանեան ցեղերը ուտքի հանելու գործը ստանձնեցին Ալեքսանդր Իրսիլանտի ջանաց Ռումանիան յեղափոխել, բայց, Թուրքերէն պարտուեցաւ ու փախաւ: Իսկ Տիմիդրիոս Իրսիլանտի, իր քաջարի Քանթագուզէն իշխանին հետ Մօրա — Յունաստան — ցամաք ելաւ, 1821 Մարտին-

Բաղրամի նշանաւոր Մետրապոլիտ Տէր ԵՐՄԱՆՈՍ Սրբազն՝ միացաւ այս յեղափոխականներուն և բոլոր չելէններուն կոչ մը ուղղելով հրաւիրեց զանոնք. զինուիլ

ու միանալ, իսլամ - Թուրք բռնապետութեան դէմազատագրական և կրօնական ՍՈՒՐԲ ՊԱՏԵՐԱԶՄ մղելու համար:

Այս կոչին ամէն կողմէ դրական պատասխան տըրուեցաւ: Բաղրաս բերդին վրայ պարզուեցաւ անկախութեան դրօշակը: Հմբոս ութիւններն ու կոհիւներ ծայր տուին ամէն կողմ: Թուրք պահակազօրքերը սարսափեցան, և ապաստանեցան ամուր բերդեր: Լեռներն ու դաշտերը ապստամբներուն ձգելով:

Քոլօքոթրօնիսի հրամանին տակ, չելլէն ըմբոստները մի առ մի գրաւեցին Նավարինը, Թրիփոլիձան, Միոπլոնին, և մանաւանդ Նավրէշա անուանի բերդաքաղաքը:

Քանիմը շաբթուան մէջ՝ ամբողջ Մօրան ըմբոստներուն ձեռքը անցած էր արդէն:

1822 Յնվր. 1ին, Եպիփորի մօտ, անտառի մը մէջ, ժողով մը տեղի ունեցաւ ապստամբապետներու կողմէ չո՞ն հոչակուեցաւ ԵԼԱԴԱ. ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆՆԵՐ, և կագմեցին «առժամեայ կառավարութիւն» մը, նախագահութեամբ ՄԱՎՐՕԳՈՐԾԱԹՕՅԻ, որուն, իբր նախարար օժանդակ արուեցան Նեկրիս և Քալէֆիս, ինչպէս և 50 երեսփոխաննէրէ բաղկացեալ «օրէնսդիր ծերակոյտ» մը՝ նախագահութեամբ Տիմիդր. իրսիլանդիի: Ասոնք պիտի վարէին ապստամբութիւնը, և պիտի կառավարէին գրաւուած չայրենիքը:

Այս ժողովին լուրը ևրը Պոլիս հասաւ, Թուրքերը բոլորովին կատեցան: Սուլթան Մահմուտ Բ. իր պալատին մէջ խորհրդակցական ժողով մը զումարեց, պետութեան աւագանիին և իւլէմաններուն հետ, ուր, կացութիւնը քննուելով, որոշուեցաւ ԱՆԽՈՎՅ ԿՈՏՈՐԵԼ ԿԱՅՑՐՈՒԹԵԸՆ Մէջ ԳՃՆՈՒՈՂ ԲՈԼՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ՆԵՐԸ: Այս որոշման լուրը սարսափի մատնեց հանուր ժողովուրդը:

Անգլիական և Ռուսական դեսպանները միջամտեցին յանուն իրենց կառավարութեանց, և ջանացին չարիքը մեղմացնել իր բնդիանուր ձեւէն:

Եանեայի մէջ ալ, Ալպանացի Թէֆէ ՏԵԼԷՆԼԻ ԱԼԻ ՓԱՂԱ. ապստամբած էր Սուլթանին դէմ: և ահեղ կուկը մղէր: Սակայն ի վերջոյ. զօր. Խուրշիտ Փաշայի կողմէ խարէութեամբ ձերբակալուելով գլխատուեցաւ:

Ալի Փաշայի գլուխը Սուլթանին դրկուեցաւ:

Սուլթան Մահմուտ, Մօրայի ըմբոստութենէն զայրացաւ, և հրամայեց որ. Ֆուատ Փալային, որ ամէն գնով զսպէ զայն: Յոյներու դէմ ջարդն ու հալածանքը սկսաւ: Ֆուատ Փաշա գրաւեց Բաղրամը, 15.000 բնակիչ սուրէանցուց, և քաղաքը աւարի տուաւ:

1822 ի Զատկի օրը. Թուրք իշխանութեան հրամանաւ Պոլսոյ բոլոր Յոյներուն տունները պաշարուեցան: Զօրքը և ամբոխը քստմելի զարհուրանքներ գործեցին: Բոնի մտան տունները, ջարդեցին ձեռք անցուած բոլոր Յոյները: Կողոպտեցին, և առեւանգեցին գեղուհիները:

Անթիւ խուժան մը յարձակեցաւ Օրթոտոքս ՏԻԿԵՐԱԿԱՆ Պատրիարքանիստ Ֆէնէրի Մայր Եկեղեցւոյ քաղերական Պատրիարքանիստ Ֆէնէրի Ն. Սըրութիւն Տ. ՂՐԻՂՈՒԹԻՈՍ Պատրիարք. խուժեցին ներս, և սեղանին վրայէն քաշկոտելով վար առին զայն, ու չարչարալից կերպով սպաննեցին, և մարմինը ցեխներու մէջէն քաշկոտելով արտաքին գուռը կախեցին, մեծ վէզիրին ներարին արտաքին գուռը կախեցին, մեծ վէզիրին ներկայութեանը, հայհուչներ արձակելով: Յունական բոլոր կայութեանը, հայհուչներ արձակելով: Յունական բոլոր եկեղեցիները միևնույն յարձակմանց Ենթարկուեցան:

Ամբողջ Թրակիոյ և Մակեդոնիոյ մէջ նոյն տեսարանները պարզուեցան: Անխնայ կոտորուեցան հարիւր հաշարաւոր Յոյներ որոնց մէջ կը զտնուէին նաեւ երկու Արքեպիսկոպոս, ութսուն Եպիսկոպոս և բազմաթիւ քահանաներ: Արիւնը ուղիօրէն հոսեցաւ:

1822 Ապրիլ 22ին, ՔԻՈՍ բազմայոյն մեծ կղզին ցամաք ելան 15.000 զինուոր: Խեղճ ժողովուրդը, բարձրութեամբ և սպիտակազգեստ կոյսերու ու կրօնականներու թափորով ընդառաջ գնաց բանակին, ի նշան հըպատակութեան:

Բայց, հազիւ թէ բանակը ցամաք ելած, ահա սկըսաւ յարձակումը՝ ժողովուրդին վրայ:

Սարսափելի էր պարզուած տեսարանը: Այրերը ցիցը հանեցին, մանուկները կտոր կտոր ըրին գեղանի կիներն ու աղջիկները բռնաբարելէ վերջ որովայնահերձ ըրին: Ամբողջ ամիս մը տեւեց ջարդն ու զարհուրանքը: Մաս մը զինուորներ մեկնեցան կղզին, իրենց հետ տանելով 55.000 կոյսեր ու պատանիներ:

Մինչ մնացեալ զինուորները իրենց գործը լրացնելէ վերջ, աւարներով ու առեւանգուած հարս ու աղջիկներով մեկնելու վրայ էին, յանկարծ երեւցան Հելլէն ապրատամբ հրձիգ նաւերը, որոնց կը հրամայէին անուանի ՔԱՆԱՐԻՍ և ԱՆՏՐԵԱՍ ՄԻՃՈՒԼԻՍ նաւապետները: Ասոնք, վրէժինդրական ոգով վառուած՝ կայծակի արագութեամբ ինկան թուրք նաւերուն վրայ, հրդեհեցին զանոնք, և 5.000 զինուոր սատկեցուցին ծովեղերքը:

Այս չերոս հրձիգները, իրենց փոխ վրէժի մաղծը թափեցին նաև գափտան Մեհմէտի հրամանին տակ և ՄԻՃՈՒԼԻ կղզին առջեւ խարսխող թրքական ուրիշ նաւախումբի մը վրայ զայն փացուցին, սպաննեցին բոլոր նաւազները՝ իրենց պետին հետ:

Թուրքերը սարսափեցան Հելլէն ծովահէններու այս հարուածներէն, և չհամարձակեցան ճակատ յարդարել անոնց դէմ:

Համատարած ջարդերը ոտք հանեցին Եւրոպան:

Ամէն կողմէ կը պահանջուէր միջամտութիւն, և թուրքիոյ դէմ պատերազմ:

Եւրոպիոյ պետութեանները խուլ հանդիսատես մնացին, չուզելով աւելի կատղեցնել թուրքերը:

Զար Ալեքսանդր փորձեց կասեցնել ջարդերը, Պոլսոյ իր գեսպան Սթրօքոնովի միջոցաւ պահանջեց Սուլթանէն՝ անմիջապէս վերջ տալ ջարդերուն և բռնութեանց բոլոր հրկիզուած եկեղեցիները, տունները վերաշինել նաև հատուցում ընել վնասուողներուն:

Սուլթան Մահմուտ պատասխան իսկ չի տուաւ:

Զարը չհամարձակեցաւ աւելի առաջ երթալ, որովհետեւ, Աւստրիոյ արտաքին գործոց նախարար Պ. Մեթերնիխի խոսք տուած էր երբէք չմիջամտել յեղափոխութեան: Բայց, Անգլիա գաղտնորէն կը գործէր եգէական ծովուն մէջ, կ'արգիւէր թուրքերուն կողմէ նաւբլիոյ ոմբակոծումը, ինչպէս և 1823 ի Փետրուարին օրինապէս ճանչնալով Նելլէններու պատերազմիկի հանգամանքը, կ'ուզէր ճանչնալ և ապահովել անոնց ազատութիւնն սւ անկախութիւնը:

Աւստրիա ալ վախնալով Ռուսիոյ միջամտութենէն, գաղտնապէս խորհուրդ տուաւ Սուլթանին, իբրեւ փոքրագոյն վտանգ, ամէն գնով զսպել Հելլէն ապստամբական շարժումը:

Կ'ըսուի թէ Մեթերնիխի այս խորհուրդին վրայ էր որ Սուլթանը, 1824 Յնվ. 6ին Ֆէրմանով հրաման ըրաւեգիւպտոսի փոխարքայ ՄելլՄէՏ Ալի ՓԱՇԱՅԻ, որ անյապաղ, իր բանակաւ անցնի Յունաստան, և անինայօրէն կոտորելով զսպէ ապոտամբութիւրը: Սուլթանը կը խոստանար կրետէն ու Մօրան կցել եգիպտոսի:

Մեծ եղաւ Մեհմէտ Ալի Փաշայի ուրախութիւնը, որովհետեւ, իր ծաւալական ձգտումներուն, պատերազմական փառասիրութեանց գոհացում պիտի կրնար տալ:

Անմիջապէս պատրաստութիւններ տեսնուեցան, և նոյն տարւոյ Յուլիսին, 60 նաւերով Ալեքսակորիայէն

Մօրա փոխադրուեցան 16.000 հետեւակ. 800 ձիաւոր և քաղմաթիւ թնդանօթսեր: Այս սպառազինեալ բանակին հրամանատար կարգուեցաւ Մեհմէտ Ալիի որդեգիր իպրահիմ Փաշան իրեն օգնական ունենալով ֆրանսացի զօրագար Մըկը: որ իսլամութիւնը ընդունելով Միւլէյման Պէջ կոչուած էր:

Իպրահիմ նախ գնաց Հռոդոս, ուր միացաւ Օսման-եան նաւատորմին, և յետոյ Սամոս ու Նաքսոս կղզիները հանդիպեցաւ: Նաքսոսի առջեւ յարձակում կրեց Քանարիսի և Միտուլիսի հրձիգներէն: Կարճ կոիւէ մը վերջ, Իպրահիմ կրետէ ապաստանեցաւ, ու սկսաւ կոտորել քնակիչները, աւարի տալ ամէն ինչ: Անկէ, յաջողեցաւ անցնիլ Մօրա, պաշարեց Նավարինը, գրաւեց Բիլոսը, և Մօրայի հարաւէն սկսաւ յառաջանալ, մեծ տաքնապ և յուզում պատճառելով Յունաստանի ժողովուրդին:

Ապստամբները յուսահատած էին, տեսնելով որ, ո՛չ Անգլիա, ո՛չ Ֆրանսա, ո՛չ ալ մեծազօր Ռուսիա չեն մի. Համտէր ինպաստ իրենց, այլ կը թողուն որ Թուրք եաթաղանը բնաջնջէ ամբողջ չելլէն Ցեղը: Մանաւանդ, երբ իմացան որ, Զար Ալեքսանդր, Անգլիոյ դեսպանին հետ խօսած միջոցին անխոնեմաբար ըսած է, թէ « Ես. Պալքանեան քրիստոնեայ ազգերը պաշտպանելով մէկտեղ, կուզեմ որ բաւական տկար ըլլան անոնք, որպէսզի միշտ պէտք սւնենան Ռուսիոյ », բոլորովին յուսաբեկ եղան, դիմեցին Անգլիոյ, և խնդրեցին որ գայ, Յունաստանը զրաւէ: ու զիրենք փրկէ թշնամիին ճիրաններէն: Բայց Անգլիա զգուշացաւ, քաղաքական կանոնութիւններ յառաջ գալէն վախնալով:

Անուանի Յոյն նաւապետ ՍՍՄԱՏՈՍ, իր բուռ մը քաջերով և փոքրաթիւ նաւերով գնաց Նավարինը ազատելու պաշարումէ: Իրեն ընկերացաւ Սարտէնիոյ թագաւորութեան պտրզմ. նախարար կոմս ՍՍՆԹԱ. ՌՕԶԱ:

Ասոնք, Նավարինի առջեւ կոռուի բռնուեցան Միւլէյման Պէջի հետ, և անոր հրետանիին ահեղ կրակին հնթարկուելով երկուքն ալ սպաննուեցան: Նավարինը անձնատուր ըլլալու ըոպէին, վրայ հասաւ ՄիՏՈՒԼԻՍ քայ նաւապետը՝ իր հրձիգներով: Ինկաւ Եգիպտական նաւատորմին վրայ, և անոնցմէ շատերը ծովամոյն ըրաւ, բայց անօգուտ: Նավարին անձնատուր եղաւ 1825 Մայիս 18ին, և այդ օրը քաղաքին բնակչութեան համար Վերջին ԴԱՏԱՄԱՆԻ ՕՐ եղաւ . . . :

Իպրահիմ ջախջախեց խմբապետ Քոլօքօդրոնի ընդդիմութիւնը, և գրաւեց Թրիբալիցան, Քալամաթան, և պաշարեց Նաւելիան, որ ըմբուսներուն կելլորնն էր:

Հո՛ս տեղի ունեցաւ ահեղ ու գիրկընդիման կոիւմը: Նշանաւոր ապսամբապետ Տիմիդրիս Իրսիլանդի, ան, ծանօթ կողմէ մը յանկարծ իր խումբով գրոհ տուաւ Իպրահիմի զօրքերուն դէմ, և զանոնք անխնայ կոտորեց: Իպրահիմ ստիպուեցաւ վախչիլ, բայց, իր ամօթալի պարտութեան վրէժը լուծեց ամբողջ Մօրան գրաւելով, և վեւղեր, քաղաքներ կործանելով: Միայն Նաւելիան կը մնայ ազատ:

Զօր. Ռէշիտ Փաշա արդէն Թեսալիան դրաւած էր: ՄիՄՈՂՈՒՆԿԻ ամուր բերդը պաշարուած էր ծովակալ ԹՕՓԱԼ Փաշայի կողմէ, ուր, խմբապետ ՊՕՑԱՐԻՍ կը գտնուէր 1000 է աւելի կտրիճներով. Թօփալ Փաշա յանդեցաւ Աւստրիացի ճարտարագէտներու շնորհւերդին կարգ մը կէտերուն վրայ խրամատներ բանալ, ու յարձակիլ զայն գրաւելու համար, բայց ետ մղուեցաւ: Փաշան որոշեց սովով գրաւել քաղաքը: Բերդապահներուն օգնութեան հասաւ անվեներն Միտուլիս, որ մէկ կողմէ յաղթական յարձակումներով թուրքերը զբաղեցուց, իսկ միւս կողմէ առատ պաշար ներմուծեց բերդէն ներս: Թուրքերը կատարեցան, և 1825 Դեկտ. 21ին նոր յար-

ձակում մը փորձեցին, բայց Յոյներու պատրաստած ծուղակին մէջ իյնալով 2.000 թուրք զինուորներ օդը ելան: Ասոր վրայ Իպրահիմ փաշան օգնութեան կանչեցին:

Իպրահիմ մէծ ուժերով պաշարեց բերդը, խստօրէն փակեց բոլոր մուտքերը, և հրետանիի ահեղ կրակի մը ներքեւ առաւ քաղաքը: Պաշարեալներուն օգնութեան համնելու համար Միսուլիսի թափած բոլոր ճիգերը անօգուտ եղան: Ժողովուրդը, սովէն յուսահատ, որոշեց անձնատուր ըլլալ, բայց բերդապահները վճռապէս մերժեցին, աւելի լաւ համարելով կոռուիլ, ո քաջաբար իշնալ բերդի պարիսպներուն տակ:

Մարտիկները երկու խումբի բաժնուած՝ փորձեցին ձեղքել պաշարողները, բայց Իպրահիմ անոնցմէ մին յանկարծակիի բերելով քշեց դէպի բերդը, և իր զօրքն ալ անոնց ետեւէն մտցուց ներս: Յոյները, քայլ առ քայլ փողոց առ փողոց կոռւեցան՝ կատաղօրէն պաշտպանելով ինքինքնին: Անոնք քանդեցին իրենց տուները, և ջանացին կարելի եղածին չափ մէծ թիւով թշնամիներ թաղել իրենց հետ, վիլատաներուն ներքեւ:

Անվեհեր հայրենասէր ԽրիՍթոՍ ՔԱՐՑԱԼԻՍ մետրապոլիտը, 2.000 կին, ծեր ու մանուկներով քաղաքին ուղամամթերանոցը ապաստանած էր: Եղիպ. զինուորները պաշարեցին մթերանոցը: Մետրապոլիտը դռները ամուռ մը փակեց, մինչեւ որ բազմաթիւ զինուորներ խոնուեցան: Այն ատեն բանալ տուաւ դռները, իբր թէ անձնատուր ըլլալու համար: Եւ երբ, սոսկալի վայնատուններով և թաթառի պէս ներս խուժեցին, անվեհեր Եպիսկոպոսը կրակ տուաւ վառօդի տականերուն, և ահոելի պայթումով մը իրեն հետ մահացուց գ.000 հոգի, որոնց 3.000 թեգիպտացի զինուորներ: Բերդը ինկաւ թշնամիին ձեռքը (1826 Ապրիլ), և քաղաքին 15.00 բնակիչներէն վերաբեցան միայն 4500 հոգի: Իպրահիմ Մօրա քաշուեցաւ:

Միսուլոնկիի կոփւներուն մէջ ինկաւ Անգլիացի Լորդ Պայրըն, որ զէն ի ձեռին կը կոռուէր Հելլէն դատին համար.

Բոլոր այս պարաութիւնները պատճառ եղան, որ ապոտամբներուն մէջ երկպառակութիւն իյնայ: Անոնք զիրար ամբաստանեցին իրեւ պատասխանատու բոլոր անյաջողութիւններուն և աղէտներուն: Ազգ. Ժողովը երկու հակառակորդ մասի բաժնուեցաւ: Յոյները սկսան իրար սպաննել, կողոպտել, և միջազգային օրէնքներու դէմ գործել՝ ծովահէնութիւն ընելով:

Ուուսաց Նիքոլա Կայսրը, որ յանդուգն և փառամոլ խառնուածք մը ունէր, կըսէր թէ՝ « Փառքը՝ Բիւզանդիոնի ճամբրուն վրայ է»: Գահ նստածին պէս, իր առաջին գործը եղաւ զօրք համախմբել Բրուտ գետին եղերքը, և 826 Մարտ 17 ին վերջնագիր մը տալ Թուրքիոյ, Պուքէշի դաշնագրով Դանուբեան իշխանապետութետնց երաշխաւուած խոստումներուն գործալլութիւնը պահանջելով: Բ, Դուռը մինչև վեց շաբաթ պէտք էր իր լիազօրները զրկէր:

Անգլիա միացաւ Ուուսիոյ, և Ապրիլ 4ին Թուրքիոյ նոր գիր մը տուին, որով կ'ուզէին որ « Յունաստան ինքնօրէն ըլլայ, Թուրքիայէն կախում ունենայ, և տուրք վճարէ անոր: Ուուսիա և Անգլիա պիտի ընծայեն, կամ պիտի պարտազրեն իրենց վիշամտութիւնը, մասնաւոր ամէն շահէ հեռու մնալով »

Միւս կողմէ Անգլիա կը համոզէ Սուլթան Մահմուտը որ Դանուբեան ինդրին մէջ գոհացում տայ Զարին, անոր սուրը պատեանը դնել հարկադրելու համար:

Սուլթանի լիազօրները 1826 Հկտ. 7ին Ա.Ք.Ք.Է.Ռ.Մ.Ա.նի դաշնագիրը ստորագրեցին, որով, Ուուսիա ստացաւ ՍօվոհիՄ ՔԱԼէն, Ա.Ա.Ք.ԼիԱն, Մ.Կ.Բ.ԼիԱն, և ՍԵՒ ԾՈՎի ազատ նաւարկութիւնը:

Այս դաշնագրով Սերպիա ամսկախս կ'ըլլար, իսկ Ռումանիոյ դերիշխանութիւնը կը բաժնուէր Թուրքիոյ և Ռուսիոյ միջեւ: Բայց Զարը չի ցրուեց իր զօրքը:

Անգլիա և Աւստրիա նոր դիմում մը ըրին Սուլթանին մօտ՝ ի նպաս Յունաստանի: Սուլթանը զալրացաւ ու հրամայեց Ռէշիտ Փաշայի, Ալէնքը ամէն գնով գը բաւել: Ռէշիտ Փաշա արիւնու կոհիւներէ վերջ տիրեց Ալէնքի, 4827 Յունիսին, որմէ վերջ միայն պատասխանեց Անգլո-Աւստրիական ծանուցագրին, ըսելով թէ՛ ո՛չ ոք իրաւունք ունի Թուրքիոյ ներքին գործերուն խառնուելու, և թէ ասկէ վերջ պատասխան իսկ պիտի չտայ այդպիսի միջամտութիւններու, որոնցմէ կը քաջալերուելով ըմբռատները:

Յոյները, Նիքոլա Ա. ի յանդկնո թէնէն սիրտ առած իրենց հանրապետութեան նախագահ ընտրեցին Զարին նախկին նախարար ՔԱ.ԲՕ տ'ԻՍԹՐԻԱՆ: Այս անուանումը կը զուգադիպէր Յոյներու ամենէն ջախջախիչ պարտութեանց միջոցին:

Ռուսիա, Ֆրանսա և Անգլիա միացան, և Յունացինպաստ հաւաքական ծանուցագիր մը տուին Բ. Դրան 1827 Օգոստոս 16 ին:

Սուլթանը քա՛ջ գիտէր, թէ Անգլիա իրեն պաշտպան է, իր յոյսը դրած էր տէրութիւններու երկառաւկութեան վրայ, անխախտ մնաց չպատասխաննելու իրուշումին վրայ, և խնդրեց Մեհմէտ Ալիէն որնոր զօրք ուղարկել: 4.000 զինուոր հասաւ Մօրա: Դաշնակիցները բողոքեցին, և իրենց նաւատորմները զրկեցին Յունական ջուրերը: Կնքուեցաւ զինադարար իպրահիմի հետ: Բայց, իպրահիմ Խօրայի մէջ շարունակեց իր ջարդն ու թալանը: Դաշնակիցները նավարին մտնել ուղեցին, զի՞նադարի պայմանները յարգել տալու համար:

Քանի մը հրձիդ Թուրք նաւեր կրակ ըրին Ֆրան-

սական Սինէն, նաւին վրայ: Ծոփակալ Ոլինէի աղղարարեց Թուրքերուն՝ հեռանալ: Ի պատասխան ոռոմք մը նետեցին ուղղակի Սինիսին: Ասոր վրայ ծոփակալը զայրանալով, հրամայեց բոլոր թնդանօթսերով կրակել: Ե, զիպտականները փոխադարձեցին: որով անակնկալօրէն տեղի ունեցաւ Նավարինի մեծ նաւամարտը: Եգիպտացիք չարաչար պարտուեցան: Եգիպտական և Թուրքական ամբողջ նաւատորմը փճացաւ, կորսնցնելով 6.000 հոգի, մինչ դաշնակիցները ունեցան միայն 140 մեռեալ,

Այս դէպքին վրայ Սուլթանը խի՛ստ զայրացաւ, և դաշնակից պետութեանց գեսպանները հրաւիրեց մեկնիլ կ. Պոլսէն, իր յարաբերութիւնները անոնց հետ խրզուած յայտարարելով:

Մեծ յուզում տիրեց Անգլիոյ մէջ, չէր ուզուէր զայրացնել Թուրքիան, ու տեղի տալ Ռուսիոյ ծաւալումին, բայց օղուա չունէր:

Զար Նիքոլա Թուրքիոյ դէմ պատերազմ յայտարարեց 1828 Ապր. 26 ին:

Զարը անձամբ բանակին գլուխը կանգնած՝ անցաւ Բրուտը, և մինչև Դանուբ ամբողջ Ռումանիան գրաւեց: Իր ընդհ. հրամանատարն էր Վիթկէն.Շթիցն, զօրվը:

Յայտնի էր թէ, Ռուսական վտանգը կ'սպանար Քայքայել Օսմ, Կայսրութիւնը: Ասիկա Անգլիոյ գործին չէր գար, ինչպէս և Ֆրանսայի՝ որ հակառակ էր Թուրքիոյ փճացման: Երկու տէրութիւնները շուտով համաձայնեցան իրենց մէջ, որպէսզի, սահմանափակեն պատերազմը՝ միայն Յունաստանի վրկութեամբ:

Անգլիա և Ֆրանսա, 1828 Յուլիս 19 ին, յիշատակագիր մը տուին իպրահիմ Փաշային, որ իր բանակով քաշուի Յունաստանէն. Իպրահիմ մերժեց:

Տասնըհինգ օր վերջ, 15.000 Ֆրանսացի զինուորներ Թուլօնէն նաւ նստան՝ զօր. Մէջօնի հրամանատարու-

թեամբ, և 29ին հասան նաւարինի առջև: Անգլիացիքուղիքին յապաղեցնել Մօրայի գրաւումը, սակայն զօր. Մէջոն, իր կառավարութեան հրամանին վրայ զօրքը ցամաք հանեց Մօտօնի նաւահանգիստը, և բանակցութեան մտաւ իպրահիմ Փաշայի հետ: Իպրահիմ հաւանեցաւ պարպել Մօրան: Եգիպտ, բանակը քաշուեցաւ, և Ֆրան զօրքը գրաւելով փրկեց ամբողջ Մօրան: Զօր. Մէջոնի այս յաջողութիւնը ուրախութիւն պատճառեց ամբողջ աշխարհի, և Ֆրանսայի ԿԱՐՈՒԼՈՒ ժ. թագաւորը զայն Մարածախ տիտղոսով վարձատրեց:

Սակայն, կարելի չէր կեցնել Ռուս բանակին թափը: Կովկասի ճակտին վրայ, ընդհ. հրմ, ՊԱՍԿԵՒԻՉ. հզօր բանակով մը ինկաւ թրքական ամրութեանց վրայ: Նախ պաշարեց ԿԱՐՈՒԾ, և չորս օրէն գրաւեց զայն: Հենախ պաշարեց ՊԽԱԼՅՈՒՆ, ԲՈԹԻՆ, ՈՐՏԱՀԱՆՐ, ՊՈ. ՑԱԶԻԾԸ: Յաջորդ տարի Յունիսին պաշարեց ԿԱՐԻՆ:

Հայերը խիստ թանկազին ծառայութիւններ մատուցին Ռուս բանակին, և Թուրքերու բարկութիւնը հրաւելեցին իրենց վրայ, մասնաւանդ, երբ Թուրքերը ձեռք ձգեցին Եփրեմ Կաթողիկոսի կարսոյ Հայոց ուղղած կոնդակը, որով կը յորդորէր ամէն օգնութիւն ընել քրիստոնեայ Ռուս բանակին յաղթութեան ի նպաստ:

Թուրքերը, կարսոյ բանալինները յանձնեցին Պատկերչի, 1829 Յուլիս 26ին: Ռուս զօրքը հասաւ մինչև Տրավիզն:

Եւրոպական ճակտին վրայ ալ հակառակ թրքաց դրազմացութեան, 1829 ին Ռուս զօրաց ընդհ. հրամանաւարութիւնը ստանձնող զօր. ՏիՊԻՉ յարձակմամբ զլրաւեց ամբողջ Պուլկարիան ու Ռումէլին, և կ. Պոլսէնքիչ հեռու կանգ առաւ իր բանակով որ հազիւ 20.000 հոքիէ կը բաղկանար: Զօր. Տիպիչ եթէ Պոլսոյ վրայ յարդիկի կը բաղկանար:

ձակիլ փորձէր, և կամ եթէ Թուրքերը խորամանկ գըտնուելով յանկարծ յարձակէին այս փոքրիկ բանակին վրայ, Ռուսաց վախճանը ահոելի կ'ըլլար, և Տիպիչի յանդինութիւնը սոսկալի աղէտով մը կը վերջանար Ռուսաց համար:

Ռուսք արթուն գտնուելով, անմիջապէս բանակցութեան մասն Սուլթան Մահմուտ Բ.ի լիազօրաց հետ, և 1829 Սեպտ. 14ին կնքուեցաւ ԱԳՐԻՍՆՈՒՊՈԼՍՈՅ Դաշնագիրը որու պայմաններուն համաձայն՝ Կովկասի մէջ Ռուսաց թողուեցան Ախալքալաք, Ախալցխա, Անսապան և Բօթի քաղաքները իրենց շրջականներով, և Դանուբի վրայ ՕԶԵՐՈՒ ԿՂԶԻՆԵՐԸ: ՍԵՐՊԻՆ, 1829 Նոյ. 29ին հրատարակուած Խաթթը Շէրիֆով ԻՆՔՆՈՐԷՆ կը հըռչակուէր: ՌՈՒՄՍՆԻՈՅ Իշխանապետութիւնը կը հաստատուէր: ՅՈՒՆԱՍՏԱՆ, 1829 Մարտ 22ի յիշատակագի հիման վրայ կ'ըլլար ԻՆՔՆՈՐԷՆ, պարունակելով ամբողջ Մօրան՝ մինչև Սըթայի և Վօլոյի ծոցերը, Սիկւատեան կղզինները: Պիտի կառավարուէր տէրութեանց կողմէ նշանակուած իշխանով մը, և Սուլթանին պիտի վճարէր տարեկան տուրք մը:

Այսպէս, Յունաստան գտաւ իր ազատութիւնը, շնորհւ ԱՆԴՐՈ - ԳՐԱԿ, ՎԱԿԱՅԱ, ԱՄԱՉԱՅԱ, ԱԹԻԹԵԱՆ, և ԱՌԱՅՈՒԹԱԿ, ԱԿԻՆ:

Փոքրիկն Յունաստան իր կազմութեան այդօրերուն հազիւ 530.000 բնակիչ կը հաշուէր, մեծ մասամբ կիներէ, ծեր ու մանուկներէ բաղկացեալ:

Այս կորուստներէն զատ, Թուրքիա պարտաւորուեցաւաւ 157 միլիոն ֆրանք պատերազմական տուղանք վճարել Ռուսիոյ:

Այս խոշոր գումարը եթէ Սուլթանը կարող չըլլար վճարել, Ռուսիա իրաւունք պիտի ունենար գրաւեալ պահելու Ռումանիան և Պուլկարիան:

Հայազգի Յարութիւն Ամիրայ Պէտքեան, որ Սութիւնին լայն վստահութիւնը կը վայելէր, միջոցը գտաւ այն խոշոր գումարը հայթայթելու, և այսպէսով Ռուսքաղուեցան այդ հողամասերէն, ինչ որ մեծ ուրախութիւն պատճառեց թէ Սուլթանին, և թէ Թուրք ազգին:

Ի գնահատութիւն այս մեծ ծառայութեան, Սութանը Պէտքեան Յարութիւնի շնորհեց Թուվիրը Հիւ Մաթուին, բարձր շքանշանը, և իր ձեռքով կախեց զայն անոր կուծքը:

Պատերազմէն յետոյ, Ռուս բանակը երբ սկսաւ քառուիլ Թրքահայաստանէն, կարնոյ Հայերը, վախնալով որ, անոնց մեկնելէն վերջ՝ Թրքաց վրէժինդրութեան դոհ կրնան դառնալ, Առաջնորդ կարապետ Եպիսկոպոսի գլուխաւորութեամբ, կարնոյ և Պայաղիտի շրջաններէն շուրջ 90.000 հոգի, թողուցին ամէն ինչք, և գաղթեցին Ռուսանակին հետ դէպի Ռուսիա, և հաստատուեցան նոր գրաւուած Ախալցխա և Ալեքսանդրապօլ գաւառները՝ Ենթարկուելով անօրինակ զրկանքներու:

Այսպէս ամայացաւ Թրքահայաստանի այս կարևոր և հայաշատ նահանգը:



## ԳԼՈՒԽ ՎԵՃԵՐՈՐԴ

Յովսէփ Ամիրխանի Հայաստանը դրամով գնելու ձեռնարկը.— Յովհ. Կարբեցի Կաթ.ի դէմ Թըրքահայոց դժգոհութիւնը.— Պոլոժէնիոյ հաստատումը,— Հայոց դժգոհութիւնը

Աշտարակեցիին ազատագրական շարժումին Ռուս կառավարութեան կողմէ ձախողութեան մատնուելէն յետոյ, հրապարակ եկաւ հայրենասէր նոր դէմք մը, բնիկ նոր Զուղայեցի և ձափա կղզւյն Սամարանդ քաղաքը բնակող մեծահարուստ ՅՈՎՍէՓ Յ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ, որ դէ՛ Հարապաղցի ազնուական ընտանիքէ սերած աշուղ Յովհաննէս Ամիրխանեանի: Յովսէփ նշանաւոր վաճառական էր և իր սեպհական նաւերով աշխարհիս ամէն կողմը կ'արտածէր սուրճ, շաքար, աֆիօն, և բարեկամ էր Հոլանտայի թագաւորին, Նասսաօյի կիւյօմ Ա. ին:

Յովսէփ լսելով Հայաստանի ազատագրումը Պարսկական լուծէն, ուզեց իր բոլոր հարստութիւնը տրամադրելով գնել Արարատեան Աշխարհը, և իր հովանույն տակ կազմել անկախ երկիր մը: Ամիրխանեան իր այս հայրենասէր նպատակը յայտնեց մեծանուն ներսէս Աշտարակեցիի ուղեալ, 1829 Հկտ. 20 թուակիր նշանաւոր իր նամակով, որու կարեւոր մասերը կուտանք հոս:

“ . . . Նմանապէս աղաչում եմ ձեզ՝ համառօտ կերպիւ հաղորդել ինձ, թէ կայսերական (այսինքն Ռուսիոյ) Վրաստանի և Հայաստանի Հայք ի՞նչ տեսակ կեանք են վարում, քանի՛ են թուով և ի՞նչ դրութեան մէջ են նոքա: Ցանկալի է ինձ նոյնպէս գիտնալ, թէ Ռուսիա ի՞նչ

մտադրութիւն ունի մեր ազգի վերաբերութեամբ, արդ եօք ի՞նքը՝ տիրապետելով պիտի կառավարէ չայսատանը, թէ պիտի դարձնէ սորան իւր տէրութեան մի առանձին անկախ մասն: Միով բանիւ հաղորդեցէք ինձ թէ Ռուսաց տէրութիւնն ի՞նչ դիտաւորութիւն ունի մեր ազգի վիճակի մասին. այդ տեղեկութիւններով դուք ինձ վերին աստիճանի կը պարտաւորեցնէք: Ի վերջս՝ պարզապէս խոստովանում եմ ձեզ, որ մտադիր եմ, եթէ միայն կարելի կլինի, գնել զրամով իմ նախնեաց երկրները, այն է Ղարապաղի աշխարհը Փայտակարանով հանդերձ, կամ թէ մի որոշ հարկ տալ նոցա տիրելու համար, վասնզի, հարազատ երկրների կորուստը ինձ համար վերին աստիճանի զգալի է: Հաւատտցնում եմ ձեզ, ողորմած տէր, որ ես ողորմութեամբ Աստուծոյ, այստեղ ոչինչ բանի պակասութիւն չունեմ: Վայելելով բարի անուն և ընդ հանուր յարգանք, ես պարզեւաւորուած եմ բախտից շատ նշանաւոր հարստութեամբ: Գետիններ, նաւեր, շինութիւններ — ամէն ինչ ունեմ բաւականաչափ: Բայց բաղդի այդ բոլոր ճոխ պարզեները տակաւին ինձ չե՞ն միիթարում երբ մտաբերում եմ, թէ ինչ վիճակի մէջ է իմ սիրելի չայրենիքը, և որպիսի թշուառութիւններ են կրում իմ հայրենակիցներէս ոմանք:

«Այդ պատճառով շատ փափաքում եմ ունեցածից մի մասն հանել (նուիրել) յօգուտ և ի թեթեւութիւն վիճակի իմ հայրենակցաց: Եթէ իմ մտադրութիւններս կ'երագործուին, ես ընտանիքովս և ունեցած գումարներովս կը գամ չայսատան, և իմ մնացած հարստութիւնից կը նշանակեմ յօգուտ իմ հայրենակցաց այնքան՝ որ կարողանան եկամուտ բերել տարեկան չորս կամ հինգ լար ոռուփի (մօտ կէս միլիոն րուպլի), թէ իմ կենդանութեան ժամանակ և թէ յետ իմ մահուան, վասնզի, միայն իմ կալուածքը ահագին քանակութեամբ շաքար

և սուրճ է տալիս, ուր մնաց միւս գետիններս, որ ամէն տարի մեծ եկամուտ են բերում:

« Ծնորհիւ Աստուծոյ, ես այստեղ մի տիրապետող իշխանի հաւասար կեանք եմ վայելում: Միմիայն հայրենեաց սէրն է որ վշտացնում է ինձ: Յուսամ թէ Ամենաբարձրեան Աստուծած կը կատարէ իմ բարի դիտաւորութիւններս: Այսու ամենայնիւ, ես ամէն ինչ յանձնում եմ ձեր բարետեսութեանը, պատրաստ եմ հետեւիլ ձեր խորհուրդներին և կատարել ամենայն ինչ, որ դուք կը յանձնարարէք»:

Ներսէս Աշտարակեցի Պեսարապիոյ մէջ ընդունեց այս նամակը զայել զրկեց թեթերսպուրկ, մեծանուն իշխատուր աղա Լազարեանին, որ ոռուսերէն թարգմանութեամբ զայն յանձնեց կայս. ժանտարմըրիի պետ կոմս Թէնկէնտոլֆին, որպէսզի նիքոլա կայսեր մատո ցուի:

Խաչ. Լազարեան 1850 Դեկտ. 5 ին կոմսէն ստացաւ հետեւեալ նամակը, ըստ Ա. Երէցեանի պատմութեան:

Սամարանդում բնակող Պր. Ամիրխանի նամակը առ Ներսէս Արքեպիսկոպոսն որ դուք հաղորդեցիք ինձ հանդերձ ոռուսերէն թարգմանութեամբ, ես բաղդ ունեցայ ամենահպատակօրէն զեկուցանել թագաւոր կայսեր, այն ենթադրութեամբ որ Ռուսիոյ իշխանութեան ներքոյ գտնուող չայսատանում մի այդպիսի յարգելի և հարուստ զրամատիրոջ բնակութիւնը այդ երկրի էական և շատ նշանաւոր օգուտ կը բերէ:

« Ն. Կ. Մեծութիւնը, տեսնելով որ Պ. Ամիրխանը մտադիր լինելով գալ այստեղ, յոյս ունի նորին Մեծութեանը ներկայանալու բաղդաւորութիւնն ունենալու, և ցանկանում է մի քանի տեղեկութիւններ ստանալ Ռուսիոյ մասին, բարեհաճեց ամենաողորմածաբար պատաս-

իսամել՝ « ԹՈՂ ՆԱ ԳԱՅ ԱՅՍՏԵՂ, ԻՍԿ ՆՈՐԱ ՊԱՀԱՆ ԶԱՇ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՄԻՆՔՍ ԿԸ ՏԱՄ ԻՒՐԵՄՆԵՐԲ ԿԸ ՏԵՍՆԱՄ ՆՈՐԱՆ »:

Խ. Լազարեան կայսեր այս յուսադրիչ պատասխանը ստանալով, անմիջապէս զայն հաղորդեց Ն. Աշտարակեցին. իսպանով որ հրաւիրէ Ամիրխանեանը՝ գալ թէ թերապուրկ: Աշտարակեցի ամէն ինչ գրեց Ամիրխանին: Յովսէփ Ամիրխանեան հետևանք տալու համար իր ծրագրին, ձափայէն կալկաթա անցաւ, բայց հոն, տեղացի Հայերէն լսելով որ Զարը «ՊՈԼՈԺԷՆԻԱ» հրատարակելով դրժած է Հայոց տուած իր բոլոր խոստումները, խիստ վշտացածէ, և անոնց խորհուրդով ետ կեցած է Ռուսիա երթալէ: Յ. Ամիրխանեան մեռած է 1834 ին, և թաղուած Սամարանդ քաղաքը, իր սեփական գերեզմանատունը, և ուր տեղ մինչև այսօր կը հանգչին անոր հետ իր կինն և երկու որդիները, կոռնելիոս և Դանիէլ: Գերեզմանին վը բայ կանգնուած է մատուռ մը, որ ինամքով կը պահպանուի Հոլանտական կառավարութեան կողմէ, և կը ծառայէ որպէս փարոս՝ Սամարանդ երթեւեկող նաւերու:

Նորընտիր կաթողիկոս Յովհաննէս կարբեցի վաղեմի հակառակորդ մ'էր Աշտարակեցիի: Մայր Աթոռը բագրմելուն պէս, Ներսէսի բոլոր համակիրները զանազան պատճառներով հեռացուց իր քովէն, և Սինօդի պակսած անդամներուն տեղ նորեր չի նշանակելով, սկսաւ սանձ, արձակ գործել, ինչ որ մեծ գժգոնութիւն պատճառեց:

Ինչպէս Եփրեմ, նոյնպէս և կարբեցի, իրենց անխոհեմ ընթացքով դիւրացուցին Ռուս կառավարութեան հայակուլ ծրագիրներու յաջողութիւնը:

Կարբեցի, իր հայրապետական անդրանիկ կոնդակին հետ նուիրակ մը դրկել ուզեց, որպէսզի կարելի ըլլայ կարգ մը խնդիրներ ուղղակի կարգադրել Այս խնդիրնե-

րէն գլխաւորներն էին՝ կաթ.ի անուան յիշատակութիւնը Տաճկահայ եկեղեցիներու մէջ, Մայր Աթոռոյ ինպատ գանձանակի շրջագայում, Նուիրակի մը մշտատե ներկայութիւնն ի Պոլիս, ևայն: Կարբեցի Ռուս կառավարութեան խորհուրդով, իր կոնդակը Պոլսոյ Ռուս գեսպանին միջոցաւ Պատրիարքարան դրկեց, փոխանակ Նուիրակի մը հետ դրկելու:

Նոյն ատենուայ Պոլսոյ Պատրիարքն ու ազգին մեծամեծները խոհական, հեռատես ու շրջահայեաց անձեր ըլլալով, սաստիկ զայրացան Ռուսիոյ քաղաքական այս խաղէն, որովհետեւ չէին փափաքէր որ Զարը միջամտէ Հայոց կրօն. Ներքին գործերուն: Ռւստի, արգիլեցին կաթողիկոսին անուան յիշատակումը Թրքահայ եկեղեցիներուն մէջ: Թրքահայք զայրացան նաև կաթ.ին սանձարձակ գործունէութեան դէմ որ պատճառ եղաւ պայքարներու և միջամտութեան:

Ռուս կառավարութիւնը Յանձնախումբ մը կազմեց որուն կը մասնակցէին իշխան զօրվը, Բեհրութեանց, Թիֆլիսի Ներսէսեան վարժարանի ուսուցիչ բրօֆ. Շահան Զրպետ, Յունազգի բրօֆ. Օզկինի, Թիֆլիսի Առաջնորդ Սերոբէ Արքեպիսկոպոս—, պաշտօն տալով անոր հիմնական կանոնագրութիւն մը պատրաստել, և անոր արամապրութեանց համաձայն սահմանել բոլոր իննդրոց կարգադրութիւնը:

Պատրաստուած կանոնագիրը իր վերջնական ձեւն ստացաւ կովկասի կառավարիչ Ռոզէնի, Յովհ, կաթ.ի, և զօր. Պասկեւիչի հաւաքական քննութենէն վերջ:

Ռուս կառավարութիւնը, 1856 Մարտ 11 ի հրովարտակով վաւերացուց «ՊՈԼՈԺԷՆԻԱ» կոչուած այս կանոնագրութիւնը, որ 10 գլուխէ և 141 յօդէ կը բաղկանար:

Այս կանոնագրութեամբ Հայ Եկեղեցւոյ Վերին Տեսութիւնը, և Եկեղ. կանոններու և ծէսերու անթերի կա-

տարման հսկողութիւնը վերապահուած է Մայր Աթոռոյ կաթողիկոսին, որ կ'ընտրուի ամրող Հայ Ազգին կողմէ դրկուած եկեղեցական և աշխարհական պատուիրակներէ, և կը հաստատուի Ռուսաց կայսեր հրովարտակաւ:

Պօլօմէնիոյ ծճրդ յօդուածը կրսէ— Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն էջմիածնի, ընդ Նախագահութեամբ Ծայր. Պատրիարք Կաթողիկոսին՝ բաղկացեալ ի չորից Արքեպիսկոպոսաց կամ Եպիսկոպոսաց, և ի նոյն թիւ Վարդապետաց, որք գհաստատուն բնակութիւն իւրեանց ունին յէջմիածնի:

Նոյնին ծճրդ յօդուածը կը ճշդէ Սիւնհոդոսին պարտականութիւնները: Իսկ 43րդ յօդուածը կ'ըսէ-

« Ի Սիւնհոդոսն էջմիածնի լինի առանձին ՊՐՈԿՈՒՐՕՐ, կարգեալ ի կառավարիչ Սինկղիատէն՝ յաստիճանաւորաց, որք գիտեն զիեզուս Ռուսաց և Հայոց, նմանշանակի ոռնիկ յարքունի գանձարանէն, համեմատ իւրում պաշտաման »:

Այս նոր կանոնագրութիւնը սկսաւ գործադրուիլ 1837 Փետրուար 22ին, որու ուժով, Ռուսահայ հինգ թեմերը ունեցան իրենց թեմակալ Առաջնորդները, և կառավարուեցան նոր օրէնքով կազմուած ստորագաս կոնսիստարաններով և հոգեւոր ատեաններով:

Մէն մի թեմ ունեցաւ իր հոգեոր վարժարանը, որոնք հասցուցին կրթուած կղեր ու աշխարհականներ, որոնք մեծ զարկ տուին ժողովուրդի մտաւոր գարգացման:

Յովհաննէս Կաթողիկոս Կարբեցի իր վատ գործունէութեամբ մեծ դժգոհութիւն յառաջ բերաւ ամէն կողմէ: Ան, գործիք դառնալով Ռուս կառավարութեան ձեռքը՝ քանդեց բոլոր այն գործերը՝ զոր Աշտարակեցի գարբնած էր: Կարբեցի միայն իր անձը կը մտածէր: Իր փառասիրութիւնը շարունակեց միշտ ի վնաս աղքին:

Ամէնէն աւելի ատելութիւն հրաւիրեց իր վրայ, երբ



ՅՈՎՀ. ԿԱԹ. ԿԱՐԲԵՑԻ

Նիքոլա Ա, Կայսրը այցելեց Ս. Էջմիածին, և ուզեց իմանալ Հայ ժողովուրդին փափաքներն ու պէտքերը, անոնց գոհացում տալու համար: Ռուսի, Զարը մտերմօրէն հարցուց կարբեցին թէ ի՞նչ կը փափաքի որ ընէ յօդուտ տառապեալ, դժբաղկի իր Ազգին բարօրութեան:

Կարբեցի Ազգը շնորհեայլ ինպրեց անկէ որ իր երկու եղբօր որդիներուն ազնուա-

կանութեան տիտղոս

շնորհէ . . . :

Կայսրը կարմրեցաւ ու ապշեցաւ այս անմիտ ինդրանքին վրայ, բայց շնորհեց զայն, անշուշտ, քթին տակէն ինդրալով, ազգի մը գերագոյն պետին այս փառամոլ և անձնասէր ոգիին վրայ:

Կարբեցիի ազգավասարութիւնը ամօթով կը ճգէ Աշտարակեցիի թշնամիները, որոնք կ'ըմբռնեն իրենց գործած ահաւոր սխալը, այսպիսի անմիտ կղերական մը Մայր Աթոռոյ վրայ Կաթողիկոս բազմեցնելով: Բայց ուշ մնացած էին:

Հայրենասէրն ներսէս՝ իր աքսորավայրէն բուռն բողք բարձրացուց, ազգին հոգեոր կեղրոնին վրայ Ռուս կառավարութեան ունեցած գերիշխանութեան, և Կարբեցիի ազգավասարութիւն դէմ: Բայց լսո՞ղը ով էր:

Անձնական շահն ու փառամոլութիւնը Ազգին շահն գերիվեր համարող կարբեցի և իր համախոհները երբէ՛ք խիղճ չըրին. և Ռուսահայութիւնը լուռ հանդիպատես եղաւ անոնց ազգակործան գործունէութեան. չի կարենալով բան մը ընել:

Այս դրութիւնը սակայն կարճ տեւեց, վասնդի կարբեցի 1842 Մարտ 26ին վախճանեցաւ:

### ԳԼՈՒԽ ԵՕԹԵՐՈՐԴԻ

—ooo—ooo—

Սուլթան Մահմուտ Ենիշէրիները կը բնաջնջէ, —  
կրօն. Ներքին վէճերու բորբոքումը Հայոց  
մէջ, աքսոր և վերադարձ Հայ. Հռովմէ-  
ականաց, Հայ-կաթոլիկ Պատրիար-  
քութեան հաստատումը. — Պէտ-  
ճեան Ամիրայի կեանքն ու  
գործունէութիւնը:

—o— | —o—

Բազմաթիւ հարստահարուած ժողովուրդներէ բաղկա-  
ցեալ մեծ կայսրութիւն մըն էր Օսմանեան պետութիւնը,  
որուն մայրաքաղաք Կ. Պոլիսը թիրախ կը հանդիսանալ  
օտար տէրութեանց մըցակցութեան: Սուլթան Մահմուտ  
ազատամիտ կայսր մը ըլլալով ուզեց Եւրոպական ձեռփ  
բարեկարգել երկիրը, որ կը գտնուէր Ենիշէրիներու  
բռնատիրութեան տակ, որոնք արգելք կը հանդիսանա-  
յին ամէն կարգի բարենորոգմանց: Սուլթանը որոշեց թէ՛  
նաջնջել զանոնք, և վերջ տալ անոնց կեղեքիչ լուծին:

Ուստի, նախ և առաջ Բրուսիացի և Աւոտրիացի սպաներ հրաւիրեց որպէսզի, Եւրոպական սիսթէմով  
նոր բանակ մը պատրաստեն: Անոնց գլխաւորն էր հա-  
րիւրապետ ՄՕԼԹԻՔ, որ կարճ ժամանակի մը մէջ մար-  
զեց ու պատրաստեց ՆԻԶԱՄԸ ձէՏԻՏի զինուորները:

Սուլթանը հրամայեց Ենիշէրիներուն, որ իրենց իւ-  
րաքանչիւր գօրագունդէն 150ական մարդ տան: Ենիշէ-  
րիները հիստ կատղեցան, ո'չ միայն չուզեցին հնազան-



ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒՏ Բ.

Արդարադատ եւ ազատամիտ կայսրն Օսմանեան

թէ, այլ և իրենց եղած նախատինքին չի հանգուրժելով  
1826 Յունիս 16ին ապատամբեցան, պաշարեցին կայսեր  
պալատը, և ուղեցին գահընկէց ընել Մահմուտը:

Սուլթանը արդէն նախօրօք պատրաստած ըլլալով  
բազմաթիւ թնդանօթներով ամրացուած զինուորական  
ոյժ մը. անմիջապէս դուրս հանեց Մուհամմէտ Մար-  
գարէին նուիրական կանաչ դրոշակը, և բանազրելով  
Ենիշէրիներու օճախը, հրաւիրեց Հայրենիքին պաշտ  
պան բոլոր հպատակները, զալ հաւաքուիլ դրոշին տակ,  
և դրոհ տալ Ենիշէրիներուն վրայ:

Կայսեր հրամանաւ Պոլսոյ դրները փակուեցան, ու ամէն կողմէ թնդանօթները գոռալ սկսան: Պալատին առջեւ խմբուող Ենիչէրիները շուտով մաքրուեցան, և փախուստ տուողները ապաստանեցան էթ - ՄէջջԱնի ամրացեալ իրենց զօրանոց բերդը:

Նորավարժ զօրքը, ժողովրդային խումբերով պաշարեց բերդը, և թնդանօթի դժոխային ոմբարձակումով մը քարուքանդ ըրաւ զօրանոցները, 15.000 Ենիչէրիներ ըստ պանուեցան: 20 հազար աքսորուեցան երկրիններսերը, ուր մաքրուեցան: Յաջորդ օր, Յունիս 17 ին, Սուլթանին Ֆէրմանով Ենիչէրիներու բնաջնջումը ծանուցւեցաւ բոլոր Օսմանցւոց:

Այսպէ՛ս բնաջնջուեցաւ բարենորոգմանց ոխերիմ թշնամի Ենիչէրիութիւնը որ դարերո՛վ Օսմ. Տէրութեան զինուորական ահեղ ուժը կը կազմէր, մինչև Վիէննայի դոները ափ առնելու աստիճան: Բայց ասոնք հետզհետէ իրենց նախկին մարտական և հայրենասիրական առաքինութիւնները կորսնցուցած՝ առանձնաշնորհեալ վիճակին հարստահարութեան և շուայտութեան ի նպաստ գործածելով երկրին ու Տէրութեան գլխուն փորձանք մը դարձած էին, որով, պետութիւնը քայլքայումէ փրկելու համար պէտք էր զանոնք իսպառ բնաջնջել:

Սուլթան Մահմուտ յաջողեցաւ գլուխ համել ծանր և խիստ դժուարին այդ գործը:

\* \* \*

Ինչպէս տեսանք Պատմութեանս 85րդ էջին մէջ Լուսաւորչական և կաթոլիկ Հայոց միջեւ ծագած սին վէճերը բառնալու և հաշտութիւն գոյացնելու միջոց մը կը փնտուէր: Պէզճեան աքսորէն շուտով վերադարձաւ և հաստատուեցաւ արքունի փողերանոցի տեսչութեան

իր պաշտօնին մէջ, և քիչ ատենէն պետական ազգային էն ազդեցիկ դէմքը դարձաւ:

ՄԻԼԻԹԻԱ: ԱՐՈՒԲՐԴ ՓՈՐՁՉԸ. — Պէզճեան օգտուելով պատեհ առիթէն, միջամտեց Հայ - կաթոլիկ վէճին, և առաջարկեց որ Հայ կաթոլիկ վարդապետ մը Հայոց Պատրիարքին փոխանորդ կարգուի, և պետութեան հրամանները անոր միջոցաւ հաղորդուի Հայ Հոռվմէական հասարակութեան:

Երկու կողմէ ալ սիրայօժար ընդունեցին այս առաջարկը, և ԱՆՏՈՆ ՆՈՒՐԻՃԱՆԵԱՆ վարդապետը փոխանորդ կարգուեցաւ (1827):

Գոլէժականները հակառակեցան այս անուանումին, և յաջողեցան Անտոնի տեղ ՊՕՂՈՍ ՄԱՐՈՒՇ վրդպտը փոխանորդ դնել:

Այսքան մը յաջողութիւնը նպաստեց կաթոլիկ Հայոց բոլորովին անջատման ծրագրին յաջողութեան:

Անոնք օգուտ քաղելով Ռուսոպարաիկ կոուին մէջ Հայոց ցոյց տուած Ռուսասէր ընթացքէն, ինսդրագիր տուին Սուլթան Մահմուտ թ. ի, մասնանշելով թէ՝

Թրքահայերը միտք ունին Յունաց նման ապստամբի, եւ Ռուսներու օգնութեամբ ազատութիւն ծեւք բերել, ինչպէս որ ազատեցան գարսից լուծէն: Ուստի, մենք, Հայ-Հռովմէականներս կը փոփաքինք մեր առանձին կրօնապետն սւնենալ, որ անջատօրէն վարէ կաթոլիկ Հայոց գործերը, որպէսզի, նման պարագայի մը ատեն հշդրոշուկինք ապրաւամբ Լուսաւորչական Հայերէն, եւ Համբաստանուինք:

Այս ամբաստանութիւնը կը վրգովէ Սուլթանը. որ անսմիջապէս իր ներկայութեան կը կոչէ փողերանոցի տեսուչ Պէզճեան Յարութիւն Ամիրան, և բացատրութիւն կը պահանջէ անկէ:

Պէզճեան կը հանդարտեցնէ Սուլթանը, ըսկելով թէ՝ այդ ամբաստանութիւնը դիտոնմաւոր իսաղ մէ Հտյ ժո-

դովուրդը աչքէ ձգելու և վտանգելու համար անոր վայելած ազատութիւնը:

Յաջորդ օրը, Պէզճեան, ընկերակցութեամբ օրուայ և նախորդ Պատրիարք Կարապետ և Պողոս Արքեպիսկոպոսներու ներկայացան Ոռութանին և Եպարքոսին, ուր վստահեցուցին թէ՝

«ՀՕՅ ԼՈՒՍԱՌՈՐՉԱԿԱՆ ՃՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱԽՈՏՐԻՄ Է ԿՈՅՍԵՐ ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ, ԻՐԵՆՔ ՊԱՏԱՍԽԱՆՈՑՈՒ ԵՒ ԵՐԱՇԽԱԼԻՈՐ ԵՆ, ԻՐԵՆՑ ՀՕՅԻՆ, բայց չեն կրնար եղաշխաւոր ըլլալ իրենցմէ անջատուող չայ կաթոլիկներուն, որոնք իրենց իշխանութեան տակ չեն, Լատիններու հետ յարաբերութիւն ունին և անոնց ենթակայ են »:

Կայսրն և Եպարքոսը սաստիկ սրտմտեցան կաթոլիկներու այս խաղերուն դէմ: Սուլթանը հրամայեց Հայոց Պատրիարքին,

1.— Պոլիս բնակող բոլոր կաթոլիկ գաւառացիները իրենց ծննդավայրը աքսորել:

2.— Բոլոր կաթոլիկ կրօնաւորները Եւրոպաս աքսորել:

3.— Հայոց Պատրիարքին չհնազանդող կաթոլիկ Հայերը Փոքր Ասիա աքսորել:

4.— Նոյն վիճակին ենթարկել նաև կաթոլիկ բոլոր մայրապետները:

5.— Բերայի և Ղալաթիոյ մէջ բնակող բոլոր կաթոլիկ Հայերը տեղափոխել Գումար Պարու և Պոլսոյ զանազանները:

Հրամանը գործադրութցաւ և 12,000 հոգի Պոլսէն աքսորուեցան 1827 տարւոյ վերջերը, և յաջորդ Յունի վար և փետրուար ամիսներուն:

Սաստիկ ձմրան մէջ շատեր, մանաւանդ փոքրիկ ներ, զրկանքներու և հիւանդութեանց զոհ զացին:

Աքսորեաները ամէն տեսակ զրկանքի տոկալով երբէք դարձի գալ ու ազատուիլ չուզեցին: Զորս տարի յետոյ, երբ Թուրքիա պարտուեցաւ Դաշնակից պետութիւններէն՝ աքսորեալք վերադարձան

Աղբ-պոլսոյ Ոռուսօթուրք դաշնադրի շնորհիւ. Թուրքիոյ բոլոր քրիստոնէից կրօն. ազատութիւնը երաշխաւորուած ըլլալով, Պոլսոյ Ֆրն. դեսպանին միջամտութիւնով, Հայ-Հոռվմէականք ստացան տուանձին կրօնապետ ունենալու կայս. Ֆէրմանը:

Այսպէս, Հոռվմէն զրկուած ՀԱՅԻ ԱՆՏՈՆ ՎՐԻ. ՆՈՒՐԻՃԱՆԵՍՆ եղաւ առաջին կրօնապետը:

Բայց, Անտոն ՎՐԻ. օտարահպատակ ըլլալով, Կայսրը նշանակեց Հ. ՅԱԿՈԲ ՎՐԻ. ՄԱՆՈՒԵԼԵՍՆը, իրրե պատասխանատու ԱԶԳԱՊԵՏԵՏ:

Իսկ, 1835ին, Սուլթան Մահմուտի նոր Ֆէրմանովը ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԵՑԱՒ:

Այսպէս վերջ գտան Ազգին մէջ տիրող կրօն. ցաւա. Ո վէճերը:

\* \* \*

Դառնանք այժմ մէր մեծանուն բարերար Յարութիւն Ամիրա Պէզճեանի կեանքին ու գործին:

Սուլթան Մահմուտ Բ.Ի. թագաւորութեան շրջանին, Թուրքիոյ Հայոց մէջ ծնունդ առին շատ մը բարեսէր և երկելի անձեր:

Թուրքիոյ մայր քաղաք Պոլսոյ մէջ, ազգ. գործերը Ամիրաներուն ձեռքը կը գտնուէր: Ամիրաները երկու Կիսաւոր հոսանքի բաժնուած էին, Առաջնոյ գլուխը կը գտնուէր առևտրական և սեղանաւոր դասը, որ իր մէջ ունէր ազատամիտ կղեր ու մտաւորականներ, և որոնց ոգեւոր ոգին ու ջիղն էր օրուայ Պատրիարք «ՔԱԶԱ-

ՔԱՐՈԶ և ԽՈՐԱԳԻԾ» Տ. ԿԱՐՄՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՅ-ՊԱԼԱԹՅԻ(1823 - 1831). որու ազգեցութիւնը մեծ էր: ամբողջ բուն Պոլսոյ մէջ:

**Այս խմբակին կեղրոնն էր Խասգիւղ:**

Երկուորդ մասը, որ իր մէջ կը պարունակէր Օրթագիւղի, Պէշիկթաշի, Խւսկիւտարի, Գատրգիւղ և Վուսկորիքանի մը գիւղերու գլխաւորները — ճարտարագէտ, արհեստապետ, և Ակնցի հին գերդաստանի շառաւիղներ՝ որոնք հին սովորութիւններու ջերմ պաշտպան էին, և ունէին նոյնպէս իրենց հետևորդները:

Այս երկու որոշ հոսանքին մէջ հակակշողի գերլ կը կատարէր խորագէտ և վմաստուն Պէզմեանը, որ լուսամիտ Օսմ. Կայսր Սուլթան Մահմուտ Բ. ի մտերիմն ու սիրելին ըլլալով, իր հզօր ազգեցութիւնը կը գործածէր այս երկու հոսանքներու մերձեցման, և ի շահ չափողովուրդին:

Իրբեւ ժողովուրդի խոնարհ խաւէն բարձրացող անձ, ազգային գործերու մէջ ամիրաներու գերակշողութիւնը չէզոքացնել յաջողելով՝ էմնաֆ և արհեստաւոր դասուն մասնակցութիւնը ապահովեց:

ԳԱԶԱԶ ԵՐԹԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻ բացառիկ դէմքը եղաւ, որ իր ուշադրութիւնը դարձուց գլխաւորաբար Հայոց կրօն ակրթական եւ դաստիարակութեան դործին:

Պէզմեան. ոչ միայն իր մեծ ազգեցութիւնը ի սպաս դրաւ, այլ եւ իր քսակը:

Այն ժամանակուայ Պոլսոյ նշանաւոր ուսումնականներէն էին ՅՈՎՀԱՆՆԵԼՍ ՏԵՐՈՅԵՆՑ Եւ ԴՐԻԳՈՐ ՓԷՇՑԻՄԱԼԵՆՑՆ ուսուցչները, առաջինը իբրեւ Աստուածաբան եւ լեզուագէտ գիտէր տասնըերեք լեզու, իսկ երկրորդը իբրեւ հայագէտ եւ իմաստասէր անձ:

Այս երկուքէն զատ, Պոլսոյ մէջ ունէինք շարք մը լեզուագէտ եւ գրաբառագէտ ուսումնական անձեր, ինչպէս:

Յակոբ Նալեան, Ֆիզիքս Պողոս. Թագւոր Վարժապետ, Պալաթցի, Գէորգ, Մելքիսեդեկ. Սարգիս Յովհաննէսեան Գպիրները. Տէր Մեսրովլի, Տէր Մելքոն, Տէր Յովհան Վանանդեցի Քահանաները, եւայլն եւայլն:

Յարութիւն Ամիրա իր պաշտպանսւթեան տակ առաւ Փէշտիմանթեան Գրիգոր պատուելին, եւ սատարեց անոր Գրական ծեռնարկներուն:

Պէզմեան իր ծախսով վերաշխնեց գում Գաբուի Պատ: Ըիարքանիստ Մայր Եկեղեցին, իր յարակից Պէզմեան Մայր Վարժարանով: Շինեց գում Գաբուի Գրսի Ս. Յարութիւն Եկեղեցին, յարակից Պողոսեան եւ Վառվառեան Վարժարանով, յանուն իր ծնողաց: Հիմնեց Գարթալի Պէզմեան Ազգ. Վարժարանը, ինչպէս եւ այլ Եկեղեցի ու դպրոցներ, որոնց տեւականութիւնը ապահովող գումարներ ալ յատկացուց:

Յարութիւն Ամիրա Բերայի մէջ ալ բացաւ ալզկանց ասեղնագործութեան արիեստանոց Վարժարան մը, Ուկավառութեամբ նոյն ատենուայ նշանաւոր ոսկեր. չ տիրացու Սերովելի, ուր աղքատ հայ ալ չիկներ կը յաճախէին կարել սորվելու:

Յարութիւն Ամիրա իր առատաձեռնութեամբ եւ շինարական ակնաւու գործունէութեամբ բարի եւ քաջալենից օրինակը կը հանդիսանայ Հայ հարուստներուն, Ամիրաներուն, եւ մանաւանդ հասարակ ժողովուրդին:

Իրմէ խրատուելով եւ քաջալերուելով, ուսումնասէր Ամիրաներ կը սկսին իրենց ծախսով Վարժարաններ բանտու:

**Այսպէս, 1830 ին, Բերայի մէջ, աղջկանց անդրանիկ Հայ Վարժարանը բացաւ Տէր Զաքարիա քահաննան՝ Փափազեան Ճանիկ Ամիրայի ծախսով, Վարժարանը կոչուեցաւ Հոփիսիմեանց և Գայիսանեանց:**

**Մէրկէրեան Յովհաննէս Ամիրա իր ծախսով շինեց Գուղկունճուքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին և Վարժարանը, ու Հայոց մէջ առաջին անգամ ինք մտցուց Վայտի վրայ քանդակագործութեան գեղարուեստը:**



ՃԱՆԻԿ ԱՄԻՐԱՄ ՓԱՓԱԶԵՈՆ

Պոլսոյ Հայերը այդ թուականներէն առաջ հաստատած էին երկու հիւանդանոցներ, մին՝ Բերայի, իսկ երկրորդը Նարլը Գաբուի մէջ, և որոնք անբաւական էին և անյարմար, վասնզի, թաղերու մէջ հտստատուած այս հվանդանոցներուն մէջ պատսպարուած հիւանդներուն և խելագարներուն պոոչտուքներն ու աղմուկները շատ գէշ տպաւորութիւն կրնէին կրացի ընտանիքներուն, որոնք մի՛ շտ յուզումի և անհանդստութեան կը մատնուէին:

Նարլը Գաբուի եկեղեցւոյ կից յիմարանոցին հիւանդներէն մին, կիրակի օր մը, եկեղ. արարութութեանց պահուն, անձունի հայութիւններ կ'արձակէ. որոնք կը լուսուին ժողովրդեան կողմէ և կը գայթակիքին:

Այս գայթակղութիւնը պատճառ եղաւ, որ Աղքին ամենամեծ բարերարը և բարեպաշտ Հայը հանդիսացող Յարութիւն Ամիրա Պէղճեան, Ամիրայից հետ խորհրդակցելով, Եէտի-Գուլէի պարիսպներէն դուրս օդասուն վայրի մը մէջ, 4.000 քառ. մէթը հողի վրայ, հանդիսաւորապէս հիմը դնէ ընդարձակ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒՍՆԴԱՅՈՑԻՆ (1852):

Պէղճեան Յարութիւն Ամիրա՝ իրրեւ հեղինակը այդ գործին յղացման. շինութեան ծախքին մեծագոյն մասը իր վրայ առաւ. իսկ ծանիկ Ամիրա Փափազեան, Յարութիւն Ամիրա կէլկէլեան, Միսաք Ամիրա. Երամ Ամիրա ևայն, իր՝ նց նիւթական աջակցութիւնը բերին այս հոյակապ գործին:

Յարութիւն Ամիրա տարի մը անձամբ հսկեց շինութեան. որմէ վերջ հիւանդանալով անկողին ինկաւ:

Սուլթանը իր երկու սենեկապետներուն հետ Պէղճեանի հիւանդան եկաւ, և իր բժիշկներուն խնամքին յանձնեց զայն, ու անոր բնակութեան համար փառաւոր տուն մը շինել հրամայեց, սակայն, Տիւզեան Յակոբ ճարտարապետի շինած այդ շէնքը դեռ չաւաբտած՝ Պէղճեան կնքեց իր մահկանացուն, 1834 Յունվար 13ին:

Պէղճեան Ամիրա դժբաղդաբար մեռաւ, առանց տեսնելու նոր աւարտած հիւանդանոցը, որու բանալին իրեն յանձնած էին, իր մեռնելէն քանի մը օր առաջ:

Աննախընթաց ու փառաւոր յուղարկաւորութեամբ Պէղճեանի մարմինը ամփոփուեցաւ իր շինած Պատրիարքանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ, Սուլթան Մահմուտի հրամանին համաձայն: Առաջին Հայն էր՝ որ թաղուեցաւ քաղաքին մէջ: (Տեսնե՛լ մեր «Պատմագրական Մատենաշար թիւ 4. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱՄ Պէղճեան»ը):

Ո՛չ միայն Հայ Ազգը ողբաց իր անզուգական բարերար զաւակը, այլ և ամբողջ պետութիւնը: Նոյն ինքն Սուլթանը ողբաց և արտասուեց՝ իր հաւատարիմ հպատակ և անձնուէր խորհրդականին վրայ:



ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴԻ  
—(o)—

Ա.ԶԳ. ՀԻՒՍՆԴԱՆՈՅԻՆ հանդիսաւոր բացումը.—  
Ամիրայից գործունէութիւնը և կրթ. զարթօնքը  
Թրքահայոց մէջ.— Իւսկիւտարի ՃԵՄԱՐԱ-  
ՆԻՆ բացումը, և պայքարը անոր շուրջ.—  
Ամերիկացի Միսիօնարաց գործունէու-  
թիւնը, պայքար անոնց դէմ.— Յա-  
կոբոս Պատրիարք Սերոբեան.  
ՊԱՊՀ ԱԼԻԻ ՄԵԾ ՑՈՅՑԼ

—ooooo—ooooo—

Պէզճեան Յարութիւն Ամիրայի մահէն վերջ, Ազգա-  
յին Հիւանդանոցին հանդիսաւոր բացումը տեղի ունե-  
ցաւ օրուայ Պատրիարք Ստեփանոս Աղաւնի Արքեպո-  
ջաքարեանի նախագահութեամբ (1831-1839): Հիւանդա-  
նոցը կոչուեցաւ Ա. ՓԻԿՉԵԱՆ:

Այսպէսով Հայ ժողովուրդը ունեցաւ իր սեփական  
գթՈՒԹԵԱՆ մեծ ՏՈՒԻՆ, որ հետզիետէ ընդարձակուե-  
ցաւ՝ կիւլպէսկեան, Ռւճճեան, և Յակոբեան հարազատ-  
ներու նոր ու հոյակապ շէնքերովը: Բոլոր Հայութիւնը  
միշտ կը գուրգուրայ Ազգին այս Տունին վրայ հարիւր  
տարիէ ի վեր:

Կրթական վերազարթնումի խնդիրը ոգեւորեց ամի-  
րայութիւնը: Երջանկայիշատակ Պէզճեանի հիմնած հա-  
մանուն Մայր Վարժարանին ստացած յառաջադէմ ու  
նախանձելի վիճակը գրգիռ մը եղաւ, որ Խասդիւղի մե-  
ծամեծները իրինց գիւղի Ներսէսեան կրթարանին բար-  
ձրացման վրայ մտածեն:

Այս գործին գլուխը կանգնեցաւ ՃԷԶԱՅԻՐԼԵԱՆ  
ՄԿՐՏԻՉ ԱՄԻՒՐԱ, և կարձ ժամանակի մէջ Ներսէսեան  
կրթարանը դարձաւ ուսման մեծ վառարան մը, ուր կը  
դասաւանդուէին եւրոպական լեզուներ, գիտութիւններ,  
Հայերէն, Թրքերէն, Ճայնազրութիւն, ևայլն, շնորհիւ  
անօրէն Նիկողոս Հովուեան ուսումնասէր անձին:

Նէվրուգեան գերդաստանը նիւթապէս կ'օժանդակէ  
վարժարանին: Բոլոր թաղերէն բազմաթիւ երիտասարդ  
ներ Խասդիւղ կը վագեն ուսում առնելու: Քսանի չափ  
գաւառացի գիշերօթիկ տղայոց համար մասնաւոր տուն  
վարձուելով, անոնց մնունդին և հանգստութեան ալ հոգ  
կը տարուի:

Ամիրաները նախանձելով Մ. ՃԷզայիրլեանի այս  
յաջողութեան վրայ, ուղեցին հարուածել անոր գործը:

Այս կործանարար ընթացքին անուղղակի կը մաս,  
նակցին Ամերիկացի բողոքական միսիօնարներ, որոնք  
հետզիետէ կը ձգտէին Հայոց մէջ երրորդ յարանուանու-  
թիւն մը հիմնել ձեռնարկելով դպրոցներու հաստատման:

Ամերիկացի միսիօնարները երկու վարժարան բացին,  
մին վոսփորի եւրոպական եզերքին վրայ՝ Պէպէքի մէջ,  
իսկ միւսը Բերայի, ուր, կիրակի օրեր, չափահաս և  
անզրագէտ երկսեռ Հայ տղոց գրել կարդալ սորվեցնելու  
պատրուակին տակ՝ իրենց բողոքական կրօնքի գաղա-  
փարները կը սերմանէին: Եւ որպէսդի իրենց գործունէ-  
ութիւնը արդիւնաւոր ըլլայ, հիւանդ, աղքատ ազգային-  
ներուն գեղ, զարման, մնունդ կը մատակարարեն, ան-  
դորձները կը հոդան, կամ անոնց գործ կը ճարեն:

Այս կերպ հոգածու գործունէութեամբ կը յաջողին  
բազմաթիւ Հայեր իրենց քաշել, որոնց առաջիններէն  
կը լան փէշտիմալճեան վարժապետի սաներէն Յովհան-  
նէս Տէր-Սահակեան, Սեն. Տէր-Մինասեան և Սարգիս  
Յովհաննէուեան: Բոլորքականութիւնը քիչ առ քիչ մուտք

գործեց Պոլսոյ, իզմիրի, Պրուսայի, և այլ գաւառներու մէջ: Աստուածաշունչ և ուրիշ կրօնական գիրքեր՝ աշխարհաբարի և թուրքերէնի թարգմանուելով տպագրուեցան և ձրի բաժնսւեցան ամէն կողմ:

Ազգին մեծամեծները այս նոր վտանգին ու պառակտումին դէմ թումբ կանգնելու համար կը խորհին ազգու միջոցներ ձեռք առնել: Եւ որովհետեւ Ստեփաննոս Աղաւնի Պատրիարք այդքան մեծ գործունէութիւն մը ցոյց չէր տար այդ ուղղութեամբ, որով, որոշուեցաւ Պատրիարք կարգել Ամասիա-Մարզուան թեմի քաջար թուն առաջնորդ բնիկ Պալաթցի ՍերՈԲԵԱՆ ՅԱԿՈԲՈՍ ԱՐՔԵՊՈՂՈՍՈՒԾ, որ Պոլիս հասաւ 1858 Յնվր. 5ին:

Յակոբոս Պատրիարք խստաբարոյ ընթացք մը ցոյց տուաւ չայ բողոքականաց դէմ, և գլխաւորաբար հալածեց այդ կրօնին համակեր լուսաւորչական կղերականները: Նոյն տարւոյ Փետրուար 7ին Պատրիարքարան իր մօտ հրաւիրեց Ֆիզիքա Պօղոս, և Տէր-Մահակեան Յովհաննէս պատուելիները, 4 օր բանտարկեց, ու յետոյ զանոնք աքսորեց կեսարիոյ Ս, կարապետ վանքը, Խասդիւղի Տէր Գէորգ քահանայ Արծրունին ալ բանտարկեց Պատրիարքարանին մէջ:

Յակոբոս Պատրիարք իւսկիւտար բազմահայ Ակեղո՞նին մէջ կրթարան մը հիմնելու ծրագիրը յղացաւ:

Ճարտարապետ Յովհ, Ամիրա Սէրվէրեան այս գործին գլուխ կանգնեցաւ: Որոշուեցաւ հանգուցեալ Գրիգոր Շղթայակիր Պատրիարքին կողմէ հաստատուած իւսկիւտարի հոգետուն-կրթարանը վերածել Ճեմարանի:

Հնդարձակ գետնի մը վրայ շինուեցաւ եռայարկ և հանգստաւէտ շէնք մը, որու ծախքին մեծ մասը՝ հազար հնչուն ոսկի գաճրեց Սէրվէրեան: Եւ որովհետեւ Երուսաղէմի վանքը այդ ատեն դեռ չունէր իրեն յատուկ դպրոցը, ու նոր շէնքն ալ Գաբրիէլ Նիկոմիութիւնի Պատ-

րիարքին հաճուլթեամբ կտորուցուած էր վանքին հողին վրայ, որոշուեցաւ Ճեմարան ԵրՈՒԱՂԵՄԻ կոչել նորաշէն վարժարանը. որու ծախուց իբր բաժին, Երուսաղէմի վանքը պիտի վճարէր տարեկան 120.000 դահեկան:

Ճեմարանին աշակերտութիւնը ընտրանքով առնուեցաւ Պոլսոյ դպրոցներէն 50 երիտասարդի չափ անթողակ, որոնց համար էր որ Երուսաղէմ պիտի վճարէր վերոյիշեալ գումարը: Բաց աստի, հարուստներսւ զաւակները պիտի կրնային Ճեմարանին հետեւիլ, 3.000 դրուշարեթոշակ վճարելով:

Ճեմարանին հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ 1839 ին տնօրէնութեամբ Մանուկէրեան Յակոբիկ աղախի: Ճեմարանին միւթէվէլլիին եղաւ Սէրվէրեան Յովհաննէս Ամիրան:

Բոլորի գուրգուրանքին առարկայ եղաւ Ճեմարանը, որուն մէջ կը դասախոսէին այդ ժամանակի ամենազիտուն չայ ուսուցիչները, Յովհաննէս Պրուսացի Տէրունց, Պուէտ Խաչատուր Միսաքեան, Խաչատուր Պարտիզպանեան, ևտյն:

Ճեմարանը փայլուն շրջան մը բոլորելէ վերջ, Խաչակիւղի ամիրաներուն հակառակութեան, և վարժի վարիչներուն միջև ծագած տարակարծութեան պատճառով Ճեմարանին գոյութիւնը վտանգուեցաւ:

Քսանի չափ Ամիրաներ իրենց թոշակաւոր սաները քաշեցին Ճեմարանէն, և յորդորեցին Երուսաղէմի Պատրիարքութեան Պոլսոյ փոխանորդ Յովհաննէս Եպ.ը՝ որ Դաղբեցնէ տարենպաստը որով, կրթարանը մեծ պարտքի տակ ինկաւ:

Յակոբոս Պատրիարք խորհրդակցարար 24 անձերէ բաղկացեալ հոգաբարձութիւն մը կազմեց, որուն պաշտօնը պիտի ըլլար ազգին կրթական և բարեսիրական հաստատութիւնները մատակարարել՝ ժողովուրդէն որոշ-

տուրք մը գանձելով ի նպաստ այդ հաստատութեանց:  
Հոգաբարձութեան 24 անդամներէն երկուքը Ամի-  
րայից դասէն իսկ մնացեալք արհեստապետներ էին:  
ոգաբարձութեան նախազահ կարգուեցաւ արհես-  
տապետ Հեթում Մերեկմզուլին:

Հազիւ քանի մը ամիս տեւեց համերաշխութիւնը:  
Ամիրաները նուաստութիւն համարեցին հասարակ մար-  
դոց հետ գործակցիւ, և հրաժարեցան: Եւ որովհետև տես-  
նուեցաւ թէ առանց ունեւոր ամիրաներու գործն մաս-  
նակցութեան անկարելի կըլլայ ու է գործ տեսնել, ար-  
հեստապետներն ալ հրաժարեցան:

Սոյն պայմաններուն մէջ ձեմարանը կառավարելլ  
խիստ անկարելի եղած ըլլալով, միւթէվէլլի Սէրվէրեան  
Յովհաննէս ամիրա ևս հրաժարեցաւ, որով, հազար նե-  
ղութիւնով գլուխ հանուած իւսկիւտարի յուսալից ձե-  
մարանը փակուեցաւ 1841 Հոկտ. 3 ին, ի մեծ վիշտ ու-  
սումնատենչ Հայ երիտասարդութեան:

Յակորոս Պատրիարք՝ որ կ'ուզէր ժողովրդավար ըս-  
կըսբունքներով կառավարել ազգը, տեսնելով որ անկա-  
րելի է առանց ամիրայից՝ լոկ էմնաֆներով գործ տես-  
նել՝ իր հրաժարականը տուաւ: ամիրաները իրենց կող-  
մնակից նախկին Պատրիարք Ստեփաննոս Սրբազննը՝  
ըէն գահ բարձրացուցին:

Ժողովուրդին մէջ խոր յուզում և դժողութիւն յա-  
ռաջ բերաւ ամիրայական այս կամայականութիւնները՝  
կը բողոքեն Սուլթանին մօտ: Բայց տեսնելով որ, կա-  
ռավարութիւնը կը պաշտպանէ ամիրաները, և կը ըսն-  
տարկէ անոնց դէմ եղողները, 1844 Օգոստոս 24 ին, բոլոր  
էմնաֆները իրենց խանութները գոցելով, մեծ բազմու-  
թեամբ և գինեպան խսկէնտէրի առաջնորդութեամբ դի-  
մեցին դէպի ՊԱՊԸ ԱԼԻ, և հոն կազմակերպեցին հակա-  
բողոքի ցոյց մը՝ կառավարութեան դէմ, պահանջելով որ

իրենց ընկերները անմիջապէս աղատ արձակուին:

Կառավ.ը, ժողովուրդը հանդարտեցնելու համար,  
բանտարկեաները ազատ արձակեց, բայց երեք շաբաթ  
յետոյ, այդ ցոյցին պարագլուխները ձերբակալելով աք-  
սորեց Փոքր Ասիա:

Աղաւնի Պատրիարք գահազուրկ եղաւ, ու անոր յա-  
ջորդեց Աստուածատուր Եպիսկոպոս կ. Պոլսեցի (1841-1844),  
որ մեծ գործունէութիւն մը չունեցաւ:

—o— | —o—

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

—ooo—ooo—

Թուրքօ-Եգիպտական պատերազմը և Ռուսիոյ  
միջամտութիւնը ի նպաստ թուրքիոյ.—

Սուլթան Մահմուտ Բ.ի բարենորոգման  
ջանքերը, ազատասէր ՌէՇԻՏ ՓԱՇԱ.  
Ոռ թան ԱՊՏ-ԻԻԼ-ՄէՃԻՏ կահակալւթիւնը  
ԽԱԹԹՈՒ Շէ ԻՖ — ԺԷՇՆ-ԹԻՒՐՓԵՐ

Մինչ Սուլթան Մահմուտ Դաշնակից պետութիւն-  
ներէն պարտուելով գրեթէ անոնց խնամակալութեան  
տակ կ'ինար, ու կը ճգնէր վարչային բարենորոգութիւ-  
նով երկիրը գրկել քայքայումէ, անդին, Եղիպտոսիփոխ-  
արքայ Մեհմէտ Ալի Փաշա, որ արդէն կը տիրէր Երկ-  
րին, պահանջեց նաև Սուլթոյ տիրապետութիւնը:

Մեհմէտ Ալի, իր հարստանարութեանց պատճառով  
Աքեա բերդաքաղաքը փախչող Եգիպտացի Փէլլահներուն

իրեն յանձնուելը պահանջեց, ինչ որ մերժուեցաւ:

Այս մերժումին վրայ, Մեհմէտ Ալի, իր իպրահիմ որդին բանակ մը զօրքով Աքեան գրաւելու ղրկեց: Քաղաքը կուռվ ինկաւ 18:2 Մայիս շնին: Իպրահիմիր արշաւը շարունակելով զրաւեց Գամասկոսը, Հալէպը Հոմսը: Սուլթանը զօր. Հիւսէլին Փաշայի հրամանատարութեամբ նոր բանակ մը ղրկեց իպրահիմի ղէմ: Երկու բանակները իրարու ղէմ ճակատեցան Պէյլանի առջեւ (Անտիոքի և Խոկէնտէրունի միջև), Թուրք զօրքը ջախ ջախուեցաւ, իպրահիմ փաշա Փոքր Ասիա մտաւ, և Գոնիայի առջեւ յաղթեց Ալպանիոյ ըմբոստութիւնը զլու պող Ռէշիտ Մեհմէտ Փաշայի, և զայն գերի բոնելով կ. Պոլսոյ վրայ սկսաւ քալել (1832 Դեկտ. 21):

Խոլամական մոլեռաւդութիւնը զրգուեցաւ: Բոլորն ալ «կեավ ուր Սուլթան» կը կոչէին Մահմուտը, և Աստուծոյ մատը կը տեսնէին այս պարտութիւններուն մէջ: Մեհմէտ Ալի պիտի գրաւէր Պոլիսը, և Խալիֆա-կայսր պիտի հոչակուէր բոլոր խոլամաց, որոնք իրեն հետ էին: Սուլթանը սարսափեցաւ և դիմեց Եւր. տէրութեանց:

Ռուսիա անմիջապէս օդնութեան հասաւ Սուլթանին: իր նաւատորմը ղրկեց Վոսփոր, և 15.000 զօրք ցամաք հանեց Վոսփորի Պէօյիւքտերէ ու Թարապիա գիւղերը՝ 1833 Ապրիլ 5 ին: Իպրահիմ Փաշա տեղի տուաւ, և Յունին 5 ին կնքուեցաւ Քէօթահիոյ դաշինքը, որով, Սուրիա և Աստանա Մեհմէտ Ալիի իշխանութեան տակ մտան: Ռուս զօրքը քաշուեցաւ Յուլիս 10 ին:

Սուլթանը, Ռուս զօրաց մեկնումէն առաջ, Յլո, 8ին Ռուսիոյ հետ գաղտնօրէն Հիւնքեար-Խոկելէսիի դաշնագիրը կնքած էր, որով «Ռուսիա յանձն կ'առնէր զինուորական ամէն օգնութիւն ընել Սուլթանին՝ Թուրքիոյ հողային ամբողջութիւնը պաշտպանելու համար, իսկ Բ. Դուռը օտար մարտանաւերու առջև պիտի փակէր Տարտանէլը»:

Այս ղէպքերէն վերջ, Սուլթան Մահմուտ Պոլիս հրաւիրեց Լոնտոնի իր դեռպան հոչակաւոր ՌԱՇԻԾ ՓՈՒՆԻ, որպէսզի, երկրին բոլոր ցեղերուն հաւասարութիւն պարզեող բարենորոգմանց ընդարձակ ծրագիր մը պատրաստէ: Սակայն, այս կարեոր գործը ի զլուի չի հանած՝ Սուլթան Մահմուտ մեռաւ, 1859 Յունիս 19 ին:

Օոմ. Գահը բարձրացաւ իր որդին ԱՊՃ-ԻԿԼ-ՄԷՃԻԾ, որ հազիւ 16 տարեկան էր: Բաշխտ Փաշայի խորհուրդով իր գահակալութենէն քիչ վերջ հրատարակեց նշանաւոր կիւճաննէի ԽԱԹԹԸԼ ՇԵՐԻՖԸԼ: Ի ներկայութեան կայսեր, աւագանիին, օտար դեսպանաց, իսլամ և քրիստոնեայ Օսմանցի ցեղերու ներկայացուցիչներուն, կ'արդացուեցու ԽաթթԸԼ ՇԵՐԻՖԸԼ, և թնդանօթի 101 հարուածներով ողջոյնուեցաւ երիտասարդ-Թուրքիոյ վերածնունդի այս առաջին յաղթանակը:

Այս ԽաթթԸԼ ՇԵՐԻՖԸԼ բոլոր Օսմանցիներուն, առանց կրօնի և ցեղի խտրութեան կը շնորհէր պատոյ ինչքի, և կեանքի ապահովութիւն, կը շնչէր աւատապետութիւնը, և այլն:

Սոյն հրովարտակին հիման վրայ պատրաստուեցան նոր օրէնքներ, որոնց ԹԱՆՁԻՄԱԹ անունը տրուեցաւ:

Թանզիմաթի օրէնքով բոլոր կուսակալութեանց մէջ պիտի կաղմուէին Գաւառական Ժողովներ՝ կուսականներու նախագահութեան տակ, մահմետական և քրիստոնեայ լսանն ներկայացուցիչներով: Քրիստոնեայք պիտի կրնային յաճախել պետական վարժարանները, և տիրանալ քաղաքային պաշտօններու:

Հայ ժողովուրդը՝ որ ծարաւի էր այս տեսակ ազատութեան մը, շուտով իր ընդունակութիւնները ի յայտ բերաւ, և կարճ ժամանակի մէջ բազմաթիւ արժանաւոր Հայեր գրաւեցին պետական կարեոր պաշտօններ. և Պէջու ՓԱՇԱՅՈՒԹԵԱՆ ասախճաններուն բարձրացան:

Առաջին Հայ լրագիրը ՈջԴԱՐԱՐ հրատարակուեցաւ  
1840 Նոյ: 20 ին, յաշատուր Ռականեանի ձեռքով:

Եւրոպական դաստիարակութեամբ եւ ազատական գաղափարներով տոգորուած բազմաթիւ թուրք երիտասարդներ թեւ ու թիկունք կանգնեցան Սուլթան Մէջիտի բարենորդ չական ճեռնարիներուն, եւ մեծապէս դիւրացուցին սկսուած գործին յաջողութիւնը: Այս երիտասարդութիւնը թուրքիոյ մէջ իիմնեց առաջին թուրք կուսակցութիւնը՝ Ֆէ՛՛՛Ն - Թիկիրֆ անուամբ, որուն գլխաւոր դեկափարն էր ՌԱՇԻՑ ՓԱՇԱՆ:

Հայրենիքին վերածնունդին համար հոգի տուող, և բարենորդումները այդ վերածնունդին քանալին - պայմանը նկատող նոր բազուկներ իետզիետէ զօրացուցին այս խմբակցութիւնը, եւ նոր գեկափար դէմքեր երեւցան, ինչպէս, բեժից, ՔՈՒԱՏ. ՃԷՄԱԼ. ԱԼԻ Փաշաները:

Բաշիտ Փաշա իր խմբակով աչտուրչ կը հսկէր հրատարակուած նոր օրէնքներու տ առաջիօրէն գործադրութեան վրայ, եւ ամէն ճիգ կը թափէր կառավարութիւնը այդ նոր եզանակաւ տանելու համար: Բաշիտ Փաշա գովելի ու կրովի կերպով իետզապնդեց իշխանութեանց գեղջու մնանք, պաշտօնատարներու կամայական արարքները, եւ չվարանն իարուածելու զանոնք, նոյն իսկ ամենամեծերն ինչպէս մեծ եպարգոս խուսրէվ Փաշան, որ շնորհազորդի եղաւ իբրեւ հարստահարիչ:

Շուտով սակայն այս նոր օրինաց դէմ իսլամ տարրին դժգոհութիւնը ծայր տուաւ: Գրգռութեան դէպքեր պատահեցան կեսարիոյ, իզմիրի, Փոնիայի, էտիրնէլի, և այլ վալրերու մէջ: Իսլամը չէր կրնար ընդունիլոր ըայ արիստոնեան իրեն հաւտսար ըլլայ, կը թութիւնը աշխարհ հականանայ: Սուլթանը ստիպուեցաւ երկրորդ Խաթթը Շէրիֆով մը ճշգել առաջնոյն կարգ մը կէտերը, լուսարանելու համար մոլեռանդները: Բացուեցան բժշկական զինուրական և քաղաքային համալսարաններ:

## ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՒԴԻ

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

Արքայագայել ընդունելութիւն ամէն կողմ  
Աշտարակեցիի գործունէութիւնը, — Ռու-  
սահայոց և Թրքահայոց վիճակը-  
Մատթէոս Պատրիարք Զուխաճեան  
— (օօ—օօ) —

Բոլոր Հայութիւնը, մէջը ըլլալով նաև Աշտարակեցիի հակառակորդները, զզուանքով տեսած էին կարբեցիի երեսէն Ազգին և Մայրենի Եկեղեցւոյ ներքին վաղեմի անկախութեան վտանգուիլը: Կարբեցիի մահէն յետոյ, Գերագոյն Խորհուրդը (Սինոդ) ըստ Պօլոժէնիոյ տրամադրութեանց, հրաւէր ուղղեց բոլոր Ազգին, որ տարի մը կերծ, իր եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչները զրկէ նոր Հայրապետի ընտրութիւնը կատարելու համար:

Ռուսահայ, Թրքահայ, Պարսկահայ և Հնդկահայ 26 պատգամաւորներ 1845 Ապրիլ 17ին Ս. էջմիածնայ մէջ գումարուելով, միաձայնութեամբ Ա. թեկնածու ընտրեցին Աշտարակեցին, իսկ 17 ձայնով Բ. թեկնածու ընտրեցին երուսաղէմի Պատրիարք Զաքարիա Արք. Կոփեցին:

Նիքոլա Ա. Զարը, 1843 Օգոստոս 10 թուակիր իր հրովարտակով վաւերացուց Ներսէսի ընտրութիւնը, և հրաւիրեց զայն թեթերսպուրկ՝ յայտնելու իր հաւատարմական զգացումները:

Ազգը մէծ ցնծութեան մէջ էր, վասնզի, Հայ. Առաքելական Ս. Եկեղեցին կ'ունենար իր արժանաւոր Գերապոյն պետը, և Հայ Ազգը՝ իր Վեհափառ և ազգաւէր մէծ Հայրապետը, նման ՄԵԾԻՆ ՆԵՐՍԵՍԻ:

Յաջորդ տարի Յունիս Թին Աշտարակեցի Պետքարապիայի ճամբար ելաւ դէպի թէթերսպուրկ, ճամբուրն թագքին արժանանալով Ռուս, Հայ, և Վրացի ժողովուրդ ներուն խանութափառ ցոյցերուն, և պետական բարձր պաշտօնատարներու մեծ պատիւներուն:

Նիքոլա Զարը փառաւոր ընդունելութիւն մը ըրաւ վեհ. կաթողիկոսին, և զայն հիւրընկալեց յատկապէս յարդարուած շքեղ պալատին մէջ:

Ներսէս կաթողիկոս և Նիքոլա կայսրը քանիցս տեսակցութիւններ ունեցան: Հայոց Հայրապետիր ազգին անվերապահ հաւատարմութիւնը և մեծ աշակցութիւնը մատնանշեց՝ Ռուսիոյ փառքին և մեծութեան համար և աւելցուց.

— Վեհ. Տէր, ես ա'յն Ներսէսն եմ, որ Պասկեւիչ գօրապետին ինդրանքին ու աղաջանքին, եւ մասնաւանդ ա'յն դաշնագիր-հրովարտակին վրայ, որուն տակ ջերդ Վեհ. Եան ստորագրութիւնը կը փայլի, եւ որով, իմ Ազգիս ու Հայրենիքիս փրկութիւնը, ազատութիւնը կ'ապահովէիք, ջեր Կայսերական հոգանաւորութեան տակ. Ես յորդորեցի ժողովուրդս եւ իմ հայրենակիցներս որ օգնեն եւ աշակցին ջեֆ մղուող կոիւներուն մէջ, ու ես անձամբ եւս մասնակցեցայ այեղ ու սաստիկ կրիւներուն, իբրեւ քաջ գօրապետ, եւ չխնայեցի անձիս ու Ազիս, եւ Ազգիս քսան հազար քաջ ու հայրենասէր զաւակներուն կորստեամբ գլուխ հառեցի յաղթութիւնը եւ Պարսից լուծէն փրկեցի Երեւանը, Նախիջևանը, եւ մինչեւ Խոտրպատական Հայոց Աշխարհը, որուն այժմ տէր էք դուք եւ հրամայող: Այս յետկուը եւ ստորագրութիւնը պահած եմ, Վեհ. Տէր, իբրեւ սրբազն մասունք մը. Եւ չե'մ գիտեր թէ ջերդ Վեհափառութիւնը ե՞րբ պիտի կատարէ իր խոստումը . . . :

**Զարը ժպտեցաւ և խանդաղատանքով պատասխանեց**

— Ես հաստատ եմ խոստումիս վրայ եւ կը յուսամ կատարի զայն զոր ստորագրեցի յանսւն Աստուծոյ, եւ չի մնալ պար-

տական Հայ Ազգին, եւ այնչափ թափուած արիւնին. որ իսուցաւ կայսրութեանս փառքին եւ մեծութեան համար: Բայց, Եւր: այժմու քաղաքականութիւնը դէմ կ'եւլ այս կարգադրութեան. ու չի յաջողիք բնաւ, եւ ջեր Ազգը ամէն տեղ ուր որ ցրուած է, վնաս կը կրէ: Եթէ Աստուծոյ ողորմութիւնով Արեւելեան ինդիրը գլուխ հանեմ եւ ըոլոր քրիստոնեաները ազատեմ, ջեր ինդիրն ալ դիւրաւ կը յաջողի. որով պարտ է Զեղ համբերել մինչէ որ Աստուծութիւնը իսկն իսկ անօրինէ և ժամանակը յաջողցնէ:



ՀՕՅՐԵՆԱՍԷՐԻՆ Ն. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ  
Վեհափառ Հայրապետն Ամենայն Հայոց

Աշտարակեցի յաջողած էր Հայկական ինպույն վարագոյրը բանալ և կրկին հաւաստիքներ ստանալ կայսրէն: Արդէն, Հայրապետին բոլոր մտածումն ու գործունէութիւնը իր ժողովուրդին ազատութեան վրայ կեդլուացած էր: Անոր աչքին երբէք արժէք չունէին իրեն ընծայուած պատիւներն ու փառաւոր ընդունելութիւնները:

Յաջորդօր, Վեհ. Հայրապետը կայսերական պալատ գնաց, փոխադարձ այցելութեան: Կայսրը, պիսաբաց ընդառաջ երթալով կաթ. ը ընդունեց. և երկուքը միասին



Երբ այս բարեկարգութիւնները ի գլուխ համեց, և Մայր Աթոռոյ մէջ օրինաւորութիւն տիրեց, այլեւս տենը եկած էր խորհելու և գործելու Ազգին կենսական և ապագայ շահերուն մասին:

Ամենէն աւելի իր սրտին խոցելի էր «Պօլօմէնիա»ն, զոր անխոհեմաբար ընդունած էր կարբեցի: Կը տեսնէր այժմ, թէ որքա՛ն իրաւացի էին իր բողոքները, զորս Քիշնէվէն ըրած էր, վասնզի, այդ օրէնքի արամաղրութեանց ուժով խոչնդոտ կը հանուէր իր ազատ գործունէութեան առջեւ:

Այդ պատճառաւ դիմեց իր բարեկամ Վորոնցով Իշխանին, և բացէ ի բաց մերժեց այդ օրէնքին կիրարկումը՝ իբրեւ ՎՆՍՍՍԿԱՐ ԵՒ ԱՆԼՆԴՈՒՆԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱԾՆ ՍՈՒԻՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ:

Եւ ի լուր բոլոր կայսրութեան Ռուսաց՝ յայտարարեց իր ԱՅՍ ՄԵՐԺՈՒՄԸ:

Իր նպատակին համելու, և չայ Ազգին ազատման կայսեր տուած խոստումը հետապնդել կարենալու համար իր բնակութիւնը Թիֆլիս փոխազրեց, ուր կը մնար ատրւոյն ինը ամիսը, որպէսզի, կովկասի Փոխարքային և ազդեցիկ մեծամեծաց հետ մի՛շտ շփում ունենալով կարենայ խորհրդակցիլ:

Ազգասէր և չայրենասէր չայրապետին ջանքերը ո՛չ մէկ արդիւնք ունեցան: Ո՛չ Պօլօմէնիայի ազգավասարամարդութիւնները կրցաւ ջնջել տալ, և ո՛չ ալ կարողացաւ կայսեր խոստումը իրագործել տալ: Ներսէս կաթողիկոս մերժելով Պօլօմէնիան՝ իր ձեռքին մէջ կեդ կաթողիկոս մարդութիւնները, ու իր ուրոնացուց Ազգին՝ եկեղ. վարչական գործերը, ու իր ուրինացաւ թշնամիներ, որոնք կողմնակից էին ըիներուն ունեցաւ թշնամիներ, որոնք կողմնակից էին Պօլօմէնիոյ, և կայսեր բողոքեցին: Կայսրը իզուր հրամայեց ներսէսի շարժիլ բատ Պօլօմէնիոյ: Ներսէս մերժեց:

Այս ընդդիմութիւնը և բողոքը իրենց բարերար աղեցութիւնն ունեցան: Նոյն միջոցին Ռուս-Թուրք-Դ-աշնակից պատերազմը տեղի կ'ունենար: Նիքոլա Կայսրը մեռաւ, անոր յաջորդեց Ալեքսանդր Բ, Զարը՝ որ Կովկասի Փոխարքայ նշանակեց իշխան ԲԱՐԵԱՏԻՆ ՍՔԻՆ, անոր փոխանորդ տալով իշխան Վ. Օ. ԲԵՀԲՈՒԹԵԱՆՑը: Նօր Փոխարքան, Կայսեր մասնաւոր բարեւներուն հետ Աշտարակեցի հաղորդեց նաև առ Հայ Ազգն, և անոր այետ առ Վ. է: Կաթողիկոսն ունեցած իր համակրութիւնը:

Ասկէ քաջալերուած, ազգասէր չայրապետը կրկին սկսաւ Թիֆլիսի մէջ իր բանակցութիւններուն, բայց, գաղտնի և յայտնի խոչնդոտներ մի՛շտ ի զօրու եղան և վատեցին իր գործունէութիւնը: Իրեն զօրավիգ եղող բարձրաստիճան պաշտօնատարները շնորհագուրկ եղած ըլլալով, իր թշնամիները զօրացած՝ միջոցներ չինայեցին մեծանուն չայրապետին քաղաքական պահանջքէն ազատելու համար: Գուցէ ա՛յդ է պատճառը՝ որ ներսէս սրտին ցաւէն և զգացած դառնութիւնն, 1857 Փար. 15 ի գիշերը խորհրդաւոր կերպով յանկարծամահ կ'ըլլայ երբ զբիչ ի ձեռին կը ճգնէր խմբագրել պատասխան մը և պահանջք մը . . . :

Այս խորհրդաւոր մահը երկար ատեն առիթ տուաւ ժողովրդային ըսի-ըսաւներու, և ծանր ամբաստանիչ լուրերու, իրրեւ թէ, Վեհ. Կաթ.ը թունաւորելով մահացուցուած է: Զօրաւոր էր այն կարծիքը, թէ Սարգիս Արք. Զալալեան թունաւորած է չայրապետը — ըստ վերին հրամանի, և անոր կուրծքին վրայէն գողցած ա՛յն դաշնագիրը՝ որով նիքոլա Կայսրը իր իսկ ստորագրութեամբ Արարատեան չայաստանի անկախութիւն կը խոստանար, և զայն յանձնած է առ որ անկ է, ստանալով համապատասխան հարստութիւն. . . : Իսկ այլք կրսեն թէ կառավարական մարդիկ թունաւորածն զայն, իրեն մարմ-

նին հետ թաղելու համար չայկական ծանօթ հարցը:  
Ներսէս Աշտարակեցի չայրապետ այսպէս վախճա-  
նեցաւ ջե տարեկան խոր ծերութեան մէջ: Փետր. 14ի  
առաւօտուն թիֆլիսի բոլոր եկեղեցիներու զանգակները  
գումացին վեհ. ին անակնկալ մահը: Ամբողջ թիֆլիս  
ոտքի ելաւ: Ամէն դասակարգէ ժողովուրդ ներկայ եղան  
թաղման արարողութեան, որուն նախագահեց Սարգիս  
Արք. Զալալեան: Մարմինը շքեղ դագաղի մը մէջ ամ-  
րափակելով վեց եպիսկոպոսներով Ս. Էջմիածին տար-  
ուեցաւ, ուր հանգստացուցին վեհափառին մարմինը,  
կաթողիկէ եկեղեցւոյ մեծ դրան մօտ:

Ամբողջ չայրութիւնը մեծ սուգ բռնեց ազգամէր և  
հայրենասէր Աշտարակեցիի մահուան վրայ: Այս մեծ  
մարդը, որ գիշեր ցորեկ տքնեցաւ չայկազն ժողովուրդի  
կործանուած նախկին փառքը վերականգնելու, իրաւամբ  
արժանացաւ ՊԱՇՊՈՒՆ, ՀԱՅԻԿԵՆԻՑ տիտղոսին:

Չայկազն ժողովուրդը, յաւիտեան անմոռանալի այս  
մեծ չայրենասէր չայրապետին յիշատակը մի՛ շտ վառ  
պիտի պահէ, իբրև անխոնջ ոահվիրայ մը՝ չայկական  
ազատագրական մեծ պայքարին:


\* \* \*

Երբ Ս. Աթոռը կորսնցուց իր արժանաւոր պետը,  
կայսեր ու քաջով Սարգիս Զալալեան Արք. Վրաստա-  
նի և իմէրէթի, Մատթէոս Արք. Աժտէրիսանի, Գաբրիէլ  
Վրդ, Այվազովսքի Նոր-Նախիջեւանի, Պեսարապիոյ և  
Խրիմի Առաջնորդ նշանակուեցան: Այս միջամտութիւնը  
բոլորովին հակառակ էր չայ. Եկեղեցւոյ կարգ-կանոնին:  
Ժողովուրդը զզուանքով տեսաւ որ վերոյիշեալ կրօնական-  
ները սիրով ընդունեցին այդ պաշտօնները, փոխանակ  
ապօրինի այս կարգադրութեան դէմբողոքելով մերժելու:

Ռուսահայութիւնը հետզհետէ ուոճացաւ քանակով  
և որակով: Կովկասը եղաւ չայոց առեւտուրի և մտաւոր  
զարգացման կեղրոն, շնորհիւ տիրող աղատո թեան:

Կարճ շրջանի մը մէջ հիմուեցան զանազան ուսում-  
նարաններ, որոնց ամենէն նշանաւորներն են Մոսկուայի  
ԼԱԶԱՐԵԱՆ ձեՄԱՐԱՆը և թիֆլիսի ՆԵՐՍԵՍԵԱՆ ՎԱՐ-  
ՓԱՐԱՆԸՆԸ:

Բարեհամբաւ Լազարեան Տոհմը



ՂԱԶԱՐ Կոմս ՅՈՎՀԱՆՆԵՍ  
Լազարեան

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Լազարեան

ՂԱԶԱՐ

ԼԱԶԱՐԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ մեծահամբաւ եղած է  
Ռուսահայոց մէջ: Լազարեանց նախնիքը Հին-Զուղայեցի  
ըլլալով Շահ Ապահասի օրով Սպահան գաղթած և հոն

հասած են արքունի փողերանոցի տեսչի, գանձային նախարարի և այլ բարձր պաշտօններու: Նատիր Շահի մահմէն յետոյ, Պարսկաստանի ներքին խոռվութեանց պատճառաւ շատ մը Հայերու նման, Ղազար Լազարեան և իր ընտանիքով և բոլոր հարստութեամբ անցած է Ռուսիա, և Մոսկուայի մօտ հիմնած մետաքսի գործարան մը ուղու արտադրութիւնները արժանանալով կայսրունի կատարինէի գնահատման, Ղազարեան տոհմին շնորհած է ազնուականութեան տիտղոս:

Ղազարեանները կանգնեցին Մոսկուայի և Բեթերսպուրկի Հայոց հոյակապ Եկեղեցինները: Իսկ Յովակիմ Ղազարեան, 1813 ին Մոսկուայի Ճեմարանը հիմնեց, որ մէ դուրս եկան նշանաւոր ուսուցիչներ, լեզուաբաններ, և ամէն կարգի ուսումնական համբաւաւոր անձեր:

Իսկ Ներսէսեան Վարժարանը կովկասահայոց կրթական մեծագոյն վառարանը եղաւ, որու մասին արդէն մեր նախորդ Էջերուն մէջ խօսեցանք:

\* \* \* Կովկասահայ առաջին լրագիրը՝ ԿՈՎԱԼՈ, Թիֆլիսի մէջ լոյս տեսաւ Յկը. Կարինեանի և Մ. Պատկանեանի կողմէ 1846 Յունվար 1ին, Ռուս և Հայերէն լեզուներով:


\* \* \* Թրքահայ առաջին կրթարանը Պոլսոյ մէջ հիմնով եղաւ Շնորհք Մկրտիչ Ամիրա, որ 1790 ին, Գում Գարու Ֆլըճի փողոցին մէջ հաստատեց վարժարան մը, որուն արդինքէն քաջալերուելով հետզհետէ բացաւ Սամաթիոյ Պալաթի, Իւսկիւտարի Օրթագիւղի և Գուրու-Զէշմէի պատուացները: Ասկէ վերջ է որ զանազան Ամիրա գային դպրոցները: Ասկէ վերջ է որ զանազան Ամիրա փոյթ տարած են կրթական և կրօնական գործերու:

Յիշատակութեան արժանի են հետեւեալ Ամիրայք, կարապետ Պալեան և Յովին. Աէրպէրեան, որոնք Իւսկիւտարի Ճեմարանը բացին և հոգացին մասամբ անոր մատակարարութեան ծախքը: Փիշմիշեան Միքայէլ, որ իւղած է Ս. Փ. Հիւանդանոցին առաջին միթէվէլին:

կանեան Յարութիւն, որ Պատրիարքարանի եկամտից կերատեռուչ էր, և գլուխ կարգուած էր 1842 Մարտ 26ին կազմուած Անատոլուի և Ռումէլիի Սեղանաւորական Ընկերակցութեան: Միսաք Միսաքեան, որ շինած է Պօյաճրգիւղի Ս. Երից Մանկանց, և Սթէնիայի Ս. Յովիկ կարապետ եկեղեցինիրը, օգնածէ Հիւանդանոցի շինման:



ՇՆՈՐՀՔ ՄԿՐՏԻՉ ԱՄԻՐԱ.



ԿԱՐԱՊԵՏ ՊԱԼԵԱՆ ԱՄԻՐԱ.

Աստուածատուր Պատրիարքի օրով ազգ գործերու շուրջ Ամիրայից և նոր սերունդին միջեւ պայքարը շարունակուեցաւ: Կառավարութիւնը միջամտեց, և 1841 Դեկտ. 12ի Կայս. Փէրմանով. Ջ՛ն հոգինոց նոր Ազգային Վարչութիւն մը հաստատուեցաւ, միայն արհեստապետներէ բաղկացեալ: Սակայն այս ընտրութեամբ այ ազգին գործերը չը կանոնաւորուեցան, անվարչագիտութեան և նկոթական անձկութեան պատճառաւ, որով, 1842 Սեպ. 25 ին այս Վարչութիւնն ալ հրաժարեցաւ:

Վերջապէս, բացայայտորէն կը տեսնուէր թէ անկարուի էր մէկ կամ միւս կողմին առանձին գործունէութիւնը: Անհրաժեշտ էր վերջ տալ անմիաբանութեան, և ժամանակի պահանջքին համաձայն շարժելով, վարչական նոր սիսթէմով մը օժտել Ազգը և անոր գործօն օրկանները:

Ազգային այս խառնակ կացութեան մէջ էր որ Պատրիարքական գահ բարձրացաւ իզմիրի Առաջնորդ ՄԱՏԹԵՈՍ Ա.Ր.Ք. ԶՈՒՄԱԾԵԱՆ կ. ՊՈԼՍԵՅԻ ( 844 Յլ. 1 ):

Նորընտիր Պատրիարքը յաջողեցաւ հաշտեցնել երկու հակառակորդ կողմերը, քանի որ ամենքն ալ այլեւս համոզուած էին թէ առանց մէկը միւսին աջակցութեան անկարելի էր ազգային գործերը վարել:

Փոխադարձ զիջումներով 50 անդամէ բաղկացեալ Ազգային ժողով մը կազմուեցաւ, 16ը Ամիրաներէ և 14 հոգին արհեստապետներէ առնուելով: Իրաւունքի հաւասարութեան հիմանվրայ իշխանութիւնը բաժնուեցաւ իրենց մէջ, որով վերջ տրուեցան ամուլ պայքարներուն:

Այս համերաշխութիւնը մեծ դեր կատարեց ամբողջ թրքահայոց ներքին կեանքին մէջ: Մանաւանդ Պոլսոյ չայերը ոգեւորուեցտն, որովհետեւ, Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցող բարենորոգչական շարժումներէն ծնունդ առնող ազգային բարօրութեան և յառաջդիմութեան նոր դարավլուխի մը բացումը կը նշմարուէր:

Երիտասարդութիւնը խանդակառ օրեր կ'ապրէր: Ազգին կրթական - եկեղեցական գործերը լաւ ճամբու մէջ մտան: Բացուեցան վարժարաններ և ընթերցարաններ: Հարուստ և աղքատ բոլորը կ'օժանդակէին ազգին պէտքիրուն: Հիմնուեցաւ լրագրութիւն, և Մատթէոս պատրիարքն ալ հիմնեց ՎԻՃՈՈՏԱՆ անուն թերթ մը, իբրեւ պաշտօնաթերթ:

Ազգ, ժողովի առաջին հանդիսաւոր նիստը բացուեցաւ 1844 Սեպտմ. 14 ին, նախագահութեամբ Մատթէոս Պատրիարքին: Այս ժողովին մէջ որոշուեցաւ որ Ա. Է. միամնայ նուիրակի ի Պոլիս առաջումը դադրի, և նորին Ա. Օծութիւն Ն. Աշտարակեցի կաթ.ին անունը լիշտակուի թրքահայ բոլոր եկեղեցիներուն մէջ: Մատթէոս Պատրիարք այս կարեւոր պարագաները

իր իսկ ձեռքով տեղեկագրեց Վեհափառ Հայրապետին, որ մասնաւոր կոնդակով մը իր գոհունակութիւնը յայտնեց: Այսպէս վերահաստատուեցան յարաբերութիւնները Մայր Աթոռոյ և Պոլսոյ Պատրիարքութեան միջեւ, որ քառորդ դարէ ի վեր խզուած էր: Վեհ. Կաթ. ը ճանչցաւ Մատթէոս Պատրիարքի ընտրութիւնը, ըստ ընկալեալ պայմանի, որ Պոլսոյ Պատրիարքական Աթոռը բազմողը պէտք էր ա'նպատճառ Ա. Էջմիածնայ մէջ ստացած ըլլար իր եղիսկոպոսական օծումը: Պատր, ը ճանչցուեցաւ իբր փոխանորդ Կաթողիկոսին, որ պիտի հաւաքէր Մայր Աթոռոյ համար տրուած նուէրները, և Ա. Միւսոնը պիտի բաժնէր եկեղեցիները:

Պատրիարքին ջանքերով վերաբացուեցաւ իւսկիւտարի ձեմարանը ( 1846 ), Տէրոյենցի ուսումնապետութեամբ: Երկուքուկէս տարի շարունակուեցաւ այս դպդրոցը, ուրկէ դուրս եկաւ կրթեալ երիտասարդութիւնն մը, որ մեծ դեր ունեցաւ ազգին բարձրացման գործին մէջ:

Ճեմարանի առաջին շրջանի աշակերտներէն են, Ստեփան փոշօ Արսլան, Ցովի. Հիւնքեարաբէյնտեան. Կար, Իւթիւնեան:

Երկրորդ շրջանի աշակերտներէն  
Ցովի. Նուրեան, Մկրտիչ Պէջիկեալեան, Մարտիրոս Թոգաթեան, Բարսեղ Հիւնքեարաբէյնտեան, Պ. Ֆնտղեան:  
Իսկ նոյն շրջանին Եւբոպա ուսած էին,

Մկր, Միք. եւ Գրիգոր Ազմանոն, Տօթթ. Մերվիչէն, Գրիգոր Օտեան, Տօթթ. Ն. Ռուսինետն, Նիկոլոս Զօրայեան, Յըթն' եւ Մկրտիչ Մոմեան, Աթոռն Տիւրբի, Բարունակ Պէյ. Պ. Նիկողոսին, Մինասեան, Գէորգ Մթիմարանեան, Եւլի:

Աստուածատուրի թոյլ ընթացքէն ոգտուելով Ամերիկացի միսիոնարներ մեծ յաջողութեամբ կը գործէին: Մատթէոս Պատրիարք խիստ միջոցներ ձեռք առաւ անոնց դէմ: Հայ. Եկեղեցոյ հաւատալիքները պարունակող

պրքոյկ մը, և իր գումարած Եկեղ. Ժողովին որոշմամբ ալ երկու կոնդակ հրատարակեց (18. 6 Յնկ. 12), որոնց մով կը բանադրէր բողոքականութիւնը ընդունող բոլոր Հայերը, և կարգադուրկ կը հոչակէր Նիկոմիդիոյ Տէր Վրթանէս քահանան որուն մօրուքը Աղաւնի Սրբազնին հրամանաւ կ'ածիլուի հոծ բազմութեան մը ներկայութեան։ Հալածանքը կը տարածուի Խզմիտի Ատաբազարի, Խզմիրի, Կարնոյ և Տրապիզոնի մէջ, որու շնորհիւ բազմաթիւ Հայեր Մայրենի Եկեղեցւայ ծոցը կը դառնան։ Մատթէոս Պատրիարք կ'աշխատի փակել տալ Պէպէքի Ամերիկեան վարժարանը, բայց չի յաջողիր։

Այս խստութիւնները պատճառ եղան որ Անգլիոյ գեւալան Սըր Սթրէթֆօրտ Քէնինկ, Ամերիկեան դեսպան Մ. Քէր, և Բրուսիոյ գեւալան Հէր Քօֆ բողոքեն Կայսեր մօտ, ապարդիւն կերպով, որովհետեւ Հայոց Պատրիարքը շատ սիրելի էր Ապտ-Իւլ-Մէճիտ Կայսեր, և բոլոր մեծամեծները կ'ակնածէին անկէ, իր իմաստութեան, կամքի ուժին, և ժողովրդական Պատրիարք մը ըլլալուն համ ար։

Բայց հակառակ այս հալածանքին, Կ. Պոլոյ մէջ 40 Հայ բողոքականներ միանալով կազմեցին առաջին Հայ Աւետարանական Եկեղեցին, և իրենց հովիւ ընտրեցին պատուելի Աբիսողոմ Իւթիւնեանը (1846 Յունիս)։

Օտար միջամտութեանց շնորհիւ, 1850 Նոյ. ին հրատարակուած կայս. Ֆէրմանով Հայ բողոքականները կազմեցին ուրոյն հասարակութիւն մը։

Ք. ՏԱԿԱՆ, ԱՊՈՑԱՄԲՈՒԹԻՒՆԻ. Ը.՝ Թրքահայաստանի Երեք մեծ նահանգներուն՝ Վասպուրականի, Բաղէշի և Տիգրանակերտի մէջ Օսմ. կառավ. եան ազդեցութիւնը Տիգրանակերտի մէջ Օսմ. կառավ. եան ազդեցութիւնը տկար եղած է միշտ, և իրական տիրողները եղած են Քիւրտ ցեղապետներ, պէկեր, շէյխեր և տերէպէյխներ, որոնք յիշեալ նահանգներուս զանազան գաւառներուն մէջ տեսակ մը կէս - անկախ իշխանութիւններ հաստատած

էին, և ունէին իրենց բերդերը, թաքստոցները, զօրքը և ծիաւոր պատերազմիկները, որոնց մէջ Հայեր ալ կային։ Այս բոնաւորներէն երկու կարեւոր դէմքեր, ՊէՏՐԻՍ. Պէկ և ԽՍՆ ՄԱՀՄՈՒՏ, որոնք կ'իշխէին Վասպուրականի հարաւարեւելան կողմի, ՊՈՀՏԱՆ և ՃՐԶԻՐէ գաւառներուն, ծրագրեցին զրաւել Վասպ. ի նահանգը, Տարօնն ու Պիթլիսը, և կազմել անկախ Քիւրտիստան մը։

ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿԵՑՈՒԹԻՒՆ.՝ Պէտրիսան Պէկի այս ծրագիրը չէր կրնար իրականանալ առանց տեղացի Հայերու գործօն մասնակցութեան։ Ուստի, Պէտրիսան Պէկ Վանի Հայ երեւելիներուն կ'առաջարկէ օգնել իրեն ամէն կերպով, խոստանալով անոնց՝ Անկախ Քիւրտիստանի մը կազմութեան պարագային, անոր տնտեսական բաժնմատակարարութիւնը Հայոց յանձնել։ Բայց կ'երեւի թէ Վանի Հայերը վստահութիւն չունէին Պէտրիսանի վրայ և կամ չուզեցին Օսմ. պետութեան դէմ ապստամբական վիրքի մէջ գտնուիլ, քանի որ մեծագոյն մասամբ անտարբեր գտնուեցան այդ հրաւերին։

Սակայն, Վանեցի ազգեցիկ երկու Հայեր, Ստեփան Մանօղեան և Մահտեսի Յովհաննէս Զալկատրեան, քանիմը համախոններով գաղտնի միացան Պէտրիսանի, յաի ջողելով իրենց հետ ոտքի հանել նաև Շատախ և Մոկս գաւառներու լեռնաբնակ քաջարի բազմաթիւ Հայերը։

Քրտական այս ապստամբութիւնը պայթեցաւ 1847ի ամրան։ Քիւրտերու դէպի Վ. ան յառաջխաղացման ընթացքին բազմաթիւ Հայ գիւղեր նաւերակ եղան, բնակիները սպաննուեցան։ Զտրհուանք տիրեց ամէն կողմ։

Ապստամբութեան և ջարդերու լուրը երբ Պոլիս հասաւ, Մատթէոս Պատրիարք ազդու բողոքներ ըրաւ Բ. Դրան, և ապա կայսեր մօտ, և դարման խնդրեց։

Տէրութիւնը շօւարած էր, որովհետեւ ո՛չ կարնոյ, և ո՛չ ալ Վանի մէջ կանոնաւոր բանակ ունէր։

Պատրիարքը կրկին Սուլթանին դիմելով կը յայտնէ  
թէ Վասպուրականի Հայութիւնը չկրնալով տոկալ Քիւրտ  
տերէպէյիներու անլուր բռնութեանց, ստիպուած է թո-  
ղու տունն ու տեղը և գտղթել Ռուսիա, քանի որ Օսմ.  
կառվ. ը չուզեր, կամ անզօր կը գտնուի քիւրտերու դէմ  
կառվ. ը չուզեր, կամ անզօր կը գտնուի քիւրտերու դէմ  
պաշտպանելու զիրէնք: Սուլթանին հրամանաւ Բ, Իլ-  
րան մէջ գումարուեցաւ խորհրդակցական ժողով մը, ուր  
որոշուեցաւ ՕՍՄՍՆ ՓԱՇԱՅԻ հրամանին տակ բանակ  
մը զրկել Վան զսպելու համար ապստամբութիւնը, արտօ-  
նելով որ տեղացի Հայերէն ալ զինուոր առնէ:

Օսման Փաշա 25.000 արար զօրքով Վան համնելով  
գործի սկսաւ: Մատթէոս Պատրիարք մասնաւոր կոնդակ-  
ներ զրկեց Վանայ, Կարսոյ, Բաղէշի, Բալուի, Տարօնոյ  
և Տիգրանակերտի Առաջնորդութեանց, և հաղորդելով Օս-  
ման Փաշայի մեկնումը, և յորդորելով որ ամէն տեսակ  
նիթական ու բարոյական օգնութիւն ընեն, նոյն իսկ  
զինուորագրուին Օսմ. բանակին, ապստամբութիւնը զրո-  
պելու համար:

Զին. իշխանութեան հրամանով և Առաջնորդ Գար-  
քիէլ Արքեպ. Շիրօյեանի հրահանգով Վասպուրականի  
Հայերը զինուրագրուելով ստացան զէնք, ու նախ բա-  
նակին միացած պաշարեցին ապստամբակետ Պէտրիսան  
Պէկը, որ ճարահատ իր գերդաստանով անձնատուր եղաւ  
Օսման Փաշային, որմէ յետոյ առանձին զօրախումբով  
իսան Մահմուտի վրայ գացին, և երկար մարտնջումներէ  
վերջ, ողջ ողջ գերի բռնելով զայն, բերին յանձնեցին  
Օսման Փաշային: Երկու Քիւրտ պետերն ալ շղթայուած  
զրկուեցան Պոլիս դատուելու: Պէտրիսան աքսորուեցաւ  
կրետէ, իսկ Խան Մահմուտ՝ Սիլիսթրէ բերդը:

Այս ընդհարումներուն մէջ սպաննուեցան բազմաթիւ  
ապստամբ Քիւրտեր, իսկ շատեր փախան իրան և Ռուսիա:  
Այսպէս զսինուեցաւ Քրտական ապստամբութիւնը:

Այս յաղթութեան լուրը երբ մայրաքաղաք հասաւ  
Մատթէոս Պատրիարք հրամայեց որ Պոլսոյ և գաւառի-  
բոլոր եկեղեցիներուն մէջ գոհաբանական աղօթք կա,  
տարուի: Կայսրը, ներքինապետ Թաֆուր աղայի միջո-  
ցաւ իր շնորհակալութիւնն ու գոհունակութիւնը յայտ-  
նեց Մատթէոս Սրբաղանին և Հայ ժողովուրդին:

1848 ի գարնան, Ուլթան Ապտիւլ Մէճիտի մայրը  
ծանրորէն հիւանդացաւ, և զայն խնամող րժիշկները ան-  
յոյս էին անոր ապրելուն վրայ: Եւ որովհետեւ Մատթէ-  
ոս Պատրիարք մէծ համբաւ շահած էր իբրեւ սրբակեաց  
և բարեպաշտ հոգեւորական. Վալիտէ Սուլթան իր զաւ.  
կէն կը ինդրէ որ Հայոց Պատրիարքը պալատ հրաւիրէ  
իր վրայ Աւետարան և աղօթք կարդալու: Կայսրը, մեծ  
ներքինապետ Թաֆուր աղայի միջոցաւ իր մօր Փափա-  
քը գրաւորապէս հասկցուց Պատրիարք Հօր: Մատթէոս  
Պատրիարք հրամայեց ուժ օր «Տէր ողորմեա» ըսել եկե-  
ղեցիներու մէջ: Իսկ ինք, իր աշակերտ Վրթանէս վրդը,  
արքունի վասպապետ Պօղոս Պէյ Տատեան և Կրծիկեան  
Յակոբ Էֆէնտին, շուրջառ, Աւետարան և Նարեկ, գնաց  
պալատ: Ներքինապետը Պատրիարքը առանձին մտցուց  
Մայր Սուլթանին սենեակը, ուր զգեստաւորեալ հիւան-  
դին վրայ: Նարեկ, բժշկութեան Աւետարան և փարատեա  
կարդաց, յուոպաղը հիւանդը և բժշկութիւն մաղթեց:  
Սուլթանուհին սրտապնդուեցաւ, համբուրեց խաչը, և ի  
նշան գոհունակութեան, Ս. Հօր նուիրեց աղամանդեայ  
թանկարժէք տուփ մը, Տատեանի՝ գոհարազարդ տուփ մը,  
Վրթանէս վրդի՝ գոհարազարդ սուրճի գտւաթ մը, իսկ  
Կրծիկեանին ալ տուաւ սոկեայ ժամացոյց մը:

Արդարեւ Վալիտէ Սուլթան բժշկուեցաւ: Կայսրը Ս.  
Պատրիարքին թանկագին ցփսի (շալ) մը նուէր դրկեց,  
իսկ Մատթէոս Ս. զայն շուրջառի վերածելով նորին Ս.  
Օծութիւն Ն. Աշտարակեցի Կաթ. ին նուէր դրկեց:

Պոլսոյ մէջ կազմուած Ազգ. ժողովները կը գործէին  
ոիկ մնջիկ, բայց Ամիրաները տակաւին կարգ մը գոր-  
ծերու մէջ իրենց կամքը կը պարտադրէին: Եւ որովհետո  
Մատթէոս Պատրիարք չէր հանդուրժէր որ Ամիրաները  
իրենց կամքին համաձայն գաւառի Առաջնորդները փո-  
փոխեն, զժութիւն ծագեցաւ Պատրիարքին և քանիմը  
Ամիրաներու միջ' և: Հակառակորդ Ամիրաներէն վիսա  
ւորներն էին Միսաք Միսաքեան և ձանիկ փափազեան,  
որոնք իրենց համախոհներով լումրի խանի հէլկէլեան  
Ամիրայի գրասենեակին մէջ ժողով գումարելով որոշե-  
ցին հրաժարեցնել Պատրիարքը: Ուստի իրենց մէջէն գէ-  
որգ Փափազեան և Յովհաննէս Եազըճեան Ամիրաները  
զրկելով Պատրիարքին մօտ, անոր հրաժարումը ինդըեցին:  
Մատթէոս Ս. մեծարեց ու լսեց դանոնք և ըստ,

— Կը ցաւիմ աղաներու մնոտի զրպարտութեանց վը-  
րայ, ես ուխտիւք ինդրէի և խնդրեմ հրաժարիլ Պատրի-  
արքական աթոռէս, բայց ո՛չ այս տեսակ անարգական  
եղանակաւ:

Պատրիարքին այս ընթացքը զրգուց Ամիրաները:  
Խնդիրը մինչեւ Բ. Դուռ հասաւ: Մեծ եպարգոս Ռէշիտ  
փաշա ստիպեց Պատրիարքը որ հրաժարի: Մատթէոս  
հրաժարեցաւ ըսելով. «Ո՛չ կամիմ լինել պատճառ գայ-  
թակդութեան Ազգիս», (1848 Հոկտ. 1):

Սուլթան Ապտ-Իւլ-Մէճիտ իր անձնական գանձէն  
2.000 զրուշ ամսական յատկացուց Մատթէոս Ս.ին:  
Նմանապէս Կայսրը մասնաւոր մեծ պաշտօնատարի մը  
միջոցաւ անոր շնորհեց աղամանդեայ մեծագին շքա-  
նշան մը (1851 Մայիս 19), որուն ընդունելութեան արա-  
րողութիւնը տեղի ունեցաւ Մատթէոս Սրբազնի Օրթա-  
գիւղի տան մէջ:



## ԳԼՈՒԽ ՏԱՄԱԼՄԵԿԵՐՈՐԾՎԻ

Եւրոպական մրցակցութիւնը Թուրքիոյ շուրջ.—  
Պալքանեան ցեղերը և Ռուսիա.— Խրիստի ՊԱՏԵ-  
ՐԱԶՄԸ և Բարեղի Դաշնագիրը.— Յակոբոս  
Պատրիարք և Ազգ. կեանքը այդ շրջանին:

ՊԱՏԹԷՌՈՍ Ա. ԿԱԺՈՂԴԿԱՌՈ ԱՐԵՎԱՅՑՆ ~ 303

Լիբանանի ջարդերը և Նափոլէօնի միջամտութիւնը

—ooooo—ooooo—

Եգիպտոսի Մեհմէտ Ալի Փաշան փորձանք մը գար  
ձած էր Թուրքիոյ վիսուն: Ֆրանսա զօրաւոր պաշտպա-  
նութիւն կընէր անոր, Արեւելքի մէջ իր ազգեցութիւնը  
ամրացնելու, և օր մը Եգիպտոսն ու Սուրիան կարենալ  
զրաւելու համար: Ռուսիա և Անգլիա եւս կը հետաքրք-  
րուէին Թուրք-Եգիպտական կնճիռով: Անգլիա, Ռուսիա,  
Աւստրիա Բրուսիա 1840 Յլ. 13ին համաձայնութիւն մը  
կնքեցին « Օսմ. պետութեան անկախութիւնն ուամբող-  
ջութիւնը պաշտպանելու » համար, և Մեհմէտ Ալի Փա-  
շայի վերջնագիր մը տուին, պահանջելով որ, « անյապաղ  
Սուլթանին վերադարձն բոլոր գրաւած հողերը, գոհա-  
նալով միայն Եգիպտոսի ժառանգական. և Սուրբիոյ ալ-  
ցկեանս իշխանութիւնով: Մեհմէտ Ալի լոեց, բայց, երբ  
Անգլիացիք գրաւեցին Պէյրութը, այն ատեն Ֆրանսայի  
միջամտութեամբ ընդունեց դաշնակիցներուն պահանջը,  
և 841 Յնս. ի Կայս. Խաթթը Շէրիֆով Մեհմէտ Ալին  
ճանչուեցու հարկատու իշխան Եգիպտոսի, յաջորդա-  
կան իրաւունքով ի նպաստ իր ընտանիքին:

Եւր. մեծ պետութիւնները Թուրքիան իրենց խնամա-

կալութեան աակ առնելով. կը ձգտէին ազդեցութեան որոշ գերակշութիւն և առանձնաշնորհում ձեռք ձգել, իւրաքանչիւրը իր հաշւոյն: Ռուսիա կը պաշտպանէր օրթոսոքսութիւնը, Ֆրանսա՝ կաթոլիկութիւնը:

Նոյն միջոցին Պալքանեան կնճիռը նոր փուլի մէջ էր մտած: Ռուսիա կ'ուզէր փրկել ԱԼՈՒ ազգերը Թուրքիոյ կեղեքիչ լուծէն: Ռւստի, 1853 փետր. 23ին, Ռուսիա ծանոյց Թուրքիոյ, թէ իշխան Մէջնիքօֆ Պոլիս պիտի գայ իբրեւ արտասովոր դեսպան: Մէջնիքօֆ, որ թէ ծովային նախարար էր և թէ Ֆինլանտիոյ կառավարիչ Պոլիս հասաւ Մարտ 1ին, իր հետ ունենալով կալիցին իշխանը, կոմս Նեսէլտօրփը, ծովակալ Քօրնիլօփը և զօր Նիքարօչէնսքին: Ֆրանսա և Անգլիա շփոթեցան ո նՍաւատորմ զրկեցին Տարտանէլ:

Իշխան Մէջնիքօֆ երկար բանակցելէ յետոյ. Մայիս 5ին վերջնագիր մը տալով թ. Դրան, պահանջեց չոր,

ա.— Թուրքիա տեւական զինակցութիւն կնքէ ու սիոյ իշտ:

թ.— Սուլթանը ճանչնայ ջարը իբրեւ օրինաւոր պաշտ պանը իր տասներեք միլիոնէ աւելի օրթոսոքս, Սլաւ եւ Յոյն ժողովուրդներուն, որոնք իսլամներէն աւելի են թուրքիոյ մէջ:

Սուլթան Մէջնիտի հրամանաւ նորընտիր մէծ Վէզիր Ռիքաթ Փաշա Գերագոյն Խորհուրդ գումարեց պետական 44 աւագանինեէ, ուր քննելով Ռուսիոյ պահանջները Օսմ. Գահին և Հայրենիքին համար խիստ վիստ կար գտան և 2ի դէմ 42 ձայնով մէրժեցին զանոնք:

Այս մէրժումին վրայ ծագեցաւ Ռուսոթուրքական պատերազմը:

Ռուսիոյ համար խիստ աղետալի սայ կոիւր կը յոր ջորջուի ԽՄԻՄԻ, ՍԱՎԱՍԱԲՈԼԻ ՊԱՏԵՐԱԶՄ անունով:

—(oo—oo)—

## ԽՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ռուսաց նիքոլա ջարը, բոլոր Օրթոսոքսները հրաւիրեց Սուլթ Պատերազմ մղելու թուրքիոյ դէմ: Պեսարապիոյ մէջ խմբուած ուուս զօրքը Պասկեւչի Գլխաւորութեամբ գրաւեց Մոլտովաքիան: Թուրքիա Ռուսիայ դէմ պատերազմ՝ յայտարեց 1853 ինկ. 4ին: Սպարապետ էօմէր փաշա Դանուբ անցնելով Վալաքիոյ մէկ մասը ետ առաւ: Սեւ ծովի ուուս նաւատորմը Սինոպի առջեւ փնացուց 10 նաւէ բաղկացեալ Թուրք ծովային ոյժը, նոյմ. 30ին:

Այն ատեն Թուրքիա օգնութիւն խնդրեց Եւրոպայէն:

Անգլիոյ Վիքթորիա Մագութիւն եւ ֆրանսայի նափուէն գ' կայսրը Միացան Թուրքիոյ. իրենց նաւատորմները յեւ Ենով մտան, զօրք հանեցին Վառնա. արգիլելու համար ուուս Պորաց յառաջխաղացումը դէպի Պոլիս:

Ռուսերը ստիպուեցան նախանջել, եւ հրաւիրեցին Ալբարիան որ գրաւէ Մոլտուապիան. ինչպէս պահանջած էր:

Աւստրիա Մերժեց Ռուսիոյ առաջարկը, սակայն, իբրեւ չէզոք պետութիւն յանձն առաւ առժամապէս գրաւել Վալաքիան, իբրեւ պահապան գանուբի: Այս մտօք Պտապը Ալիի իշտ կնքեց պայմանագրութիւն մը:

1854 սեպտ. 7ին, 30 հազար ֆրանսացի 20 հազար Անգլիացի եւ՝ 7 հազար Թուրքէ բաղկացեալ գանձակից բանակ մը Վառնայէն նաւով անցաւ Խրիմ, եւ Սեվաստոպոլի հիւսիսակողմը ցամաք ելաւ: Սեպտ. 20ին կուի մը տեղի ունեցաւ Ալմա գետին եղերքը դիրք բննող իշխան Մէջնիքօֆի զօրաց իշտ, դաշնակիցները յաղթելով Սեվաստոպոլի ճամ մբան բացին, սակայն Մէջնիքօֆ նոր ուժերով ահեղ յարձակումներ ըրաւ դաշնակիցներուն վրայ. մատնելով զանոնք մեծամեծ կրսւատներու:

Բիէմինդիոյ կառավարութիւնը միացաւ դաշնակիցներուն 1855 Յնվ. 26ի դաշնագրսվ, եւ 15 հազար զօրք Վրկեց Խրիմ: Սեվաստոպոլի գրաւումը կենսական Խնդիր էր Անգլիոյ եւ ֆրանսայի համար, անոնք չէին ուզէր պարտուիւ:

Ուստի, պաշարման բանակը կրկնապատկելով, Ալեք-  
րիոյ կուսակալ գօրափար Բելիսիէլի ընդհանուր իրամանա-  
տարութեամբ սկսան մեծ յարձակումներու:

Զար Նիքոլա անպարտելի էր, սակայն մահը վրայ իս-  
տաւ: Իր յաջորդը, Ալեքսանդր շարունակեց պատերազմի-  
սակայն, Սեվաստաբօլ ինկաւ, 332 օրուայ պաշարումէ մը  
եւ երեք արիւնալի ճակատամարտներէ վերջ:

**Այսպէս, զօր. Բէլիսիէլ Սեվաստարօլի աւերակներուն**  
վրայ վերջապէս յաջողեցաւ տնկել Փրանս. եռագոյնը  
(1853 Սեպտ. 1), որուն համար Նափոլէօն Գ. Կայսրէն  
ստացաւ պատուանշան, մարածախութիւն, և « ԴՌԻՔՌ  
ՍԵՎԱՍՏԱԲՈԼԻ » տիտղոսը:

Դաշնակիցները չուզեցին կոփուր շարունակել այլիս:

Զինադադար կնքուելով Բարիզի մէջ գումարուեցաւ  
վեհաժողով 1856 Փետր. 25: Վեհաժողովին կը մասնակցէին:

Թուրքիոյ կողմէ՝ մեծ Վէզիր Ալի, և ձէմիլ Փաշա-  
ները: Անգլիոյ կողմէ՝ Լորտ Փլարէնտըն և Լորտ Քուուլի:  
Ֆրանսայի կողմէ՝ արտ. գործոց նախը. Վալէվսքի և Պ.  
տը Պուռքընէլ: Ռուսակոյ կողմէ՝ իշխան Օոլոֆ և Պ. տը  
Պուռնով: Աւստրիոյ կողմէ՝ կոմս Պուոլ և Պ. Հուպնէլ:  
Բիէմոնդէի կողմէ՝ կոմս Քափուր, Մարքիզ Վիլլամարինա:

Կարճ շրջանի մը մէջ կարելի եղաւ ճշգել հաշտու-  
թեան պայմանները, որ ստորագրուեցաւ Մարտ 50ին:


Բարիզի դաշնագրին Ռ. յօդ. ով թուրքիոյ հողային  
ամբողջութիւնն ու անկախութիւնը կ'երաշխաւորուի:  
Իսկ Սուլթանը պետութեանց կը հաղորդէ նոր ՖէրՄԱՆ  
մը, որով իր ԲՈՂՈՐ ՀՊԱՏԱԿՆԵՐՈՒՆ Կ'ԱՊԱՀՈՎէ:  
Իրենք ՓՈԽԱԴԱՐՁ իրԱՀՈՒՔՆԵՐԸ: Թ. յօդուածով  
պետութիւնները կը հաստատեն բարձր արժէքը այդ նոր  
Ֆէրմանին, և յատկապէս կը շեշտեն՝ որ անիկա իրքեւ  
հիմ ծառայէ թուրք կովթեան և Սուլթանին Քրիստոն-  
եայ հպատակներուն փոխադարձ յարաբերութեանց :

**Ժ. և ԺԴ. յօդուածներով նեղուցներուն և Սև ծովու-  
չէղոքութիւնը կը հոչակուի:** Ո՛չ թուրքիա և ո՛չ Ռու-  
սիա իրաւունք պիտի չունենան նաւարան հաստատել  
Սեւ ծովու եղերքներուն վրայ: ԺԵ. և ԺԹ. յօդուածնե-  
րով Դանուբի ազատ նաւարկութիւնը կ'ապահովուի:

**Ի. և ԻԹ. յօդուածներով Մոլտավիա և Վալաքիա**  
կ'ստանան իրենց առանձին իշխանապետութեան նախկին  
իրաւունքները՝ դաշնադիր պետութեանց հաւաքական  
երաշխաւորութեանց ներքեւ: Սերպիա ալ կ'ազատուէր  
Թրքական զինուորական թեւարկութենէն:

Հաշտութեան կնքումին վրայ, Դաշնակից բանակին  
ընդհ. հրամանատար Մարածախտ Բէլիսիէլ Պոլիս եկաւ,  
և մեծ պատոյ արժանացաւ( 28 Յնս. ):

**Յաջորդ օր, Յովհաննէս Պէյ Տատեան իր տան մէջ**



ՅՈՎՀԱՆՆԷՍՊէՅՏԱՏԵԱՆ

Կառաւոր ճաշկերոյթ մը տուաւ ի պատիւ Մարածախտ  
Բէլիսիէլի, որ իր հին և մտերիմ բարեկամն էր: Մարա-  
ծախտը մեծ պատիւ մըն էր որ ըրաւ Հայազգի Պէյին  
որ պատուարեր էր նաև Հայութեան համար:

Մարածախտը իր սպայակոյտով մեկնեցաւ Պոլսէն

Յուլիս 14ին և Դաշնակից բանակները թուրքիայէն հեռանալով Օսմ. պետութիւնը սկսաւ երկրին ներքին բարեկարգութեան խնդրով զբաղիլ:

Ինչպէս Սուլթան Մահմուտ Բ., նոյնպէս Ապտիւր Մէծիտ՝ կրթնած Ժէօն-Թիւրքերու յառաջդիմասէր ոգւոյն և ուժին, կը բաղձար արդիականացնել երկիրը, սակայն, նկատի ունենալով ժողովուրդին այդ ուղղութեամբ անպատրաստ վիճակը, չէր կրնար յանկարծ վճռական քայլ մը առնել: Ուստի, 1836 Փետր. 18ին նոր Խաթթը Հիւմայուն մը հրատարակեց, որով, առանց դասակարգի և դաւանանքի խորութեան, բոլոր Օսմանեան հպատակ ժողովուրդները կը հոչակէր հաւասար՝ պարտքի և իրաւունքի տոշեւ: Տէրութեան վարչային ու զինուրական բոլոր ասպարէզները հպատակ իսլամին և քրիստոնեային առջեւ կը բացուէր հաւասարապէս: Տուրքերու ծային դրութիւնը պիտի բարեփոխուէր եւալն:

Ակներեւ էր որ, ծագող արշալոյսէն ամենէն առաջ և ամենէն աւելի չայ ժողովուրդը պիտի կրնար օգտուիլ շնորհիւ իր հաւատարիմ, և պետութեան խիստ օգտաշնորհիւ կար ծառայութեանց, ու մանաւանդ, թուրք տարրին հետո ունեցած բարի զբացիական սերտ յարաբերութեանց, որով, Սուլթանէն սկսեալ մինչեւ ամենայետին թուրքին անսահման վստահութիւնը գրաւած էր:

ՅԱԿՈԲՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ.— Մատթէոս Պատրիարքի Հրաժարումէն վերջ, երկրորդ անգամ ըլլալով Պատրիարք ընտրուեցաւ Յակոբոս Սրբազն (848-1858), որու օրով նոր զարկ մը ստացան սպա. եկեղ. և կրթական գործերը: Ազատ գաղափարներով մսած չայ երիտասարդութիւնը պլուս կանգնեցաւ յեղաշրջական շարժումի մը, որ հետո զինական ծաւալեցաւ և նորարողբոջ ծիլեր արձակեց արդիւնքն կողմ, մինչեւ գաւառի յետին անկիւնները փարժարաններ սկսան բացուիլ:

Թրքահայութիւնը՝ որ արդէն կը վայելէր լայն առանձնաշնորհումներ, և ուղածին պէս կը վարէր ազգ. ներքին բոլոր գործերը, Բարիզի դաշնագրուվ և նոր Հրովարտակով բոլոր հպատակ քրիստոնէից համար ապահովուած վարչական բարենորոգումները օրուայ խնդիր դարձաւ և չայոց մէջ, որով Պոլիս Ֆրանսա և այլուր դաստիարակուած նոր սերունդը ստիպողաբար պահանջեց որ ազգային վարչական նոր կանոնագրութիւն մը խմբագրուի, և քննուելով գործադրութեան դրուի:

Այս ուղղութեամբ, Գերագոյն և Հոգեւոր Ժողովներու միաձայն որոշումով կազմուեցաւ ՈՎՀԵԱԱԴՐԱԿԱՆ ՅԱԶԳԱԺԱԺՈՂՈՎ, անունով մարմին մը, որ պաշտօն ունէր խմբագրելու նոր կանոնագրութիւն մը, գործադրելի ամբո՞ղջ թուրքիոյ չայոց համար: Այս Յանձնաժողովը՝ որ կը բաղկանար 9 կրօնական և 2 աշխարհական անդամներէ, սկսաւ գործի, եւ 1857 տարւոյ Փետրուարին ընդուներէ, ստիպութիւնը սերկայացուց կանոնագրութիւն մը, առ ի քննութիւն եւ վաւերացում:

\* \* \*

ՄԱՏԹԵՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.— Ամենայն չայոց կաթողիկոսական Աթոռը թափուր կը մնար Աշտարակեցիի մահուամբ: Ըստ Պոլօմէնիայի տրամադրութեանց, յաջորդ 1858 Յունիսին ձեռնարկուեցաւ նոր ընտրութեան: Յունիս 18ին Մայր Աթոռոյ մէջ գումարուող ժողովին թրքահայ 43 թեմերու կողմէ մամնական ժողովին թրքահայ 43 թեմերու կողմէ մամնական իշխան իսահակ Ս. թուրմանեանց և Աբէլ Գէորգից եցան իշխան իսահակ Ս. թուրմանեանց և Աբէլ Գէորգի մասն: 113 ձայնով կաթողիկոս ընտրուեցաւ կ. Պոլսոյ Նախկին Պատրիարք ՄԱՏԹԵՈՍ ԱՐՔ. ՉՈՒԽԱՃԵԱՆ: Զարը զայն վաւերացուց Ծգուտոս 13ին, Այս ընտրութիւնը Պոլսոյ չայոց Պատրիարքին հաղորդուեցաւ յիուս դեսպանին միջոցաւ: Դեսպանը Բ. Դանէն


ինդրեց որ Վեհ. Կաթ.ին արտօնուի Ս. Էջմիածին մեկնելու: Բ. Դուռը Ռուսաց կայսեր ինդրանքն ընդունելով մասնաւոր հրովարտակով արտօնեց կաթողիկոսին մեկնիլ իր Աթոռը՝ երբ որ կը փափաքի: Մատթէոս կաթողիկոս որոշեց ձմեռել ի Պոլիս, և յաջորդ գարնան մեկնիլ Մայր Աթոռ:

Հայ ժողովուրդը մեծ ինդութեամբ ողջունեց իր նոր Հայրապետը, ու այդ օրուընէ սկսաւ յիշատակուիլ անոր անունը Ս, եկեղեցիներուն մէջ:

Յակոբոս Պատրիարք ծերութեան պատճառաւ հրաժարեցաւ: Գերագոյն և չոգեւոր ժողովները, Մատթէոս նորնտիր կաթողիկոսի նախագահութեամբ նիստ կազմելով Պատրիարք ընտրեցին Պրուսայի Առաջնորդ Տէր Գէլորդ Արք. Քերի ՍթէձեԱն կ. ՊՈԼԵՅՑԻՆ, եւ սոյն ընտրութիւնը ծանուցանելով Վեհ. Կայսեր, մեծ շքով եւ ցնագին պատիւներով Պրուսայէն Պոլիս բերին զայն. և բազմեցուցին-Պատրիարքական Աթոռը (1858 Հոկ. 17):

Վեհ. Հայրապետը Ս, Էջմիածին առաջ սորդելու հա, մար Մայր Աթոռոյ Միաբանութեան կողմէ ի կ. Պոլիս հրաւիրակ եկան Մակար Արք, Թէշուտցի (Պուլանը գաւառ). Մկրտիչ և Գալուստ վարդապետները եւ երկու ոուրհանդակներ, որոնք Բերայի մէջ Տատեան Պօղոս Պէլի կողմէ յարդարուած տունը հիւրընկալուեցան:

Վեհ. Ապտ-իւլ-Մէճիտ կայսրը իր պալատը հրաւիրեց Մատթէոս կաթ. լ, որ ուղեկցութեամբ Պօղոս Տատեան Պէյի, Մայր Աթոռոյ երեք հրաւիրակներուն զնաց պարհուած կը սիրէր Մատթէոս Սրբազնը, շնորհաւորեց աշատ և ընդունուեցաւ մեծ պատիւներով: Սուլթանը, որ նոր Հայրապետութիւնը, և երկարօրէն խօսակցեցաւ նոր Սրբութեան հետ: Կայսրը, Վեհ. Հայրապետին շնորհեց Ա. կարգի Մէճիտիյէ շքանշանը: Խոկ հրաւիրակ Մակար Արք. ին, Մկրտիչ, Գալուստ, և Վեհ. ին քարտուղար Վարդապետ, և Վեհ. ին քարտուղար Վարդապետ:



ՄԱՏԹԻՈՍ Ա. կաթողիկոս Մկր. Ճէզայիրլեան Ամիրաթանէս վարդապետներուն, Գ. կարգի Մէճիտիյէ շնորհեց: Հրաւիրակները, Վեհ. Կաթ. ին արտօնութեամբ Ս. Երուսաղէմուխտի գացին, և Ս. Զատկէն վերջ դարձան Պոլիս:

1859 Ապրիլ 20ին, Ռուսաց Զարին կողմէ Վեհապատ կաթողիկոսը Բեթերսպուրկ հրաւիրելու պաշտօնով Պոլիս եկաւ Հայազգի Զօրավար ԼՕՐԻՄ Մէլիքօֆ իշխանը, իր թիկնապահ սպայ հարիւրակետ Միքայէլ Միանսարովի և կարգ մը հետեւորդներու հետ, իջեւանելով Ռուսական դեսպանատունը: Երկու օր վերջ, Զօր. Մէլիքօֆ, ընկերակցութեամբ Պօղոս Պէյ Տատեանի, այցելեց Գում-Գարուի Աղջ. Պատրիարքարան, և տեսակցեցաւ Դէորդ Պատրիարքի հետ: Որոշեցին յաջորդ Հինդլարթի շքախումբով երթալ Օրթագիւղ՝ Վեհ. կաթողիկոսին այցելութիւն տալու: Այս պարագան հաղորդեցին Վեհ. ին: Որոշեալ օրը, Գէորգ Պատրի նախագահութեամբ կազմուած շքախումբը, որուն կը մասնակցէին Զօր. Լօրիս Մէլիքօֆ. Պօղոս Պէյ Տատեան, Գէորգ Պէյ Երամեան, հարիւրապետ Միանսարեան, և Վարդապետ և բազմաթիւ Արք. ին, Մկրտիչ:

երեւելիներ, թերայէն ճամբայ ելլելով հասաւ Օրթագիւղ  
Եռևութեանց ընդարձակ ու գեղեցիկ տունը, ուր կը  
գտնուէր Վեհափառը: Հիւրերը ընդունուեցան նախկին  
Պատրիարք Յակոբոս Արք.ի Սարգիս Եպիսկ.ի և Յ Վար-  
դապետներու կողմէ և առաջնորդուեցան Ս. Կաթողիկո-  
սին մօտ: Հայրապետի Զօրափարը ակնածանքով խոնարհե-  
ցաւ Հայրապետին առջեւ, համբուրեց Ս. Աջը, ու ըստ,

— Վեհափառ Հայրապետ. Կովկասի Փոխարքան, բարեհան-  
հաւտնութեամբ իմ զեհ. Թագաւոր-կայսեր, քաղցը պարտա-  
կանութիւն դրաւ իմ վրայ գալ Կ. Պալիս, եւ ի դիմաց Ռու-  
սաստանի բոլոր Հայոց շնորհաւորել Ձերդ Սրբազնութիւնը,  
հտղորդել Օգոստափառ կայսեր կողմէ Ամենայն Հայոց Ձեր  
Հայրապետութեան վաւերացումը, եւ իրաւիրել զցեզ ի Ս.  
Աթոռն Լջմիածնի, եւ ուղեկից լինի Սրբազնութեանդ Ձեր  
բոլոր ճամբորդութեանց մէջ, մինչեւ ի գաղարշապատ: Եր-  
ջանիկ կը համարեմ անձս, որ այսօր կը կատարեմ իմ վրայ  
դրուած պարտականութիւնը, շնորհն ունիմ ներկայանալու  
Ն. Վեհափայլութեանդ. եւ եռանդեամբ հոգւոյ համբուրել  
Ձեր Սուրբ Աջը:

**Վեհ.** Հայրապետը ժպտադէմ ողջագուրեց զայն, ու  
իր հայրական օրհնութիւնները տուաւ Ն. Վսեմութեան:  
Յետոյ ի դիմաց Ազգ. Ժողովոյ և Ամիրայից, խօսք  
առաւ երիտասարդ Տիգրան Եռևութեան և ըստ,

Վեհափառ Հայրապետ, Աներկեայ ըլլալով թէ Ձերդ  
Վեհ. եան հայրախնամ սիրած անպատում բեկրութեամբ լը-  
ուած է այսօր, տեմնելով Ձեր Վեհ. եան առջեւ Ազգիս յար-  
գելի պատգամաւորը. Երեւելիները, իշխանները, եւ մայրա-  
քաղաքիս մեծամեծ ազգայինները. կը ինդրեմք հրաման Ձե-  
րըդ Սրբազնութիւնն, յայտնելու համար համաձայն Ազգիս եւ  
մայրաքաղաքիս Հայ հասարակութեան այն անհուն ուրախու-  
թիւնն ու իրնուանքը զոր կըզգամք այսօր, շնորհիւ Ն. Վ. սե-  
մութիւն Հայոց Զօրապետին գալստեամբ եւ ներկայութեամբ:

**Յետոյ դառնալով Զօրապետին,**

Տէ՛ր Զօրապետ, Ձեր այս ներկայութիւնը կրկնակի ուրա-  
խութեանց առիթ կուտայ մեզ, տեմնելով նախ Ձերդ մեծամա-  
նութիւնը արժանաւորապէս վարձատրուած. Օգոստափառ  
Ինքնակալէն ամենայն բուսաց, եւ նոյնափիսի մեծարանօք  
պատուեալ մեր Օգոստանէն որ ամենամեծ  
պատիւ է եւ պարծանք մեր Ազգին, որով կրնամք պարծիւ  
այսօր եւ մեծարիլ օտար ազգաց առջեւ: Երկրորդ, մեր ու-  
րախութիւնը մեծ է, տեմնելով բուսփառնակ մեր ազգակից-  
ներուն բերկրափիթ հաւաստիքները, որոնք կրգան, Հայա-  
տանեայց Արաք. Մայր Եկեղեցւոյ գերագոյն Պետ եւ Ս. Գր-  
կուսաւորչի Հայրապետական Ս. Աթոռիւն վրայ բազմած տես-  
նելով Ն. Ս. Վեհ. Մաաթէոս Կաթողիկոսը: Այս միաբանու-  
թեան Աստուածապարգեւ շնորհը հաւաստիք իմն են արդի  
համահիսարիական քաղաքակրթութեան սիրաբորբոք միա-  
քանութեան, որ անիրաժեշտ է որ եւ իցէ ընկերութեան՝ որ  
կը ցանկայ մտնել այդ լուսաւոր ճամբուն մէջ:

Մեր Ազգը ինն ժամանակներէ ի վեր վայելած է Օգոստա-  
փառ Ինքնակալներուն հայրագորով ինամքները, ի փսխարէն  
մեր Ազգին հաւատարիմ ծտուայութեանց: Եւ որով հետեւ  
նոցին Վեհ. Ները, Ռուսերու եւ Օսմանցիներու Կայսրերը մեզ  
կը պատուիրեն այժմեան դարու լուսաւորութեան շալին  
մէջ մտնել, եւ որուն առաջին քայլերը առած է արդէն մեր  
Ազգը, կը ինդրեմք Ձեզմէ Տէ՛ր Զօրապետ, որ Մարգման ըլլաք  
մեր այս յուսալից գացումներուն օգոս. Ինքնակալներուն  
մօտ, եւ որոնց կայս, անգին կենաց աղօթող եմք:

**Զօր. Մէլիքօֆ պատասխանեց և ըստ,**

— Ամիրանե՛ր, Ա՛յն օրէն ի վեր՝ որ Հայոց Ազգը  
կը վայելէ պաշտպանութիւնը Օսմանեան և Ռուսաւ մե-  
ծազօր տէրութեանց, իր գով' լի հաւատարմութեւը ար-  
ժանի եղած է անոնց վստահութեանց և համակրութիւննց:  
Զանանք ուրեմն պահե՛լ միշտ և աւելցնել այդ վստահու-  
թիւնը յօգուտ և պարծանք Ազգիս, հաւատարիմ մնալով  
իսպառ՝ դուք ձեր թագաւորին, և մենք՝ մերինին: Եւ այս-  
պէս կատարելով մեր պարտականութիւնները, յառաջդի-  
մենք դարուս քաղաքակրթութեան ճամբուն մէջ»:

Ապա կատարուեցան փառաւոր հիւրասիրութիւններ եռւսուֆեան գերզաստանի կողմէ, որմէ վերջ, վսեմ. Զօրապետը նոյն շուքով վերադարձաւ թերա: Յաջորդ օր, Ս. կաթ. ը փոխադայցելեց Զօրավախն:

Բ. Դրան հրաւերով, Զօր. Մէլիքօֆ Ռուս դեսպանին հետ այցելեց Վեհ. Սուլթանին, և սիրալիր ընդունելութեան արժանացաւ: Այցելեց նաև Եպարքոս և արտ. գործոց նախարար Ֆուատ Փաշայի (Ապրիլ 24):

Ի պատիւ Զօր. Լորիս Մէլիքօֆի և Ս. կաթողիկոսին արուեցան ճոխ ճաշկերոյթներ. որոնց ամենէն փառաւորը եղաւ Մայիս 21 ին, Բերայի Օթէլ Պիւզանսի մէջ Պոլսոյ Հայ մտտորականութեան կողմէ տրուածը, ուր խօսուեցան խանդավառ ճառեր:

Վեհ. կաթ.ը, սիրոյ և խաղաղութեան վրայ քարոզեց Պէշիկթաշի եկեղեցւոյ մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեան: Խոկ Բերայի Ս. երրորդութիւն եկեղեցւոյ մէջ պատարագեց: Անգլիոյ դեսպանն ալ հացկերոյթ մը տուաւ ի պատիւ կաթողիկոսին և Զօր. Մէլիքօֆին, ուր ներկայ եղան Ռուս. Ֆրանս. և Պելժ. դեսպանները:

Նոյն միջոցին երուսաղէմէն Պոլիս հասաւ Զարին եղբայր ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ Մեծ Դուքսը, և Սուլթանին հիւրեղաւ: Վեհ. կաթ. ը համտկ ոսկիէ աղամանդակուռ խաչը պատրաստել տուաւ Հայ ոսկերիչի մը, և իր հետ առնելով Գէորգ Պատրիարքը և Տատեան Պողոս Պէյը, գնաց Էմիրկեանի պալատը, ուր հիւրընկալուած էր Մ. Դուքսը:

Զօր. Մէլիքօֆ Վեհ. ը ներկայացուց Մեծ Դուքսին, որ անմիջապէս պիխարկը հանելով յարգանքով և խոնարհութեամբ մօտեցաւ Հայոց Վեհ. Հովուապետին. համբուրեց Ն. Ս. Աջը: Կաթ. ը օրհնեց զայն, և անոր ներկայացուց թանկագին խաչը, որ իր զաւկին վզէն կախէ:

Մեծ Դուքսը մեծ պատիւներ ըրաւ Հայոց կաթ. ին ու ոգեւորեալ երկար խօսեցան իրարու հետ: Ս. կաթ. ին

մեկնումը մօտ էր. Մ. Դուքսը հանդրեց միասին ճամբորդել: Կաթ. ը հաւանեցաւ, և Մեծ Դուքսին հրամանաւ շքեղ նաւմը նիփոլայէվէն եկաւ խարսինեց Օրթագիւղի առջեւ:

Վեհ. Սուլթանը կէօք-Սուփի իր ամարանոց պալատին մէջ ի պատիւ Մ. Դուքսին մեծ ճաշկերոյթ մը տուաւ, որմէ վերջ, Մեծ Դուքսը իր հրաժեշտի ողջոյնը մատոյց Սուլթանին: Յաջորդ օր, Վեհ. Կայսրը պալատ հրաւիրեց Ս. կաթողիկոսը, և մեծ պատիւներու արժանացոյց զայն: Մատթէսու կաթողիկոս Հայ Ազգին և իր հաւատարմական զգացումները յայտնեց Կայսեր, և վերադարձաւ Օրթագիւղի. Մանիկեաններու ծովեզերեայ ապարանքը՝ ուր հաւաքուած էին Գէորգ Պատրիարք Ազգին երեւելիները, մայրացարաքին բոլոր կղերական դասը: Անթիւ բազմութիւն մը խոնուած էր գուրսը, և կուզէր վերջին անգամ ըլլալով տեսնել իր սիրելի Հայրիկը, և լսել անոր խօսքը: Փղձկեցաւ Հայրապետը՝ երբ ներկայացաւ իր հօտին: Խօսեցաւ սիրոյ և միաբանութեան վրայ: Բոլոր ժողովուրդը կ'ուլար, կարծես հօտ և հովիւ չէին կընար բաժնուիլ իրարմէ: Վեհափառը տուաւ ամենուն իր հայրական օրհնութիւնը, յուսազբեց և քաջակերեց ժողովուրդը, և իր հրաժեշտի ողջոյնները տալով ծովածաւալ բազմութեան, Զօր. Լ. Մէլիքօֆի և հրաւիրակներուն հետ մտաւ շոգենաւ, 1839 Յունիս 2 ին: Օսմ. Հայոց կողմէ կ'ուղեկցէին Էտիրնէի Առաջնորդ Սարգիս Եպիսկոպոս, Թէոթորոսեան Սարգիս, և Պիւլպիւկեան Սիրական Վարդապետները:

Նոյն պահաւն Մեծ Դուքսն ալ իր նաւը մտած էր, որով, խանդավառ ցոյցերու մէջ երկու նաւերը ճամբայ ելան դէպի Մեծ ծով, ու 5 օրէն հասան Բօթի: Վեհափառ կաթ. ը անցաւ Թիֆլիս, ժողովրդային մեծ ցոյցերու մէջ, և իջաւ Մայր Եկեղեցին: Յաջորդ օր այցելեց Փոխարքային, որ կուրծքէն կախեց Վեհ. Զարէն շնորհուած թանկագին շքանշանը, ի նշան համակրութեան:

Յաջորդ օր Փոխարքան փոխայցելութեան եկաւ Ս. Կաթ. ին: Թիֆլիսի մէջ երկու շաբաթ լուսավառութիւն և ուրախութիւն կատարուեցաւ: Վեհ. կաթ. ը ճամբայ ելաւ դէպի Ս. էջմիածին 5 օր մնաց Երեւան, ու մէծ ցնծութիւն տիրեց: Վեհափառ Մայր Աթոռ հասաւ նոյն տարւոյ Յլ. 7 ին, և օծումը ընդունեց 1859 Օգոս. 15 ին:

Մատթէոս Հայրապետ իր ըո որ կարողութիւնը գործածեց Ռուսահայոց կրթական և կրօնական յառաջդիմութեան համար: Իր ջանքերով բազմացան ծխական վարժարանները: Կանոնաւորեց Մայր Աթոռոյ թանգարան-ձեռագրատունը, և Թիֆլիսի Ներսէսեան վարժ. ին համար ալ կանոնագրութիւն մը հրատարակեց: Իր օրով Ռուսահայոց մէջ սկսաւ վերածնութեան ազգայնական շարժում մը, սակայն կաթ. ը իրեւ ծայրայեղ պահպանողական մարդ, չի քաջալերեց այդ շարժումը:

Մատթէոս Կաթողիկոս իր նախորդին նման ջանաց բարեփոխել տալ «Պոլօծէնիա» ի կարգ մը յօդուածները, բայց, իր ճիգերը ապարդիւն մնացին: Մատթէոս Կաթողիկոս վախճանեցաւ 1863 Օգոստոս 22 ին, և թաղուեցաւ Ս. Գայիանէի Վանքը:

—(oo—oo)—

Թուրքիոյ ներքին գործերուն մէջ Եւրոպական պետութեանց յարածուն ոտնձգութիւնները և Բարիզի դաշնագրով պարտադրուած քրիստոնեայ տարրերուն դէպի յառաջդիմութիւն և ազատութիւն ձգտող պայմաններով, որոշ չափով արթնցուցին՝ տիրապետող, և իրեւ աշխարհակալ գերադաս համարուող խոլամ տարրերը, որոնք երբէ՛ք չէին հանդուրժեր, որ մինչեւ այդ օր իրեւ ըստրուկ և հլու հպատակ համարուող քրիստոնեայ ազգանակութիւնները իրենց հաւասար իրաւունքներ ունենան, և պետութեան բոլոր գործերուն մէջ իրենց որոշ մասնակցութիւնները իրենց հաւասար իրաւունքներէն, եւ իրենց նակագութիւնը բերեն: Կը իրաշէին օտարներէն, եւ իրենց

քրիստոնեայ հայրենակիցները կը նկատէին անոնց քաղաքական էնթրիկներուն օժանդակող կամակատարներ:

Այս պատճառու, Թուրքիոյ կարգ մը մասերուն պէս, կիրանան և Սուրբիա խոռվեալ վիճակ մը ոստացան: Տեղոյն քրիստոնեայ Մարօնիները կը պաշտպանուէին Ֆրանսայի կողմէ, իսկ իսլամ Տիւրքիւնները կը պաշտպանուէին Անգլիոյ կողմէ, և հակամարտ պայքար կը մղէին Մարօնիներուն գէմ: Շուտով խառնակութիւնը մէծցաւ 1860 Ապրիլ 17 ին 5 Մարօնիներ սպաննուեցան, և Մայիս 16 ին ալ 1 հոգի, որոնց մին քահանայ էր: Մայիս 29 ին Տիւրքիւններու կողմէ մոխիր դարձան զուտ Մարօնիներէ բնակուած Լիբանանի քանի մը գիւղերը: Զինուորներն ալ մասնակից էին ջարդերուն: Զարդարարները զինեալ յարձակումներով Ռասիայի մէջ 700 քրիստոնեայ սպաննեցին, Զահէի մէջ՝ 400 հոգի, և քանդեցին կաթոլիկներու գոլէմը անող տակ թաղելով կրօնաւորները: Այս ջարդերը արձագանք գտան Սուրբիոյ մէջ ևս: Յուլիս 9 ին մոլեռանդ ամբոխը յարձակեցաւ Դամասկոսի քրիստոնեայ թաղերու վրայ, կոտորեց, հրդեհեց, կողոպտեց, առեւանգեց ամէն ինչ: Կուռակալ Ահմէտ Փաշա իր պալատէն գիտեց 15<sup>0</sup>.000 իսլամներուն՝ 20.000 քրիստոնեաներուն վրայ ի գործ լրած այդ զարհուրելի յարձակումը, և անփոյթ գտնուեցաւ: Եւրոպացւոց թաղը ևս հրոյ ճարակ եղաւ, և Ռուս հիւպատոսն ալ սպաննուեցաւ:

Դամասկոսի ջարդին լուրը Բարիզ հասնելուն պէս նափոլէօն կայսեր հրամանաւ 6.000 ֆրնս. զինուորներ թուլունէն ճամբայ ելան դէպի Սուրբիա: Օսմ. կառավ. ը վախցաւ, և այս միջամտութիւնը կանխելու համար, իրեւ արտասովոր կուսակալ Սուրբիա զրկեց ՖՈՒՒԾ ՓԱՇԱն: Փուատ Փաշա Ա.ՐՃԱԿԱՐԴ ԴԱՏԱՐԱՆ մը կազմեց, և կարճ ատենի մը մէջ պատասխանատունները արդարօնէն դատելով կախեց 57 քաղաքային պաշտօնեաներ,

Կրացանազարկ ըրաւ 111 մեծ ու փոքր դինուորականներ, 525 ջարդարաբներ թիարանի ծանր պատժոյ, և 145 հոգի ալ աքսորի դատապարտեց: կուսակալ Անմէտ Փաշա մահուան դատապարտուելով հրացանի բռնուեցաւ:

Այս կտրուկ գործունէութիւնը ցոյց տուաւ որ, եթէ Թուրք կառվ. ը ուզէ, կրնայ խստօրէն պահպանել երկրին խաղաղութիւնը և գործադրել արդարութիւնը, ինչպէս ըրաւ Վառպուրականի Քրտ. ըմբռատութեան ատեն:

Ֆրնս. զօրքը Պէյրութ համնելուն՝ արդէն ամէն ինչ լմնցած էր: Պոլսոյ գեսպանաժողովին կողմէ. և Բ. Դրան հաւանութեամբ գրի առնուած կանոնագրութիւնը 1861 Յունիս 9ին ստորագրուելով, ԼիբՍ.Ն.Ա.Ն.Զ.Ա.Տ ԿՈՒՍԱԿԱՆԱՐԴԻ մը կազմեց: Առաջին քրիստոնեայ կառավարիչը եղա. կաթոլիկ Հայ մը՝ ՏԱԿՈՒԻՏ ՓԱՇԱ:

Ֆրանս. զօրքը Սուրբիայէն քաշուեցաւ Յնս. Յին:

—o— | —o—

### ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԿՈՒԽԵՐՈՐԴ

—ooo—ooo—


### Ա.Զ.Գ Ա.Ց.Ի Ն ՍԱ.Հ Մ Ա.Ն Ա.Դ Ր Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

— | —

«Սահմանադրական Յանձնաժողով» ին պատրաստած կանոնագրութեան բոլոր յօդուածները, 1857 Փետր. ին գումարուած Ընդհ. Ժողովին մէջ մի առ մի քննուելով գրեթէ միաձայնութեամբ որոշուեցաւ գործադրութեան դնել զայն: Շուտով ծայր առւաւ հտկառակութիւնը վարչական նոր ոգիին դէմ: Սանձարձակ գործող Ամիրաներն և կրօնականները մեծ աղմուկ բարձրացուցին, յայտնելով թէ՝ այդ կանոնագրութիւնը հիմնովին հակառակ է Հայ կրօնին և ազգային աւանդութեանց: Պայքարը ա'յն-

քան սաստկացաւ որ կառվ. ը ստիպուեցաւ միջամտել և խափանել նոր կանոնագրութեան գործադրութիւնը:

Սակայն կարելի՞ բան էր կասեցնել յառաջդիմական շարժումը, որուն գլուխ կանգնած էին Նիկողոս Պալեան, Տօքթ. Սերովը Վիչէնեան (Սերվիչէն), Տօքթ. Նահապետ Խուսինեան, Գրիգոր Օտեան, Կար. Խլթիւճեան, Տօքթ. Ստեփան (ապա Փաշա) Արալանեան, Գրիգոր Աղաթօն, Ալթուն Տիւրրի, և այլ կորովի տէր երիտասարդներ:



### ԳՐԻԳՈՐ ԱՇԱՎՈՅՆ

Յանձնաժողով մը կազմուելով կանոնագիրը բարեկարգին և յղեցին Ընդհանուր Ժողովին: Եւ որովհետեւ նոր կանոնագրով Ազգին դեկը կը յանձնուէր Ազգէն ընտրուած Վարչութեան մը, և Պատրիարքը տրուած որոշմանց լո՛կ գործադիրը կը դառնար, այս անդամ ալ Գէորգ Պատրիարք մերժեց զայն, կրթնելով հակառակորդ կողմին: Պայքարը մեծցաւ, ժողովուրդին մէջ ծայր տուաւ կողմնակցութիւն, «հին» ի և «նոր» ի, «դուրս» էն և «ներս» էն ի խնդիր ծնաւ: Ամբողջ Ազգը ոտքի ելաւ, և երկու մասի բաժնուելով անվերջ ու անօգուտ պայքար մը սկսան, և ամէն ինչ տակն ու վրայ բերին:

Ազատականները վերջապէս յաջողեցան Գէորգ Պատրիարքը տապալել (1860 Ապրիլ) և անոր տեղը իրենց կողմանակից Գույումճեան ՍՍ.ՌԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ դնել անոր օժանդակ տալով առժամեայ Քաղ. Ժողով մը:

Դարձեալ Ընդհ. Ժողով գումարուելով քննուեցաւ բարեփոխեալ կանոնագրութիւնը, և Սարգիս Պատրիարք զայն վաւերացուց: 1860 Մայիս 24 ի Ազգային Ժողով և Տօքթ. Ն. Ռուսինեանի փառաւոր մկրտութեամբ հոչակուեցաւ ԱԶԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՌՈՒԹԻԹԻՒՆ:



ԿԱՐ. ԻԿԹԻԻՃԵԱՆ



Տօքթ. Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

Մեծ եղաւ ազատականներուն ուրախութիւնը, թէ իրենց դէմ պայքարը չգալիքցաւ: Գույումճ եան Եպիսկոպութիւնը առաջին Սահմանադրական Պատրիարք, իր երգման արարողութիւնը կատարեց, որով կ'ուխտէր «հաւատարիմ մնալ Ազգային Սահմանադրութեան, և շարժիլ անոր ոգիին համաձայն», ինչ որ կամքն էր ամբողջ Ազգին:

Նոր Օրէնքին արամադրութեանց համաձայն, ամբողջ Թրքահայոց կողմէ ընտրուած 120 Երեսփոխանաց անդ րանիկ Ժողովը տեղի ունեցաւ 1860 Օգոստոս 23 ին. Սարգիս Պատրիարքի նախագահութեամբ: Օրակարգն էր,

ա-- Ազգ. Ստհմանադրութիւնը կարդալ և ստորագրել: բ-- Կազմել Ընդհանուր Ժողովին Դիւանը: գ-- Ընտրել Կրօնական և Քաղաքական Ժողովները: դ-- Առժամեայ նախորդ Քաղ. Ժողովին համարատութիւնը ստանալ:

Քուէից ճմեծամասնութեամբ, Ազգ. Երեսփոխանական Ընդհանուր Ժողովոյ Առաջին Ստենապետ ընտրուեցաւ Տօքթ. Սերգիէն, և Բ. Ատենապետ՝ Տօքթ. Ստեփ. Փաշա Արսլանեան: Ա. և Բ. Ատենապետը ընտրուեցան

Գր. Աղաթօն և Կր. Խմբիւճեան: Առաջին Քաղ. Ժողովի Ատենապետ եղաւ Գր. Մակարեան:



Տօքթ. ՍԵՐԳԻՉԻՆ

լու վրայ էր, եւ մասնաւորաբար մտադրսւթիւն կար իր ողբալի վիճակէն փրկել Երուսաղէմի Պատրիարքութիւնը: Երեսփոխաններէն ոմանք կը պնդեն Ս. Յակոբայ միաբանութենէն դուրս Թրքահայ Եպիսկոպոսներէ ընտրել Պատրիարքը, մինչ մեծ մասը հակակարծիք կը գտնուի:

Միաբանութիւնը բողոքաց Ազգ. Ժողովին մօտ, պահանջեց որ Պատրիարքը անպատճառ Միաբանութենէն ընտրուի, որովհետեւ, դուրսէն եկողը անտեղեակ ըլլալով Վանքին անցուղարձերուն և օտարազգեաց ոտնձգութիւն-

Ներուն, իսի ստ վասակար կրնայ ըլլալ Վանքին իրատեսակէտը, և առիթ գտան Սահմանադրասկրներուն դէմ պայքարելու: Սարգիս Պատրիարք դրժեց իր ուխտը, ուրեք տարի երուսաղէմի ընտրութեան շուրջ պայքարը շարունակուեցաւ: Սահմանադրական կողմը կ'ոչուեցաւ ՀՈՒՍԱՀՈՐԵԱԼ, իսկ հակառակ կողմը ԽԱՀԱՐԵԱԼ: Պահ-կողմն էին աւանդապահ Տէրոյենցի ԵՐԵՒԱԿը Ստեփան Փափազեանի ԺԱՄԱՆԱԿը, եւ Գ. Տէյիրմէնձեանի ԱՐԵՒԵԼԵԱՆ ԴԱՏԸ: Իսկ ազատականաց օրկաններն էին Կ. Իւթիւնեանի ՄԱՆՈՒԾ, Յ. Սփաճեանի ՄԵՂՈՒՆ, եւ ՄԻՒՆԱԴԻԻ թերթերը: Ազատականք յաջողեցան գահէջ ձգել Սարգիս Պատր.ը, և Տեղապահ դրին Նիկոմիդիոյ Ստեփաննոս Եպիսկոպոս:

### Տօքթ. Ա. Ա. ՓԱՎԵԱԱ ԱՐՄԱՆԵԱՆ

Կառավարութիւնը Հայ Ազգին այս խոռվայոյզ վիճակը տեսնելով, եւ մանաւանդ կարծելով թէ Ազգ. նոր Օրէնքն է բո՛ւն պատճառը, հրամայեց «Պաղքեցնել Ազգ. ժողովոյ նիստերը, եւ նոր Յանձնաժողով մը կաղմելով կարճ ժամանակի մէջ վերաքննել Սահմանադրութիւնը, եւ ուղարկել Բարձրագոյն Դուռ, որպէսզի, քննուելով վաւերացուի և գործադրութեան դրուի»: Նոր և հին Յանձնաժողովները նիստ գումարելով կարճ ժամանակի մը մէջ լրացուցին իրենց քննութիւնները, եւ տեղեկագրի մը հետ, Սահմ.ը դրկեցին Բ. Դուռ: Կառվ. բերկար ձգձգութիւնը յետոյ վաւերացուց զայն, իրբեւ ՊԵՏԱԿԱՆ ՕՐԷՆՔ:



Ոյոպէս, Տէրութեան կողմէ վաւերացեալ Հիմնական Օրէնքի մը տիրացաւ ազգը, սկզբունք ունենալով թէ՝

Ազգին ամեն մէկ անհատը ուո Ազգը պարտաւորութիւն. ներ ունի, Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի Ազգին եւ Ազգն անհատներէն: Ուստի, Ազգն ու ազգայինք փոխադարձ պարտեօք կապուած են իրարու իետ, այսպէս որ, մէկին պարտաւորութիւնը միւսին իրաւունքն է:

1863 Մարտ 20 ին գումարուած ազգ. Ընդհ. Ժողովին մէջ վերոյիշեալ Սահմանադրութիւնը ընդունուելով, միաձայն կ'որոշուի Հայ ազգին կողմէ շնորհակալութեան ուղերձ մը մատուցանել Բ. Դրան, ինչ որ անմիջապէս կը կատարուի:

Նորընտիր Ազգ. Երեսփ. Ժողովի առաջին գործը եղաւ Երուսաղէմայ Պատրիարքին ընտրութիւնը՝ ըստ Միաբանութեան տեսակէտին, որով, Պատրիարք ընտրուեցաւ Թալասցի ԵՍԱՅԻ ՎՐԴ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ (1864 օգ. 14), որ էջմիածին Երթալով Եպիսկոպոսացաւ:

Թուրքիոյ Հայոց ազգ. կեանքը սկսաւ զարթնուկ և կանոնաւորուիլ ըստ Ազգ. Սահմանադրութեան:

### Զ Ե Յ Թ Ո Ւ Խ Ի Բ Ա Ն Ց Ե Ա Ա Լ Ե Ի 8 6 2 Ի Պ Ա Տ Ե Ր Ա Զ Մ Հ

—○○○○○—○○○○○—

Ծանօթ է բարորին որ Կիլիկեան ՀԱՅԱՇԽԱՐՀ նախապէս եղած է Յունական երկիր մը՝ հոծ Յոյն բնակչութեամբ: Բազրատունի Թագաւորութեան կործանումէն յետոյ, տարաբաղդ Գագիկ Բ. ի ազգական ՌՈՒԲԻԷՆ քաջ իշխան Կիլիկիան Տաւրոսի լայնատարած բարձունքներուն վրայ հիմնեց Ռուբինեանց Իշխանութիւնը (1080): Ասիէն գաղթողներ հաստատուեցան Յուլիոպոլիս կոչեալ ամուր բերդին մօտ, և Եէնի-Տիւնեա (Նոր-Աշխարհ) թա-

ղամասը հիմնելով: Հայերը հետզհետէ այնքան շատցան որ բնիկ Յոյները ստիպուեցան կիլիկիայէն հեռանալ: Յուլիոպոլիս ևս Հայոց ձեռքն անցաւ, ու կոչուեցաւ ԶէՅթուին: Զէյթունցիք օժանդակած են Ուուրինեանց իշխանութեան տարածման, և Յունաց դէմ մղուող կոիւնեան: Աւալի յետոյ, բարբարոսաց արշաւներու ատեն, տանելով Ուկնի Հայ գիւղի ժողովուրդը Զէյթուն ապաստանելով Ուկնին, ևս կոչած են զայն:

Կը պատմուի թէ, Ուուրինեանց սպարապետ եթում իշխան կ'սպաննուի Գրիգոր անուն ազգուրաց դաւաճանի մը կողմէ: Հեթումի կինը՝ ԶՍՐՄՍՆՈՒՀԻՆ, իր բնակավայրէն սարսափահար կը փախչի և իր Գէ՛ՌՈՒ զաւկին հետ կոկիսոնի և Զէյթունի լեռները կ'ապաստանի: Հինգ տարի շարունակ կը թափառի այդ կողմէրը, ու վերջապէս ինքինքը կը յայտնէ Հայոց, իր շուրջը 500 կը տրիծներ հաւաքելով կը վանէ Թիւրքմէնները, և կը տիրէ Զէյթունի և կապանի: Զարմանուհիի հերոսութիւնները բազմաթիւ են, ան իշխած է 63 տարի, և թողած պանծալի անուն մը: Իրեն յաջորդած է Գէորգ որդին:

Ժամանակ մը յետոյ կիլիկեան Աշխարհը անցաւ Օսմանցիներուն ձեռքը: Զէյթուն թէեւմի՛շտ կէս անկահ կեանք մը ապրեցաւ. բայց ստիպուեցաւ տուրք վճարել: Կիլիկիոյ ոսհմաններուն վրայ իրարու թշնամի երնային Զէյթունը: Պէյազիտի ցեղը յաղթելով թշնամի Զիւ Գատրիյէ ցեղին, տիրեց Զէյթունի: Պէքիր ցեղ պետք հաստատուեցաւ հոն, և շինեց անառիկ բերդ մը: Պէքիր Զէյթունցւոց գլխուն բռնակալ մը դառնալով իր բոլոր կրից յագուրդ տալ ջանաց, մինչև իսկ նոր հարսերու առաջին վայելքը իրեն վերապահել ու արտադրելով: Զէյթունցիք շա'տ նեղ մնացած՝ դրեթէ կորուսած էին իրենց պապերու քաջարի ողին, որով, սովորական բան

մը դարձած էր Հայ գեղուհիներուն Պէքիրի կանանոցը առաջնորդելը: Բայց կարելի բան էր միթէ այս անպատիւ բռնութեան դէմ շընդգիլ: Բռնակալին դէմ ցտսումը օրէ օր կ'աճի Զէյթունցիներու սրտին մէջ: Ա՛լ առիթ մը պէտք էր որ Զէյթունցին վրէժ լուծէր և մաքրէր իր անպատուած մաքուր պատիւը: Եւ օր մը առիթը հասաւ:

Զէյթունի Սուրէնենց թաղի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ տեղի կ'ունենայ երիտասարդ զոյգի մը պըսակաղրութեան հանդէսը խուռն բազմութեան մը ներկայութեան, որմէ վերջ, ըստ սովորութեան նորապսակ գեղանի հարսը կը բերեն դուրս, տանելու համար Պէքիրի մօտ, որ քիչ տնդին իր հեծեաներով ակնապիշ կ'սպասէր այս նոր որսին, ձիուն գաւակը առնելով զայն իր ապարանքը տանելու, և անոր վրայ իր գաղանի կիրքը յացեցնելու համար:

Փեսան, սրտոտ և կտրիճ երիտասարդ մը, տաճարին դրան սեմին վրայ գլխիկոր կանգնած՝ կը դիտէր բռնակալը, որ խենէշ նայուածքներ կ'արձակէր իր հարսին վրայ: Կը դիտէր իր սիրասուն կոյս հարսը, որ յամրաքայլ կը յառաջանար դէպի բռնակալը: Կը դիտէր մանաւանդ ստրկացած ամբոխը՝ որ անտարբերօրէն կը հեռանար Աստուծոյ Տաճարէն՝ առանց զայրոյթի և ընդգումի նըշան մը ցոյց տալու՝ տեղի ունեցող անպատուութեան դէմ:

Հարսը կը մօտենայ Պէքիրին, որուն նշանացի մէկ ակնարկին վրայ, բռնաւորին հետեւորդներէն մին ձիէն իջնելով հարսը կը յափշտակէ և կը հեծցնէ Պէքիրի ձիւն գաւակը: Դժբաղդ փեսան կը գունատի, ակնթարթի մը մէջ իր աշքին առջեւ կ'ուգայ ա՛յն սարսափելի և անպատիւ տեսարանը՝ զոր քիչ վերջ բռնաւորին կանանցին մէջ պիտի պարզուէր: Զի՞ կրնար այլևս համբերել, արծուի նման կատաղի խոյանքով մը կը յարձակի Պէքիրի վրայ, և իր մէջքէն կախուած փեսայի թուրը շո-

դացնելով, մէկ հարուածով գետին կը տապալէ զտյն, միւս կողմէ, իր հաստ բազուկով գրկելով իր հարսը, կ'ու զէ փրկել զայն ու թոցնել: Սակայն, իրենց պետին արեան ճապաղիքներու մէջ անզօր գալարուփիլը տեսնող Պէքիրի հեծեալները այլալլած՝ կը յարձակին փեսին վրայ, կտոր կտոր ընելով մարմինը գայլերունման կը յօշուեն:

Այս անսպասելի դէպքէն զրգուած Զէյթունցի երիտասարդները կը խառնուին կոռուի և քանիմը վայրկեանչն կը մաքրեն Պէքիրի կատղած ձիաւորներուն հաշիւը: Նորապսակ հէք հարսը ձեռքէ ձեռք խլելով կ'ազատեն և կը փախցնեն ապահով չայոց թաղերէն մին: Յետոյ աւելի մեծ խումբով կը յարձակին Պէքիրի անառիկ ապաքին վրայ, կը գրաւեն զայն, հոն խմբուող բոլոր թուրքերը սրէ կ'անցունեն՝ առանց ինայելունոյն իսկ ծծկեր մանուկներուն, յետոյ շէնքը մոխրակոյտի կը վերածեն:

Այս մաքրագործումով Զէյթուն այլեւս վերստացած էր իր անկարսութիւնը: Բոլոր ժողովուրդը կը զինուի, և թշնամի որ եւէ յարձակման դէմ պատրաստ գտնուելով հանդերձ, կը լծուի տնտեսական զարգացման:

Թիւքմէնք տիրացած էին կիլիկիոյ արդասարեր մասին և սովորութիւն ունէին ամառնային ամիսները խըմբովին անցունել Զէյթունի մօտ վայրերուն մէջ, և վերարձի ատեն իրենց կենդաները մեծ փասներ կը հասցը-նէին չայոց այգիներուն, իսկ խերձ գիւղացիք անկարող էին այս չարիքը արդիլելու: Ծանր էր այս կացութիւնը: Զէյթունցիք վճռեցին լաւ դաս մը տալ թիւքմէն թափառաշրջիկներուն:

Ուստի, Սուրէնեան իշխանի հրամանին տակ զինտինի կիրճին մէջ յանկարծակիի բերելով մեծ ջարդ մը Զէյթունցւոց չեռքը:

Յաջորդ տարի հաղտրաւոր թիւքմէն եփաւորներ եկան Զէյթունի վրայ, վրէժ լուծելու համար: Զէյթունցիք որ դարանակալ կ'սպասէին, չորս կողմէ յարձակելով ընաշխնջ ըրին: զանոնք: Այնուհետեւ բաւական տարիներ կը միւս շարունակուեցաւ մի՛շտ ի նպաստ մերայնոց, մինչեւ որ՝ յաղթելէ յուսահատ թիւքմէնները դադրեցան արշաւէ, և իրենց կենդանեաց ճարակր փնտուեցին ուրիշ կողմ:

Զէյթունցիներուն քաջութեան համբաւը տարածուեցաւ ամէն կողմ, և զրացի այլազգիները չհամարձակեցան Զէյթունի մօտենալ: Բայց, Մարաշի թուրքերը և կառավարութիւնը ծանր տուրքեր կը պահանջէին Զէյթունցիներէն, որոնք անվճար մնալով կ'աւելնային:

Այս ցաւին դարման տանելու համար Զէյթունի չորս իշխանք ժողով գումարելով որոշեցին Պոլիս զրկել Զարմանուհիի Գէորգ որդուն շառաւիդներէն Տէր Հեթում քառ քահանան. որպէսզի Սուլթան Մուրատ Դ. ի ներկայանայ, և Զէյթունի վիճակը պարզելով այդ տուրքերուն շնորհուիլը խնդրէ: Տէր Հեթում Պոլիս երթալով կը յաջողի Սուլթանին ներկայացնել ժողովուրդին իշխնդրանքը: Երջանկայիշատակ Սուլթանը, իր իսկ զրով և ստորագրութեամբ հետեւեալ շրովարտակը կ'ուտայ անոր:

Յայտնի է Խէ՛ Զէյթուն գաւառակը քարքարուտ է եւ ընդարձակ հողեր չունի, այնպէս որ ժողովուրդը իր ապրուստին համար կը նեղուի ու կստիպուի ցորեն, գարի եւ ունիշ արմտիքներ դուրսէն բերել տալ: Ուստի, Զէյթուն գաւառակը՝ որ Մարաշի գաւառին կը պատկանի, իմ կայսերական երկիրներուս մէջ ապրող բոլոր հպատակներուս մէջն բացառութիւն կազմելով զերծ կը կացուցանեմ զինուրական տուրքէն (խարաճ վէրկիւսիւ), զոր պարտաւոր էին Վճարել կայսերական գանձուն: Մի՛այն տարուէ տարի որոշեալ տուրքերնին 15.000 դրուշ է, եւ այս գումարը Խոհանուցուի Այա Սօմբիա մզկիթին հոգաբարձուին (միւթէվէլլի), որպէսզի կանթեղներուն իւղ առնուելով մզկիթը լուսաւորվի: 15.000 դրուշ ալ իրենց եկեղեցիներուն Խոհ Վարենդար-

նեալ կանթեղներուն համար, որպէսզի, իրենց աղօթատեղի ները լուսաւորուին: Թէ Այս Սոֆիա մզկիթին եւ Թէ իրենց եկեղեցիներուն պատկանեալ կալուածք Թող համարուին: Ուրիշ ո՛չ մէկ թագաւոր Թող չի միջամտէ: Իմ կայսերական համարում իս արժանացող Զէյթունի: Նոյնպէս գաւառակին մէջ Թուրք պաշտօնեաներ Թող չի գտնուին, եւ եթէ Թուրք պաշտօնեաներէն մէկը ճամբօրդը թեամբ այդ գաւառակին համդիպի, այդ ճամբօրդը քաղաքին մէջ պիտի չի պառկի, այդ քաղաքէն դուրս տեղ մը պէտք է պառկի, այնպէս որ՝ իմ տուած բացառիկ և ինքնավար գրութեան եւ ո՛չ մէկ կողմէ մսաս չհասնի. իրենք Թող կառավարեն իրենք զիրենք:

Այսպէմ Թող գիտնան, Սրբազն կնիքիս Թող վստահին: Կ.պօլիս, յամին 1036 Շէվալի 29 ՄՈՒՐԱՏ

Շնորհիւ կայս. Ֆէրմանին, երկար ատեն չի կրցան անոնք խլրտիլ Զէյթունի դէմ: Սակայն 1780 ին, Մարաշի կառավարիչ զօր. ԷՕՄԷր Փաշա. մոլեռանդ Թուրքերէն գրգոռւած, հզօր բանակով մը յանկարծ Զէյթունի վրայ քալեց, և պահանջեց որ 15.000 դրշ. տուրքը իրեն վճարուի: Զէյթունցիք մերժեցին. և պատրաստուեցան մեծ կոռուի: Էօմէր Փաշա չհամարձակեցաւ կոռուի, այլ մտածեց պաշարելով անձնատուր առնել Զէյթունը:

Եօթը ամիս Զէյթուն դիմացաւ, բայց երբ սովը տիրեց, մէծերը ժողով ըրին դարման մտածելու համար:

Ժաղովին ներկայացաւ Յակոբ անուն կարճիկ քաջ մը, որ յանձն առաւ սպաննել Էօմէր Փաշան: Արդարեւ, Յակոբ խոյի մորթով ծպտուած. և ձեռքերն ալ իբրեւ ոտք գործածելով յաջողեցաւ սողսկիլ թուրք զօրաց մէջէն, և հասնի Էօմէր Փաշայի վրանին ետին, ու պահութափիլ:

Արշալոյին, երբ Փաշան « պիսմիլլահ... » ըսելով ապտէսթ կառնէր, Յակոբ ծունկի եկաւ երեսը խաչակինքեց, և « Յանուն Յիսուսի Քրիստոսի » ըսելով, քաշեց ատրճանակին բլթակը: Էօմէր Փաշա՝ « զարնուեցա՛ օգնութիւն » աղաղակելով ինկաւ գետին, մինչ Յակոբ, տիրող շփոթութենէն օդտուելով փախաւ, և կայծակինը

ման արագ գնաց միանալ մօտակայ կիրճերուն մէջ դարանակալ սպասող Հայ կտրիճ ընկերներուն, որոնք սոսկալի աղմուկով և ահեղ գնդակահարութեամբ ինկան շուարած թուրքերուն վրայ, մեծ ջարդ տուին և փախցուցին զանոնք: Անհաշիւ գին. աւար և ուտեստեղէն մնաց Հայոց:

Մարաշի միթէսարք Ալի Փաշա 1782 ինյարձակեցաւ Զէյթունի վրայ բայց չարաչարյաղթ ու ելով փախաւ Մարաշ, ուր մէկ քանի ժամ էն կաթուածահար եղաւ:

1798 ին, Մարաշի կառավարիչ Գալեստէր Փաշա ևս 9 ամիս պաշարեց Զէյթունը: Զէյթունցիք խոհեմութիւն համարեցին ընդունիլ տարեկան որոշեալ առուրքը իրեն տալ որով հաշտութիւն գոյացաւ, թէկերբէ՛ք չտուին:

Զէյթունի համար դժբաղդ և սուզի տարի մը եղառ 1850 թուականը: Եղբայրասպան պատերազմ մը տեղի ունեցաւ հետեւեալ պարագաներու տակ:

Ըստ սովորութեան 1830 տարւոյ 15.000 դրշ.ի ծա, նօթ առուրքը Մհատ. Մանուկ Պէրօեանի կողմէ Այա-Սօֆիա մզկիթին վերատեսչին յանձնուած ատեն, վերատեսուը ո՛վ գիտէ ի՞նչ նպատակաւ, խորհուրդ կ'ուտայ անոր, որ Զէյթունի մէջ գտնուող Թուրքերը ոնեւէ ձեւով հեռացընեն, վասնզի, իմ ցեղակիցներուս վատութիւնը և ապերախտութիւնը ծանօթ են ինծի, երբ կարեւոր ոյժ մը կազմէն՝ ձեր գլխուն փորձանք պիտի դառնան, կ'ըսէ:

Մանուկ վերադարձին Զէյթունի իշխաններուն պատմեց այս խօսակցութիւնը, որոնք Սուրէնեան իշխանին այս մասին յղացած ծրագիրը ընդունելով, գործադրումը յանձնեցին Սուրէնեանին:

Նոյն երեկոյին Սուրէնեան իշխան քահանայի մը հետ գնաց ՀԱՃի ԻՊՐՍՀԻՄԵՆՑ ՀԱՍԱՆ ԱՂԱՅԻ տունը և ըսաւ, « Աստուծոյ հրամանաւ և ձեր Մարգարէին կանոնով կը հնդիքմ որ ՌԱԶԻՒ անուն ձեր գուստարը ՄԱՐՏԻՐՈՍ որբւոյս տաք »: Հասան Աղա իսլամի մը աղջիկը քրիս-

տոնէի մը տղուն հետ ամուսնացնելը անկարելի և ապօրինի գտնելով, աղաչեց իշխանին, որ հրաժարի ատկէ: իշխանը պնդեց՝ ըսելով «Աղջիկդ թող պահէ իշխամութիւնը և ազատորէն կատարէ իր կրօնական պարտս կանութիւնները, բաւական է որ դուն հաճիս աղջիկդ հարսնացնելիմ զաւկիս հետ. ատով աւելի պիտի ամրապնդուի մեր բարեկամութիւնը, հակառակ պարագային, պէտք է ելլես Զէյթունէն բոլոր ազգակիցներովդ: Մինչեւ առառու քեզի միջոց, պէտք է երկու առաջարկէս մին ընդունիս»:

Թուրքերը չէին կրնար ո՛չ Զէյթունը լքել, և ո՛չ ալ աղջիկ տալ որով, ճարահատ Եաղուպեանց պաշտպա նութիւնը ինդրեցին: Եաղուպեան իշխան նախ խոտորէն մերժեց, բայց ի վերջոյ անոնց թափանձանքին չդիմա նալով, իբրեւ մարդ, իր հովանիին տակ առաւ զանոնք:

Յաջորդ օր Սուրէնեան իշխան բացատրութիւն ու զեց Եաղուպեանէն, որ բաւարար այժմ թոյլատրեցի հաւատարիմ մնալ ինծի և ձեզի միանգամայն. սակայն, ներողամիտ եղէք ինծի:

Իշխան Հածի ԽԱԶԻԿ Սուրէնեան պահանջեց Թուրինդրեց, միւս իշխանք ևս համամիտ գտնուեցան, բայց Սուրէնեան մերժեց: Այն ատեն Եաղուպեան զայրացկոտ պոտաց: — «Թուրքերը իմ պաշտպանութեանս տակ անուեցան: Յաջորդ օր Սուրէնեանք պատերազմ յայտարա վերջինք վանք երթալով բողոքեցին: Առաջնորդ ՅԱԿՈ ԲՈՍ ԵՊԻՍԿ. ՊՕՍՏԱՆԵԱՆ, Այնթապի Առաջնորդ ՅՈՎ ՀԱՆՆԵՍ ԵՊԻՍԿ. միջամտեցին, և Եաղուպեան յանձն

առաւ արտաքսել Թուրքերը, բայց անօգուտ: Սուրէնեանի համար իր հակառակորդը խոստմազրուժ մըն էր, և մահու պատժով պիտի տար անոր դասը :

Եղբայրասպան կոիւը սկսաւ: Եաղուպեանց միացան

ՇէՎՈՒՅԵԱՆՔ, իսկ Եէնի-ՏիկնեԱԱԱՆՔ անցան Սուրէնեանց կողմը: Այսպէս, ամբողջ Զէյթուն երկու մասի բաժնուած՝ անխնայ զիրար կոտորեցին: Թուրքերը սար սափահար չուեցին Զէյթունէն Յ ժամ՝ հեռու, ԹՎԱՆՑ Թրքաբնակ գիւղը:

Մարաշի կուսակալ ՍիկէՅՄԱՆ ՓԱՇԱ լուր դրկեց Եաղուպեան իշխանի՝ թէ պատրաստ է օգնելու իրեն, իր թրքապաշտպան ընթացքին համար: Իշխանը վեհանձնու Յէն պատասխանեց,

Ե՛ս, հակառակորդներէս Վրէժ լւժելու համար օտարազգիի օգնութեան չեմ կարօտիր: Եաղուպեանը վատ մի՛ կարծէր, Եւ եթէ ազդարարութեանս հակառակ յանդգնիս ոտք կոխել Զէյթունի հոգ ը, լա՛ւ գիտցիր օր զէնքս քու վրադ պիտի դարձնեմ:

Նենգամիտ Սիւլէյման, որ առիթէն օգտուելով Զէյթունը բնաջնջել կ'ուզէր, այս մերժումէն չյուսահատեցաւ, այս անգամ Սուրէնեանին դիմեց միենոյն առաջարկով: Սուրէնեան Մարաշ գնաց և Սիւլէյման Փաշայի գօրքը Զէյթուն առաջնորդելով բնակեցուց Ս. Աստուածածնայ Վանքը (1851): Եաղուպեան կատղեցաւ: Եւ որ պէսզի թշնամույն նպատակը ի վերև հանէ, իր մարդերով գիշերանց կոխեց Սուրէնեանց բերդը, բոլոր բերդապահները սրէ. անցուց: Սուրէնեաններէն մանկիկ մը և հոգի միայն ազատեցան՝ բերդէն զուրս գտնուելով:

Սիւլէյման Փաշա երբ իմացաւ այս ահոելի շարդը սարսափած գոչեց,

— Այս Եաղուպեանները կատալի մարտիկ են. իրենց ազգակիցները երբ այսպէս սուրէ անցւեցին, կասկած չկայ յու, այս վանքին մէջ մեւլ բոլորս ողջ ողջ կրւտեն:

Ու դողահար իր զօրքով շտապ քաշուեցաւ Մարաշ:

Եօթը ամիս տեւեց այս եղբայրասպան կոփէր, որուն զոհ գացին 400 կտրիմներ, և մեծ սուզի մատնեցին Զէյթունը: Վերջապէս երկու եպիսկոպոսոց և ժողովրդեան ջտնքով հաշտութիւն գոյացաւ: Սուրէնեանք 9 ամիս վերջ կոխեցին ԹՄՆԸՐ գիւղը, հարէ անցուցին խպահիմի ցեղը: Միւլէման Փաշա զայս լսելով յարձակեցաւ Զէյթունի վրայ: Չորս իշխանք և ժողովուրդը միաբանելով չորս կողմէ գրոհ տուին և Յ00 զինւոր ջարդեցին: Փաշան լեռապատառ Մարաշ փախու, և իր մօտ եկողներուն ըստ, —Այս եալուպեանք խորամնակ աղուէնսեր են, այդ կեափուր ներուն ինտ Խշամանալ օգուտ չունի, լաւ է բարեկամ մնալ:

Զէյթունցիք տեսան որ Սուլթ. Մուրատի հրովարտակին ուժը կորսուած է Մարաշի կառավ. մօտ, Պոլիս ղրկեցին Ղավուղը պէօյիւքեան Տ. ՕՀԱՆ ՔԱՀԱՆԱՅՆ, որ քաջ պատրաստաբան և փայելչադէմ մարդ մ'էր, որ պէսզի, Սուլթ. Մահմուտ Բ. Էն հաստատել տայ զայն: Տէր Օ՛ան կը հասնի Պոլիս կուղէ ներկայանալ Պատրիարքին: Աղաւնի պատրիարք, որ տեղեկացած էր անոր ո'վ ըլլալուն, սկսաւ յանդիմանել զայն, ըսելով թէ՝ «քահանայ չես դուն այլ՝ ապստամբապետ մը, վասնզի, քրիստոնէին չէր վայլեր զէնք կըել ու սուր գործածել թագաւորին դէմ: որ Աստուծոյ փոխանորդն է»:

Տէր Օհան զայրանալով կըսէ,

— Հայր Սուրբ, մենք ապստամբ չենք, այլ քաշուեամբ կը պաշտպանեմք մեր արդար իրաւունքներն եւ Սուլթ. Մուրատին մեջի պարգևուած առանձնահնորիւմը, զոր այժմ խըլ կուզն մեզմէ բռնի ու սուրբ գորութիւնով. ասոր իհամար կը պարտաւորուինք պէտք եղած ատեն սուր գործածել, այն պէս եթէ չընէինք. շատոնց Զէյթունը իիմնայատակ կործան. եւ մ'եր անունն չնշուած պիտի ըլլար երկրիս երեսէն: իր ամնիր եւ իրաւունքը պաշտպանը ապստամբութիւն է մի թէ, չայցր Սուրբ:

— Պատրիարքին Հայր Սուլթը կ'ըսէն, անպիտան, գոռաց Պատրիարքը, դուն բնա՛ւ քաղաքավարութիւն չունիս եղեր: — Հաւաք գու՛ն, ես ողջունեցի զքի զ երբ ներս մտայ, բայց դուն, առանց ողջոյն առնելու. այս երկար ուշեւորութեանս բառ մը արտասանելու, սկսար նախատինք Խափել գլխուա: ես քեզ Հայր Սուրբ կոչեցի. Խէեւ այդ յորջորջումին ալ արժանի ըլլալու երեւոյթը չունին, բայց գուն. իմ աստիճանիս համապատասխանող ախտղուն իսկ զացար, իահանայութիւնս անգամ կ'ուրանաս, մինչդեռ գիտես Խէյթունի աւագ քահանան եմ, եւ տարիբով երիցագոյն քան զքէ լ լանաւանդ գիտես որ հասարակաց վերաբերեալ գործի մը համար եկած եմ, եթէ այսպէս փարուելով պարտականութենէդ խոյս տալ եւ ֆէրթԱՆ ի նորոգութեան ինդիբը խափանել կուցն, ըսէ ինծի որ գլխուս նարը նայիմ: Այսու ամենայնիւ, այս գործին յաշողութեան չտշխատիս, կամ արգելք ըլլալ ուզես, քեզի կը նանցնեմ թէ ո'վ է Տէ Լ. Ի Ք է Շն Ը Ը :

Աղաւնի Պատրիարք այս խիստ խօսքերը լսելով սաստիկ բորբոքեցաւ, և եաս ախճին երուն հրամայեց որ այդ և ենթը բանտարկեն խուցի մը մէջ. առանց հաց և ջուր տալո, ինչ որ խիստ դժուարութիւնով կը գործադրեն, Տ. Օհանի գորեղ ընդդիմութեան պատճառով: Յաջորդ օր, Թիւթիւննեան ընտանիքը բարեխօսելով Պատր. Հօր մօտ, ազատեցին բանտէն, և խորհուրդ տուին անոր, որ անձամբ դիմէ Սուլթանին՝ ինդրագիր ի ձեռին: Սա՛ ալ ըսին, որ եթէ ինդիրքդ հաճելի չի թուի Սուլթանին՝ գուցէ կեանքդ վանգի մէջ իինայ:

« Ի սէր Աղգիս ու Հայրենիքիս պատրաստ եմ կեանքս տալու, ըստ քաջասիրտ հոգեւորականը: Թիւթիւննեանք ազդու խնդրագիր մը պատրաստելով

Տ. Օհանի տուին: Ուզեցին որ Պոլսոյ Հայ տարագ հայ ցընեն նա մերժեց ըսելով, « Ես հոգիո՛վ քահանայ եմ, և ո՛չ ձեւով »: Տ. Օհան հագած էր չուխա շալկար, մէջքը Լահօրի շալ կապած, գլուխը խոշոր ֆէս մը, վրան Լահօրի շալ փաթթած, իսկ ոտքը հագած էր Սյնթապի կարմիր կօշիկ:

Զայն տեսնողները թիւրքմէն ցողապետ մը կը կարծէին։  
Զէլթունցի քահանա։ Նոյն Ռուբաթ օր գնաց Սուլթան  
Պայազիտի հրապարակը, և կ-յսեր դէպի մզկիթ աղօթքի  
եկած պահուն, խուներամամրոխին մէջէն յառաջանալով  
ուժգին գոչեց, « Թագա՛ւրս ուշ ուշ զիր աղերսանքիս »։

Ամբոխին հրմշտկունցաւ և լաւ ապտակ մալ կերաւ։  
Կայսրը հրամայեց ի- քով բերել զայն։ Խոր լոռութեան  
մէջ Տ. Օհան մօտեցաւ Սուլթանին, և քղանցքը համբու-  
րելով յանձնեց աղերսագիրը։ Կայորը կարդաց և լսաւ,

Ստորագրութիւնիդ քահանայ է, բայց դուք քահանայի  
կերպարանը չունիք, արդարեւ քահանայ էք։

- Այս, զե՞ն, Տէր, ծառանիդ Տէլի Քէնին կը կոչուիմ, 12 տարի  
շարունակ 1200 ձիաւորներով ծառայած եմ Տէրութեանս. Հա-  
լէպի, Վասնայի, Գոնիայի եւ Պաղտատի կողմերը տէլ իպա-  
շութիւն տեսակ մը զինուորութիւն։ Անելով :

Սուլթանը այս խօսքերէն գոհ մնալով հրամայեց իր  
թիկնապահից որ զայն ձիու վրայ նստեցնելով Պատրի-  
արքարան տանին, վասնզի, ըսաւ, սիրեցի զայն իր հա-  
մարձակախօսութեան համար։ Խոստացաւ օրէն կատա-  
րել իր խնդրանքը։ Երեք սուսերակիր Փաշաներով Պատ-  
րիարքարան եկաւ Տ. Օհան։ Պատր. ը ապշեցաւ և դողաց։  
Նարարենք ձեզ որ այս ազնիւ քահանան արժանավայել  
կերպով հիւրասիրէք։ « Ամենայն սիրով », ըսաւ Պատր. ը,

Տ. Օհան՝ առիթէն օգտուելով ըսաւ Պատրիարքին,

Արբաւան Հայր, առիկ առաջ երբ քեզիներկայացայ ու Քրիս-  
տոնով խօսեցայ անարգեցիր զիսու բանտարկեցիր. իսկ այժմ  
որ աշխարհային իշխանութեան կողմէ կուգամ կը պատուես  
Արքացաւը կարմրեցաւ և ներողութիւն ինսդրեց անկէ։  
Երեք որ վերջ Փաշա մը վաւերացեալ Ֆէրմանը բերաւ և

խաչի նշանի մը հետ յանձնեց Տէլի Քէշիշին, հաղորդեց  
նաև կայսեր քարեւնեց։ Տ. Օհան Զէլթուն մեկնեցաւ։

Հրովարտակին վաւերացումով Զէլթուն քիչ մը շունչ  
առաւ և քանիմը տարի անդորրութեան երես տեսաւ. սա  
կայն, 1840 էն մինչև 1862, Զէլթունցիք ոտիպուեցան մը-  
ղել 10 է աւելի յաղթական մարտեր, որոնմէ է ն մեծն  
ու ահեղը եղաւ 1862 ի պատեր սզմը։

Լիբանանի առանձնաշնորհեալ գիրքը և Զէլթունի յաղ,  
թութիւնները, կիլիկիոյ Բուրբինեանց պետութիւնը վե-  
րահիմնելու յոյսը ճնցուցին։ Այս վիտումով, ՀԱ. ԸՆՅԻ  
Լիհիմն, իբրեւ Զէլթունի իշխան, Փարիզ երթալով կար.  
Վրդ. Շահնազարեանի հետ Նափոլէօն կայսեր ներկայա-  
ցուց հանրագրութիւն մը, որու մէջ կիլիկեցիք կ'ըսէին

« ՄԷՆՔ, Տաւրոս Լեռանց մէջ բնակող Հայերս, 70.000  
զէնք բռնելու կարող մարդունինք, որով, կը փափաքիմք  
որ մենք զմեղ կառավարելու առանձնաշնորհումն ունե-  
նամք։ Ասոր համար կ'աղաչեմք Զերդ կայս. Վեհ. եան,  
որ հաճիք Զեր ազդու միջնորդութիւնը ի գործ դնել թրք,  
կ. պետութեան մօտ, որպէսզի, մեր ցանկացած ազատու-  
թիւնը շնորհելով մեղ Հայ իշխան մը նշանակէ մեր  
վրայ՝ իբրև կառավարիչ»։

Նափոլէն դիմում կատարեց Բ. Դրան մօտ։ Եպարքոս  
ԱԼԻ ՓԱՇԱ, անակնկալի եկաւ այս դիմումէն, և գաղտ-  
նօրէն ստուգեց թէ Հայերը այդքան մեծ ուժ մը շունին  
ո՛չ թէ Լեռնային՝ այլ ամբո՞ղջ կիլիկիոյ մէջ իսկ, միայն  
անառիկ Զէլթունը կար, որ կընար 3.000 մարդ հանել։

Զէլթունցիք իրենց ՖէրՄԱՆը Սուլթան Մէճիտին վա-  
ւերացնել տալու համար 1859 ին Պոլիս զրկեցին Յովհ. Վր.  
Գառնեցին և Տէր Մեարոպը։ Կառվ, ը մերժեց, և լուր դրկեց  
Մարաշ որ նախկին դրութեան վերջ տրուի, և բարձր  
տուրքեր գանձուի։ Ասոր վրայ, 1860 Յնս. 8 ին. ԽՈՒՐ,  
ՇիՏ ՓԱՇԱ, 24.000 զօրքով Զէլթունի մօտ, ձիհան գետի

եղերքը բանակ դրաւ և 12 տարուայ տուրք պահանջեց:  
Զէյթունցիք ՖէրՄԱՆՆԵՐԼ ցոյց տուին. Խուրշիտ մերժե-  
լով Թիւքէնկճի Ալին դրկեց, տուրքը զանձելու: Զէյթուն-  
ցիք ըսին, «ՔԱՆԻ ՈՐ ՓԱՇԱՆ ՄԵՐ ՖէրՄԱՆՆԵՐԼ ԶԻ  
ՃԱՆՉՆԱՐ, ՄԵՆՔ ԱԼ ԶԻՆՔԸ ԶԵՆՔ ՃԱՆՉՆԱՐ»:

Նոյն միջոցին Պոլաոյ պատուիրակներէն դիր ստացան,  
Կ'ըսէին, «ԶԵՆՔ յաջողած, զարկէ ք որ բամպակը ելէ»:

Այս նամակէն քաջալերուած, Զէյթունցիք առիւծներու  
նման ինկան թրք.զօրաց վրայ, և ահոելի կոտորած տուին:  
Խուրշիտ Փաշա փախչիլ փորձեց. բայց ճամբան կ ըտ-  
րուած էր: Փաշան աղաչեց Հալոց որ ճամբայ տան: Զէյ-  
թունցիք թողուցին որ փախչի և ողրայ իր պարտութիւնը:  
Բ. Դուռը ամօթ զգաց այս պարտութիւններէն: Եպարգոս  
Ալի Փաշա, անպարտելի Զէյթունը բնաջնջելու և Հայկ.  
ըմբուսութիւնը ընդմիշտ խեղդելու գաղտնի հրահանգով  
իրեւ կառավտրիչ Մարաշ զրկեց ԱԶԻՉ ԳՈՇՈՒՆ:

Երիտասարդ զինուորական Ազիզ Փաշա կտզմակերպեց  
40.000 զօրաց բանակ մը, և սպասեց առիւթի, որ հասաւ:

Քէթմանցի երկու թուրքեր, իպրահիմ և իպիշ, թուրք  
կոյս մը առեւտնգեցին, յետոյ իպիշ սպաննեց իպրահի-  
մը: Իպրահիմի ազգականները դիմեցին Արեգին դիւղի  
կարապետ Քեհեայի միջամտութեան: Իպիշ սրանեզելով  
կար. Քեհեայի փեսայ Յակոր Քեհեան ալ սպաննեց ու  
փախաւ: Ասոր վրայ կարապետ Քեհեա Արեգին դիւղին 70  
կտրիճներով դիշերանց կոինց ՔէթՄԱՆ դիւղը, ուր փա-  
խած էր իպիշ, և 14 թուրքեր ուուրի մատնեց. բայց չի  
կրցաւ ձեռք ձգել իպիշը: Այս դէպքը պատճառ եղաւ որ  
Ազիզ Փաշա իսկոյն Զէյթունի վրայ գայ: Փաշտն պա-  
համար: Հայերը մերժեցին, ըսելով թէնախ պէաք է բո-  
օգիդ կրկին պահանջեց 70 հոգին սպառնալով բնաջըն-

յէլ Զէյթունը: Զէյթունցիք ը վին « Մէկ մարդիսկ շենք  
տար, եթէ կուզէ՝ թող գ ոյ, ով ստրաստ ենք չափսւելու»:

Այս խրոխտ պատասխանին վրայ Ազիզ Փաշա ՃիշԱՏ  
հրատարակեց Հայոց դէմ, և հրաւիրեց իսլամները միանալ  
իրեն՝ ԿԵՍՎՈՒԻՐ ԶէՅԹՈՒՆԸ ԿՈՐԾԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»:

Ազիզի միացան՝ Թէճիրլի, Ճէոփտ, Պէկթաշլը Գու-  
մարլը, Ռէհանլը և ֆշար, Պօգտուզան. Թիւրքմէն, Մե-  
նէմէնի, Զագալլը, Աթմալլը, Գրլըճլը Թիւրքմէն Աշի-  
րէթները և Զէրքէզները, որոնց պետն էր ՕՍՄԱՆ ՊէՅ:  
Ազիզ Փաշա այս խառնիճաղանձ զօրքերով Ճիհան հա-  
սաւ: ԱՍՍՈՒՄԾՈՒՍՈՒՐ ԵՀՆԻ - ՏԻՀՆԵԱՆ և ՇէԿՐՈԵԱՆ  
ՀԱԶՈՐ իշխանները 300 կտրիճներով ԶԱՅՐԻ - ՏԷՅՐԻ իմօտ  
կոուի բռնուելով պարաւուեցան՝ իրենց անխոնեմութեան  
պատճառով, և 72 հոգույ կորուստովնահանչեցին քաղաք:  
Թուրքերը կոխեցին Ա. ՓՐԿՉԻ ՎԱՆՔը, և խողխողեցին  
Մամբրէ Վրդ. ը: Մտան 1.315, և 111 Կ - Կ 1 զիւղերը,  
այրեցին ու հասան ՁԵ ՄՈՒԿԻ առջե, որ Զէյթունէն  
մէկուկէս ժամ հեռու է: Բոլոր Հայերը փախան Զէյթուն:  
Կացութիւնը խիստ ծանր էր: Ծնդհ ժողով գումարուե-  
լով բոլոր զէնք բռնելու կարող ալրերը դառակարգուե-  
ցան: և խումբերու գերերը ճշգուեցան: Ա. Աստուածածնի  
Վանքը զօրակեղրոն եղաւ:

Լուր եկաւ թէ ԱՅՅ ԶԻՏԼԻ ՄԵՏ ՓԱՇ 3.000  
հոգիով Աւագ-Կէտիկի մօտ հառած է: 500 կտրիճներ  
զրոն առւին անոնց վրայ, կոտորեցին ու 13 գերի առին:  
Այդ գիշեր բոլոր ժորովուրդը հսկում կատարեց, մարտիկ-  
ները հաղորդուեցան և պատրաստուեցան ՄԱՀՈՒ և ԿԵ-  
ՆԱՅ ՊԱՏԵՐԱԶ ԻԻՆ: Բոլոր գեռասի կոյսերն ու հար-  
սերը հաւաքոռեցան Եաղուզեանց թաղը, որպէսզի պար-  
տութեան պարագային բոլորը ՇԱԻՂՋՈՒՐ գետը նետուե-  
լով անձնասպան ըլլան, փոխանակ բարբարոս Թուրքին  
սուրին ուրպիրշ կրից զոհ ըըլլալու:

Կրօնականներն ու իշխանները ռազմաշունչ ճառերով  
ոգևորեցին բոլոր սպառագէն կտրիճները, և կէս գիշերին  
ըրին հետևեալ բաժանումները. ԵԱՂՈՒԹԵԱՆ իշխան 1500  
հոգիով դիրք բռնեց Աւագ-կալ գիւղը, 12 Պէկերու 12000  
զօրաց դէմ: ՍՈՒԻՐԵՆԵԱՆ և ՇԵՎՐՈԵԱՆ իշխանք, 1.500  
հոգւով Զէյթունի փլած ձ' մարանը դիրք առին: Իսկ Եկնի  
ՏԻՒՆԵԱՆ, իշխանը՝ 50. հոգիով դարան մտաւ Վանքին  
և Զէյթունի միջն գտնուող ձորին մէջ: Ուրիշ 500 քա-  
ջերու պաշտօն տրուեցաւ յառաջանալ, և մօտ 2 ժամ  
կոռւիլ, յետոյ փախուստ տալ դէպի Զէյթուն, թշնամին  
խարելով ծուղակը ձգելու համար:

1862 տարւոյ Օգոստոս 2ի առտուն, Ազիզ Փաշայի  
հսկայ բանակը «Ալլա՛հ Ալլա՛հ» պօռալով սկսաւ յարձա-  
կումը: Որոշուածին պէս, 500նոց խումբը 2 ժամ կոռւե-  
լէ յետոյ սկսաւ փախշիլ: Թուրքերը ասկէ սիրտ առած,  
յաղթական աղաղակներով և թնդանօթի: պաշտպանու-  
թեամբ մեծ թիւով յառաջացան: Այն ատեն եկեղեցեաց  
զանգակները սկսան հնչել, և դարանի մտած Հայորդի-  
ները ահեղ զոռումով չորս կողմէ գրոհ տուին: Երկինք եր  
կիր իրար անցաւ, և աննկարագրելի շփոթութիւն տիրեց  
թրքաց մէջ, որոնց համար Վերջին ԴԱՏԱՄԱՆԻ ՕՐ  
եղաւ այդ օր: Կրօն. դասը, խաչ ու սուր ի ձեռին կ'ոգեւո-  
նէր քաջերը՝ երգելով, «Արի Սատուած հարցն մերոց»  
երգը, մինչ կինէրը ռազմամթերք կը հասցնէին:

Թուրքերը չարաչար պարտուեցան և մինչս Մարաշ փա-  
խան, կոռւավայրը ձգելով 2.000 մեռեալ (757 Զէրքէզ.  
1245 թուրք և 9 Պէյ). և բազմաթիւ վիրաւոր: Իսկ Հա-  
յերը ունեցան միայն 77 հոգի: Ազիզ Փաշայի հետ բոլոր  
թ՛ՈՒԻՐՔԵՐԸ ամօթապարտ մնացին, իսկ ԶէՅԹՈՒԻՆՑԻՔ  
զիրար շնորհաւորեցին այս փտուաւոր փրկութեան համար:

Վերջ ԱՐՄԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ



## Ա Զ Դ

Պատմութեանս հեղինակը ներողութիւն կը  
խնդրէ իր ընթերցողներէն՝ այն տպագրական  
սխալներուն համար, որոնք սպրդած են ներկայ  
հատորին մէջ, այն դժբախտ պատճառով որ ինք  
հարկադրուած էր իր վնասուած աչքերով թէ՛ շարել  
հատորին պրակները, թէ՛ կատարել փորձերու  
սրբագրութիւնը իր սեփական տառերուն վրայ  
և թէ գիրքը կազմել. իր մեծ զոհողութեամբ  
ձեռնարկած աշխատանքը նիւթական ամենասեղմ  
խնայողութեամբ հայ հասարակութեան կարենալ  
ընծայելու համար:

ՀՀ Ազգային գրադարան



NL0416707

# ԳՐԱՏՈՒԻՆ ԵՒ ԹՂԹԱՏՈՒՆ

## ՀՈՐԻԶՈՆ

6, Արև Տէ Բըրիբ-Մարի, Մարսել - Ֆրանսա  
 ԱԱԱԱԱԱԱԱ

|     |                                                                  |      |
|-----|------------------------------------------------------------------|------|
| 1.  | Խոհանոցին Գիրքը (ապառած)                                         | ֆր.  |
| 2.  | Հայ Ժողովրդական Սիրային Երգեր                                    | 3    |
| 3.  | Մօրը Անէժքը (Վիպակ)                                              | 2,50 |
| 4.  | Մահացու Համբոյը (Վիպակ)                                          | 2    |
| 5.  | Գիակներուն Մէջէն                                                 | 2    |
| 6.  | Ընձնուէր Յեղափոխականը (Իրավէպ)                                   | 5    |
| 7.  | Օրիորդը (Վէպ Փրանսահայ Կեանքէ)                                   | 4    |
| 8.  | Սիրային Նամականի                                                 | 3    |
| 9.  | Հայկ. Եւ Յտար Առածներ Եւ Իմաստուն Խօսքեր<br>(Հաւաքեց Հ. Աբրահամ) | 2    |
| 10. | Խոհանոցին Գիրքը, Բ. Մաս<br>Խմորեղէն Եւ պտղեղէն անուշեղէններ      | 3,50 |



### ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ Եճ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐ

Թիւ 2. — Քննական Պատմ. Հայոց, Բ. Հատոր 1865 - 1908  
 » 3. — » » » Գ. » 1908 - 1930

### Մամլոյ Տակ Է

Պատմագրական Մատենաշարի գ. Հատորը

19 րդ ԴԱՐՈՒ ՀԱՅ ՄԵՇԱՏՈՒՆԵ

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱ ՊԷԶՃԵԱՆ

Պատկերազարդ և Ճոխ բազմաթիւ դէպքելով ու դէմքելով:  
 Դիմել՝ ուղղակի հեղինակին՝ միշտ կանխիկ գճարմամբ

Monsieur Léon DJÉRAHIAN

6, Rue des Petites-Maries, Marseille - France

Գին Հատորին՝ ֆր.

Արտասահման »